J Burney

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԱՀԱՆԱՅ Տ. ՄԵՍՐՈՊԵԱՆ

75

ԿԵԱՆՔԻ ՅՈՒՇԵՐ

ՏՊԱՐԱՆ «ԻՐԱՆՋԱՓ»

Թիֆլիս 1949

9/47.925/ 1683
Մ-64
Մեսրոպյան Հ.Տ.
Կյանքի տուշերը

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԱՀԱՆԱՅ Տ. ՄԵՍՐՈՊԵԱՆ

Գրուելիք առաջարկի յարգոյ խմբագրութ

ներեսաւ

947.925

9(47.925)
Մ 64

ԿԵԱՆՔԻ

ՅՈՒՇԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ԳՐԱԴԱՐԱՆ


A 11 16
80278

ՏՊԱՐԱՆ «ԻՐԱՆՉԱՓ»

Թեհրան 1949

Հրատարակութիւնը թոյլատրուած է՝ Իրանի Կրթական
Նախարարութեան թիւ 1423 արտօնագրով:

Ամեն իրաւունք վերապահուած.



ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԱՀԱՆԱՅ Տ. ՄԵՍՐՈՊԵԱՆ

Ծնուած 1896 թիւն

Վանի Թիմար գաւառի Գոմս գիւղում

ห้องสมุดกลาง
จุฬาลงกรณ์มหาวิทยาลัย



ՅԱՌԱՋԱԲԱՆ

Այց աշխատութիւնը ոչ վէպ է, ոչ բանաստեղծութիւն եւ ոչ պատմուածք: Ինչպէս գրքի անունն է ցոյց տալիս՝ սա իմ «Կեանքի Ծուծրո»ի ժողովածուն է: Այստեղ չկան՝ ոչ բանաստեղծական բռիչ-ցներ, ոչ ցերկայ վէպերին եւ պատմուածքներին յատուկ հանելի անակրկնելիներ: Այստեղ կայ իրական կեանքը իր լուսաւոր եւ մուր կէտերով, իր ժպիտներով եւ դաժանութիւններով եւ իր երեւութապէս անկապոն, բայց ներքնապէս կանոնաւոր եւ սիստեմատիկ էյեւէյթերով: Այստեղ հոսում է՝ ծուրբ եւ կոպիտ, գեղեցիկ ու տգեղ, երջանիկ եւ ապերջանիկ կեանքը:

Բազմաթիւ են կեանքի հակասութիւնները: Այս հակասութիւնները պիտի գտնել՝ բմբռնելու համար կեանքը, հասկանալու համար կեանքի էլակէտը, զարգացման ընթացքը եւ նպատակակէտը:

«Կեանքի Ծուծրը» պիտի օգնի՝ ներս ոռնիլ ուսումնասիրում եւ ձգտում են՝ հասկանալու՝ այս բարդ սիստեմը որ մարդիկ անուանում են՝ ԿԵԱՆՔ:

Ահա, թէ ինչումն է՝ այդ աշխատութեան գլխաւոր եւ իրական արժէքը. եւ սա միայն այն տեսակէտից, որ «Կեանքի Ծուծր»ը մի պարզ եւ սոխուական ՄԱՐԴՈՒ, այսպէս ասած՝ մի հասարակ մահկանացուի «Կեանքի Ծուծրն» են:

Սակայն պէտք է ի նկատի ունենալ, նաեւ, որ սա մի ՀԱՑ մարդու «Կեանքի Ծուծր»ն են: Այս հանգամանքից էլնելով բնականաբար գիրքը արժէքաւորում է նաեւ այն տեսակէտից որ նա արտացոլում է «հայկական կեանք» կոչուած բարդ կառուցուածքից որոշ բեկորներ: Բեկորներ, որոնք յատուկ ընտանեկարչական ճշտութեամբ եւ հարազատօրէն ներկայացնում են իրենց մայր-բեկորը: (Որովհետեւ «հայկական կեանք»ը եւս իր ներքին մի մեծ բեկոր է՝ «միջազգային կեանք» կոչուած կառուցուածքից:)

«Կեանքի Ծուբերթ բնականաբար սկսում է՝ հեղինակի ծննդավայր՝ Վանի Թիմար գաւառի Դոմս գիւղից եւ երկարում ուրիշ վայրեր եւ երբեմն ուրիշ երկրներ:

Վանի Թիմար գաւառի մասին շատ էին է գրել. հետեւապես այդ աշխատութիւնը լրացնում է նաեւ այդ բացը, ապագայ պատմաբանին աւանդելով՝ Հայաստանի կարեւոր գաւառներից մեկի մասին օգտակար նիւթեր:

Առանց յատակնութիւն ունենալու որ՝ գործը անթերի է, վրատաճարկն յայտարարում եմ որ կարելի բոլոր միջոցները ձեռք է առնուած որպեսզի «Կեանքի Ծուբերթ դառնայ կատարեալ եւ հաւրոգուս գիրք, արդարացնելու համար իր «Գոյութեան իրաւունքը:
(Raison d'être-ը:)

ԹԻՄԱՐ ԳԱՒԱՌԸ

Աշխատութեանս սկզբում յարմար եմ գտնում ներկայացնելու՝ Վան-Վասպուրականի Թիմար գաւառի աշխարհագրական դիրքը, ժողովրդական սովորութիւնները, հասկացողութիւնները, վանքերը, ուխտատեղիները, նշանաւոր լեռները, արտադրութիւնները, բնակչութեան թիւը, դիւղերը և այլ մանրամասնութիւններ, որոնք անհրաժեշտ են գաղափար կազմելու Թրքահայաստանի այս կարևոր գաւառի մասին և դիւրութեամբ ըմբռնելու Թիմարում տեղի ունեցող դեպքերի զարգացման ընթացքը:

«Թիմար» Գնունիք գաւառը գտնւում է Վան-Վասպուրականի հիւսիսային շրջանում. նրա 40 շէն ու պայծառ դիւղերը գրեթէ կից էին իրար, մէկ կամ կէս ժամ հեռաւորութեան վրայ: Գիւղերի այս արտասովոր մօտիկութիւնը ունէր իր տրամաբանական պատճառը: Մեր պապերը գիւղերը այդպէս էին հիմնադրել, որպէսզի անհրաժեշտ պարագային կարելի լինէր շուտափոյթ օգնութիւն հասցնել թշնամու կողմից յարձակման ենթարկւած գիւղին:

Թիմար գաւառի գարկերակն է հանդիսանում Սև Գետը: (Մարմէտա գետը.) Սոյն գետը մեր գաւառի միջովն է անցնում. նա սկիզբ է առնում արևելքում գտնւող՝ Արտաւէզ գիւղին կից լեռներից, որից բխող սառնորակ աղբիւրների ջինջ ջրից է գոյանում սոյն գետը:

Սև գետը երկար տարածութիւն կարելով թափւում

է վանայ Լիճը։ Նա խնամ օգտակար էր իր շրջակայ դիւ-
դերի այգինները և արտերը ջրելու համար։ Մի խօսքով
ըստ ժողովրդի նա մի բարիք էր գաւառի համար։

Վանից Բերկրի, Արտայի դաշտով, Իգդիր Երևան
տանող խճուղին անցնում է մեր գաւառի կենտրոնից,
որին կից են՝ Ագնակաձոր, Գօղու, Շահգալդի և Ջանիկ
գիւղերը։ Ջանիկը գաւառի քաղաքական կենտրոնն էր
ուր նստում էր գայմագամը և որպէս կառավարութեան
ներկայացուցիչ լծում էր ժողովրդին։

Յիշածս խճուղին օձաձև է՝ հին-հին յիշատակներով։
Այս ճանապարհով են երկիր մտել հայ հայտնակատան,
քաղաքական գործիչները ու այս ճանապարհով են եր-
կրից անվերադարձ հեռացել անթիւ հայրենասէր երիտա-
սարդներ իրենց սիրելիների աչքերը թաց թողնելով։

Երեք լեռներ տեղատարած են Թիմար գաւառում
որոնք յաւէտ անմոռաց են շրջանի հայութեան համար։
Երրորդութիւն կազմող լեռներն են՝ Զամախուն, Զրխա-
հայ և Էրեբինայ սարը, որոնք իրրև պահապան հրեշտակ-
ներ հսկում էին գաւառին։ Զամախուի լեռնաշղթային են
կպած՝ Աւերակ, Պողանց, Կիւռնենց, Կղլջայ և Նարտի
գիւղերը։ Լեռան արևելեան վերին տեղատարած են՝ Ար-
ճակի և Մատանկոնիսի լճերը որոնք սքանչելի տեսարան-
ներ են ներկայացնում։

Արճակի լճի մասին հետևեալ առասպելն է հիւսել
ժողովուրդը։

—«Արճակի ծովում բնակվում են փերիներ. նրանք
ամեն կիրակնամուտին հրեղէն ձիեր հնծած դուրս են գա-
լիս ծովից, ուրախ ու զուարթ ձիարշաւ կատարում ու նո-
րէն ծովը մտնում։ Ով որ այդ ձիերից մէկը բռնի և հեծ-
նի աննկուղթ կզառնայ ու կարող է թռչելով աշխարհը
շրջի»։

Թիմարը աժառած է աքանչելի բնութեամբ։ Պարարտ,

մշակելի հողը բաւականին ընդարձակ է. ջուրն՝ առատ. ամենուրեք կհանդիպէք՝ ցորենի արտերի, խաղողի այգինների, պտղաւոր ծառերի, դոյնզդոյն ծաղիկներու։

Վանի գեղածիծաղ լիճը Բերկրի կալայէն երկնրելով հասնում է՝ Ռատան Ծովին կից են՝ Արճէշ, Ալջաւազ շրջանները որոնց թիկունքին կանգնած է՝ սէգ Սիփանը։ Վանի լիճը հարազատ մօր պէս գրկել է՝ Թիմար գաւառը որն ընկած է լճի հիւսիս-արևելքում։ Վանի լիճը արտադրում է՝ հռչակաւոր համով, հոտով Տառեղ ձուկը։ Այս վայրերում հին հայկական ճարտարապետական ոճով կառուցած էին հոյակապ վանքեր որոնց անուանակոչութեան ծօներին այցելում էին շրջակայ գիւղերից բազմաթիւ ուխտաւորներ։ Զոհեր էին մատուցում, եկեղեցական արարողութիւններ կատարում և քէֆեր կազմակերպում։

Վանքերից հռչակաւոր էին Տիրամէր Ս. Աստուածածնի մեծ վանքը որին քրդերը «Դերապալաք» (Սպիտակ վանք) էին անուանում։ Այստեղ ուխտի էին գալիս նաև շրջանի քրդերը, Արճէշի, Ալջաւազի և Պարսկաստանի Սալմաստ գաւառի հայութիւնը։

«Տէր Յուսկան որդու» հինաւուրց վանքը գտնւում է՝ Չիրան-Բերկրի գիւղերի բարձունքին։ Այս վանքը հռչակաւած էր՝ «Բուժիչ» վանք անունով։

Լիմ Անապատի կղզում է գտնւում Ս. Գևորգի վանքը. դիմացը ունենալով՝ Սիփան լեռը։ Ս. Գևորգի վանքը նպակի էր իր գեղեցիկ տեսարաններով և իր կուսակրօն միաբաններով։ Այս վանքը շրջանի հայութեան մէջ մեծ ժողովրդականութիւն էր վայելում։

Կուղց Անապատ կղզին տեղաւորւած է՝ Վանի լճում Ալուր, Մարմէտ գիւղերի մօտ։

Ակնամար կղզուձն է կառուցած՝ Ս. Գրիգոր Նարե-

կացու անուան վանքը։ Այստեղ է՝ Նարեկացու ճգնարանը ուր գրի է առնուած հանճարեղ Նարեկը։

Աղթամար խօսքի մեկնութիւնը ըստ ժողովրդի այսպէս է.

Անարատ սիրով տոգորուած պոյպի ժամապրաւայրն է եղել յիշեալ վայրը։ Տղան ամեն գիշեր լողալով գալիս էր կղզին. իսկ աղջիկը լոյս էր վառում նրա համար, որ նա կարողանայ կղզին գտնել։ Սակայն մի գիշեր չար ոգինները մարեցնում են լոյսը։ Տղան ճամբան կորցնելով խեղդւում է ջրի ահարկու ալիքների մէջ, միշտ իր սիրած աղջկայ անունը մի Թամար, մի Թամար կոչելով։ Վանքի բարձր քարաժայռի կատարին ձկնկուլ Թռչունը մինչև օրս էլ երգում է Մ՚ի Թամար։

Սոյն քարաժայռի վրայ է նստել մեր հանճարեղ Րաֆֆին և յօրինել իր «Ջայն տուր ով ծովակ» երգը։

Ս. Սահակի անուան փոքրիկ վանքը նստած է՝ էրեբրին գիւղի սարալանջին որի բարձունքի վրայ կառուցւած է Ս. Էջմիածին անունով մի մատուռ։

Յաւելենք, Ալուր գիւղերին կից կայ նաև Քառասուն Մանկանց մատուռը, Գոմս գիւղում՝ Տէր Յուսկան որդու անուան մատուռը, Փիրկարիր գիւղում Ս. Անտոն (Աշուրա) ճգնաւորի անւամբ և Ամկուբերդում, Ժժիշկում, Գոմսում կարմիր Աւետարանի անուան մատուռները։

Յիշեալ վանքերից ոմանք ունեցել են դրադարան, մատենադարան և հին մագաղաթեայ արժէքաւոր գրքեր։ Մեր գաւառի համեստ մատենագիրները՝ գրողներ, ուսուցիչներ, հոգևորականները, պարոնները դուրս էին գալիս յիշեալ վանքերից։

Թիմարցին ընականից հանդարտ է, պարկեշտ և համբերատար։ Նա վերին ատաիճանի աշխատասէր է, առաքինի և աւանդապաշտ։

Վանեցու նախանձելի վիճակը տանելի չէր սիրող

իշխանության համար։ Պատմում են՝ Կ. Պոլսից վտ. ժամանած վալին, փոդոցով անցնելիս նկատելով մի հայ բանւորի իւղոտած և պատռոտած հագուստները ուրախացած գոչում է. — Էրմենի խատերեմ բեյա օլսան. (հային կուզեմ, այսպես լինի)։

Թիմար գաւառի ձիւնահալն սկսում է մարտի կէսերին։ Այս ամսին է որ հիւանը շրջապատում է գիւղերը, նորսպում արօրն ու գութանը։ Գիւղացին դամլց դուրս է բերում մեծ խնամքով պահած դամէշն ու եկը և համացկամաց վարժեցնում է աշխատանքին Զար աչքից հեռու պահելու համար նա իր կուան դամէշի կոտոշին կապում է կապոյտ ուլունք և ճակատին կոտրում է հում հաւկիթ։

Մայիսին բուրաւիաւէտ ծաղիկներով պարպարում է վան-վաստրեակները Գիւղացու յոյսն է գութանը։ Լուսաւոտից առաջ հագնար-տաւարաբաժը լծկան եզն ու դամէշը պաշան է տանում ճարակելու։ Արևածագից առաջ հոգատարը լծում է գութանն ու երգում.

Բարի լուսոյ աստղն երևաց,
Աղօթարան դռներն լ բաց,
Բարով բայլեր լուս աղօթարան
Լ'ևնք սարսած էրթանք գութան,
Հօ՛ հնրովել, հօ՛ հնրովել.

Այսպէս բոզոք՝ բռնութեան և անարդարութեան դէմ, աստւ է նա.

Ջիգ տուր քաշի, չան դամէշ,
Պարտք ու խարչի վախտը մօտ է,
Այլի գութան վէր խամար դու կաշխատես,
Վալ քիչ անող կուշտ խաց կուտի.
Հօ՛ հնրովել, հօ՛ հնրովել.

Ամառ է. խոտի հաւնձը վերջացաւ։ Այժմ, դաջտում հասած է՝ ցորենը. դեղնել, կարմրել ու պար է բռնել

մեղմիկ զեփյուռի հետ Յորենի խշշոցը, միջատների ձայները և գիւղացու խնդուն տոպերը միախառնելով իրար հետ առեղծում են հիասքանչ մի համերգ բնութեան գրկում։

Հունձը մօտենում էր։ Հնձուորի տաքցած մանգաղի հարուածների տակ յորենի կարմրաւուն հասկերը փուում են գետին և խուրձեր կապմում։ Գոմէշով լծուած հսկայ սայլերը ճռռալով փոխադրում են յորենը արտից կալ։

Մօտենում է գաւառի ցրտաշունչ ձմեռը. նախքան ցրտերը գիւղացու մատանը լեցուած էր ու լցում են՝ գինու կարասները, ժպտում են՝ դանագան մրգերի կախանները։ Գիւղական քէֆերի և հարսանիքների ժամանակը մօտենում է։

Աշնան ամուսնացող տղան իր կեանքի ընկերը ընտրել է արդէն ուխտատեղում։ Տղայի և աղջկայ հայրերը իրենց որդիների գոյգ մատանիները վանահօրն են տանում որն օրհնում ու թոյլ է տալիս՝ ամուսնութիւնը։

Հարսնագնացների թիւը հասնում է տասնեակների, որոնք հիւրընկալի առաջնորդութեամբ ուղևորւում են հարսի հօր բնակարանը։ Այդ գիշեր քէֆ է մինչև լոյս։ Յաջորդ առաւօտեան տաւուլ զուռնայի ախուր եղանակով հարսին դուրս են բերում տնից։ Հարսնեւորները պռոշում և գոչում են՝ «Տարանք, հա տարանք»։

Ամուսնութեան կարևոր արարողութիւններից է նաև «խնադրիս»ը։ Տղայի տնում հաւաքւած բարեկամները փեսայի ձեռքերին խինայ են դնում. թաց-պաակ կապում կանաչ-կարմիր թելից ու երգում.

Էս թաղ վիր թաղ նման էր,
Սուրբ Գևորգի թաղ նման էր,
Շուռ գայ շուռ մուռ գայ,
Բարով էս տունը գայ.

Կանաչ ու կարմիր կապերով
Մարդ Մարդոի քաղն առել ես,
Բարով քաղուհուդ վայելես,
Հարիւր տարին քամամ անես:

Լրտեսները, «Գրաւակ փախցնող», արագաւազ մի ոգայ է որ հարանեաց-հիւրերից մէկի պէտքերը վերցնելով վազելով գալիս է՝ փեսայի տունը և յայտնում հարսի գալուստը: Գիւղացիք համախմբուած ցնծութեան ձայներով ընդառաջում են հարսին և ուղեկիցներին, ապա առաջնորդում են հանգիստ:

Դանդաղաշարժ քայլերով և որոտընդոստ ազդակներով հարսի շքախումբը հասնում է՝ փեսայի դռանը: Այստեղ երիտասարդների խումբը սկսում է երգել.

— Թագաւորի մէր դուս արի, քո գլուխ դմփող ենք բերի,
Թագաւորի մէր դուս արի, քո տախտ աւրող ենք բերի,
Փեսայի մէր դուս արի, քո ջուր բերող ենք բերի:

Ծանր ու հպարտ քայլերով, ժպտուն դէմքով դուրս է գալիս փեսայի մայրը, ձեռքին մաուզպարան, լեցուն՝ չիր ու չամիչով որը ցանում է պատկեաների գլխին. ապա գոյգերը մտնում են ներս:

Հարսանիք-կիր ու խումը տևում է 3 օր ու գիշեր: Ամեն առ աղջկի գարդն է՝ Ալուր, էրերին, Աաւենց, Ջանիկ, Աժիշկ և կիսանենց գիւղերի հոչակաւոր կարմիր գինին:

Հարսանիքից յետոյ, փեսապատիւ է տրւում. Գիւղացիք խմբով փեսայի հետ մտնում են գալիս տներում, շնորհաւորում և ըմպում փեսայի կնանքին:

Մեծ պահք երկուշաբթին, նորահարսը հերանց է գնում՝ ձեռնապաշիկի ու կեսրանց վերադառնում՝ համբարձումից յետոյ:

Մեծ ուրախութիւններ են լինում նաև բարեկենդանին

Տանտիրուհին Բարեկենդանի վերջին շաբաթն պարտաքրում է սեղանը բազմաթիւ բարիքներով. անպակաս է յայտնի գաւառն և փոխինդր. Ջահելները դնդ դուռնայով պտտում են գիւղում. Հռչակաւոր հայկական շուրջպարերը (գովանդ) սկսում են։

Բուն Բարեկենդանի կիրակին, գիւղի բոլոր ունևոր, չունևորները անխտիր հաւաքւում են համայնական բնոյթ կրող սեղանների շուրջ. ուտում, խմում, քէֆ անում։

Ուտիք օրւայ նախընթացին բոլոր կերակրի կաթսաները եռացնում են ու մաքրում։

Կրօնական և աւանդական սովորութիւնները գաւառում պահպանւում են սրբութեամբ և երկիւղածութեամբ։

Բուն Բարեկենդանի օրը տանտիրուհին վերջացնելով իր տարեկան պատասխանատու աշխատանքը, դնում է մառանի բանալին տղայի վրայ. Ընտանիքի անդամներին է ձեռք կրկին նրան վերադարձնել բանալին կամ բնութել տան անդամներից մէկ ուրիշին։

Մեծ պահքին, թոնրատունում, աւաստոպից կախում են՝ մէկ մեծ սոխի գլուխ, մէջը տեղաւորած հատ հօմր փետուրներ, ի նշան մեծ պահոց շաբաթներին։ Շարաթը մէկ հատ փետուրներից վերցնում էին մինչև պահքի լրանալը։

Լուսաստղի հետ եկեղեցու ժամհարը հնչեցնում է կոչնակը որին միանում է գիւղի աքաղաղների գիլ ձայները։

«Բարիլուս, կոչնակի ձայնից հեռանում է չարքաշում էին մեծերը և սարսափելի ցուրտ անտեսելով գնում եկեղեցի։

Գաւառում, Աւագ Ուրբաթ, Յաւարման ժամերգութիւնը սկսում է կէս գիշերից յետոյ և վերջանում արեւածագից առաջ։ Նոյն օրը մեռելոց-գերեզմանօրհնէք է կատարւում. Քազա լաւաշ հաց են բաժանում աղքատներին որը կոչւում է՝ մեռելոյ բաժին։

Խոստովանութեան գանգը հնչում է Շաբաթ օրը ժամի 3-ին. մեծ ու փոքր գնում են խոստովանութեան։

Ճրագալոյցի, թաթախման գիշերը, քահանայից և ղպրաց դասը ընթրում է՝ եկեղեցու ճաշասենեակում։

Զատկի առաւօտեան ժամերգութիւնից յետոյ գիւղացիք ոտնակաև գնեստներով գնում են մերձակայ արքեպիսկոպոսարանները և ղպրաւում՝ ձւախաղով, պարերով և այլն։

Չնայած որ առողջապահութիւնը և բժշկութիւնը ներկայ իմաստով գոյութիւն չունէր մեր գաւառում, այդուհանդերձ շնորհիւ լեռնային կենսատու օդին և ջրին, շնորհիւ մածնակերութեան և բուսակերութեան մեր գաւառացին առողջ էր, ոտկուն և երկարակեաց։ Հէնց մեր գիւղում հարիւրամեայ ծերունիները բաղմաթիւ էին։

Գաւառում յաղթական իշխում է՝ աւանդութիւնը. այդ յաղթանակը ձեռք է բերել դարերի ընթացքում։ Աւանդութիւնը գաւառում ամեն ինչ է. և ուղեցոյց և բարոյականութիւն և օրէնք և արդարութիւն։ Նա գաւառի մենաշէրն է. ամեն ինչը վճռում է նա։ Նա վճռականն, հաստու և չգրւած օրէնք է. և ոյ կհամարձակւի նրան դէմ գնալ։

Հարսը մեր գաւառում չիոսկան է 7–8 տարի, երբեմն էլ մինչ իր կեանքի վերջը. որովհետև չիոսելը արդէն տովորութիւն է դառնում։

Աղջիկները մեր գաւառում գլխներին կրում են՝ արծաթից մանր «դրուշ» դրամներով և վայլուն ուլունքներով պարպարւած ֆէս։ կախում են վզնոց։

Տղամարդիկ որպէս ոտնաման գործածում են անխոսիր՝ որևէս «Պոչով ոտը» վերապահւած է՝ իշխաններին և մեծ ունևորներին։ Գլուխը ծածկւած է բուրդէ «քոլոզ»ով. շալւարը լայն է ու մէջքի գօտին երկար։

Թիմար գաւառի գլխաւոր արդիւնաբերութիւնն էր՝ յորևն, գարի և կորեկ։ Տարեկան հասոյթից կառավարու-

Թիւնը պատասխանէս սառնում էր «Տատանորդ» այնինքն բերքի մէկ տասերորդ մասը։ Անշարժ կալւածքի համար էլ գիւղացին վճարում էր հարկ որը կոչւում էր «վերգան»։ Բերքի ժամանակ գիւղ էին գալիս՝ կառավարութեան ներկայացուցիչները հսկելու համար բերքի քանակի վրայ Որպէս ծանրութեան չափ գործածական էր՝ «չափ»ը որը հաւասար է՝ չորս փութի։

Հողը, ջուրը և բնակարանը գիւղացու սեփականութիւնն էր։

Զմեռը բազմաթիւ ժանդարմաններ շրջապատում էին գիւղերը, մտնում էին գոմերը, համրում ընտանի կենդանիներին և բռնի ուժով գանձում «գլխահարկ». Զքաւորները կարիքից ստիպւած թագցնում էին իրենց կենդանիներին ծանր տուրքից ազատելու համար։

Շնորհիւ մեր գաւառի հարուստ և առատ բուսականութեան կենդանիները բոլոր եղանակներին կերակրւում են՝ լաւ։

Ամառը, երիտասարդները իմբերով, հանդիսաւոր կերպով արշաւանքներ են կատարում դէպի կանաչազարդ լեռները և իրիկնադէմին վերադառնում բնութեան զանազան տեսակի բնական բանջարեղէններով՝ սունկ, խաւրծիլ, մանդակ, երինջնակ և այլն։ Սրանք թթու են դրւում ձմռան համար։

Թխմար գաւառում բազմաթիւ էին գուսանները, ժողովրդական բանաստեղծ-երգիչները։ Սրանք գիւղացու՝ զգացմունքների, յոյզերի, յոյսերի և ապրումների հարազատ երգիչներն են որոնք հարստացնում և զարդացնում են հայ ժողովրդական բանահիւսութիւնը։ Երգերի գլխաւոր մոտիւը սէրն է. ահա մի նմուշ.

Ջինար իմ եար, մեր դուռ ձեր դուռ իրար դիմաց,
Ամբիք անես աչքով իմաց,
Մխաս խոլաւ ուսիս ճնաց,
Մէջ ուսիսին գաւ չմնաց։

Այս մասի վերջում նկատում եմ թիմար գաւառի վիճակագրութիւնը որը դուրկ չէ հետաքրքրութիւնից.

	ԳԻՒՂ	ԸՆՏԱՆԻՔ	ՇՈՒՆՉ
1	Էրեբին	152	940
2	Ամիկոսեկ	40	112
3	Ամիկ	140	785
4	Առնո	74	452
5	Նորաշէն	47	282
6	Ջանիկ	150	870
7	Առուծաձին	79	542
8	Բագ	18	105
9	Թրքաշէն	17	64
10	Շատաթ	9	50
11	Տաշօղլի	3	20
12	Գարաբէկ	52	315
13	Մէյդանչոլ	18	105
14	Արաւէկ	30	176
15	Աղջաքերան	55	228
16	Կոճ	38	197
17	Առիկոպալ	42	281
18	Գոմա (հեղինակի ծննդավայրը)	84	528
19	Փիրկարիւ	66	422
20	Սօսրաա	53	309

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ... ՊԵՏԱԿԱՆ ...

Հ 6 8 3
Հ 8 4 3
Ա II 80278

Գիւղ	Ընտանիք	Շունչ
21 Շահգալիք	32	160
22 Քոչանի	133	804
23 Գեօլու	28	159
24 Նորաւանք	37	225
25 Ախաւենց	110	647
26 Ախտր	403	2948
27 Տրտաշէն	106	701
28 Առնաւանց	48	324
29 Բայրակ	43	207
30 Կիւանենց	184	1062
31 Քօրփիքոյ	5	29
32 Եկմալ	41	207
33 Մահտար	47	282
34 Ամենաշատ	52	269
35 Անանավանք	61	309
36 Մարմէտ	187	982
37 Բերդ կամ Նոր Գեղ	39	265
38 Զրաշէն	94	565
39 Ասերակի	209	1131
40 Պողանց	89	542

ՓԱՐՏԷԶ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ՆԱՀԱՆԳԻ ԵՒ ԹՒՄԱՐ ԳԱՒԱՌԻ

«Կեանքի Ծառը»

ՄՕՐՍ ՅՈՒՇԵՐԸ

Նախքան իմ անձնական յուշերը, ասելիս եմ՝ հանդուցեալ մօրս յուշերը, որոնք բաւականին հետաքրքիր և շահեկան են վան-վասպուրական և յատկապէս թիմար գաւառում կատարուած դէպքերը լուսաբանելու համար: Մայրս դրանք ինձ պատմել է՝ իր կենդանութեան օրօք և ես դրանց ճշտութիւնը ստուգել եմ բազմաթիւ ականատեսների վկայութիւններով:

1895-96 ԹԻԱԿԱՆԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ՎԱՆ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՈՒՄ.

Սարսափելի կոտորածները սկսեցին յանկարծակի և առաջուց մշակուած ծրագրով. ինքնապաշտպանութեան պատրաստութիւն՝ քիչ ժամանակ կար: Ամէն տեղ պուլսմ, ալան թալան էր...

Առ ու փախը սկսեց: Մենք մեր տունը տեղը թողնելով՝ ապաստանեցինք Թրքական հարևան պուդրը. հաւ ու հայը մի հաշիւ էր: Լսեցինք որ քաղաքում, հայութիւնը դիմել է ինքնապաշտպանութեան Հայ մարտիկները հերոսաբար կռւում էին, թէև աւելի շատ թշնամու դէմ: Նրանք ատում էին՝ բաւ է որքան գրուխ ձուեցինք. կուենք ու մեռնենք պատուով, կամ լինենք ազատ:

Յետոյ լսեցինք որ թշնամին վանը պաշարել է՝ հազար հազարով իսկ մերոնց վտմփուշտը քիչ է:

Անհատաատար կռիւը տևեց 8 օր: Մերոնք քաշուեցին.

խուժանը լեցուց գիւղերը։ Սիրուն հարս ու աղջիկները գերի տարան, ծեծեցին, բռնաբարեցին և գցեցին լեռներ ու ձորեր։ Ամեն տեղ լեցւած էր հայ փախստականներով։ Ժողովրդի ունեցւածքը՝ ցորեն, ոչխար, ամեն ինչ սրբեցին տարան։ Հայ գիւղացու շները իրենց տէրերի դիակներն էին ուտում՝ դաշտերում, իսկ գիշերները հաւաքւելով աւերւած գիւղերում ոռնում էին, որոնց ընկերակցում էին՝ նաև բուերը։ Ագռաւները խմբեր կազմած կրռռում էին անընդհատ և կենարոնանում այնտեղ ուր թագնւած էին փախստական հայերը և մատնում նրանց։ Ամենուրեք մահը սպառնում էր։

Վանի՝ ժամանակի տարաբախտ առաջնորդ, անվեհեր՝ Դանիել վարդապետը որը հաշտարարի պաշտօնով՝ նահանգապետ՝ Բայրի Փաշայի մօտից կ'վերադառնար, սրախողխող սպանւեց՝ Ս. Յակոբ եկեղեցուն կից փողոցում։

Թշնամի զինւորները նրան առաջարկել էին կամ կրօնափոխութիւն, կամ մահ։ Նա հերոսաբար ընտրել էր՝ մահը։

Գոմս գիւղին կից Չրաղացի ձորում թագնւած 40 երիտասարդ հայերի բռնելով սպանում են Նրանցից ողջ է մնում միայն Ենովք Տ. Ստեփանեանը։ (Այժմ ապրում է Հայաստանում։)

Հասեյն Պալմա կոչւած մի մարդ-գազան Ծակտար գիւղում, 12 հայ երիտասարդների խոտի դէզի մէջ տեսարելով այրում է նրանց։ Մենք ապաստանել էինք Բրքսական Աղեր գիւղում, քեռւայ Մահմադի տունում. մեկ էլ տեսանք Բշնամի հրոսակներ ներս խուժեցին. նրանք պահանջում էին տղամարդկանց և ոսկի։

— Այնու, բալա Ջան,—շարունակում է մայրս,— դուրս էլը լինում, հրոսակներից մեկը հրացանը դրից բերնիդ և ուզում էր կրակել երբ իմ աղիողորմ լացը լսելով

վրայ հասաւ բարի տանտիրուհին՝ Թրքուհի Գոզալը և ազատեց չեզ մահից։

Չլախանայ սարը վախած մի խումբ տղամարդիկ, որոնց մէջ էր նաև հայրդ՝ Տ. Մեսրոպը, երկար օրեր սուված ճնշումց յետոյ ստիպւած Թողնում են սարը ու անցնում՝ Էիմ Անապատ կղզին։

Խաւենց գիւղի՝ ծերունազարդ քահանան ընկնում է Թշնամիների ձեռքը. նրան ստիպում են՝ կրօնափոխ լինել. նա ընդդիմանում է։ կտրում են՝ գազանօրէն նրա ականջները, փորում աչքերը և երկար տանջելուց յետոյ սպանում։

Ալուր, Էրերին, Խաւենց, Քօչանի գիւղերի հայ երիտասարդ-ուհիներին հաւաքելով լեցնում են Թոնրատուն ու հարկադրում են ուրանալ՝ Քրիստոնէութիւնը։ Շէյխը 2 օր ժամանակ է տալիս այդ մասին լուրջ մտածելու համար։ Գիշերը աղջիկներից ոմանք ինքնասպանութիւն են գործում։ Շէյխը տեսնելով՝ հայ երիտասարդ-ուհիների տոկունութիւնը և անձնազոհութիւնը զարմում է նրանց ասելով — Ափսոս է այս ժողովուրդը, գերի մնայ մեր ձեռքում։

Հրոսակների մի խումբ մտնում է Ատնականց գիւղը, հաւաքելով տղամարդկանց մորթում են անխղճօրէն։

1895-96 թւի աշնան, գարնան իրար յաջորդող ցաւալի դէպքերը ցիր ու ցան արին մեր ժողովրդին։

Ագրակեցի Ռեհանը՝ բռնի կրնն էր եղել Ագրակի՝ Մօղուռին։ Բազմաթիւ էր Ռեհաննեի թիւը որոնցմով լեցւած էր ժամանակի իշխանների հարեմները։

Ռեհանը խոյս տալով, փախչում է Թիմար ուր ամուսնանում է՝ Դհերցի Խաչոյի հետ։

Խիստ ողբերգական էր նաև մօտ 800 հայ մարտիկների նահատակութիւնը Ս. Բարդուղիմէոս վանքի շրջակայքում, Գարահիսար ու Բազիդաղի լեռների մէջ։

1896 թվի հետաքրքիր դէպքերից է նաև Ախիզօղալ գիւղի Տէր Գևորգի արկածները։

Տ. Գևորգը վարագում սովորած մի կիրթ քահանայ էր՝ յանդուգն բնաւորութեամբ։ Նա շրջանի հայութեան և այլազգիների մօտ մեծ ժողովրդականութիւն էր վայելում։

Կատրածների ժամանակ, բոլորը հեռանում են գիւղից բացի քահանայից որ պրպտած էր իր գործերում։ Յանկարծ լսում է իր ուշիմ ձիան խրխինջը. դուրս է գալիս և տեսնում թշնամիների ձիաւոր խումբը. վտանգը մօտ էր։ Կորիճ քահանան վայրկենաբար հեծնում է ձին և կայծակնային արագութեամբ սլանում է դէպի դիմացի լեռը. խումբը հետապնդում է՝ քահանային. գնդակները սուրալով անցնում են՝ անվնաս ձիաւորի մօտից. Տէր Գևորգը պատասխանում է իր ատրճանակով. բայց վտանգը գնալով մօտենում է. հասնում են մի ահռելի ձորի, որի միջև ձգուած էր բաւականին տարածութիւն։ Քահանայի նժոյգը մէկ ոտիւնով ցատկում է, բայց հետապնդողները մնում են ձորի միւս ափին։ Այսպիսով փրկւում է՝ ճարպիկ քահանան շնորհիւ իր ընտիր ձիան։

Սոսկալի կոտորածներ են լինում նաև Արճէշ և Ալջաւազ գաւառներում։

450 հայ երիտասարդների հաւաքով մի խոր ձորի մէջ կոտորում են անխնայ։ Ցետոյ մի խումբ տղամարդկանց ծովափ տանելով, մի մասին մորթում են, իսկ ճնշածին լեցնում ծովը։ Աղջիկներին և երիտասարդ կացածին բռնաբարում են ամենայն վայրագութեամբ։ Ժամանակի իշխող դասը մի կողմից կազմակերպելով այս սոսկալի գանգւածային կոտորածները միւս կողմից աշխատում էր խնամքով ծածկել և թաղցնել դրանք։ Այդ նպատակով առաքւում էին խրատիչակ «քննիչ յանձնախմբեր» իբր թէ տեղում քննութիւններ կատարելու հա-

մար։ Այդ «յանձնախմբի» մէջ է լինում նաև մի հայ, որը մի ձորի մէջ դիակների միջից դուրս է բերում՝ 7 տարեկան մի ողջ երեխայ։ Պարզւում է՝ երեխայի հայրը սպանելիս գրկում սեղմել է երեխային և փրկել նրան։

Մի խօսքով 1895–96 Հարաբատիկ թուականներին, վանը լեցւած էր՝ անմեղ հայերի դիակներով։ Կոտորածից մազապուրծ ազատուողները երկար ժամանակ թափառում էին տարեր, ձորեր... Այդ դժբախտ արարածները օձերի հետ ջուր էին խմում, հող էին լիզում, չոր դետինը նրանց անկողինն էր իսկ կարծր քարերը՝ բարձ։

Ահա այն դաժանութիւնները որոնց ենթարկւեց՝ Վան-Վասպուրականի հայութիւնը 1895-96 թւերին։

ԸՆԴԻՋՈՒՄՆԵՐ ԲՌՆՈՒԹԵԱՆ ԴԷՄ

Հայ ժողովրդի ամենակարևոր յատկութիւններից մէկը նրա ազատասիրութեան և ըմբոստութեան ոգին է՝ ամեն տեսակի բռնութեան դէմ։ Տաճկահայաստանում տեղի ունեցող մասսայական կոտորածները, եւրոպական փոքր երկրների ազատագրական շարժումները և ժողովրդի կուլտուրական մասնակի զարթօնքը պատճառ դարձան՝ որ հայ ժողովուրդը սկսի մտածել՝ դաժան և սպանդ լուծը թօթափելու մասին, և միջոցներ գտնել՝ տեղծելու ազատ ու երջանիկ կեանք։

Հայ ժողովրդի մէջ արդէն սկսել էր առաջ գալ ազատագրական շարժման թոյլ սաղմերը։ Ընդվզումի, ըմբոստացման տարրերը տեղծւել էին։ Հայ ազատագրական շարժումը խմորւում էր, թէև դանդաղ և թոյլ։

Ահա, այսպիսի մի տեսական, քաղաքական և մշակութային դեպքս չհաւատացած միջոցառումի ծնունդ էին՝ հայ մարտական կազմակերպութիւնները և խմբերը։ Դրանք հայ ժողովրդի բողոքի թոյլ և անկազմակերպ ձայնն էին

որը արտայայտում էր փոքրիկ ընդհարումների և դէպքերի մէջտեղ։

Այդպիսի դէպքեր յաճախ պատահում էին վաստրականի գանազան մասերում ի մէջ այլոց նաև Թիմար գաւառում։ Յիշենք դրանցից մի քանիսը.

Տիգրան Դէրոյեանը որ ժողովրդի մէջ ապստամբութեան սերմեր ցանելու նպատակով եկել էր Թիմար, մէկ տարի յետոյ քաղաքի մօտ ժանդարմների հետ կռիւ բռնելով իր ամբողջ փամփուշտները պարպելուց յետոյ գոհւում է իր 2 ընկերների հետ։

1898-ին Հաջի Արամը իր 8 հոգինոց խմբով կովկասի ճանապարհով հասնում է՝ Գործոթ գիւղին կից Գուզակ գիւղը։ Հաջի Արամը տեսնելով որ հնարաւոր չէ գինւած քաղաք մտնել, հրացանները հանձնում է՝ Աշուղ Մանուկին, պատճ առիթով քաղաք փոխադրելու համար։ Գործոթ գիւղի Ուէս Մելոյի տղան՝ Մարկոսը Գուզակ գալով, բռնի կերպով վերցնում է հրացանները և յանձնում պետութեան։ Մի տարի չանցած, Մարկոսը սպանւում է՝ որպէս գաւաճան։ 1903-ին Աբաղայի դաշտում երկիր է մանում՝ Փարամազը իր 32 մարտիկներով։ Ամբը բաժանւում է՝ 2 մասի. 1-ին խումբը Տիրամէրը անցնելով իջնում է՝ Ազօթքի ձորը, ուր հանդիպում է՝ Շաւէսցիների պետ՝ Ջաֆար Բէյին, հրացանաձգութիւնը սկսւում է խաւարի մէջ։ 250 գինւած թշնամիներ պաշարում են՝ նրանց։ Յամառ մարտերից յետոյ նահատակւում են բոլորը, բայց մէկից որն իրեն նետելով ծովը ազատւում է։

Փարամազի 2-րդ խումբը հասնում է Աւանց, ուր պաշարւում է ժանդարմների կողմից։ Մարտիկներից ոմանք ծովը նետւելով խեղդւում են, իսկ Փարամազը ձերբակալւում է։ Ամբի տխուր վախճանը փոթորկում է Փարամազի հոգին. ծրագիրները ջուրն են ընկնում։

Փարամազը ռուսահպատակ լինելու պատճառով ա-

զատւում է բանտից և նորից լծւում գործի մինչև իր կախազան բարձրանալը։

Ղարաղաչ գիւղի Թահիրը որ ազատ ել ու մուտ էր անում հայ գիւղերում, կամենում էր բանութեամբ տիրանալ՝ նորահարս Նազիկին։ Որոշւում է՝ վերջ տալ Թահիրի կեանքին։ Այդ պարտականութիւնը յանձնւում է՝ երիտասարդ Մարտիրոս Խաչատրեանին։

Թահիրը մէկ օր ցորեն է բերում Մարտիրոս Խաչատրեանի հօր Ջրաղացում աղալու համար։

Հասնում է գիշերը. Ջրաղացի ձայնը լսւում է՝ միապաղաղ։

— Է՜հ, աղա Թահիր, դուք քնեցէ՛ք հանգիստ, ես ձեր ծառան կհսկեմ.— ասում է Մարտիրոսը։

— Լաւ, կքնեմ, բայց վայ քեզ, որ մանր չլինի.— պատասխանում է՝ Թահիրը։

Թահիրը ընկնում է խոր քնի մէջ։ Մարտիրոսը օգտւելով առիթից դուրս է քաշում Թահիրի գօտկից դաշոյնը և մի ակնթարթում կոխում՝ նրա սիրտը։

Ջրաղացից դուրս է գալիս, ուից գլուխ զինւած մի մարդ և բռնում մի անյայտ ուղի...

Ամեն տեղ խօսւում է Թահիրի սպանման մասին։ «Վախ, քեա սև կապեմ, էն վաի լսէ, որ խեղճ խայը մարդ սպանի։ Ա՛խ, մեր գեղը, մեր տունը կթալանին, կաւիրին, մեր օլուղ չօլուղ կկոտորին։» Խօսում էին կանայք. իսկ տղամարդկանց Թուքը բերնում չորացել էր։

Ամեն ինչ հարթեց գեղին ոսկին։ Չնայած որ՝ Մարտիրոսի հօր ոսկու քսակը բաւականին թեթևացաւ, բայց գիւղը փրկւեց կոտորած-կողոպուտից։

1904 թւի գարնան, ռուսական սահմանից երկիր մտան՝ 2 խմբեր Գասպարի և վաղարշակի գլխաւորութեամբ։ Զինւած խմբերը Արճէշի և Ալջաւազի վրայով իջնում են՝ Խօջալու գիւղին կից լեռան քարանձաւում։

Աումբը բաժանւում է՝ 2 մասի։ Գասպարի խումբը ճիւում է՝ քարայրում։ Միւս օրը թիւրք հովիւները նկատելով դինւած խումբը, յայտնում են ուր որ պէտք էր։ Սկսւում են ահեղ մարտերը որ տեւում է՝ 4 օր։ Թշնամիներից սպանւում են շատերը։ Սակայն քաղցը և ծարաւը անտանելի էր. ուստի որոշւում է ձեռնամուխ լինել պաշարման օղակը։ Վաղարշակի խումբը ճեղքելով պաշարման շղթան վերադառնում է՝ Կովկաս։

1906-ին Վանի նահանգապետն էր՝ սխրահռչակ Ալի Փաշան, որն իր բռնութեամբ և դաժանութեամբ գերազանցիկ էր։ Կ. Պոլսից նոր ժամանած, նա ցանկացաւ իր հաւատարմութիւնը ցոյց տալ՝ բարձրագոյն Դռան։ Ուստի հրահանգեց՝ գանձել հպատակ հայերից հին և նոր պետական տուրքերը։ Որոխկանապետ՝ Մահմադ Բէյը 100 հեծեալներով անցնում է գաւառները և սարսափի մատնում ժողովրդին։ Ամեն տեղ՝ ձեռ, չարչարանք և բռնութիւն։ Անխղճօրէն գրաււում էր գիւղացու ամբողջ ունեցւածքը և սովի մատնում նրան։ Երբ Ալի Փաշան վերադառնում էր Պոլիս, գնում ներկայացնելու՝ Բ. Դռան, Բաթումի նաւահանգստում, արիւնաթաթախ գետին է փռւում հայ գնդակից։

Վերին վարժում էին կատարում մարտական խըմբերի գինւորական վարժութիւնները։ Վանի ոստիկանապետը կարգադրում է Շուքրի Բէյին գնալ և ձերբակալել՝ այդ յանդուգն մարդկանց որոնք իր քթի տակ գինավարժութիւններ են կատարում։ Շուքրին իր հեծեալներով արշաւում է դէպի վարագ. մարտիկները դիրք են մանում. Շուքրին բարձրաձայն աղաղակում է.

— Թասլիմ օլուն գաւուրլար։

— Էֆէնդիմ շատ մի շտապիր, ժամանակ տուր գէնքերը յանձնելու. — պատասխանում է՝ Մշեցի Յարութը

հեգնանքով։ Յանկարծ, գոռում է մօտինը և Շուքրին փուռում է պետին։

1905 թուին երբ Գոմա գիւղի մի խումբ երիտասարդներ Ջանիկից նորահարս էին տանում, ճանապարհին հանդիպում են մի հրոսակային խմբի որը սանձարձակ կերպով պահանջում է՝ իրենց յանձնել՝ նորահարս Մարգարիտին։ Երիտասարդները ընդդիմանում են, իսկ հրոսակները բռնանում։ Սկսւում է ահեղ պայքար։ Կողմերը մոլեգնորէն յարձակւում են բռունցքներով և փայտերով։ Յովհաննէսին և Միքայէլին յաջողւում է փախցնելով ազատել՝ նորահարսին։

Էրէրին գիւղից, մի քանի պատանի իր նորապսակ քրոջ հետ վերադառնում էր իրենց գիւղը։ Ծօչանի գիւղից քիչ հեռու նրանց են հանդիպում թշնամի ասքարներ։

Ասքարները չարաճճիք նպատակով մօտենում են նրանց։ Պատանին վտանգը ըմբռնելով քրոջ հետ մտնում է ջրաղաց։ Ասքարները կրակում են, պատանին պաշտպանւում է, մինչև որ կրակոցների ձայներից օգնութեան են հասնում։ Ասքարները հեռանում են։

1906-ի աշնան վերջերին մեր գիւղը (Գոմա) ժամանեց՝ Մշեցի Յարութը իր մարտական խմբով։ Լուսնկայ պարզ գիշեր էր։ Գիւղացիք հաւաքւել էին Ուխ Գաբրիէլի տունը։ Բոլորը ուշադրութեամբ իրենց աչքերը յառել էին սեռնեակի վերը, որտեղ թաղիքի վրայ նստել էր՝ Մշեցի Յարութը։ Մօսիններն և մաուզէրները կախւած էին պատից։ 75-ամեայ ծերունի Անթոնը ազօտ լոյսի տակ գէնքերը չէր տեսնում. ուստի թոյլտւութիւն խնդրեց ձեռքով շօշափելու գէնքերը։ Ապա մօտենալով Յարութին հարցրեց.

— Պարոն Յարութիւն էս թւանքներ զմէն քոնն են։ Իրական պատասխան լսելով ծերունին ինքնագոհ ձեռքերը վեր պարզեց և ասաց.

— Փաթք, քնդ Տէր, խային էլ թւանք տւիր

Այդ գիշեր ժողովում խօսեց՝ Մշեցի Յարութը յորդորեց միանալ իրար հետ և գնալ գնել

Հայ ժողովրդի ազատագրական պայքարին, հատ ու կենտ մասնակցում էին նաև քիւրդերը, որովհետև նրանք ևս ենթակայ էին իշխանութեան ճնշման, բռնութիւններին և շահագործումներին

Այդ քրդերից մէկն էր մեր գաւառի Մահերը որը մեծ աշխատանք էր կատարում գէնքերի փոխադրման և տեղաւորման գործում Այդ գործի ընթացքում նա երբեմն ընդհարումներ էր ունենում ժանդարմների հետ որոնց նա ցուցարերում էր՝ քաջութիւն և անձնախընթաց նուիրւածութիւն

Պետական ժանդարմները վխտում էին գաւառական գիւղերում, Ամեն տան անկոչ հիւրն էին նրանք

Այդ ձրիակեր պնակալէզները ուր որ մտնում էին պահանջում էին՝ ճաշով փլաւ և եղաձու

Մարտական յայտնի խմբերից էր՝ Մշեցի Տիգրանի խումբը որ գրաւում էր նաև գիւղացիների մէջ եղած վէճերը հարթելով և դատավճիռներ արձակելով

1906 թւի աշնան մոայլ օրերից մէկն էր Հիւսիսից ցուրտ քամի էր փչում Գիւղացիք պատրաստւում էին մտնել խանրատները՝ տաքանալու և ցրուցելու համար, երբ Գոմա գիւղի հարաւային կողմից յանկարծ լսեցին՝ ատրճանակի ձայներ, որոնց յաջորդից՝ օգնութեան կանչեր Անմիջապէս դինւած և անդէն երիտասարդները դուրս նետւեցին Եղելութիւնը պարզուց. քաղաքից Գոմա վերադարձին՝ Մելքոն Գասպարեանը և Պօղոս Սարգիսեանը յարձակման են ենթարկւում թշնամու մի խումբ հրոսակների կողմից Մելքոնը ատրճանակով պաշտպանւում է, իսկ Պօղոսին բռնում են, վիրաւորում և ձգում կամիջու Գօլի խոր ձորի մէջ Հրոսակները քշում, տանում էն՝ 9

գլուխ եզ և 5 գլուխ էշ, որով կարում են 2 բազմանդամ ընտանիքների ապրուստի թելը։

Երիտասարդները հետապնդում են՝ աւազակներին, ընդհարւում են նրանց հետ և գրաւում կենդանիներին։ Վիրաւորւում են՝ 2 հոգի թշնամիներից և սպանւում 3 գլուխ եզ։

Յաջորդ օրը նոյն աւազակախումբը, Դարաբէկ գիւղից վերադարձին յարձակւում է՝ Սետրակ Ալօյեանի վրայ, սակայն յիշեալը պատւում է՝ շնորհիւ իր նժոյգին և զէնքին։

Ալուր գիւղի Զամանկէ Արմենակը իր 6 եզներով քաղաքից գիւղ էր վերադառնում։ Տրյաշէն և Ալուր գիւղերին կից Դիւադար կոչւած վայրում վայրագ հրոսակները բռնում են նրան և սաստիկ ծեծում։ Արմենակը ուշագնաց է լինում. հրոսակները քշում են՝ եզները ու տանում։ Ատնականց գիւղից մի քանի երիտասարդներ՝ Ամկուբերդցի՝ Պատուր Մանուկեանի գլխաւորութեամբ յարձակւում են նրանց վրայ և վերադրաւում եզները։

Դաւոյի յայտնի դաւաճանութիւնից յետոյ ճնշումները վան-վասպուրականի հայութեան վրայ աւելի սաստկացան։

Յետադէմ իշխանութիւնը՝ որ ամենայոյլ ընդդիմութիւնն անգամ բռնութեան դէմ, համարում էր՝ մահացու յանցանք կատարել էր և պատրաստւում էր վճռական հարւած տալու՝ «Սառնակիչ, ըմբոստ հայերին»։

Սկսւեցին աննախընթաց խուզարկութիւններ՝ զէնքեր գտնելու համար։ Գաւառների խուզարկութեան գործի ղեկավարութիւնը յանձնւած էր գաղտնաբարոյ՝ Մահմադ Բէյին։

Մահմադ Բէյը ստացաւ՝ «Նալբանդ» արժանի տիտղոսը։ Իսկապէս նա նալում ու նալում էր հայ ժողովրդին։

Գործողում պայտելու միջոցին մեռան՝ 2 երիտա-

սարդներ։ Գամա գիւղի գլխը՝ Պօղոսի բեղերը անգթօրէն պոկել էին։ Ներսոյենց ծերունի Մարգարէն գլխիվայր կախել էին վառ թոնիրի վրայ և ղէնք պահանջել։ Զանիկ գիւղում դահիճները կատուներ ձգելով տղամարդկանց լայն շալւարների մէջ փայտով ծեծում են։ Կատուները բնականաբար, իրենց ստացած հարուածներից կատաղած անխնայ կտրտում են՝ մարդկանց մարմինները, որի պատճառով մեռնում են՝ 5 հոգի։

Երբ Մահմուդ Բէյը իր «սև» հարիւրակով հասաւ մեր գիւղը, բնակչութիւնը քաշւեց՝ Զախանայ սարը։ Գիւղում մնացին՝ գիւղի Ռէսը՝ Յովհաննէս Ալօյեան և 2 պիրներ։

Երբ Սամայ Խաչ բարձր գեղատեսիլ եկաց՝ Մահմադի ձիաւոր խումբը, գիւղում մնացածները աղ ու հացով ընդառաջ գնացին և նրան հանդիպեցին՝ Զոհիկ աղբիւրի մօտ։ Մահմադ Բէյը բղաւեց՝ վայրենաբար.

— Էյ, դաւուրներ, ձեր ղէնքերը և հրացանները պատրաստէ՛ք յանձնելու։

Հարիւրակը իջաւ՝ Մանուկ աղայի «քէօշկը», որից յետոյ ծնկաչոք գիւղի մեծերը մօտեցան, համբուրեցին՝ բէյի ոտքերն ու ձեռքերը։ Սկսեց չտեսնուած խուզարկութիւնը։ Ժանդարմները կապելով Ռէս Յովհաննէսի և միւսների ձեռքն ու ոտը, սկսեցին անգթօրէն ծեծել և ղէնք պահանջել։ Ռէս Յովհաննէսը՝ (գիւղի պետը) ուշաթափեց, իսկ մնացեալը անշարժ փռւել էին գետին։ Սակայն այդ բոլոր գազանութիւնները արդիւնք չտւին. ոչ մի ղէնք չյանձնեաց։

Հէնց այսպէս, հայ աշխատասէր գիւղացին շաբաթներով ենթարկւեց անասելի տանջանքների, մինչև որ տխրահռչակ Մահմադ բէյի գայրույթը թուլացաւ շնորհիւ տրւած կաշառքի։

Թիւրքական սահմանադրութեան հռչակումից յետոյ և հակառակ հայ ժողովրդի մեծ յոյսերին, բռնութիւն-

ները և հալածանքները շարունակեցին։ Իշխող դասը նորից շարունակում էր իր հակաժողովրդական չարանենգ գործունէութիւնը։ Մորամանկ քաղաքականութեամբ՝ նա վիհ էր առաջ բերում հայ և քիւրդ ժողովրդների մէջ։ Հրահրում էր քրդերի կրօնական զգացմունքները և արհեստական ատելութիւն ցանում երկու ժողովրդների մէջ։

Հէնց սահմանադրութիւնից յետոյ էր՝ (1910 թ.) որ Շիրին Յակոբեանի խումբը ուժեղ կուի բռնեց՝ մեծ փէոդալ՝ Սայիդ Բէյի հետ։

Թիմարում յայտնի էր Ռէս Սարգիսը։ Նրա մահից յետոյ Թաֆուր Բէյը զաւթեց, Ռէս Սարգսի օրինական ժառանգների սեփականութիւն, ձէթհան գործարանը։

Անցան տարիներ. Ռէս Սարգսի թոռը, Տիգրան անունով մի աշխոյժ երիտասարդ ահագին պայքարից յետոյ վերագրաւում է իր ժառանգութիւնը՝ ձէթհան գործարանը։ Սակայն մի անգամ դաշտում յարձակման է ենթարկւում հակառակորդ կողմի «զոլամ»ների կողմից։

Բարեբախտաբար, օգնութեան կանչը լսելով դէպքի վայրն է հասնում Տիգրանի շունը՝ հաւատարիմ Զալօն։ Կատաղած գամբռը յարձակւում է թշնամիների վրայ և ցրում նրանց։ Տիգրանը ազատւում է՝ իսկ հաւատարիմ կենդանին սպանւում է՝ թշնամիների գնդակից։

Մեր ազատագրական շարժման ընթացքում իրենց արժանի դերը ունեցան՝ նաև մեր հոգևորականները. մեր այն պարզ ու հասարակ քահանաները որոնք այնքան մօտ էին կանգնած հայ գանգւածներին, որոնք իրենց ծիծաղն ու լացը, բախտաւորութիւնն ու դժբախտութիւնը միացրել էին հայ ժողովրդի յարափոփոխ դրութեան։ Այդպիսին էին մեր գաւառում Տ. Սահակ և Տ. Մկրտիչ քահանաները։ Նրանք արժանաւորապէս կանգնած էին իրենց հոգևոր կոչման բարձրութեան վրայ։

Տիրող անարդար իշխանութեան ճնշման ներքոյ,

շատերն էին հեռացել իրենց հայրենիքից ու բռնել դա-
րիբուխեան ճամբան։

Արտագաղթը սոսկալի ձևով դատարկում, ամայեց-
նում էր հայ Հայրենիքը։

Սահմանադրութիւնից յետոյ այդ «զարիբներից» մի
մասը վերադարձաւ Հայրենիք, սակայն ստիպւած եղաւ
կրկին և այս անգամ վերջնականօրէն լքելու մայրենի
հարազատ հողը։

ԻՄ ՅՈՒՇԵՐԸ

Ես ծնուել եմ վանի Թիմար հայաշատ գաւառի Գոմա գիւղում՝ 1896 թուին։

Հայրս քահանայ լինելու պատճառով ինձ դրկում է Ս. Գևորգ վանքը ուսանելու համար։ Այնտեղ ես ստացել եմ թէ աշխարհիկ և թէ հոգևոր կրթութիւն։

Իմ մանկական յիշողութիւններս առատ են և խճողուած։ Ամենից լաւ յիշում եմ իմ ուսման վայրը, Թիմար գաւառի մշակութային և կրօնական կենտրոն, Լիմ Անապատի կողմում գտնուող Ս. Գևորգ վանքը։

Գեղեցիկ էր Լիմ Անապատի կողին։ Գեղեցիկ էր նա իր ծառաստաններով, ծովային տեսարաններով և իր վանքով։ Հարիւրաւոր գեղջուկ մանուկներ այդտեղ կրթուել և դաստիարակուել են։ Վանքի հոգևորականները, հին Հայաստանի հոգևորականների արժանի հետևորդները, իրենց կոչման բարձրութեան վրայ, զրաղուած էին գիր ու գրականութեամբ իրենց մութ ու խոնաւ խցիկներում։

Վանքի առաջնորդարանին ննջակայ գիւղերը վճարում էին տարեկան տուրք յօգուտ վանքի։

Մեր գաւառի գիւղերը ունէին՝ հոգաբարձութիւն և քննիչ համայնական խորհուրդ։ Համայնական խորհրդի անդամները յաճախ այցելում էին՝ վանք և վերահասու լինում վանքի ներքին, արտաքին և ֆինանսական խնդիրներին ու պէկուցում ժողովրդին։ 1910-ին վանքի

վանահայրութեան հրատապ խնդրի համար գաւառական ժողով գումարեց Ս. Գևորգի վանքի դրսի տնում։ Յովհաննէս և Մակար վարդապետները վանահայրութեան թեկնածուներ և մրցակիցներ էին։ Ձայների մեծամասնութեամբ վանքի վանահայր ընտրեց՝ Յովհաննէս ծայրագոյն վարդապետ Հիւսեանը (Բնիկ Ալրցի)։ Յովհաննէս ծ. վարդապետը իր վանահայրութեան ընթացքում շատ յաջող կերպով վարեց գաւառի և Ս. Գևորգ վանքի կրօնական բոլոր գործերը։

Ես յիշում եմ՝ մեր գաւառի գործիչներին, մտաւորականներին և ուսուցիչներին։ Այդ գործիչներից էր՝ փերկարիբցի Սիրուն Սարոյեանը։

Նա իր կրթութիւնը ստացել էր՝ գիւղի ծխական դպրոցում։ Պատանի տարիքից մտել էր մարտական խմբերի մէջ։ Հետագային նա ինքը ևս դարձաւ այդպիսի խմբերի կազմակերպիչ։

1915 ի Ապրիլին Թիմարի և վանքի օրհասական ինքնապաշտպանութեան կռիւները ղեկավարեց Սիրունը։ Այս կռիւներում սպանեցին բազմաթիւ Թիմարցի մարտիկներ. մահացու վէրք ստացաւ նաև՝ Սիրունը։

Օսմանեան սահմանադրութիւնից յետոյ, գիշերային կողոպտումները արգիլելու պատրուակով, կառավարութիւնը գաւառի գանազան մասերում նշանակել էր ժանդարմական չոկաններ։ Բայց հէնց այդ ժանդարմներն էին գաւառի կողոպտիչները և ապահովութիւնը խախտողները։

Կաշառք, ձրիակերութիւն և մատնութիւն. ահա ժանդարմների կատարած «ծառայութիւնը»։

Սահմանադրութիւնից յետոյ վանի դպրոցներում ընդունեց Հայոց Լեզուն, որով պարտադրում էին առարկաների մեծ մասը։ Դասատանդում էր նաև Թիւրքերէնը։

Ինչպէս միշտ է եղել հայ իրականութեան մէջ, մեր գաւառում ևս հայ ուսուցիչները գտնւում էին անտնա-

պէս ծանր վիճակում, սակայն նրանք նւիրւածօրէն առաջ էին տանում գաւառի կրթական ծանր և պատասխանատու գործը։

Պարտք եմ համարում յիշել նրանցից մի մասին.

Ալուր գիւղի ուսուցիչ՝ Աբիսողոմ Սարգիս Մնդոյեան, Ծաւենց գիւղում՝ Մեսրոպ Սարգսեան, Էրէրին գիւղում՝ Մխոյի Բաղդօն, Քոչանի գիւղում՝ Արշակ Տ. Գալըստեան, Ամկուբերդում՝ Ղազար Աւետիսեան, Ծժիլկում՝ Տէր Մկրտիչը և իր որդին, Ատեռ գիւղում՝ Աբգար, Զանկում՝ Յովհաննէս, Փիրկարիք գիւղում՝ Մկրտիչ քահանայ Մարգարեան, Գոմս գիւղում՝ Նախօն, Կիւանենցում՝ վանեցի Միհրանը իր օգնականներով։ Ապա՝ Սուրէն, Միհրան Գրիգորեան, Տէրտէրի Յովհաննէս, Դիլաքի Արշակ, Աղանիկի Արշակ, Մկրտիչի Արմենակ, Գարեգին Տ. Մարտիրոսեան, Վահրամ Սարկաւագ, վանեցի կարապետ, Փանոս Յովհաննիսեան և Վարդան Իսաջանեան։

Ժանդարմները շատ յաճախ որպէս «զինւորացու» ձերբակալում էին անչափահաս երիտասարդների և կաշառք ստանալուց յետոյ միայն արձակում։

1912 թ-ի Զատկին, մի գեղեցիկ օր, 4 ոստիկաններ ինձ ձերբակալեցին որպէս «զինւորացու» և ցոյց տուին Մոդուի պաշտօնական գրութիւնը։

Գիւղի մեծերի և հօրս միջամտութիւնը ինձ արձակելու համար արդիւնք չտուին։ Ես ազատուեցի միայն այն ժամանակ, երբ տուեց բաւականին կաշառք։

Որպէսզի ոստիկանութեան ապագայ հետապնդումներից խուսափեմ, որոշեցի՝ հեռանալ գիւղից։ Իմ ձերբակալութեան օրւայ երեկոյեան, համագիւղացի՝ Սերոբ Սարուխանեանի հետ դիմեցինք Ս. Գևորգի վանքը։ Գարերից ի վեր Լիմ անապատի Ս. Գևորգայ վանքը եղել է՝ մեր շրջանի հայութեան ապաստարանը՝ վատ օրերին, իսկ ուխտատեղին՝ լաւ օրերին։

Թոյլատրվելուց յետոյ փոքրիկ նաւակով մտանք կղզին։ Հիւրընկալ վանականները իրենց քաղցր վերաբերմունքով գոհացնում էին մեզ և յորդորում էին լինել՝ սառնարիւն։ Մեր առօրեան հոգում էր՝ վանքը։ Վանականի կեանքը հաճելի էր ինձ համար որին ընտելացել էի դեռ մանուկ հասակից։ Վանքում սնունդը լաւ էր. մառանում միշտ առատ էր կարագը, սերը, կաթը, ձուն, տառեխ ձուկը և այլն։

Վանքի դրսի տունը տեղաւորւած էր ծովի եզրին մի բանաստեղծական գեղեցկութեամբ։

Երկյարկանի առաջնորդարանի շէնքի կողքին գետեղւած 3 երկաթեայ խողովակներից հոսում էր առնորակ և մաքուր ջուր։ Այդ ջուրը մարմարեայ առւակից հոսելով թափւում էր «Գեօլը» և լճակ կազմում։

Ամեն առաւօտ երբ հնչում էին վանքի զանգակները, Ղրաղոպան Յակօն լացւելով այդ ջրում մրմնջում էր.

— Զգործս ձեռաց իմոց ուղիղ արա՛ մեզ Տէր։

Ապա բաց էր անում «Գեօլու» անցքը, որից յետոյ սկսում էր աշխատել՝ վանքի երեք աչքանի ջրաղացը։

Ամենքը ոտքի վրայ են։ Առաւօտեան արշալոյսի հետ լսւում է՝ վարդապետների և սարկաւագների անուշալուր ձայնը։

«Գեօլի» եզրին գտնւում էր ընկոյզի մի հին և հրաշակայ ծառ որը ամառւայ շոգերին ճամբորդների հանգրստավայրն էր։

Այդ ծառի վրայ բոյն էր դրել՝ մի արագիլ, որի հետ կապւած է՝ հին-հին յիշատակներ։

Ձոյգ արագիլները իրենց ձագերով բաժին ունէին վանքի սեղանից։ Վանահայրը երբ բազմում էր հինաւուրց ընկուզենու մօտ, արագիլները պատում էին նրա շուրջ։

Մէկ անգամ, մենք դպրոցականներս խաղում էինք դաշտում։ Յանկարծ նկատեցինք, որ արագիլներից մէկը

կպած գետնին, թափահարում էր թևերը ուժասպառ։ Մօտեցանք, նկատեցինք որ մի օձ պոչը փաթաթելով արագիլի վզին մտել էր բունի մէջ։ Իսկոյն դանակով կտրեցինք պոչը և ազատելով արագիլին գրկած վանք բերինք։

1913 թ.ին էր. վանքի արագիլները ուշացել, դեռ չէին վերադարձել։ Այդ լաւ նշան չէր, վերջապէս հակառագիլներից մէկը։ միայնակ ու ընկճուած։ Նա քիչ էր թռչում, սգաւոր էր և կարճ ժամանակից հէնց իր բնում մեռաւ։ Ամենքս անխտիր լաց եղանք. արագիլի բոյնը մնաց աւերակ։

Մեր կրօնի ուսուցիչ՝ Յակոբ Ծ. վարդապետը մեզ պատմել է՝ հետևեալ ատանդութիւնը Ս. Գևորգ վանքի շինութեան վերաբերմամբ։

Նա պատմում էր որ սոյն հսկայ շէնքի կառուցումը 7 տարի է տևել։ Ըստ վանքի արխիւների մէջ գտնուած արձանագրութեան, քարտաշը սարում քարերը տաշելուց յետոյ քարերը փոխադրել են ծովափ և այնտեղից էլ առագաստանաւով՝ կղզի։ Վերջին օրը համատ քարտաշը վերջին քարը տաշելով վանքի կառուցումը յաւտարարում է՝ վերջացած։

Ամենքը զարմանում են՝ թէ ինչպէս քարտաշը սարում, առանց անձամբ դիտելու կառուցումը, ճիշտ հաշիւներով նախատեսել էր վանքի աւարտման ժամկէտը։

Որմնադիր վարպետը լսելով այդ զարմանում է և իրեն բարձր զբէթից վար նետելով ինքնասպանութիւն է գործում։ Նա գտնում է որ.

— Ինձմէ հմուտ վարպետ լինելու պարագային, իմ ապրելը աւելորդ է։

Ս. Գևորգ վանքին կապած հետաքրքիր ատանդութիւններից էր նաև Անտոն Ճգնաւոր անունով մէկի մասին հիւսած ատանդութիւնը։

Անտոն Ճգնաւորը երբեմն անյայտանում էր կղզուց։

Մի անգամ էլ, երբ նրա անյայտացումը սովորականից աւելի երկար է տևել, վանահօր կարգադրութեամբ վանքի ծառաները նրա խուցի դռան սողնակը կոտրելով ներս են մտնում։ Անշուք խցիկում լուութիւն էր տիրում։ Յատակին նկատում են մի հողէ կաթսայ, բերանն ի վար շրջած, որի տակ գտնում են մի մագաղաթեայ գիրք «Հազարանոց» անունով։ Գիրքը յանձնում են՝ վանահօր։ Դու մի ասիլ, սոյն գործողութիւնների ժամանակ Անտոն Ճգնաւորը վան քաղաքի խանութներից մէկում առօքփառօք չամիչ ուտելիս է եղել, առանց խանութպանի կողմից նկատուելու։ Յանկարծ խանութպանը տեսնում է՝ մի հոգևորական, հանգիստ և անտարբեր ուտում է խանութի չամիչներից. մօտենում է ու ձեռքը բռնում։ Ճըգնաւորը հասկանում է որ՝ գրքի և կաթսայի անյայտանալու «թէլիսմը» խախտած է։ Մի կերպ ազատուելով խանութպանի ձեռքից վերադառնում է՝ վանք։

Այսպէս էր մեր հանյայտացող ճգնաւորը»։

Հայ ժողովուրդը սիրել է թռչուններին, և նրանցից մի քանիսին իդէալականացրել։ Այդպիսին է կռունկը, հայ ժողովրդի համար այդ սիրելի թռչունը։

Այդ նախրական թռչունի անունն է կրում թիմար գաւառում գտնուող՝ կռունկի վանքը։ Երբեմնի այդ շէն վանքի փլատակներն են մնացել միայն։ Այդ վանքի շուրջ համախմբուում էին կռունկների երամները։

Սքանչելի մի պըրիւր կար այդ վանքի մօտ։

Ամառուայ շոգին, օձերը դուրս սողալով իրենց բներից պառկում էին արևի տակ։ Մի օր Ս. Գևորգ վանքի՝ խաշնարած կակաչը ապանում է օձի ձագերից մէկին։ Մայր օձը որպէս վրէժ լայթից և թունաւորից 6 ոչխար։ Նմանօրինակ դէպքերը յաճախ էին պատահում։ Գնալով խորանում էր օձերի և կակաչի միջև եղած թշնամութիւնը։ Վանահայրը լսելով այդ, կակաչի պաշտօնը

վոխում է։ Օձերը ձեռք են վերցնում ոչխարների խայ-
թումից։

Իմ վանք ապաստանումից 2 օր յետոյ, ոստիկանու-
թիւնը հակառակ իմ անչափահաս տարիքիս, ինձ համա-
րում է որպէս «գինեւոր-դասալիք»։ Այդ պատրւակով՝ ձեր-
բակալում և բանտարկում են հօրս։ Լսելով այդ լուրը ես
շատ վշտացայ։ Ծերունի հօրս բանտարկութեան պատճառ
լինելու համար խիղճս տանջում էր ինձ։

Յաջորդ առաւօտեան, կիրակի օրը, Ալժիշկ գիւղի
կարմիր Աւետարանի աւանդական ուխտի տօնն էր։ Ջնա-
յած որ անտրամադիր էի, այդուհանդերձ ես էլ շատերի
հետ մեկնեցի ուխտի։

Մէկ ժամից, հասանք գիւղը որը տօնական տեսք էր
ստացել։ Դհոլ զուռնան թնդում էր, կարմիր գինին հո-
սում։ Ալժիշկ գիւղի կարմիր Աւետարանի ուխտը ըստ
սովորութեան տեւում էր 2–3 օր որից յետոյ ցրւում էր՝
հաւատացեալ ժողովուրդը։

Ուխտի ժամանակ ես հանդիպեցի հայ միակ ժան-
դարմ Կիրակոսին որի հետ մտերիմ էի։

— Էհ, Յարութիւն ջան, այս հանդիպումը գուցէ
վերջինը լինի.— ասաց նա— ինձ փոխադրում են՝ ուրիշ
տեղ, վախենում եմ որ կնոջս էլ չկարողանամ տեսնել,
փափուկներ կան որ յառաջիկայ տարին կոխ պիտի
սկսի։

— Մի վհատիր սիրելի Կիրակոս, էլի կհանդիպենք
իրար և ով գիտէ թերևս լաւ պայմաններում.— պատաս-
խանեցի ես։

Նա աւելացրեց.

— Յարութիւն, չլինի թէ յանձնւես, քեզ արդէն
փնտռում են։

Հրաժեշտ տւինք իրար և բաժանւեցինք։

Ես բռնեցի մեր գիւղի ճամբան։ Երեկոյեան հասայ

Փիրկարիբ. մտաղբաղ անցայ Սարգսի Ծառնոցը, որտեղից սկսւում էր վերելքը, իջայ Կանասորիկի Ձիմանները։ Դաշտը զարդարւած էր բուրաստնաւէտ ծաղիկներով։ Նըստեցի գլկլան աղբիւրի մօտ՝ հանգստանալու։ Ժամ ու կէս կպչուն ցեխի միջով ճամբորդելը յոգնեցրել էր ինձ։ Որոշել էի յանձնւել և ազատել՝ ծերունի հօրս բանտից։

Մօտենալով մեր գիւղին, նատեցի՝ հայկուշ Քարի մօտ։ Գիւղը կորած էր՝ գիշերւայ թանձր խաւարի մէջ։ —Ո՜հ, իմ քաղցրիկ ծննդավայրը, իմ մանկութեան օրրանը։ Այնտեղ էին իմ մանկութ ընկերները. այնտեղ էր՝ մայրս, որն ինձ էր սպասում անհամբեր։

Ինքս ինձ սիրտ տալով մտայ գիւղի առաջին հանդիպած տունը. Ռէս Յովհաննէսի տունն էր այդ, որը կից էր Կաւանի ձորին։ Բաղխեցի պատուհանը, Ռէսի կինը, բարեպաշտ ու հեզահամբոյր Թագուհին՝ դուռը բացեց։ Ներս մտա. խնդրեցի՝ մօրս յայտնեն գալուս մասին։ Եկաւ մայրս, գրկախառնւեցինք, լաց եղաւ, խօսեցինք հօրս մասին, յայտնեցի որոշումս. մայրս դէմ եղաւ և չհամաձայնեց որ ես յանձնւեմ՝ որպէս «գինւորացու»։

Առաւօտեան Ռէս Յովհաննէսը մեկնեց քաղաք և ինձ պատւիրեց՝ Թագնւած մնալ մինչև իր վերադարձը։

Բանտարկւած դրութիւնը անտանելի էր ինձ համար, Արդէն սկսել էի համբերութիւնից դուրս գալ, երբ Ռէսը վերադարձաւ և իր հետ բերեց՝ ծերունի հօրս։ Ցետոյ իմացա որ՝ հայրս ազատւել է վան քաղաքում մեծ հեղինակութիւն ունեցող՝ վահան էֆենդի Մարութեանի երաշխաւորութեամբ։ Հայրս պատւիրեց ինձ՝ մնալ գիւղում և սպասել՝ վահան էֆենդու կարգադրութեան։

Պատերազմ բռնկւելու նախանշաններ կային։ Թիւրքերը հայ գիւղացիների հետ մօտ լինելով, միշտ յիշեցնում էին որ պատերազմը մօտ է և մեր կառավարութիւնը «Ալման»-ի (Գերմանիայի) հետ միանալով պիտի

կռւի։ Սոյն լուրերը հաստատւում էին պետական պաշտօնեաների կողմից։ Ամենքը սպասում էին պատերազմին, որը դամոկլեան սրի պէս կախւած էր մարդկութեան գլխին։

1914 թւի Օգոստոս 9-ին գիւղում կեանքը եռում էր։ Ես, իմ մի քանի ընկերների հետ միասին սայլի վրայ նստած դէպի դաշտ էինք գնում։ Յանկարծ նկատեցինք որ արևը կամաց-կամաց խաւարում է։ Սայլի առջևում նստած ծերունի «զուռնաչի» Յովհաննէսը սարսափահար սայլից իջնելով բացականչեց.

— Ես, էլ ոչինչ չեմ տեսնում։

Արևը բոլորովին խաւարել էր. մենք իրար հազիւ էինք տեսնում։ Ծերունի Յովհաննէսը աղօթում էր, իսկ մենք քահ-քահ ծիծաղում։

— Է՛հ, հիմի ծիծաղէ՛ք բալիկներս. բայց սա լաւ նշան չի, մեր գլխին մի փորձանք կգայ։

Արևի խաւարումը տևեց կէս ժամ։ Մենք ճամբայ ընկանք շարունակելով մեր կատակներ և սրախօսութիւնները։

Արևի խաւարումը գիւղի բոլոր մեծերը համարում էին վատ նշան և սպասում՝ չարագուշակ դէպքերի։

1914-ին Եւրոպական կառավարութիւնների մէջ եղած տնտեսական և քաղաքական հակամարտութիւնների պատճառով՝ պայթեց 1-ին համաշխարհային պատերազմը։

Եւրոպական կառավարութիւնները իրար շուկաները գրաւելու համար՝ հրդեհեցին ամբողջ աշխարհը. իրենց նիւթական շահերի համար զոհեցին՝ միլիոնաւոր մարդիկ։

Տաճկաստանը ևս ակտիւօրէն մասնակցեց՝ պատերազմին Գերմանիայի կողքին։

Երկրում յայտարարեց՝ ընդհանուր զօրահաւաք։ Հոկտեմբեր 16-ին Թիւրքիան պատերազմ յայտարարեց՝ Ռուսաստանի դէմ։

Վանը իր շրջաններով լեցւած էր ժանդարմներով։ Անասելի ճնշումների էին ենթարկւում հայերը։ Ժանդարմները հաւաքում էին՝ գուլպա, տրեխ, ձու, իւղ, ոտքմաճակատ դրկելու պատրւակով։

Հայ տղամարդկանցից կազմած կարաւանները կառավարութիւնը դրկում էր Սարա, կոթոր, որտեղ նրանք ծառայում էին որպէս գրաստ և վերադառնում չարդւած, փշրւած։ Նրանցից շատերը հիւանդանում և մեռնում էին։

Սարսափի օրեր էին։ Ժանդարմները հայ տղամարդկանց կտրելով դաշտային ստեղծագործ աշխատանքից դրկում էին քաղաք զինւորութեան համար։ Քաղաքից նրանց դրկում էին Թուխտ, Սարայ, ապա ոտքմաճակատ։ Զօրահաւաքը կատարում էին՝ դհոլ գուռնայով ի նշան այն յոյսի որ ունէր կառավարութիւնը իր յաղթանակի վերաբերմամբ։

Կարճ ժամանակից յետոյ դատարկւեցին հայ գիւղերը. մնացին միայն 70-ից անց ծերունիները, կանայք, ու 16 ից փոքր երեխաները։

Մարգար Կոլիկեանը Փիրկարիբ գիւղից էր. բազմանդամ ընտանիքի հիւանդ ու մաշւած հայր։ Ըստ օրէնքի նա ազատ էր զինւորագրութիւնից. սակայն կառավարութեան նպատակը զինւորութիւն անել տալը չէր այլ՝ հայ տղամարդկանց ոչնչացումը։

Նրան որպէս զինւոր դրկել էին Բիթլիս։ Անասելի տանջանքներ կրած և մահից հրաշքով փրկւած այս մարդը հետևեալն էր պատմում իր արկածներից.

— Մենք 200 հայ զինւորներ էինք։ Մի օր գէնքերը մեր ձեռքից վերցնելով մեզ յանցին՝ չարքաշ և տաժանակիր աշխատանքի։ Թուլք զինւորներից մէկը որին ևս ծանօթ էի, ինձ ասաց.

— Գլխիդ ճարը տես, այս գիշեր ձեզ մորթելու են։

Գիշերը մեր ձեռները կապելով, քշեցին մօտակայ

ձորը։ Մենք համոզուած, որ այլևս մեր հարազատներին չպիտի տեսնենք, սկսեցինք հեկեկալ դառնօրէն։ Երբ հասանք ձորը մեզ շարեցին կողք-կողքի. հրացանները որոտացին, աղիողորմ ճիչերով լեցուեց ձորը։ Հրացանները լռեցին, ոստիկանները քննութիւն կատարելու եաք, մեր ձեռքերի պարանները արձակեցին ու հեռացան։ Ես անվնաս փուած էի դիակների տակ. գգոյշ սողալով դուրս եկայ, շուրջս ամենքը քնել էին յաւիտեան. իսկ ծանր վիրաւորուածները «մի կաթիլ ջուր» էին կանչում։

7-8 օր սոված, ծարաւ քայլելուց յետոյ հասայ այս տեղ։

1914 թւի Նոյեմբ. 19-ին, Անդրանիկի կամաւորական բանակը Կոթոր-Սարայի վրայով հասաւ՝ «Մալա Հասան» քրդական գիւղը։ Պետական պաշտօնէութիւնը և հարուստները պատրաստուում էին պուկը դնելու։

Թիւրքերը և քրդերը ապաւինում էին հայերին։ Հայ ժողովրդի մեծ թշնամի՝ արիւնարբու Ջևդեթը փախուստի ճամբան բռնեց։

Կամաւորական բանակի առաջ դուրս եկաւ թրքական լաւագոյն զօրաբանակներից մէկը՝ Պշերի Զաթոյի հրամանատարութեամբ։ Գործոթ և Կուզակ հայկական գիւղերը դրաւուում են յիշեալ կողմից և անկարագրելի տանջանքների ենթարկուում այդ գիւղերի բնակչութիւնը։

Կուզակցի Սպիզ Ալայեանը. սողալով դուրս է գալիս գիւղից և հասնում «Տէր Յուսկան Որդւոյ» վանքը և առաջնորդական տեղապահ՝ Մանուէլ քահանային պատմում եղելութիւնը։ Քահանան շատ հասնում է՝ Բերկրի և Գայմագամից 10 ոստիկան վերցնելով գնում է յիշեալ գիւղերը։ Պշերի Զաթոն ստիպուած հեռանում է այդ գիւղերից և անցնելով Բեպապիկ գիւղը նոյն վայրագութիւնները շարունակում է այնտեղ։ Տէր Մանուէլը ամենայն քաջութեամբ հասնում էր այնտեղ ուր օգտակար

էր իր ներկայութիւնը։ 1915 թւին Տէր Մանուէլը ինքնապաշտպանութեան կռիւներին մասնակցեց՝ ակտիւօրէն և ընկաւ քաջարար։

Սարայի զինուորական հրամանատարն էր՝ թիւրք Արիֆ Բէյը որը զինուորական մեծ ընդունելութիւն է կատարում իւրդ Պշերի Զաթոյին երբ վերջինս մուտք է գործում Սարայ։

Այսպէս էր գործում նենգամիտ կառավարութիւնը. միշտ «անվտահելի» քիւրդին հանել՝ «անվտահելի» հայի դէմ։ Թիւրք հոգևորականները՝ որոնք գործիք էին կառավարութեան ձեռքին իրենց կրօնական քարոզներով համոզում էին քիւրդերին որ՝ հային սպանողը կերթայ «Ջաննաթ» և այնտեղ «փերիներ» կառանայ։

Արևածագից առաջ թշնամին «Սալաւաթ» գոչելով սկսեց շարժել դէպի հայկական դիրքերը.

Կոթորից Սարայ երկարող լեռնաշղթան Անդրանիկի ձեռքին էր որը դեռ հանգիստ սպասում էր թշնամու մօտենալուն։

Երբ թշնամին բաւականին մօտեցել էր. հայկական դիրքերը սկսեցին որոտալ. թշնամու շարքերը հնձւում էին անխնայ։ 2-3 ժամ տևող ճակատամարտից յետոյ, թշնամին նահանջից, իսկ կամաւորական բանակը առաջացաւ։

1914 թ. Նոյեմբերին հայրս մահամերձ հիւանդ էր։ Նրա մնարի շուրջ կանգնել էինք՝ Մայրս, ես և քոյրս։ Հայ կամաւորական բանակը արդէն շատ էր մօտեցել։ Դա մեծ ոգևորութիւն էր առաջ բերել հայութեան և մեծ վախ պետական շրջանակների մէջ։ Ես մօտենալով մահամերձ հօրս, յայտնեցի նրան դրութիւնը։ Նա յուզեց և մրմնջաց իր վերջին խօսքերը.

— Ա՜հ, երանի չմեռնէի և տեսնէի հայ ժողովրդի վերջնական ազատագրումը։

Հայրս՝ Տ. Մեսրոպը բնիկ Էրէրինցի էր. փոքր տա-
բիքից որբ մնալով մտնում է Լիմ Անապատի որբանոցը և
աշակերտում յայտնի Բոլոզ վարժապետին։ Աւարտելով
դպրոցը ուսուցչական պաշտօն է վարում, սպա ժողո-
վըրդի առաջարկութեամբ՝ ձեռնադրւում քահանայ,

Անփառունակ շիրմիդ վրայ, սիրելի հայր, օտար, հե-
ռու ափերից նւէր եմ բերում այս տողերը և սպասում
այն օրւան երբ ինքս անձամբ պիտի զարդարեմ քո գե-
րեզմանը՝ վասպուրականի աննման ծաղիկներով։

1914-ի աշնան վերջերին, Օվանը իր մարտական
խմբերով Առին գիւղն էր իջել։ Այս մասին լսելով յայտ-
նի Չաթոյի տղան գալիս, պաշարում է գիւղը։

Օվանը յանկարծակիի գալով շատ դիրքեր է բռնում
գիւղի կալերում. սպա ցանկանալով խնդիրը անարմուկ
կարգադրել, 3 ծերունիներ որպէս պատգամաւոր ղրկում
է՝ Չաթոյի տղայի մօտ և առաջարկում թոյլ տուի գին-
ւած խմբերը հեռանան գիւղից։ Չաթոյի տղան մերժում
է և առաջարկում է՝ անձնատուր լինել որը նոյնպէս
մերժւում է հայերի կողմից։

Թշնամու դիրքերից պայթում է առաջին գնդակը և
սկսւում է՝ մի ահռելի կռիւ որ գնալով սաստկանում է։
Հայ լաւ նշանաձիգներից մէկը՝ Ոսմեցի Ապրօն սպանում
է Չաթոյի տղային։ Երեկոյեան պարտւած թշնամին հե-
ռանում է։

Օվանը նոյնպէս իր խմբերով հեռանում է, իսկ շըր-
ջանի հայութիւնը ճնշւում է ահ ու դողի մէջ։ Ամենը սպա-
սում՝ էին կրելու Օվանի կատարած յանդգնութեան վրէժը։

Թրքական բանակում հայ պինւորների գնդակահա-
րութիւնը մասսայական բնոյթ էր ստացել։ Շատ քչերը
հայ պինւորներից կարողանում էին՝ ճողոպրել։ Այդ հազ-
ւագիւտ բախտաւորներից էին՝ 11 հայ պինւորներ որոնք
ճողոպրելով սխալմամբ մանում են՝ քրդական գիւղերից

մէկը։ Գիւղատէր Գալի Մահմուդի կարգադրութեամբ և դեկավարութեամբ ամարդօրէն ապանում են՝ հայ անմեղ ու մոլորած զինւորներին ու զիակները լեցնում՝ հորի մէջ։

Այդ դէպքից յետոյ՝ Սիմէոն անունով մի տաքարիւն Գոմաեցի երիտասարդ ապանում է մի ոստիկան։ Այդ ինքնապլուխ դէպքը՝ էլ աւելի էլեքտրականացրեց դրութիւնը։ Ամենքը սպասում էին անակնկալ և վատ դէպքերի։

Ռազմաճակատից հաղիւ ազատուած տասնեակ Գոմաեցի զինւորները վերադարձել էին հայրենի գիւղ։ Նրանք ցերեկները լինում էին տարում իսկ գիշերները իջնում գիւղ։ Թիւրք հովիւները նկատելով նրանց յայտնում են ոստիկանութեան։ Ոստիկանութիւնը անակնկալ կերպով գիշերով պաշարում է Գոմա գիւղը։ Ձերբակալւում է՝ գիւղի Ռէս Յովհաննէսը և սոսկալի տանջանքների են-թարկւում։ Գիւղը խուզարկւում է և ձերբակալւում են փախստական զինւորները։ Ձերբակալեցի նաև ես. տա-կայն շնորհիւ կաշառքի ազատուեցի։

Ես միւս օրը վերադարձայ՝ գիւղ. բայց միւս զին-ւորներին այլևս ոչ ոք չտեսաւ, ոչ ոք։

Այսքան հալածանքներ և ճնշումներ կարծես թէ բա-ւական չէին հայ դժբախտ գիւղացու համար. դրանց վրայ աւելանում էին նաև վաշխառու-շահագործողների տնտե-սական ճնշումները։

Հոչակաւոր արիւնարբու վաշխառուներից էր Ծէդօ անունով մի անխիղճ մարդ-գազան որը մեր գաւառում բազմաթիւ ընտանիքների քայքայման և դժբախտութեան պատճառ էր եղել։

Ժողովրդի արիւնը ծծողներից էր նաև՝ վաշխառու Օնբաշին։

Սրանք, բարձր տոկոսներով պարտք էին տալիս գիւ-ղացիներին և վճարման ժամկէտը լրանալուց յետոյ ան-

գրթօրէն գրաւում էին նրա ամբողջ ուշադրութիւնը և երբեմն նոյնիսկ սպառնում էին տանել՝ չվճարող գերադասու կինը։

Հետզհետէ աւելի բարդանում էր դրութիւնը. կրկին հայ զանգւածային կոտորածների հոտ էր գալիս. ուստի հայ մարտական կազմակերպութիւնները պատրաստում էին ինքնապաշտպանութեան գործը։ Մեր գիւղի պաշտպանութիւնը յանձնւած էր՝ 3 գինւած խմբերի որոնց հսկիչն էր՝ Տ. Մկրտիչ քահանայ Մարգարեանը։

Զէնքերի ընդհանուր թիւն էր՝ 17 հրացան, 15 մաուզեր և 26 զանազանատրճանակներ։

Թիւրք ոստիկանի սպանութեան կապակցութեամբ կառավարութիւնը յայտնեց որ՝ «քննիչ յանձնախումբ» պիտի գայ՝ գիւղում «քննութիւններ» կատարելու համար։

Գիւղից հեռացան՝ բոլոր երիտասարդ-ուհիները։ Ոչ-սը գիւղի միւս մեծերի հետ պատրաստւում էին ընդունելու «քննիչ յանձնախմբին»։

Վերջապէս «քննութիւնները» կատարւեցին. «յանձնախմբի» լաւ կաշառւած անդամները, խիստ գոհ՝ իրենց «քննութիւններից» հեռացան գիւղից, հեռացնելով նաև՝ գիւղին սպառնացող վտանգը։

Այսպիսի քաոսային դրութիւնը խիստ նպաստաւոր էր՝ ձրիակեր ոստիկանների համար որոնք շրջելով գիւղերում, կեղեքում էին՝ գիւղացիութեան ճիշդ է ժողովրդական առածը որ ասում է.

— Գայլն ամպոտ օր կսիրի։

Թուով 50 ոստիկանները, արիւնկզակ էդհեմ Բէյի գրեխաւորութեամբ՝ Արտաւէզից գալիս են՝ Աղջաւերան գիւղը ուր տեղացի գինւած տղաները հաւաքւում են՝ գիւղի կալերի մարագի մէջ ու պատրաստւում՝ դիմադրելու։

Էդհեմ Բէյը խորամանկութեամբ յայտնում է տղաներին որ՝ գինաթափ լինելու պարագային գերծ պիտի

լինեն որևէ վնասից։ Մարտիկները փորձած լինելով չեն հաւատում և մերժում են։

Ասպիկանները պաշարելով մարագը բացում են հրացանների կրակը. ներսից պատասխանում են։ Ուժեղ դիմադրութեան շնորհիւ ասպիկանները յուսահատւում և ընկրկում են։

Էդհեմ Բէյը համոզւելով որ հնարաւոր չէ վնաս պատճառել մարտիկներին, կրկին յայտնում է նրանց և երդւում որ վնասվել լինելուց յետոյ ազատ պիտի արձակէ բոլորին. հակառակ դէպքում դիւղը պիտի հրդեհի։

Գիւղի Ռէս Սիմէոնը ու նրա օգնականը աղերսում են մարտիկներին՝ անձնատուր լինելու։ Մարտիկները սկզբում կտրականօրէն մերժում են, բայց յետոյ նրանցից մի մասը համաձայնում է։ Ամբի մէջ պատակում է առաջ գալիս։

Մի մասը ուժեղ ընդդիմանում են վատահ լինելով, որ զէնքերի յանձնումը հաւասար է՝ ինքնասպանութեան։

Վերջապէս զէնքերը յանձնում են։ Տմարդ և ախտադրուժ թշնամին զինաթափւած մարտիկներին սպանում է։ Նրանցից ազատւում է միայն՝ Սահակ Ադրիանեանը, որը հետևեալն է պատմում սոսկումով.

— Ես լակորոյս, սարսափահար դուրս եկայ դիակների տակից։ Հոգևարքի խռխռոցի ձայները հասնում էր կիսախուլ ականջիս և ահ ու դող պատճառում ինձ։ Թանկագին ընկերներս որոնցից իւրաքանչիւրը մի ընտանիքի սիւնն ու ճրագն էին, աչքիս առջև տանջւում ու յափշտեննական քուն էին մտնում։

Սիրտս ճմլւեց, արցունքներով ցօղեցի՝ ընկերներիս դեռ տաք դիակները։ Ուժերս սպառւել էր...

Յանկարծ ուշքի եկայ, խորհեցի թէ մօտենում է լուսաբացը. պէտք է որ փրկեմ կեանքս։ Մօտենալով դի-

ակներին, բոլորի ականջին կանչեցի, մատածելով որ մի գուցէ մէկն ու մէկը ողջ լինի. սակայն իզուր։

Սողալով հասայ կիւանենց գիւղը. գիւղացիք ինձ տեսնելով՝ ճնացին զարմացած։ 5 օր հիւանդ պառկեցի, ապա գնացի մեր գիւղը։»

Գոմս գիւղի դէպքից յետոյ, 3 մարտական խմբերը անցնում են՝ էրէրին նշանաւոր գիւղը այնտեղից կիւռնենց, ապա Բայրակ։ Այդ բանը լսելով էդհեմ Բէյը, գալիս և պաշարում է՝ Բայրակ գիւղը։ Հայ մարտիկները անակնկալի գալով դիրքեր են բռնում և յետ մղում թշնամու յարձակումը։ Անհաւասար կռիւը սկսում է, որի ընթացքում իր աննման խիզախութեամբ յայտնի է դառնում՝ Մկրտիչ Նալբանդեանը (Մկլօն)։

Չնայած որ՝ թշնամիները թուով և զէնքով գերազանցում էին հայերին և գործածում էին թնդանօթներ, այդուհանդերձ, հայերը ցոյց էին տալիս անխորտակ դիմադրութիւն։

Երեկոյեան հայ մարտիկները ճեղքելով պաշարման օղակը հեռանում են՝ գիւղից։

Աշնան վերջին տխուր օրերից մէկում թշնամի հրոսակները հրդեհեցին 3 հայկական շէն գիւղեր. Բայրակ, Ատնականց և Տրլաշէն։ Բարերախտաբար յիշեալ գիւղերի հայ բնակիչները նախքան հրդեհը, տեղեկանալով վտանգի մասին հեռացան՝ իրենց պապենական հայրենի օջախներից։

Նախքան հրկիզումը՝ սոյն գիւղերը ենթարկուեցին վայրենի կողոպուտի, իսկ գիւղի շները գնդակահարուեցին։

Անասելի հրդեհը որ տևեց 6 օր ու գիշեր, մոխրակոյտի վերածեց՝ 3 գիւղեր և բնակարանից զրկեց՝ հարիւրաւոր հայ գիւղացիներին։

Ձմեռւայ սկիզբն էր, հրկիզուած գիւղերի բնակչութեան դրութիւնը լուրջ. ուստի հարևան գիւղերի հայ

գիւղացիութիւնը, ջերմօրէն ընդունեց իր մօտ հրդեհից տուժած գիւղացիներին։

Ասիկանական չոկատները շրջապատելով թիմարում, հանդիպած տղամարդուն ձերբակալում էին, ծեծում, կամ սպանում։ Այս հանգամանքը ի նկատի առնելով հայ գինուած մարտիկները խուսափում էին նման հանդիպումներից։ Բայց դա միշտ չէր յաջողում։

Նորաւանց գիւղում մի խումբ գինուած մարտիկներ, լսելով որ ասիկանութիւնը պիտի խուժի գիւղ, շտապում է հեռանալ։ Բայց թշնամին նկատում և պաշարում է նրանց։ Սկսւում է մի օրհասական և անհաւասար կռիւ, ուր քաջարար ընկնում են բոլոր հայ մարտիկները։

Դարաբէկ գիւղում հաշտ ու խաղաղ բնակւում էին 52 հայ և 21 քիւրդ ընտանիքներ։

Բնութեան ուած՝ աննման գեղեցկութեամբ էր օժտուած՝ գիւղացի Աբրահամի աղջիկ՝ չքնաղ վերժինէն։

Գիւղում տարածւել էր թէ՝ գիւղապետ՝ Օսման Աղայի տղան Ամարը ցանկանում է բռնի ուժով տիրանալ վերժինէին և այդ նպատակի գործադրման համար սպասում էր յարմար առիթի։

Կարծես թէ գեղեցկութիւնն էլ այդ դրութեան մէջ յանցանք էր։ Խեղճ վերժինէն շաբաթներով փակւած էր մնում տնում։

1915-ի նահանջին Դարաբէգ գիւղը ուշացել էր։ Նա դեռևս չէր միացել՝ նահանջող կարաւաններին։ Առիթը օգտագործելով՝ Ապրիլի 8-ին Ամար Աղայի գինուած «գոյամները» մտնելով Աբրահամի տունը գէնքի ուժով դուրս են բերում՝ վերժինէին ու տանում, առանց ուշադրութիւն դարձնելու՝ նրա մօր և հարազատների աղիողորմ լացին։

Թիմար գաւառում յայտնի էր՝ Գոմա գիւղացի Բաղդիկը։ Նրան էր յանձնւած՝ Գոմա գիւղի եկեղեցապահու-

թեան մարզանքի և կազմակերպման գործը. Բաղդիկը ժողովրդական դէմ էր, նա սիրւած էր՝ թէ հայերի և թէ հարևան ժողովրդների կողմից։

Մի օր էլ գիւղում լուր տարածւեց որ՝ Բաղդիկը անյայտացել է։ Նրա հարազատների փնտռտուքները իզուր անցան։ Ամիսներ յետոյ, 2 ժանդարմներ Բաղդիկի նկարը ձեռներին ներկայացան և արձանագրեցին՝ նրա կենսագրութիւնը։ Նրանք յայտնեցին՝ թէ Բաղդիկը բանտարկւած է՝ Երևանում ցարական իշխանութեան կողմից։

Սոյն դէպքից, 2 ամիս յետոյ գիւղ վերադարձաւ՝ Բաղդիկը։

Բաղդիկը լաւ սուրհանդակ էր։ Մի օր կարիք կար մի նամակ հասցնել՝ Կիւտնենց. բաւականին վտանգաւոր գործ էր դա, տևեալ պայմանների մէջ։ Յայտարարւեց՝ թէ ով կարող է այդ պարտականութիւնը ստանձնել. Բաղդիկը ներկայացաւ։ Դեռ գիւղից դուրս չեկած՝ հրացանաձգութեան ձայները լսեցին։ Զինւած մարտիկները օդնութեան փութացին։ Առաջարկւում է՝ յարձակման ենթարկւած Բաղդիկին վերադառնալ գիւղ. բայց նա պնդում է՝ որ պիտի գնայ և գնում է։ Կէս գիշերին վերադառնում է Բաղդիկը իր առաքելութիւնը լրիւ կատարած։

Այդպէս էր՝ Գոմա գիւղի Բաղդիկը որը քաջարար ընկաւ՝ ինքնապաշտպանութեան մարտերից մէկում։

Այս շրջանում պակաս դեր չէին կատարում նաև հայ կանայք, որոնք հարկ եղած դէպքում ցոյց էին տալիս՝ զարմանալի արիութիւն և քաջութիւն։ Այդպիսի կանանցից էր մեր գաւառի՝ յայտնի Եղսօն։

1915 թւի Ապրիլի 7-ին մեր գիւղում ձերբակալւեց՝ Մխրան Մկրտիչեանը։ Գիւղի զինւած մարտիկները շտապեցին նրան ազատելու։ Կռիւը սկսւում պէս տեղ է հասնում Եղսօն և կողմերի մէջ միջամտելով, հաշտեցնում է նրանց և ազատում Մխրան Մկրտիչեանին։

Չէնքերի փոխադրութիւնը երկիր, կատարւում էր շատ խիստ և գաղտնի պայմանների մէջ։

Չինատար խմբերին մասնակցում էր՝ Ատեոցի Հովիկը։

Տիրամէրցի Յովսէփ Սաղաթելեանը հետևեալն է պատմում՝ Հովիկի մասին։

— Մի օր Գործոթ էի գնում, հեռից նկատեցի 2 ձիաւորների։ Մօտեցան, տեսայ՝ մէկը թիւրք մոլլայ է, իսկ միւսը ըստ երևոյթին՝ մի հայ երիտասարդ։

Մոլլան խօսում էր, նա հայհոյանքներ էր տեղում հայ երիտասարդի գլխին ասելով. «Քաֆըր տղայ ձեռքերդ և լեզուդ կկտրեմ ու կձգեմ շների առաջ. քեզ արժան եմ համարում պահել իմ տան մէջ՝ որպէս մշակ, իսկ դու համարձակւում ես գողութիւն անել. ձեր ազգը պիտի ոչնչացնենք աշխարհից»։

Երիտասարդը լուռ էր։ Ես դէմքս դարձրի դէպի ծովը՝ չտեսնելու մոլլայի երեսը։

— Բարև աղա տղայ Ուսէփ, երեսիս էլ չես նայում.— գոչեց յանկարծ, կարծեցեալ մոլլան։

Ոտքերս դողացին, քիչ էր մնում գետին ընկնէի. ակամայ մօտեցա մոլլային.

— Վայ տունդ չքանդւի Հովիկ, իսկական մոլլայ ես դառել.— բացագանչեցի ես, զարմացած՝ այդքան յաջող ծպտումից։

Մօտեցայ երիտասարդին, Ամկուբերդցի Պատուրն էր՝ ծառայի դերում, իսկ ձիու բեռը ամբողջովին փամփուշտ և հրացանի մասեր էին։

Ահա այսպէս էր գործում Ատեոցի Հովիկը, այսպէս էին գործում բազմաթիւ «Հովիկներ»։

Գաւառի հայ տիպար ուսուցիչ էր՝ մեր գիւղի Նախոն (Նահապետը.) որը մասնակից եղաւ Վասպուրականի 1915 թւի ինքնապաշտպանութեան կռիւներին։

Գոմս գիւղի հիւսիս արևելքում, ծառախիտ ձորի մէջ

դարերից ի վեր կանգնած է Տ. Յուսկան Որդւոյ՝ Ս. Ստեփաննոսի անունով փոքրիկ մատուռը, որը շրջապատված է հսկայ և հնամեայ ծառերով։

Ծերունիներից լսել էինք որ Տ. Յուսկան Որդի՝ Ստեփաննոսը արջառներին լծում է՝ արտը վարելու, արջառները խրտնում ու փախնում են։ Երիտասարդը հետևում է նրանց, նա անցնում է՝ լեռներ, ձորեր և հասնում է կանաչ աղբիւրի մօտ, խոր ձորում, ծնում է այնտեղ, ծառեր տնկում, մատուռ կառուցում։

Այդ ծառերի ճիւղերին ոչ ոք ձեռք չէր տալիս, որովհետև դա համարւում էր մեղք։ Պատմում էին թէ մօտիկ Փաքիս գիւղի Մահմուդը քանդում է մատուռի դուռը և գիւղ տանում, Գիւղը հասնելիս, երբ ցանկանում է վար դնել այն, չի կարողանում, դուռը պինդ կպել էր կռնակին ու պոկ չէր գալիս։

Մատուռի կանաչ դաշտերի մէջից բղխում էր Լուսաղբիւրի անարատ և վճիտ ջուրը։ Այդ ջուրը, ասում էին՝ բազմաթիւ վէրքեր էր բուժել. գիւղացիք գալիս էին այդտեղ, աղօթում և մատաղ անում։

Աղբիւրին կից կան ծառեր «Ճակուզաղաջ» անունով։

Ջատկի 2-րդ կիրակին ժողովուրդը հաւաքւում էր այնտեղ և զւարճանում։

1915 թւի հայ զանգւածային կոտորածների դիւային ծրագրի մէջ ներառւած էր նաև Վասպուրականի հայութիւնը։

Ծրագրի գործադրութիւնը դիւրացնելու համար Վասպուրական նահանգը բաժանւած էր մի քանի մասերի և նշանակւած էր ամեն մի մասի պատասխանատուն՝ հետևեալ ձևով.

Վանի հայութեան ֆիզիքական ոչնչացման պատասխանատու գեկավարն էր՝ Ջևդեթ Բէյը, Բերկրիի և վերին Թիմարի պատասխանատու գեկավարներն էին՝ Զիա Բէյը,

Սմար Բէյը և Ցարհոն։ Արճակի և վարի Թիմարի համար Շարաֆ Բէյն ու Արիֆ Բէյը, Հայոց Ձորի համար՝ Շիւքրի Ագան. Արճէշ, Ալջաւազի համար՝ Հուսէյն Փաշան։

Հրահանգւած էր՝ առանց տարիքի, սեռի խտրութեան կոտորել անխնայ թշնամիներից որ մէկը համարձակւէր խնայելու որևէ հայի, ինքը պիտի պատժւէր դաժանօրէն։

Հէնց այդ օրերին Սարայի մէջ սպանւեցին 150 հայ պինւորներ որոնց մէջ էին բժիշկ Գարագէօզեանը և ատամնաբոյժ Արիստակէսը։

1915-ի Ապրիլի 3-ին Ջևդեթ հեռագրով հրահանգում է՝ սկսել Արճէշի ջարդը։

Հեռագրատան մէջ երկար տարիներ աշխատող՝ Նշան Էֆենդին իր պաշտօնի վրայ սպանւում է։

Արճէշի Գայմագամը, մարտական խմբերի զեկավար Օւան Գարբինեանին խորամանկօրէն իր մօտ է կանչում և առաջարկում՝ որ պինւած խմբերը հեռանան գաւառից ժամանակաւորապէս, պատրւակելով թէ կառավարութիւնը քննութիւններ է կատարելու։ Օւանը ընդունում է այդ «խաղաղասէր» մարդու առաջարկը, բայց հէնց որ խմբերը ծովափում նաւակ էին նստում, հանդիպում են զօրանակալ թշնամու բուռն կրակին։ Խմբերի հեռանալուց յետոյ Արճէշ, Ալջաւազի հայութիւնը ենթարկւում է տեղահանութեան և կոտորածի...

Փետրւար 12-ին թշնամին՝ 500 հոգով յարձակւում է Ալջաւազի Առէն գիւղի վրայ. 15 հայ մարտիկներ պիտի դադրում են քաջաբար, որոնց օգնութեան են հասնում ուրիշ գիւղերի մարտական խմբեր՝ 35 հոգով։

Թշնամին բաւականին սպանւածներ թողնելով, պարտւած հեռանում է։

Ապրիլի 4-ին խուժանը մի խումբ հայութեան քշում բերում է մինչէ Օրօրան գետը, որը թափւում է՝ վանայ լիճը։ Կէս գիշերին գնդակահարում են բոլորին. սպան-

ւում են միայն՝ Ֆիւրդ Ղազոն և նաւավար Յակոբը։ Սրանք արիւնլւայ դուրս գալով ղիակների տակից գալիս հասնում են՝ «նարնջկայ Գեորը» և այնտեղից էլ ծովափ...

Տաժանելի այդ օրերին առագաստանաւերով հայ տղաները շրջում էին ծովի վրայ, օգտակար լինելու համար ժողովրդին։ Ամանց գիւղի Յերոն, այդ ասպարիզում մեծ դեր կատարեց։ Ղազոն և Յակոբը տեսնելով առագաստանաւը օգնութիւն են կանչում։ Յերոն մօտենալով նրանց վերցնում և փոխադրում է՝ Լիմ Անապատի կղզին։

Հրոսակներին թոյլատրուած էր չսպանել միայն այն գեղեցիկ հայուհիներին որոնք ընդունում են՝ կրօնափոխութիւն. և որովհետև պատւազգաց և հաւատացեալ հայուհիները չէին ընդունում այդ, ուստի, նրանք վայրենաբար բռնաբարուում ապա սպանուում էին։

Ապրիլի 5-ին հրոսակները Բերկրի գալով հաւաքում են տեղոյն 25 ընտանիք հայերին, տանում Բանդիմահի գետի կամուրջի վրայ և լեցնում գետը։ Ապա անցնում են Գործոթ, որտեղ հաւաքելով բերում են Ս. Թադէոս, Կուպակ և Ֆեռշք գիւղերի հայութիւնը։ Ամար Բէյը յայտարարում է ժողովրդին, որ իրենց մօտ եղած զէնքերը յանձնեն, որպէսզի փրկւենն։ Զինւած տղաները մերժում են զէնքերը յանձնել, հակառակ գիւղերի Ռէս Աղաների Թախանձանքին։ Կէս գիշերին բոլոր տղամարդկանց իրար կապելով տանում են Սպիտակ Ֆար խոր ձորը և գնդակահարում բոլորին։ Թագաւորում գտնւող հայ մարտիկները դուրս նետւելով կատաղօրէն յարձակւում են՝ դահիճների վրայ։ Սոյն ընդհարման ընթացքում սպանուում են՝ 50 հոգի հրոսակներից։ Լոյսը բացւելուն, մարտիկները բարձրանում են եկեղեցու կտուրը, դիրք բռնում և սկսում կռւել։ Երեկոյեան կողմը գալի է դառնում փամփուշտի պակասը, մարտիկները ուժգին մի յարձակումով ճեղքում են պաշարման օղակը իրենց հետ տանելով թւով 1500 ժողովուրդ։

Սոյն դէպքերից անտեղեակ էին նոյնիսկ հարևան գիւղերը։ Ապրիլի 20-ին Թիմարի Ալուր և միւս գիւղերից վերադարձող խուժանը կրկին պաշարում է Գործոթ գիւղը, որտեղ տեղաւորուած էին՝ սարերից վերադարձող ժողովուրդը։ Մի բուռ քաջեր, Մելոյի Խաչոյի գլխաւորութեամբ դիմում են՝ ինքնապաշտպանութեան ժողովրդին լեցնում են եկեղեցին և 40 հոգով կանգնում 2000-ի հասնող խուժանի դէմ մինչև կամաւորների մուտքը։

Ապրիլի 6-ի արշալոյսին, խուժանը, որին միացած էր Բերկրիի Գայմագամ Զիա Բէկը 2200 հոգով պաշարում է՝ Տիրամէր գիւղը։ Գիւղում գտնուող գինուած տղերքը ժողովրդին լեցնում են՝ Ռէս Սողոմոնի տունը, իսկ իրենք բարձրանալով քահանայի երկյարկանի տունը սկսում են կռւել։ Կռիւը տևում է՝ մինչև գիշեր. հայ մարտիկների փամփուշտը սպառելու վրայ է. ուստի յարմար են գրտնում՝ թողնել գիւղը։

Խուժանը ժողովրդին լեցնում է դպրոցի բակը։

Երիտասարդ քահանան նետւում է խարոյկի մէջ և ողջ ողջ այրւում։ Ամոթի դէզերով հրդեհում են՝ դպրոցի բակը։ Գինուած տղաները խոյս տալով հասնում են Հիմ Անապատ և միանում մարտական ուրիշ խմբերին։

Ապրիլ 7-ին արևը չծագած խուժանը պաշարում է Զանիկ գիւղը։ վստահելով գաւառապետի հաւաստիացումներին, ժողովուրդը հաւաքւում է եկեղեցու հրապարակում։ Ժողովրդի մէջից չոկում են՝ 75-80 հայ երիտասարդներ, որոնց տանելով այգիները դնդակահարում են։ Գիշերը ևս հրապարակում հաւաքւած կանանց և երեխա-Գիշերը ևս հրապարակում հաւաքւած կանանց և երեխաներին չարդում են՝ անխնայ։ 120 հոգի կանայք և աղնելին չարդում են՝ անխնայ։ 120 հոգի կանայք և աղջիկներ լեցւում են՝ Ռեհանի Աբրոյի ընդարձակ տունը. Ջիկներ լեցւում են՝ Ռեհանի Աբրոյի ընդարձակ տունը. կէս գիշերին հրոսակները յարձակւելով նրանց վրայ, բրոկէս գիշերին հրոսակները յարձակւելով նրանց վրայ, բրոնաբարում են՝ գեղեցիկ կանանց և աղջիկներին։ Ռեհանի Աբրոն ունէր միայն մի տղայ, որին չափազանց սիրում

էր և որին ամուսնացրել էր 17 տարեկան հասակում։ Ներքսակ պատանու մայրը իր մինուճար զաւակի կեանքը փրկելու համար, նրան հագցրել էր կանացի հագուստ։ Գազանային բռնաբարումների ընթացքում՝ բացւում է գաղտնիքը։ Տղային մերկացնում են բակում։

Իզուր են անցնում մօր պաղատանքները, ժողովրդի խնդրանքները. շողում է սուրը և պատանին փուշում է գետին, գլուխ և մարմինը անջատւած։ Մայրը խելագարւում է։

ՆԱՀԱՆՋ

Ապրիլ 7-ի, Աւետման օրը Ս. Պատարագից յետոյ մեր գիւղի բնակիչները հաւաքւած կտուրներում խօսում էին օրւայ դրութեան մասին։ Այդ ժամանակ կիւանենց գիւղի կողմից երևացին 2 ձիաւորներ։ Դիրքերում գինւած տղաները սպասում էին։ Ձիաւորներից մէկը Դալի Մահմադն էր, միւսը՝ իր ծառան։ Գիւղի մեծերը ընդառաջ գնացին։ Դալի Մահմադը յայտնեց որ Թաֆուր Բէյը կարգադրել է՝ 40 «չափ» գարի պատրաստել, աւելացնելով որ մենք հայերի հետ եղբայրներ ենք և այդպէս էլ կմնանք։ Նրա մեկնելուց յետոյ մեծ թւով թշնամի հրոսակներ պաշարեցին մեր գիւղը։

Ժամի 12-ին Բայկուշ Քարի կողմից երևացին՝ 2 սուրհանդակներ, որոնք բերել էին Սիրուն Սարոյեանի հրամանը.— «Առանց մի վայրկեան կորցնելու, քաշւել՝ Փիրկարիը գիւղը և այնտեղից էլ Էրէնայ սարը...» Գիւղը պաշարւած լինելու պատճառով՝ նահանջը յետաձգւեց գիշերւան։

Գևորգ Մարգարեանը և Յովնան Մկրտիչեանը, Սիրունի հրամանը Ադիզոզալ գիւղը հասցնելու համար ճանապարհ ընկան, բայց գիւղից դեռ չհեռացած հանդիպեցին թշնամու համազարկերին ու վերադարձան ժողովուր-

դր մատնւեց խուճապի, սակայն տղերքը հանգստացրին։ կռիւը սկսւեց, հայ գինւորները դիմադրեցին՝ քաջաբար, ուսաի թշնամին նահանջեց։

Ապրիլի 7-ին երեկոյեան սկսւեց Թիմարի նահանջը. ժողովուրդը թողնելով իր պապենական օջախը, հեռանում էր։

Ես, համբուրելով հայրենական տան շէմքը, դառնօրէն հեկեկացի։

Մէկ ժամ եաք, Փիրկարիբ գիւղում էինք։ Յանկարծ նկատեցի որ մայրս չկայ, հետաքրքրւեցի, փնտռցի, բայց անօգուտ։ Որոշեցի՝ վերադառնալ գիւղ, մօրս գտնելու համար։ Ճամբայ ընկայ. այդ միջոցին հանդիպեցի՝ մեր գիւղացի Սեդրակ Ալոյեանին, որի կինը և իր եղբօր կինը գիւղումն էին մնացել։ Միասին ճանապարհւեցինք։ Բայց դեռ շատ չանցած համազարկերի ձայները լսեցինք։

— Վերադառնանք, Յարութիւն.— Սաց Սեդրակը.
—Թշնամին բռնել է ճանապարհը։

— Գնանք, Սեթո ջան, աւելի լաւ է մերոնց հետ մեռնենք։

Հասնելով գիւղը, գնացի մեր տուն, բայց մայրս այնտեղ չէր. անցայ հարևան կարապետ Շահրազեանենց տունը, որը ամուր փակւած էր։

Դուռը թակեցի. ինքնութիւնս իմանալով դուռը բացին. ներսում գտնւում էին՝ 32 հոգի ծերունի կանայք և տղամարդիկ, որոնք անկարող էին գաղթելու և ապաստում էին իրենց «ճակատագրին»։ Այնտեղ էր նաև մայրս։ Յայտնեցի բոլորին, որ հեռանան գիւղից և հաւաքւեն Փիրկարիբ։ Գիւղն էին մնացել՝ Ս. Ստեփաննոս եկեղեցու վարեմի ժամհար՝ Ղազար Տ. Ստեփանեանը, Աշխատուր Շահրազեանը և Ոզմեցի՝ Յարութիւն Աբրահամեանը իրենց ընտանիքներով։ Մօրս պատւիրեցի՝ պատրաստւել և ապասել ինձ։ Մութը կոխել էր, բարակ անձրև էր մաղում։

Հասնելով Տ. Ստեփանեանենց տունը մտայ բակը, բարձրացայ տանիք. զոյգ շները յարձակուեցին վրաս, ուզեցի հանգստացնել, բայց նրանք կատաղած հալումս էին։ Մօտեցայ երդիկին և կանչեցի.

— Ղազարէ, արի եկ արտաքս։

— Ո՞վ է կտուրը.— ձայնեց ներսից Ղազարը։

— Ես եմ, Յարութիւնը. տնաքանդ, հաւաքիր ընտանիքդ և փախիր Փիրկարիը, թշնամիները գալիս են։

Մի քանի ընտանիքներ ձամբու դնելով շտապեցի մօտս. այնտեղ էր նաև Եղտո Մարգարեանը, որից տեղեկացայ որ 14 պատանիները, Զուռնաչի Յովհաննէսի գլխաւորութեամբ հաւաքւած են իրենց օգայում։

Անյապաղ անցայ այդ վայրը և յայտնեցի որ շտապեն հեռանալ գիւղից։ Ծերուկ զուռնաչին բարկացաւ վրաս և յորդորեց տղաներին հանգիստ ձնալ և սպասել առաւօտեան։ Ես իմ վազեմի ընկերներիս ստիպեցի՝ որ հեռանան։ Տղաները համաձայնեցին և օգայից դուրս գալով ճամբայ ընկան դէպի Փիրկարիը։ Այդ պահին, Ոգմեցի Յարութիւնի տանից ծուխ նշմարեցի, շտապ մօտեցայ. կինը՝ Նանէն թոնիրը վառել և խմոր էր հունցում։

— Այ մարդ, ամենքը իրենց կեանքի համար են մտածում, դու դեռ նոր հաց ես թխում.— գոչեցի ես։

— Մենք էլ կգանք շուտով.— պատասխանեց Յարութիւնը։

Յարձայ մօրս մօտ, որին էլի վրայ նստեցնելով գիւղից հեռացանք։ Ճռիկ աղբիւրի մօտ յիշեցի ընկերուհի Սետրակին, ուստի մօրս այդտեղ թողնելով, շտապեցի Սետրակենց տունը. հասայ ու մտայ սրահը, ուր պլպլում էր ձէթէ ճրագը. ոչ ոք չկար։ Սիրտս ճմլուեց, գնա երեկուայ այդ շէն ու պայծառ նահապետական տունը 45 շունչ բնակիչով այսօր արդէն թափուր էր ու ամայի։

Յանկարծ փսփսոցի ձայն լսեցի. զգու շութեամբ առաջ

անցայ, մտեցայ փոքրիկ դռան, ճեղքից դիտեցի։ Երկու կանայք էին, մէկը երկունքի վրայ էր, իսկ միւսը հակում ու խնամում էր նրան։

Յուզած թողի ու հեռացայ։

Ղևոնդ Գասպարեանի տան մօտով անցնելիս լոյս նկատեցի և ներս մտայ. տեսայ Ղևոնդը իր «արբաբի» Մանուկ Աղայի երկաթէ գուլպանն էր տեղաւորում պատի մէջ, թշնամու ձեռքը չանցնելու համար։

— Խեղճ մարդ, դիւղում ոչ ոք չի մնացել, ամենքը իրենց սեփական տուն ու տեղը թողած փախել են, դու «արբաբի» գուլպանն ես թագցնում։

Շտապեցի մօտս։ Դանդաղօրէն անձրևում էր։ Շարունակեցինք մեր ճանապարհը։ «Կարմիր պատիկ» կոչուած արտի մէջ տեսանք Ղևոնդի երեխաներին, որոնք սպասում էին իրենց հօրը։ Ի վերջոյ հասանք Փիրկարիբ։ Գիւղում մարդ չէր մնացել։ Մօրս թողնելով մտայ գիւղը, ինձ շրջապատեցին կատաղած շները, հազիւ հազ ազատուեցի. շտապեցի մօրս մօտ, բայց նա չկար։

Յուսահատ սկսեցի փնտռել նրան։ Այգիներից դուրս գալով ընկայ ցեխուտ «չիմաններըը». հոգիս ընկճուած էր։

Սև խաւարի մէջ լսեցի մանկական ձայն.

— Մամա, մամա, հաց, հաց...

Իսկ մայրը սարսափահար խրատում էր որ՝ փոքրիկը լռի։ Սոյն խօսակցութեան յաջորդեց մի ուրիշը.

— Խնամի Շուշան, երեխան ձգիր, շտապիր հեռանանք, լոյսը բացւում է, թշնամին գալիս է...

ԼԻՄ ԱՆԱՊԱՏԻ ԿՈՒԻԻԸ

Այդ գիշեր, Նարաւանց գիւղը հաւաքուեցին Թիմար գաւառի բոլոր մարտական խմբերը։ Սիրուն Սարոյեանը խրախուսեց՝ հայ մարտիկներին և հրաւիրեց՝ զոհաբերութեան և անձնւիրութեան։

կազմակերպւեց՝ դիրքերի բաժանումները և ծրագրւեց՝ ինքնապաշտպանութեան գործը։

Բացւեց՝ Ապրիլի 8-ի արիւնոտ առաւօտը. Սիփան լեռան գագաթը ողողւեց՝ արեւի լուսաշող ճառագայթներով։ Նահանջող ժողովրդի մի մասը դեռևս ինքնապաշտպանութեան գծից դուրս էր, երբ սկսւեց կռիւը կուրացած թշնամին նետւեց՝ դէպի մեր դիրքերը։ Հայ մարտիկները ընդդիմացան՝ արիաբար։ Ատեղծւեց՝ անասելի ժխոր, աղմուկ և աղաղակ։

Սպիտակ Քարի մօտ, հարթ դաշտում յետ մնացող ժողովուրդը ենթարկւեց՝ թշնամու խիստ յարձակման, որոնք խուճապի մատնելով, մի մասը գերի ընկան և մի մասն էլ սպանւեցին։ Հայ մարտիկները անվարան օգնութեան փութացին, որի շնորհիւ ազատւեց ժողովրդի մի մասը։ Այս կռւում ընկան՝ Ոգմեցի Յարութիւնը, Դիլբարի Յակոբը, Գասպարի Ղևոնդը և մի քանի տղամարդիկ ու կանայք գերի մնացին։

Թշնամու ահեղ յարձակումներից վիրաւորւեցին՝ Փերկուրիրցի Յակոբ Սարոյեանը, կարապետ Ալիկեանը, Ատեոյի Զաքոն, Քոչանցի Յոհաննը և Սոսրատցի Ռաւոյի Դաւոն։

Մերոնց դիրքերը սեղմւում էին։ Այդ պահին Ջանիկ գիւղի այգիներից Ամար Բէյը իր հեծեալ հարւրակով և հազարաւոր խուժանով հասաւ ու պաշարեց՝ Ատեռ գիւղը։ Չարդելով այնտեղ մնացած ծերունիներին, արշաւեց՝ «Սև Քարի» լեռնաշղթայի դիրքերի վրայ։ Թշնամու թիւը գերազանցում էր մերոնց։ Ծովափը հաւաքւած ժողովրդի թիւը մօտ 14000-ի էր հասնում։ Գոռում էր թշնամու Ջարդի ահեղագոռ շեփորը. քարերը ճաքում էին զնդակներից։

— Կրակ, կրակ, գոռում էր՝ Սիրունը անդադար։

Կռիւը ահռելի էր։ Սոյն օրհասական կռւում վիրա-

ւորւեցին՝ Սիրունը և Գոմսեցի Գաբրիէլը. սպանւեցին՝ Գևորգ Գալստեանը, Նորաշէնցի Զիրոյի եղոն և ուրիշներ։

Նորաւանց և Ախիշկ գիւղերի արևմտեան լեռնաշղթայի կարևոր դիրքերը անցան՝ Թշնամու ձեռքը։ Թշնամին ոգևորւելով սաստկացնում էր իր գրոհը և կարկուտի նման գնդակ տեղում՝ անդէն ժողովրդի վրայ։

Շատերը մեծերից և փոքրերից խեղդամահ եղան ծովի մէջ։

Առագաստանաւերը կղզին էին տեղափոխում՝ ծովային խմբած խուճապահար ժողովրդին։ Առաջնութիւն տրւում էր վիրաւորներին, կանանց և երեխաներին։

Փոխադրութեան գործի ղեկավարն էր՝ կարապետ Շահբազեանը։

Մահու և կենաց կռիւ էր դա։

Կաղերին կից լեռնաշղթան իշխում էր մեր դիրքերի վրայ, թշնամին գրաւեց այդ, մերոնք սաստկացրին հակագարկերը։ Թշնամին զգալի ուժեղացրեց՝ յարձակումը, սակայն մերոնց շեշտակի հարւածներից ընկան տասնեակներ ու թշնամին նահանջեց։


Մերոնց զէնքը և փամփուշտը նւազում էր։ Ներսի կղզուց օգնութեան եկան՝ Օւանը, Թարխանլուի Պետրոսը, կարաքեշիշի Մկոն և Տէրտէրի Զևոնդը իրենց խմբեսը, կարաքեշիշի Մկոն և Տէրտէրի Զևոնդը իրենց խմբեսը, բւմ։ Օւանը իր հետ բերել էր՝ 2000 զանազան փամփուշտ, որը բաժանւեց անմիջապէս։ Օւանը խումբը բաժանելով՝ 3 մասի պատրաստւեց՝ հակայարձակման անցնելու։ Կէս-3 մասի պատրաստւեց՝ հակայարձակման անցնելու։ Կէսօրւայ ժամի 3-ին հակայարձակումը սկսւեց։ Հայ Մարտիկները խոյացան՝ թշնամու դիրքերի վրայ. այդ ահեղ յարձակման դէմ ընկրկեց թշնամին ու նահանջեց։

Այդ պահին լուր հասաւ՝ թէ պաշարւած է Ախիշկը. իսկոյն մի խումբ գլխաւորութեամբ՝ Պատուր Մանուկեանի և Միրաք Դումանեանի. հասնելով այնտեղ միանում են տեղական ուժերին։ Թշնամին նահանջում է

թողնելով 12 սպանած և 5 վիրաւոր։ Յարութիւն Այ-
ւազեանը սուն անհաւասար կռւի մէջ խիստ կարևոր դե-
է կատարում։ Նա նահանջի ժամանակ հարիւրաւոր կեան-
քեր է փրկում իր նաւով։

Ժիշկ գիւղի կռւին, վիրաւորւում և մեռնում է
յայտնի Մուսէն, Գեղու և Ամկուբերդի ոստիկանապետը,
որը կատաղի հայատեաց և հակաժողովրդական մարդ էր,

Վանքի կռւին Առեղի Թուբէնը որին միայն 10



Լիմ Աճապատի կղզին եւ Ս. Գեւորգի վանքը

փամփուշտ էր մնացել, որոշում է մնալ թշնամու թիկուն-
քը պատեհ առիթով հարուածելու թշնամուն։ Նա թագնւում
է մի քարի ետևը. թշնամին առաջանում է, Թուբէնը
մնում է աննկատ, իսկ երբ թշնամին նահանջում է Թու-
բէնը յարմար առիթով իր մօտով անցնող 4 ձիաւորնե-
րին արճանակով գետին է տապալում։ Այս պարագան
սարսափեցնում է խուժանին նրանց մէում է որ հայերը

անցել են իրենց թիկունքը։ Այդ ժամանակ վրայ են հասնում՝ Արմենակ Պօղոսի Մայիլեանը և ուրիշներ, որոնք հագնում են սպանուածների հագուստները և վերցնում նրանց զէնքերը։ Նրանք բաւականին՝ զոհեր են խլում թշնամուց։

Պարտւած և ցիր ու ցան եղած թշնամին հաւաքւում է Ջանիկ գիւղում։ Այդտեղ Դարաբէկցի հայախօս Օսմանը, որը հարիւրապետի պաշտօն ունէր խօսում է և դովում հայ քաջերին։

— Ինչքան էլ մենք հայ ժողովրդին ճնշենք, նա դարձեալ կապրի։

Այս կռւում թշնամին տւել էր 88 սպանեալ և 43 վիրաւոր։

Ժողովուրդը քաշւեց՝ Լիմ Անապատի կողին, ուր մնաց՝ 28 օր։

ԱՐՃԱԿԻ ԵՒ ԽԱՌԱՆԿՈՆԻՍԻ ԿՌԻՒՆԵՐԸ

Ապրիլի 7-ի լուսաբացից առաջ 500 հեծեալ և 1000 հետևակ զօրք, աշիրեթներին միացած, պաշարում էն Արճակ և Խառանկոնիս գիւղերը, ուր համախմբւած էին շրջանի ժողովուրդը և մարտական խմբերը։

Քաջարի ռազմիկ՝ Շիրին Յակոբեանը ստանձնեց կռւի ղեկավարութիւնը։ Նա դասաւորում է խմբերը, նշանակում դիրքերը։ Կռիւը տևում է մինչև երեկոյ, թշնամին թողնում է 67 դիակ։ Մերոնց փամփուշտը քիչ լինելու պատճառով յարմար են գտնում ժողովրդին փոխադրել «Կզլջայի» լեռները։ Յաջորդ առաւօտեան թշնամին գիւղն է մտնում և սպանում այնտեղ մնացած ծեր-մին գիւղն է մտնում և սպանում այնտեղ մնացած ծերունիներին ու կանանց, որոնց թւումն է լինում նաև Շիրինի կինը, իր 4 զաւակներով։

Ապրիլի 9-ին Նալաթ, Մխկներ, Արտաւէզ, Քապապիկ, Սերիբեկ, Աղջաւերան և Աղիգոզալ գիւղերի ժողո-

վուրդները իրենց 80-90 մարտիկներով Զոմախու սարը գալով մլանում են՝ Շիրինին։

Այդ օրսայ կռիւը լինում է դաժան և կատաղի. Թշնամու տասնեակ գրոհները յետ են մղում հայ մարտիկների կողմից։ Մերոնց թուրթեան պատճառը փամփուշտի պակասն էր. ամեն մէկը մարտիկներից ունէր 40-50 փամփուշտ միայն։

Գիշերը ցրտած ժողովրդին հաւաքելով Շիրինը բերում է Աւերակի գիւղը։

Արևածագին Թշնամին պաշարում է գիւղը, ուր հաւաքւած էին 12 հազար սարսափահար ժողովուրդը։ Կռիւը սկսւում է, որի ընթացքում Թշնամու 2 Մնդանօթները ռմբակոծում էին հայկական դիրքերը և ժողովրդին։ Կէսօրսայ մօտ կռիւը սաստկանում է.

— Պ. Շիրին ի սէր Աստծոյ, փամփուշտ տէ՛ք, փամփուշտ.— կանչում էին մարտիկները։

— Ինչ որ ունէք բաւականացէք. ժամանակին պէտք է գրոհել Թշնամու վրայ և խլել նրանցից փամփուշտը.— պատասխանում է Շիրինը։

Սոյն ճակատագրական ժամին ահաբեկւած ժողովուրդը փախչում էր գիւղից։ Շիրինը անյապաղ հասնում է և արգելք լինում, իսկ մի մասը որ դաշտ էին իջել՝ սպանւում են։ Այդ միջոցին Շիրինը լսում է իր եղբայրներից երեքի՝ Արամի, Մանասէրի և Գրիգորի սպանւելու լուրը. քիչ յետոյ վիրաւորւում է նաև Շիրինի միւս եղբայր՝ Հրանտը և եղբօր տղան՝ Համազասպը։ Այս մահագոյժ, դժբախտ լուրերը չեն սասանում հերոս ոգին՝ Շիրինի պողպատեայ, անխախտ կամքը. նա անխոնջ շարունակում է պայքարը մինչև Թշնամու պարտութիւնը։

Այդ կռւում Շիրինի շեշտակի հարւածից տապալւում է Թշնամի Մնդանօթաձիգը։

Մութը կոխելուն պէս ժողովուրդը Շիրինի գլխաւո-

բուլթեամբ՝ քաշւում է Վան-Այգեստան։

Կոճա Դաւոն իր երկու ընկերների հետ հանդիպում է Դալի Մահմադին իր հարիւրակի հետ։ Հրացանաձգութիւնը սկսւում է կողմերից. ճակատից խփւում է Դալի Մահմադը և մնացեալը հեռանում են՝ թողնելով 5 սպանւած։ Բադրի գիւղում պահակների հետ կռւի բռնւելով սպանւում են Կոճա Դաւոյի 2 ընկերները։ Իսկ Դաւոն ողջ և առողջ հասնում է Լիմ Անապատի կղզին։

Վանքի կռւում պարտւած խուժանին օգնութիւն է ղրկում արիւնարբու Ջևդեթը։ 6 ձիաւոր բեռ փամփուշտ 25 ժանդարմների հսկողութեան տակ հասնում է Թիմար։ Ապրիլի 10-ին հայ մարտիկները նկատելով բեռնաւորւած ձիերի կարաւանը, որը գալիս էր «Լէնք» գիւղից՝ դարան են մտնում։ Երբ մօտենում է կարաւանը, սկսում է հայ մարտիկների ուժեղ համազարկերը։ Սպանւում են 5 ժանդարմներ, իսկ մնացեալը սարսափահար փախչում են։ Գրաււած 6 արկղ փամփուշտը տղաները փոխադրում են Ալուր գիւղը և բաժանում պինւորութեան մէջ։ Սպանւած ժանդարմներից մէկի գրպանում գտնւում է մի հրամանագիր ուղղւած Թիմարի հայութեան ջարդի դեկավարներին։ Ահա դրա բովանդակութիւնը մօտաւորապէս. «Առանց խնայելու կոտորել՝ բոլոր տարիքի հայերին. չխնայել նոյնիսկ ծերերին և ծծկեր մանուկներին։ Ջալաթի մոռանալ, որ 95-96-ի կոտորածներից ազատւած ծծկեր մանուկներն են, որ այսօր կռւում են մեր դէմ։ Հայի խնայողը կճանաչւի որպէս դաւաճան և կենթարկւի ամենադաժան պատժի։»

ԱԼՈՒՐ ԳԻՒՂԻ ԿՈՒԻԸ

Ամար Բէկը մի քանի օր Ջանիկ մնալուց յետոյ անցնում է Թիմարի գիւղերը, կոտորում է այնտեղ մնացած ծերունիներին և հիւանդներին։ Ապա ուղղւում է դէպի բազմամարդ, այգեշատ, դրախտանման՝ Ալուր նշանաւոր

գիւղին։ Պաշարում է այդ գիւղը և պահանջում անձնատուր լինել։ Ապրիլի 13-ին այնտեղ են հասնում նաև 500 հետևակ զունդ և միանում գիւղը պաշարող խուժանին։ Ալուրում հաւաքւած էին՝ Բայրակ, Առնականց, Ծակատար, Մարմետ, Ամենաշատ, Տրլաշէն, Եկմալ, Յաւենց ու մի քանի ուրիշ գիւղերի խուճապի մատնւած հայութիւնը։ Հայ մարտիկները 200 էին, որոնք զինւած էին պանապան տեսակի զէնքերով։ Նախապէս ընտրւած էր զինւորական մարմին զեկավարութեամբ՝ անվեհեր Սուրէնի և Նազարէթի։ Զինւորական մարմնին անդամակցում էին՝ Սարգիս Մնդոյեան, Յաւենցի Միհրան, Անանի վարդան, Քամալ, Արշակ։ Մարմինը շտապ դիրքեր է նշանակում և աշխատանքի բաժանում կատարում։ Պատրաստւած էր 17 դիրք, որոնցից 6-ը տեղաւորւած էին Նոր Եկեղեցու թաղում, իսկ մնացեալը հին եկեղեցու։

Ահա դիրքերը իրենց զեկավարներով.

Նոր եկեղեցու թաղամասում.

ա. Բերդի Պառիկ. զեկավարներ՝ Գէորգ Տ. Յովհաննիսեան և Առնականցի Միսակ։

բ. Նազարի մարագը. զեկավարներ՝ Ալուրցի Բարսեղ Յովակիմեան և Յաւենցի Գասպար Գիւլնարեան։

գ. Աբգարի քեռիքը. զեկավար՝ Ծակատարցի Զուռնաչի Գէորգ։

դ. Պրուտի քեռիքը. զեկավար՝ Եկմալցի Նշան։

ե. Ջարոյի բախչէն. զեկավար՝ Մարմետցի Փանոս,

զ. Աչքէ մարագ. զեկավար՝ Հաշոյի Համբարձում։

Հին եկեղեցու թաղամասում.

ա. Մելոյի այգին. զեկավար՝ Առնականցի Տիգրան և Սարգիս։

բ. Կարոյի Մարագ. զեկավար՝ Էրէնա Մուգկէ Աւետիս։

գ. Հայոց գերեզմանատունը. զեկավարներ՝ Դիլաքցի

Արմենակ և Մարմեցի Փանոյի Հայրոն։

դ. Կլամու քեռշք. դեկավարներ՝ Պատուրի Ասլան և Օւանի Կարապետ։

ե. Ս. Նարեկացու մատուռը. շատ կարևոր դիրք դեկավար՝ Նորընծայ քահանայ՝ Տ. Կարապետը։

Զինուորական մարմինը դիրքերը դասաւորելով, ժողովրդին հաւաքում է եկեղեցու առջևի հրապարակը։ Այնտեղ ճառ է խօսում՝ Սուրէնը.

Ահա այդ ճառը մօտաւորապէս.

«Հայրենակիցներ.

Անապորոյն թշնամին իր օդակով սեղմել և իր արիւնոտ թաթը մեր կոկորդին դրած ցանկանում է խեղդել մեզ։

Հայրենակիցներ.

Յիշենք մեր քաջ նախնիքը։ Հայկ Նահապետից մինչև Վարդանանքը ահեղ։ Նրանք պայքարեցին բռնութեան դէմ, նրանք չխնայեցին նոյնիսկ իրենց կեանքը հայրենիքի համար։ Մենք պիտի հետևենք նրանց։ Մեր պայքարը մահու և կենաց պայքար է։ Կամ պիտի կռւել, կամ պիտի մեռնել։»

Ժողովուրդը ոգևորւած էր։

Զինուորական մարմինը հրահանգում է հետևեալը.

ա. Դիրքերում գտնւող զինւորը ենթակայ է զինւորական մարմնի կարգադրութեան և դրւած հրահանգը պիտի կատարի անմիջապէս։

բ. Առանց զինւորական մարմնի հրահանգի, արգիլւում է հակայարձակման դիմել։

գ. Փամփուշտը խնայել։

Զինւորներից մի մասը բաժանւում են դիրքերում, իսկ մնացեալը «թռւցիկ խմբեր» կազմելով մնում են՝ որպէս յետնապահ կամ միջնապահ։

Անձնւէր Սուրէնը շրջելով դիրքերում խրախուսում է հայ մարտիկներին։

Ապրիլի 15-ին հազարաւոր խուժանը և բանակը ուժեղ յարձակում են գործում գիւղի վրայ։ Հայ դիրքերը լուռ էին։ Լռութիւնը թուլութեան և համաձայնութեան նշան համարելով թշնամին առաջանում է մինչև Աբգար Աբգարեանի տունը։

Սուրէնի ատրճանակի 3 հարւածը կրակի նշան էր. որոտում են հայկական դիրքերը. յանկարծակիի եկած բազմահազար թշնամին փախչում է փողոցներում թողնելով 43 սպանւած։ Կռիւը տևում է մինչև երեկոյ։ Յաջորդ օրը թշնամին աւելի խիստ և վճռական է գրոհում, սակայն սոյն գրոհները ևս յետ են մղւում ուժգնօրէն։ Թշնամին նահանջում է կրկին տասնեակ դիակներ թողնելով. մերոնցից սպանւում է Խաւենցի Տ. Կարապետ քահանան, որը դիրքից դուրս գալով խոյանում էր թշնամու վրայ։

Ապրիլի 17-ին շարունակւում է դեռ կռիւը. հայ մարտիկները չեն կիջում և ոչ մի դիրք։ Այս պայմաններում քաղաքից գիւղն են վերադառնում Ներս Գիւլամերը և իր օգնական Զամանկէ Արմենակը, որոնք հաւաստիացուցին էին ստացել պետութիւնից, որ գիւղը յանձնւելու պարագային փրկւած կլիներն։

Այդ լուրը յուզում է ժողովրդին և պատակում առաջ բերում։ Ջինւորական մարմինը կարգադրում է՝ ահաբեկել Ներս Գիւլամերին և իր օգնականին, սակայն վերջիններս ճողոպրում են և միանում թշնամուն։

Այդտեղից նամակներով խորհուրդ են տալիս ժողովրդին «գիւղից վտարել մի քանի ըմբոստ դինւորներին և այնու ապրել խաղաղ ու հանգիստ»։ Ապրիլ 19-ից ժողովուրդը հաւատալով դաւաճան Ներսի և կառավարութեան հաւաստիացուցիչներին դադարեցնում են հացի առաքումը մարտիկներին։ Ջինւորական մարմինը հրապարակաւ յորդորում է ժողովրդին չհաւատալ այդ կեղծ ու պատիր

խոստումները, սակայն լռում...

Սուրբենը հաւաքելով իր զինուորները և իրեն վստահող ժողովրդից մի մասը ճեղքում է պաշարման օղակը և արցունքոտ աչքերով հեռանում է գիւղից և դիրքեր բռնում Էրէնայ սարում:

Ապրիլի 20-ին Ալուր գիւղը անձնատուր է լինում Թշնամուն: Անմիջապէս հաւաքում են գիւղում մնացած 250 հայ տղամարդկանց և լեցնում նոր Եկեղեցին: Կէս գիշերին նրանց փոխադրելով հարաւային կողմում գտնուող Աչոյի մեծ այգին գնդակահարում են: Նրանցից ազատուում են միայն 3 հոգի՝ Յարութիւն և Արմենակ Մադոյեաններ և Մարմեռի Ոէս Աչատուրը: Ապա սկսում է բռնաբարութիւնների շարանը:

Ալուր գիւղից հեռացող հայ մարտիկները անցնելով Էրէնա սարը, այնտեղ յարմար են գտնում բաժանուել 2 մասի. մի մասը անցնում են «Տղոց Ֆար» իսկ մնացեալը ղեկավարութեամբ Սուրէնի մնում են այնտեղ և դիրքեր կառուցում: Գիշեալ սարի հարաւային կողմում դարերից ի վեր կայ մի մատուռ «Բարձրագինա» անունով, որն ուխտատեղի էր ժամանակին, իսկ այժմ դիրք էր դարձել հայ զինուորների համար:

Ֆանի օրից ետք, Էրէնա սարն են գալիս Հասպշատցի Շարան և Ամկուբերդցի Պատուրը, իրենց ընկերներով և միանում են տղերքին: Թշնամին նկատելով մերոնց բնակութեան վայրը՝ Ապրիլ 23-ին յարձակում է գործում, կողմերը ունենում են կորուստներ: Կուի երրորդ օրը Թշնամին ցանկանում է մուտք գործել՝ Էրէրին գիւղը, ուր կային թուով 400 ժողովուրդ:

Հայ մարտիկները խոյանում են Թշնամու վրայ. կուիը տևում է մի քանի ժամ: Ս. Սահակի վանքը իր ամուր պարիսպներով ու քարաժայռերով օգնում է յետնապահ հայ կուռոններին, որտեղից Թշնամին ուզում էր հայ մար-

տիկների թիկունքն անցնել։ Իզուր են անցնում թշնամու ջանքերը։ Հայ մարտիկների յամառ դիմադրությունը փրշրում է նրանց ծրագիրները. ուստի թշնամին բռնում է փախուստի ճամբան։

Լիմ Անապատի կողմից երևում է մի առագաստանաւ. տղերքը նշան են տալիս. նաւը մօտենում է ծովափին։ Այդ օրը տեղում եղած ժողովուրդը մօտ 400 հոգի փոխադրւում են Լիմ Անապատի կղզին։ Երբ Բուդդաղի Աւետիսը նաւով վերջին խումբն էր փոխադրում, յարձակման են ենթարկւում թշնամու կողմից. տղերքից մի մասը ծովափի այդինների պատերը դիրք բռնելով, մի մասն էլ եկեղեցու կտուրը բարձրանալով, սկսում են դիմադրել մինչև նաւի հեռանալը։ Այսպիսով Էրէնա սարը և գիւղը մնում են անպարտելի և գերծ թշնամու կողոպուտից ու ջարդից։

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ՝ ԼԻՄ ԱՆԱՊԱՏԻ ԿՂԶՈՒՄ

14 հազար ժողովուրդը, որը ներկայացնում էր թիմար գաւառի հայութիւնը, գրեթէ կիսամերկ և քաղցած հագիւ ազատելով իր ֆիզիքական գոյութիւնը՝ լեցւել էր Լիմ Անապատի կղզին։ Մենաստանը, եկեղեցու գաւիթները, Առաջնորդարանը, վանքի խուցերը և վերջապէս ամեն տեղ լեցւած էր խուճապահար ժողովրդով։ Զկար որևէ քար որի կողքին բնակած չլինէին մի քանի հոգի սովալլուկներ։ Հազարաւոր նուշի ծառեր արմատահան անելով այրեցին, կանաչազարդ կղզին ամայացաւ։

Շուտով սովը սիրեց ամենուրեք։ Թշնամու արիւնոտ սարսափին յաջորդից՝ սովի դժոխային ուրուականը։ Սովից չմեռնելու համար ժողովուրդը ստիպւած սկսեց խոտ ուտել. սակայն խոտն էլ սպառւեց։ Ամեն կողմից լսւում էր սովալլուկների օգնութեան մեղկ կանչերը։

Բայց ո՛վ էր ուշադրութիւն դարձնում. բոլորը նոյն բախտին էին արժանացել։

— Հայց, մի կտոր հայց,—լսւում էր ամենուրեք։

Վանքի վանահայր՝ Յովհաննէս ծ. վրդ. Հիւսեանը գինւորական մարմնի հետ խորհրդակցելով՝ որոշ միջոցներ գտան.

Կղզում գտնւող նաւերը գինւորներով գիշերով դուրս էին գալիս մերձակայ՝ Ծժիշկ, Ատեռ, Նորաշէն գիւղերը և ցորեն, գարի, ալիւր հաւաքում ու բերում էին, որը բաժանւում էր ժողովրդի մէջ։ Բայդ դա մի կաթիլ ջուր էր ովկիանոսում։ Ջրի պակասն ևս անտանելի էր. ծովի ջուրը աղի լինելով խմելը անհնար էր։ Վանքը ունէր 1 հատ ջրհոր, որը առնւեց հակողութեան տակ։ Խմելու ջուրը բաժանւում էր բաժակով։ Պարէնը տրւում էր յատուկ տոմսերով, որն ստորագրւած էր գինւորական մարմնի կողմից։

Անմաքրութիւնը ևս պատճառ դարձաւ որոշ հիւանդութիւնների, որոնք համաճարակի բնոյթ ստացան։ Շաբաթ և կիրակի օրերը յատկացւած էին աղօթքի։ Քաղցած, հալ ու մաշ եղած ժողովուրդը լեցւում էր Ս. Գէորգի վանքը, լաց ու կոծով աղօթում։

Ամենքը մրմնջում էին.

Արի Աստւած հարցն մերոց,
Որ ապաւէնգ ես նեղելոց,
Հայս օգնութիւն ծառայից քոց,
Լիր օգնական ազգիս հայոց.
Տուր աշխարհիս խաղաղութիւն
Ազգիս հայոց ազատութիւն։
Տէր ողորմեա, տէր ողորմեա...

Ս. Պատարագից յետոյ վանահայրը իր քարոզներով յորդորւում էր ժողովրդին՝ լինել խաղաղ ու համբերող։

Ջինւած առագաստանաւերը գիշերները շրջում էին ծովի վրայ և պատահած փախստական հայերին փոխադրւում կղզին։

Ապրիլի 18-ին քաղաք ուղարկված մեր սուրհանդակները վերադարձան և յայտնեցին, որ Վան քաղաքը դիմադրում է դեռ. կղզիում գտնվող ժողովրդի ճակատագիրը կախված էր քաղաքում մղվող մարտերի ընթացքից։

Մի անգամ, մի խումբ զինված մարտիկներ անցնում են Արճէշի կողմերը, ուր թագնված էին մօտ 20 հայ կանայք։ Նրանց վերցնելով նաւի մէջ ճանապարհւում են կղզին, երբ թշնամի հրոսակներ նկատելով յարձակւում են նրանց վրայ։ Սպանւում է Աւին գիւղացի Մուսան և վիրաւորւում Աթոն, սակայն կղզի հասնելով փրկւում են մի խումբ անպաշտպան կանայք։

Ջինւորական մարմնի և Յովհաննէս Ծ. վարդապետի որոշումով 3 սուրհանդակներ՝ Սոսրատցի Կապուտի Գրիգորը, Նորշէնցի Սարգիսը և Կուզակցի Առաքելը ղրկւեցին Իգդիր, որտեղից սպասւում էր կամաւորների մուտքըն ի Վասպուրական։

Ապրիլի 26-ի երեկոյեան ժողովրդի և վանահօր աղօթքից և մաղթանքներից յետոյ 3 սուրհանդակները ճամբու ելան դէպի Իգդիր։ Վանահայրը ոգևորիչ մի ճառ խօսեց։ Ահա այդ ճառը մօտաւորապէս.

— Սիրելի որդիներս.

Դուք գնում էք դէպի անստոյգ ապագան, Տէրը ձեզ հետ. ահա ձեր ղեկավարը, ձեր սիրելիներն ու ձեր ապագայակիցները։ Դուք գնում էք ձեզ հետ տանելով մի ամբողջ ժողովրդի յոյսն ու սիրտը. դուք կատարում էք հասարակական մի մեծ դործ, որով փրկելու էք հազարաւորների կեանքը։ Այո, օրհնելով ճամբու է դնում սուրհանդակներին։ Շալ մեց նաւակը. տեսարանը յուզիչ էր։

— Մեզ չմոռանաք, Սարգիս, Գրիգոր, Առաքել,— գոչում էր ժողովուրդը։

Որոշեց՝ սուրհանդակները կամաւորութեան պիտի

յայտնեն՝ ժողովրդի դժբար կացութեան մասին և շուտափոյթ աջակցութիւն պահանջեն։ Իսկ կամաւորները ծովակի հասնելու պարագային, իրենց գալուստը պիտի յայտնէին՝ Նորաշէն գիւղի Սարգիսի այգում կրակ վառելով։



ԾՈՎԱՆՆԷՍ ԾԱՑՐ. ՎԱՐԴԱՊԵՏ ՀԻՍԵՆ
Նախկին վանահայր Լիմ Անապատի.

Լիմ Անապատի կռի ընթացքում և կղզում եղած ժամանակ ժողովրդին մեծ աջակցութիւններ ցոյց տուեց վերաբոյժ Խժշկեցի Գրապիոն Աբրահամեանը։

Նա ամենայն ուշադրութեամբ խնամում և բուժում էր վիրաւորներին և հիւանդներին։

Բացւեց Մայիս 3-ի արշալոյսը։ Բերկրի կալայի կողմից կապուտակ հորիզոնը ծածկւած էր թանձր ծուխով։ Քեռիշք, Բամալ Բէյի գիւղը հրդեհւած էր։ 14 հազար ժողովուրդը ցնծում էր՝ խելագար Ամբոխը ոգևորութիւնից ցանկանում էր նետել ծովը և ժամ առաջ ազատել 28 օրւայ իր բանտային տաժանելի կեանքից, Զինւ. մարմնի և վանահօր յորդորները առնարիւն և հանդարտ մնալու համար անհետևանք էր մնում։ Նախօրոք որոշւած կրակը բոցավառւեց նշանակւած տեղում։ Ամբոխը գոռում էր բարձրաղաղակ. «Դուրս տարէ՛ք մեզ, դուրս.»

Ստուգում կատարելու համար տանեակ զինւորներ նաւով դէպի կրակի կողմը մեկնեցին։

Նրանց պատւիրւեց, որ եթէ ճիշտ է այդ նշանը, այսինքն կամաւորներն են եկել, ապա հրացանի 3 կրակոցով յայտնել այդ պարագան։

Շուտով լսւեց հրացանի 3 կրակոցները։ Թնդում էր կղզին. ծովածաւալ բազմութիւնը խելագարի նման աղմըկում և արտասւում էր՝ աննախընթաց ուրախութիւնից։ Վանքի զանգակները սկսեցին օղանջել։

Նաւը վերադարձաւ իր հետ բերելով 2 կամաւորներ՝ Փիրկարիբցի Կիրակոս Մայիլեանին և Դաւիթ Մուշեղեանին, որոնք ուսամբարձ և ուռաններով տարւեցին առաջնորդարան։

Նաւերը գործի անցան և սկսեցին փոխադրել ժողովըրդին։ 3 օրում Լիմ Անապատի Մենաստանը դատարկւեց։

Հայկական կամաւորական գունդերի մուտքը Վասպուրական, միջոց տւեց Թիմարցուն կրկին վերադառնալ և վերաշինել իր աւերւած օջախը։

ՎԵՐԱԴԱՐՁ ԼԻՄ ԱՆԱՊԱՏԻ ԿՂՋՈՒՑ

Մէկ ամսուայ ստամոքսական կնանքից յետոյ, թխամաւրի հայուհիները վերադառնում էր իր պապենական օջախը։ Շէն ու պայծառ հայ գիւղերը աւերուած էին, հայ անմեղ մարդկանց դիակները վխտում էին ամենուրեք։ Որպէս կենդանի փաստ, կատարուած վայրագութիւնների համար ներկայանում եմ իմ ծննդավայր՝ Գոմա գիւղի սպանուածների անունները, որոնք 75-80 տարեկան ծերունիներ էին և անկարող հիւանդներ։

Աչքաւոր Յարութիւնն ու իր կին Սառան, սպանուած Ռէս Յովհաննէսի տան սրահում, մարմինները իրար կապուած։ Ռէս Յակոբ և կաթողիկոս Ներսոյեաններ, սպանուած իրենց թոնրատան մէջ։ Ջիրո և Ծէնոխ եղբայրներ. վերջինս կոյր, հրացանազարկ եղած Ս. Սահակեանների եկեղեցու առջև։ Զանոյեան զոյգ պառաւներ. մէկը կոյր, գնդակահարուած իրենց թոնրատունում։ Վարդան, Վարդո Մարգարեան, Գէորգ ս. Սահակեան, գլիր Թուխոն, Լոզանձորում սպանուած։ Մնոն և իր կինը, սպանուած իրենց տան մօտ։ Անտոն, սպանուած իր տան առջև։ Մկրտըն՝ կաղ և կոյր, սպանուած Քեռշկի ձորում։ Մանուշակի Բաբոն, Եղիազար. սպանուած իրենց դռմում։

Հայ կամաւորների մուտքը լսելով, արիւնարբու Ջնդիքը՝ վանի տխրահռչակ կուսակալը լքում է վանը։ Քաղաքի հայ մարտիկները գրաւում են վանը։ Այդպիսով կտրւում է գիծը Թիմարից վանի վրայով դէպի Բիթլիս տանող ճանապարհը։

Թիւրք և քիւրդ ահագին ժողովուրդ, պաշարւում է փախուստի ճանապարհին։ Նրանց հետ կային թշնամի պիտուրներ և հրոսակներ, որոնք որոշ դիմադրութիւնից յետոյ անձնատուր են լինում կամաւորութեանս։ Կանայք և երեխաները մնացին անձեռնմխելի և ապահով փոխադրւեցին իրենց տեղերը։

Հէնց այդ ժամանակ, ընդհարում է տեղի ունենում Ալուր գիւղում, Սուրէնի և կառավարական 60 պահակների մէջ։ Սուրէնը շրջապատւում է. կռիւը տևում է 3 օր։ 4-րդ օրը կամաւորները օգնութեան են գալիս և Սուրէնի հետ ոչնչացնում՝ թշնամուն։

Մայիս 5-ի վերջալոյսին Վան քաղաքն է մտնում կամաւորական հեծեալ գունդը, որոնց դիմաւորութեան էին գնացել հարիւրաւոր հայ մարտիկներ ու ամբողջ վերապրող հայութիւնը։

Այսպիսով Վասպուրականի հայութիւնը շնորհիւ հերոսական ինքնապաշտպանութեան և տոկունութեան մեծ մասամբ փրկւեց կոտորածներից։

Վասպուրականցին ուրիշ նահանգների հայերի պէս չմորթեց ոչխարի պէս, այլ պաշտպանեց զէն ի ձեռին և կերտեց իր սքանչելի հերոսամարտը։

Վասպուրականում կապմեց՝ հայկական տեղական իշխանութիւն, նահանգի գործերը ղեկավարելու համար։

Հայ գիւղացի աշխատաւորութիւնը լծեց հողագործութեան և վերաշինութեան գործին։ Թշնամու կողոպուտի պատճառով անասունների պակասը զգալի էր։ Այդ պատճառով Թիմարի նորընտիր գաւառապետ՝ Սիրուն Սարոյեանը տեղական իշխանութիւնից պահանջեց լծկան եզներ։ Որոշ քանակութեամբ եզներ տրւեցին, որոնք բաւականին նպաստեցին՝ գիւղատնտեսական աշխատանքներին։

Հայ գիւղացու տնտեսական դրութիւնը շնորհիւ իր անխոնջ աշխատանքի հետզհետէ դառնում էր նախկինի պէս։ Բայց այս դրութիւնը շատ կարճ տևեց. հազիւ 70 օր։

ԿՐԿԻՆ ՆԱՀԱՆՋ

«Հայաստանը առանց հայի.» ահա ցարական բռնակալ կառավարութեան հակաժողովրդական նշանաբանը՝ Հայաստանի վերաբերեալ։

Եվ ցարական ներգամիտ կառավարութիւնը մինչև իր վերջնական տապալումը հետևեց սոյն հակաժողովրդական և հակահայ քաղաքականութեան։

Այս անգամ ևս, ցարական կառավարութիւնը ցանկանալով օգտագործել առիթը, իր նենգ նպատակին հասնելու համար, հրահանգեց գաղթեցնել վասպուրականի հայութեան։ (1915 Յուլիս 18)


Միայն 3 օր ժամանակ էր տրւած անցնելու Բերկրիի կիրճը. ուշացման դէպքում 120 հազարի հասնող ժողովուրդը ծուղակի մէջ պիտի ընկնէր։ Աշխատասէր և ստեղծագործող վասպուրականցին բռնեց նահանջի ևև ճամբան։ 200 կիլոմետր նա քայլեց յոգնած, սոված և ծարաւ...

Շատախի, Մոկսի և Գաւաշի հայութեանը հնարաւոր չէր կամաւորական գունդերի հսկողութեամբ անցնել կիրճը։ Թշնամին օգտւելով այս հանդամանքից հասնելով Ջանիկ, կտրում է կիրճի ճանապարհը։ Կատարւում է ահռելի կոտորած, որին անձամբ մասնակցում է՝ տխրահռչակ Ջևդեթը։

Յուլիս 19-ին հազարաւոր ժողովուրդ անցնում է Բերկրիի կիրճը։ Անցնելու ընթացքում, յանկարծ, մօտակայ լեռներից լսւում են հրացանի համազարկեր։ Ժողովուրդը խուճապի է մատնւում։ Սարսափահար մայրերը, իրենց սիրասուն զաւակներին գետը նետելով փախչում են։ Սոսկումի այդ րոպէին տեղ են հասնում՝ մէկ հարիւրակ հայ զինւորներ գլխաւորութեամբ Դանիել վարդապետ Ջատոյեանի և Յովհաննէս Ծ. վարդ. Հիւսեանի և մի կամաւորական գունդ, որոնք 3 կողմից գրոհելով թշնամու վրայ յետ են մղում նրան և հնարաւորութիւն տալիս ժողովրդին շարունակելու ճանապարհը։

Վասպուրականի հայութիւնը վերջապէս հասաւ Արատեան դաշտ, ուր անծանօթ կլիմայի և համաճարակնե-

ըի պատճառով, նա տւեց ահռելի կորուստներ։ 1915 թւի ամառւայ ամիսներին, Արարատեան դաշտը, Մարգարայ դիւղը, Էջմիածինը, Երևանը ընչազուրկ ժողովրդի գերեզմանն եղան։ Օրգովից մինչև Իգդիր, ճանապարհները լից-



Արտուսուքով գրված Ասիտագրը։

ած էին յոգնած և փոշեթաթախ հիւանդներով, որոնք մեռնում էին կարօտակէզ սրտերով։

Ամեն տեղ սրտաճմլիկ տեսարաններ, լայ ու կոծ։ Հազարաւոր գաղթականներ լեցուած էին փողոցներում, դաշտերում ու այգիներում։ Ինձ վիճակւեց պաշտօնավարել՝ Մարգարա գիւղի «Նպաստամատոյց շտաբում»։

Մեռել փոխադրող սայլերը աշխատում էին անդադար։ Ողջ մնացողների սրտերը, բազմաթիւ հարազատներ կորցնելուց յետոյ կարծրացել էր։

— Ինչ հոգ, վաղն էլ ես պիտի մեռնիմ.—ասում էին շտաբերը։

Մի օր «շտաբի» գործով Ս. Էջմիածին գնացի։ Ճանապարհին տեսարանները շատ յուզիչ էին. Ս. Տաճարի պանգակները զօրանջում էին անընդհատ։ Մեռել, մեռել... ողբ, սուգ ու շիւան...

Այսպէս Արարատեան դաշտի այրող արևի տակ, գաղթականները մեռնում էին, անցած սև օրերի դժոխային պատկերները և ախուր դէպքերը իրենց վշտաբեկ սրտերում դրոշմւած։

Այս տողերը գրելիս, մտքիս առջև պատկերանում են վախճանւած ընկերներս ու հարազատներս, որոնք տասնեակներով թաղւեցին մէկ փոսի մէջ։

Մեր Կովկասահայ եղբայրները ոչինչ չխնայեցին անտուն գաղթականութեան թէ նիւթապէս և թէ բարոյապէս օգնելու համար։

Յուլիսեան Մեծ Նահանջից յետոյ կազմւեցին խմբեր երկիր վերադառնալու համար։ Վաստուրականը հզօր մագնիսականութեամբ դէպ իրեն էր քաշում իր զաւակներին։

Վաստուրականցի տարագիրները խմբերով վերադառնում էին երկիր։ Սակայն, «ծրագրւած նահանջը» նորէն կրկնւեց. այս վերջինը կոչւեց որպէս՝ «պատիկ նահանջ»։

ԳԱՆՁԱԿՈՒՄ

Օդոստոս ամսի վերջին օրերից էր. երեկոյեան աղջամուղջը նոր էր իջել Արարատեան դաշտի վրայ։ Մասիսը՝ Հայոց Նահապետը ծածկւած էր ամպերով. կարծես թէ նա ևս չէր ցանկանում տեսնել իր դժբախտ զաւակներին, հիւանդութեան և թշւառութեան ճիրաններում։

Թուս ոտիկանները սայլերով շրջում էին՝ Մարգարայ գիւղում և հաւաքելով տանում գաղթականներին Էջմիածնի կառխուն կայարանը։ Վերջին կարաւանին միացայ և ես։

Ծանր հիւանդ էր մայրս, որը երազում էր Երկիրը վերադառնալու։

Հասանք կառխունի կայարանը, որտեղից գնացքը մեզ պիտի փոխադրէր Ալեքսանդրապոլ և Թիֆլիս։

Հազարաւոր գաղթականներ էին փոխադրւում. Վերջապէս հերթը հասաւ մեզ։ Գնացքը շարժւեց։ Հայրենիք վերադառնալու յոյսերը խորտակւում և փշրւում էին առաջ սուրացող կառաշարների խշխշացող անիւների տակ։ Որքան հեռանում էինք, այնքան աւելի էր բոցավառւում հայրենի կարօտը մեր սրտերում։

— Ա՛խ կորանք, Յարութիւն, բալա Ջան, մեզ հեռացնում են մեր ազիզ վաթանից. կմեռնենք պարիբուռթեան մէջ.— բացագանչեց մայրս, դառնացած սրտով։

Ես յուզւեցի, անցայ վագոնի մութ անկիւնը և լացի դառնօրէն...

Սրբեցի թաց աչքերս, մօտեցայ վագոնի լուսամուտին ու նայեցի հեռուն։ Ախուրեան գետի աջ ափում երևում էին Անիի աւերակները։

Աչքիս առջև պատկերացաւ՝ Անին իր անցեալի մեծաշուք փառքով, իր հազար ու մէկ եկեղեցիներով, իր բագրատունեաց յիշատակներով։ Անիի աւերակները պատմում են՝ հայ ժողովրդի ստեղծագործ հանճարի, նրա

բազմադարեան հարուստ կուլտուրայի մասին։ Ներանք միաժամանակ պատմում են հայ ժողովրդի քաղաքական դժբախտութեան, նրա թշուառ կացութեան մասին. — մտածեցի ես և ակամայից սկսեցի մրմնջալ.

Անի քաղաք նստէ կուլայ,
Ջկայ ըսող մի լայ, մի լայ,
Կըսեն թէ չէ, թող նստի լայ,
Ա՛խ, երբ լսեմ մի լայ, մի լայ։
Գան ժողովին հայք միաբան,
Գեղեցկանաս շատ աննման,
Հապա մի լայ, սիրուն Անի,
Անի, Անի, իմ ջան Անի։

Սրընթաց կառաշարը առանց ուշադրութիւն դարձնելու հայրենակարօտ գաղթականների ողբին սլանում էր առաջ։ Սուլեց շոգեկառքը և կանգնեց Ալեքսանդրապոլի կայարանում։

Մեզ առաւօտ մենք Թիֆլիսումն էինք, ապա մեզ օրը հասանք Գանձակ։ Սայլակներով քաղաք և այնտեղից «Լեմա» գիւղը փոխադրուեցինք։

Հազարաւոր գաղթականներ տեղաւորուեցին՝ Միրզկան, Բրաջուր, Բանանց և ուրիշ հայկական գիւղերում, ուր տեղացիները սիրով ընդունեցին ընչազուրկ գաղթականներին։

Կառավարութեան ներկայացուցիչներից, տեղացիներից և գաղթականների միջից խառն նպաստաբաշխման յանձնախումբ ընտրելուց յետոյ, կազմեց գաղթականների լրիւ ցուցակը։ Յանձնախումբը, որի քարտուղարութեան պաշտօնը ինձ վիճակեց, արդարութեամբ բաժանում էր կենսամթերքը՝ սնունդ, օճառ, զգեստ և անկողին։ Մաքրութեան և ընդհանրապէս առողջապահութեան համար, յատուկ քննիչներ էին նշանակուած, որոնք շրջապատելով նորեկների բնակարանները հսկում էին և ան-

հրաժեշտ խորհուրդներ տալիս։

Մօտալուտ ձմեռը այն էլ լեռնային գիւղերում մտահոգութիւն էր պատճառում տարագիրներին։

Մերգական գիւղը, որտեղ ճնում էինք հարիւրաւոր նորեկներս, ինչպէս և միւս գիւղերի տեղացի ժողովուրդը տրամադրեցին վառարաններ գաղթականութեան։

Կառավարութիւնը թոյլատրեց, որ գաղթականները իրենց վառելափայտը հայթայթեն՝ շրջակայ ընդարձակ անտառներից։

Պիտի յիշել, որ տեղացիները ևս նիւթական ոչ ցանկալի դրութեան մէջ էին. սակայն պատիւ իրենց. նրանք գաղթականների համար արեցին ամեն զոհողութիւն, որ կարելի էր։

Գիւղում աշխատանքի ընդունակ բոլոր ձեռքերը աշխատանքի էին լծւած։

Կայտառ ու կարմրաթշիկ աղջիկները, հարսները սպասում էին իրենց սիրելիների վերադարձին։

Գերման-ռուս ռազմաճակատից եկած հարազատների մասին լուրերը սուգով էին լեցնում գեղջուկների սրտերը։

Բոլորը առելութեամբ լեցւած անիծում էին ժամանակի պատերազմի հրձիգներին և յատկապէս գերման կառավարութեան, որ 1-ին համաշխարհային պատերազմի գլխաւոր պատասխանատուն էր։

Երկար ձամբորդութիւնը, Հայրենիքի կարօտը և ծերութիւնը մաշել էին մօրս։ Նա երկար գամւած էր անկողնում. հոգատար խնամքը և բժշկական օգնութիւնը անզօր եղան փրկելու սիրեցեալ մօրս կեանքը։ Մօրս անարի մօտ նստած էինք, նա և մեծ քոյրս՝ Վարդուհին։ Մօրս տանջանքները՝ մեզ վրայ խորապէս ազդում էր։

— Ջաւակս, Յարութիւն, գիտեմ որ էս ցաւից չեմ պրծնի, կմեռնեմ անպայման. բայց երանի, Հայրենիքում մեռնէի... Ա՛խ, կարօտ մնացի մեր հողին ու ջրին... Մեռ-

նեմ, էն մեր անուշ երկրին...

Մայրս հոգևարքի մէջ էր։

— Զաւակս, մօտեցիր, վերջին օրհնութիւնս ու համբոյրս տամ քեզ.— մրմնջաց մայրս և մահամերձ տեղ իր վերջին օրհնութիւնը. «Բախտաւոր լինես զաւակս, եաման օր չտեսնես, չոր տեղ էթաս կանաչ բուսնի» Հազիւ վերջացրած այս խօսքերը, տարաբախտ մայրս փակեց իր աչքերը յաւիտեան և մեզնից հեռացաւ անդարձ...

Այլևս ես իրօք որբ էի. ոչ հայր ունէի, ոչ մայր։ Միւս պաղթականների պէս, ես էլ նիւթական կարօտութիւնից զուրկ էի, այնքան, որ օրապահիկի դրամ անգամ չունէի։ Գլուխս կորցրած, ընկերներիս հետ խորհում էի, թէ ինչպէս պիտի հայթայթել մեռելաթաղի ծախսերը, երբ ներս մտաւ Միրզկան գիւղի քահանան՝ Տ. Մարտիրոսը, որը յայտնեց, թէ թաղման ծախսը Եկեղեցական Վարչութիւնն է յանձն առել։ Մօրս դագաղը ուսամբարձ դանդաղօրէն տարանք Միրզկանի Ս. Յովհաննէս եկեղեցին, այնուհետև գերեզմանատուն, ուր հողին յանձնեցինք մօրս բազմաչարչար դիակը։

Քահանան կարդաց վերջին աղօթքը. «Անշարժ եղիցի կնիք.» և մենք վերադարձանք տուն, տխուր ու ընկճուած։

Կարճ ժամանակից հետք, Միրզկանի լեռներից մի քար բերելով դրեցի մօրս գերեզմանի վրայ և վրան փորագրեցի. «Աստ հանգչի հայրենակարօտ պաղթական՝ Եղիսաբեթ Սարգսեան (Տ. Մեսրոպեան) ծնեալ 1856 թուին Վանի Թիմար գաւառի Զանիկ գիւղում, վախճանեալ 1915 թուին Գանձակի Միրզկան գիւղում, դարիբութեան մէջ։


ՎԵՐԱԴԱՐՁ

Գաղթականները ցրտաշունչ ձմեռը համբերեցին այն յոյսով, որ գարնան պիտի վերադառնան երկիր։

1916-ի Ապրիլ ամիսն էր։ Գաղթական երիտասարդներս, մօտ 200 հոգի գիւղերից հաւաքուեցինք Գանձակ և

ներկայացանք գաղթ. կոմիտէին, յայտնեցինք, մեր երկիր վերադառնալու ցանկութիւնը։

— Պիտի հեռագրեմ Երևան, այդ առթիւ սպասեցէք.



ՓԱՐԱՄԱԶ
Հասարակական գործիչ, որ 1903 թիւն մուտ գործեց երկիր եւ ի վերջոյ կախուեց։

— պատասխանեց, այդ գործի պատասխանատու՝ Լևոնը։ 2 օրից յետոյ, Երևանից ստացած հեռագիրը խստիւ արգիլում էր վան վերադառնալ. «որովհետև այնտեղ դեռ շարունակւում էին կոտորածները և հայութեան նահանջը» Մի 2 օր ևս սպասեցինք, ապա վճռական դիմեցինք և յայտնեցինք, որ վերջնականապէս որոշել ենք գաղթել երկիր։ Լևոնի յորդորները անօգուտ անցան, ուստի նա մեզ բարի ճանապարհ մաղթեց։ Գանձակից երկաթուղով անցանք Թիֆլիս, Ալեքսանդրապոլ, ապա Երևան։

Ներկայացանք Երևանի Գաղթ. կոմիտէին, որ մեզ խստիւ յանձնարարեց, հրաժարելու երկիր գնալու մտքից։

— Հէնց այսօր մեզ յայտնել են որ Բերկրիի կիրճում 25 հայեր սպանել են.— պատճառաբանում էին նրանք։ Բայց մենք պնդեցինք, որ ցանկանում ենք երկիր գնալ, թէկուզ մահուան գնով։ Ի վերջոյ ստիպուած համաձայնեցին։

Անցանք Ռուսաց և Պարսից Ջուլֆաները. Բերկրիի կիրճը անապահով նկատելով, Գաղթ. կոմիտէն յարմար էր գտել Կոթուրի և Սարայի գծով անցնել երկիր։ Զատկի Ճրագալոյցի օրը, Շաբաթ, Լոյն մօտ հայկական Ա-

յիսպաւար գիւղը հասնելով գիշերեցինք այնտեղ։ Պատարագին մասնակցելով մենք ևս երգեցինք հոգևոր երգեր։

Յաջորդ օրը հասանք Կոթուր, Սարա, Ծառանկոնիա, Զուխա Գետադուկ և ապա Վան։ Վանի նորակազմ տեղական իշխանութիւնը ոգևորել էր ամենքին։ Անհապաղ հաստատուած էին աննդակայանները որոնք կերակրում էին ժողովրդին։ Ըստ եղած կարգադրութեան, Վան-Այգեստան մտնելով ներկայացանք տեղական իշխանութեան։

Յաջորդ առաւօտ, Ապրիլի 15-ին մեկնեցի ծննդավայրս՝ Թիմար գաւառը։ Հայրենի տան շէմքին, աչքերս լճացան. կարծես տասնեակ տարիներ հեռու էի ճնացել այդ հարազատ տնից։

Մտքերիս մէջ խորասուզուած, յիշեցի ծերունազարդ, բարի դէմքով ու վտիտ կազմուածքով հօրս, որն իր վրայ կրել էր բռնակալական օրերի դրոշմը։ Մտաբերեցի, մանկութեան ընկերներիս, որոնցից շատերը նահատակուեցին, մեռան քաղցից ու ծարաւից, կամ էլ հիւանդութիւններից։

Զորս կողմս ամայութիւն էր տիրում։ Երբեմնի շէն ու պայծառ գիւղը աւերակների տպաւորութիւն էր թողնում։

Երկիր վերադարձած ժողովուրդը տնտեսական ծանր պայմանների մէջ էր։ Այդ պատճառով «Կովկասահայ ընկերութիւնը» և «Արևմտահայ փախս. կենտ. մարմինը» օգնութեան ձեռք մեկնեցին, գիւղացիներին տրամադրելով՝ յդկան եզներ և կենսամթերք։

Քիչ, քիչ կեանքը իր սովորական հունի մէջ էր մտնում, երբ նորէն կրկնուեց «ծրագրուած նահանջը», որ իրենց հանեց Հայրենասէր ժողովրդի յոյսերը։ Կրկին մարև հանեց Հայրենասէր ժողովրդի յոյսերը։ Կրկին մարդկաների անմեղ ձիչերը լսեցին՝ Բերկրիի կիրճում, Արագայի պաշտում և նահանջող կարաւանների ազմուկը, փոշեպատ ճամբաներում։

ԵՐԿՐՈՐԴ ՎԵՐԱԴԱՐՁ

Այս անգամ ևս վաստպուրականի յոգնատանջ ժողովուրդը եկաւ և թառեց Արարատեան դաշտում, ուր մնաց մինչև 1917 թվի գարունը։

1917-ի Ապրիլի 22-ին Գանձակի կայարանից գնացքով եկանք Թիֆլիս։ Այնտեղ Բաթումից վերադարձող գնացքով անցանք՝ Ալեքսանդրապոլ, Երևան, Շահթախտ, Մաքու, ապա Սաւարլու։ Այդ ճանապարհին մենք հաճոյքով դիտեցինք Ալաշկերտի դաշտը ու գեղատեսիլ բայազիդը։ Սաւալի լեռնաշղթայի քարաժայռերը պայթեցնում էին ուժանակներով, երկաթուղու համար ճամբայ բացելու նպատակով։ Դա խանդավառում էր ժողովրդին. այսպիսով վան-վասպուրականը երկաթուղագծով կապւում էր Ռուսաստանին։

Սաւալիում նատելով փուրգոնները, շարունակեցինք մեր ճանապարհը, որը զարդարւած էր երփներանգ, մայիսեան ծաղիկներով։

Մեր փուրգոնը կանգ առաւ «Սովուդ սու» աղբիւրի մօտ. այնտեղ, մենք ականատես եղանք մի շատ ախուր տեսարանի. ճամբի եզերքին փռւած մնում էին տասնեակ յոշոտւած դիակների ոսկորները, որոնք սրախողխող էին եղած 15-16 թվերի կոտորածներին։ Մօտ 20 տարեկան մի աղջկայ գլուխը բաժանւած էր մարմնից, որի ոսկեգոյն և երկար մազերը արիւնոտ փռւած էին գետնի վրայ։

Սրտաբեկ անցանք Աբադայի դաշտով, ուր ամայութիւն էր տիրում. մտանք Բերկրի «Գեաւին», ապա պատւաւոր կենտրոն՝ Զանիկ գիւղը, որտեղ կազմւած էր նպաստաբաշխման ընկերութիւն, գլխաւորութեամբ՝ օր. Անանիկ Քեշիշեանի։

Մեր սեփական անուամբ էինք արդէն, մեր ուրախութեան չափ ու սահման չկար։ Սկսել էր հայի շինարարութիւնը, վար ու ցանքը։ Նպաստամատոյց ընկերու-

թիւնը աջակցում էր գիւղացիութեան, բայց հէնց այդ պայմաններում ևս շարունակւում էին հայ գիւղացիների ունեցւածքի կողոպուտը հրոսակների կողմից։ Այս դէպքերին, պէտք է ասել, որ ցարական բանակի զեկավարները նայում էին անտարբեր և երբեմն հրճւանքով, որովհետև երկու հարևան ժողովրդների մէջ եղած անհամաձայնութիւնը նպաստաւոր էր ցարական հակաժողովրդական քաղաքականութեան համար։

Շարունակւում էին հրոսակային յարձակումները հայ անգէն գիւղերի վրայ։ Դարաբեկ, Ազջաւերան, Սերիբեկ և Արտաւեզ գիւղերը կողոպտւում են։ 1916 թւի Յուլիս 17-ին յարձակման են ենթարկւում՝ Ադիգոզալ, Գոմս և Կիւանենց գիւղերը։ Հատ ու կենտ գինւած մարտիկները դիմադրում էին այդ աւազակային յարձակումներին և զոհեր խլում աւազակներից։

Յուլիսի 27-ին, 35 հոգինոց գինւած մի աւազակախումբ Զլախանի սարում բռնում և կապում է Փիրկարիր և Գոմս գիւղերի հովիւներին, ապա յափշտակում է 300 դլուխ ոչխար։ Ռէս Յակոբը, Գաճեցի Գէորգը և Սեարակ Ալոյեանը հասնում են օգնութեան. սկսում է կռիւը. երկուսի փամփուշտները շուտով վերջանում են. մնում է միայն անվեհեր Գէորգը, որ մինչև վերջին փամփուշտը պարպելուց յետոյ, նահատակւում է։ Այդ ժամանակ Գեղու գիւղից հասնում են մէկ տասնեակ կամաւորներ։ Աւազակախումբը հեռանում է թողնելով աւարը և տալով 6 զոհ։

Գաղթականները արագ թափով երկիր էին վերադառնում, և օրէցօր աճում էր ժողովրդի թիւը։

Գաղթականները տեղաւորւում էին Վանի հիւսիս-արևելեան մասում՝ Թիմարի, Բերկրիի, Գործոթի, Արճակի և խառանկանիսի շրջաններում։ Հարաւային մասերը ևս՝ Արտամէտ, Հայոց Ձոր, քաղաքի արուարձանները բնակելի

էին, իսկ Մոկսը, Կառկառ, Ոստան, Շատախ, Աղբակ շրջանները անապահով էին և ճնշել էին ամայի Արհեստական և դիտաւորեալ նահանջները ժողովրդին ահ ու դողի էին մատնել Ապահովութիւնը վանում և գաւառներում հաստատելու համար, Կոստի Համբարձումեանի դիւաւորութեամբ կազմեցին պահակախմբեր. նշանակեցին շրջանային ոստիկանապետներ, որոնք ունէին ձիաւորական խմբեր։



ԿՈՍՏԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

Կոջա Գաւառ։

1917 թւին վերին Թիմարի գաւառապետն էր՝ Շատախեցի Պօղոսը, իսկ վարի Թիմարինը՝

Օգոստոսի 15-ին վանի երկնքում երևաց Գերմանական մի օդանաւ. նա ցրեց թռուցիկներ, որով ապրարատում էր հայերին անձնատուր լինել կառավարութեան։

Նորաստեղծ տեղական իշխանութիւնը հացահատիկ էր ամբարում քաղաքում։ Հացամթերման գործում առաջին տեղը գրաւեց Թիմար գաւառը։

Տեղական իշխանութիւնը օրական յատարարեց, որ որի՝ դրօշի տակ պիտի առնուէին 20-25 տարեկան երիտասարդները։ Մեամբ առ խառամբ երիտասարդները գնում էին՝ իրենց գինուորական պարտականութիւնը կատարելու։ Վերին Թիմարի գինուորութեան վայրը Զանիկն էր, իսկ վարի Թիմարինը՝ Կիւանենցը։

Նոյեմբերին մենք նորակոչ գինուորներս, շրջանապետ Գաւոյի դլխաւորութեամբ անցանք Կիւանենց, Պօղանց,

Ալեքակի, Շահրազի գիւղերը և հասանք Այգեստան։ Այդ վողոյից անցնելով լճանք գինւորութեան կենտրոնը՝ «Գերմանացու Շէնքը»։

Ամեն օր շրջաններից գալիս էին նորակոչ գինւորներ։ Զօրահաւաքը նախկին զօրահաւաքների պէս կատարւում էր գնդատարով, սակայն այս անգամ այն տարբերութեամբ, որ հայ երիտասարդները փոխանակ դէպի անստոյգ ապագան գնալու, գնում էին գինավարժութեամբ ինքնապաշտպանութեան պատրաստելու և բռնութեան դէմ ծառանալու համար։

Նորեկ գինւորների վարժութիւնը յանձնւած էր Դաբաղցի, առյգ երիտասարդ՝ Ջաւադինն։

Փիչ-քիչ կազմակերպւում էր մի փոքրիկ բանակ ապագայ վտանգին դիմագրաւելու համար։ Երկու ամիս յետոյ մեր բանակն արդէն ունէր 2 գունդ՝ 2500 սինուոր։

Ես ծառայում էի առաջին վաշտի մէջ. մեր վաշտապետն էր՝ Գարեգին Հայգագործեանը։ (Այժմ ապրում է Արտանուշ)

Յատուկ դասընթացներ էին կազմակերպւել սպաներ պատրաստելու նպատակով։

Մի խօսքով, երիտասարդութիւնը եռանդուն կերպով լծւած էր գինավարժութեան գործին։

1918-ի Յունւարի 1-ը վանեցին տօնեց աւելի բախտաւոր պայմաններում, քան նախորդ տարինները։

Մեզ գինւորներիս բաժանւեց՝ առատ ուտելիք և հագուստ։ Յունւարի 6-ը՝ Յրօրհնէքի օրը պայծառ էր ու արեւոտ։ Սպիտակ ձիւնը ծածկել էր ամեն տեղ. վարպայ արեւոտ։ Սպիտակ ձիւնը ծածկել էր ամեն տեղ. վարպետները իր սպիտակ, ձիւնածածկ գագաթով երեւում էր, որպէս նագելի մի յաւերժահարս։

Ժամի 11-ին «Գերմանացու Շէնքում» եղող բոլոր գինւորներս, հագած մեր նոր զգեստները, շարքի կանգ-

նած սպասում էինք, եկաւ ամենքի սիրելի՝ Ջաւադը. մենք երգելով, պինւորական «մարշով» անցանք մի քանի փողոցներով. հասնելով Յանկոյանների առջևից անցնող պե-



ԳԱՐԵԳԻՆ ՀԱՅԱԳՈՐԾԵԱՆ

տակին, կանգ առանք։ Կէս ժամ անց, եկեղեցուց դուրս եկող ժողովուրդը, փառաւոր թափօրով, խաչ ու խաչվառուվ, քահանաների և պըրաց դասով հասան վետակը։

Տեղի ունեցան՝ կրօնական ծիսակատարութիւններ, քարոզներ և ջրօրհնեաց արարողութիւնը։ «Առաքելոց Աղաւնոյ» շարականին խառնուեց հազարաւոր հրացէնների ձայները. մեր թնդանօթները սկսեցին գոռալ...։

Անասելի ոգևորութիւն էր ապրում ժողովուրդը։

ԵՐԵՔ ԱՄԻՍ ՈՍՏԱՆՈՒՄ

1917-ի աշնանը, վանի ժողովրդին գաղթեցնելու խնդրի կապակցութեամբ, գումարուած էր ժողով 30 հոգու մասնակցութեամբ։ Ժողովը գտաւ, որ գաղթ լինելու պարագային, ժողովուրդը մեծապէս պիտի տուժի ցրտերի պատճառով. ուստի, որոշուեց առայժմ համբերել և սպասել նոր հանգամանքների։

1918 թւի Յունուար 14-ին անակնկալ կերպով յայտարարուեց, որ մեր բանակը պիտի մեկնի ռազմաճակատ։

Մենք դուրս գալով «Գերմանացու շէնքից», կարեցինք երկար ճանապարհ և հասանք՝ Արտամէտ, Անգղ, Աթանանց և ապա Ոստան։

Արճէշ-Առնիսի ճակատը յանձնուեց փորձուած սպաներ՝ Միշա Գասպարեանին և Համբարձում Մելքումեանին։

Ոստանի մեր ճակատը երկարում էր Հայոց Ձորից մինչև Ս. Եղիշէի մատուռը և հիւսիսից միանում էր Ծովափին կից՝ Բղլա Քարին։

Ծովին կպած Փարսանի կամուրջը խոցելի էր թշնամուց։ Սառնաշունչ ձմեռուայ գիշերները ուղղակի տառապալից էին մեզ համար։ Զինուորները քնում էին գետնափոր տնակների մէջ։ Սոսկալի ցուրտը սառեցնում էր պահակ-հերթապահի ձեռքն ու ոտքը։ Բայց հայ մարտիկները անվհատ տանում էին այդ բոլոր դժուարութիւնները պահելով Ոստանի ճակատը։

Զինամարժութիւնը կատարում էր կանոնաւորապէս և մեծ թափով։

Սպասողական դրութեան մէջ էինք։ Փետրուարի կէսերին, մի օր, յառաջապահ մարտիկներից մէկը զանգահարեց մեզ հեռախօսով, թէ 8 հեծեալներ մօտենում են մեր դիրքերին։ Հրահանգուեց ստուգել և թողնել առաջանան, իսկ մենք պատրաստուեցինք։ Նրանք մօտեցան, հրահանգուեց պատի կենալ։ Նրանք իջան մեր հրամանա-

տարութեան մօտ և 2 ժամի խօսակցութիւն ունենալուց յետոյ վերադարձան։ Պարզուեց, որ նրանք յանձնելու առաջարկ էին արել. մի բան որ անկարելի էր։

Կամաց-կամաց ձմեռը հասնում էր իր վախճանին. դրսից օգնութիւն ստանալու յոյսերը իսպառ կտրուած էին։ Այդ օրերին լսեց՝ Էջմիածնի անկումը, 3 ամիս խաղաղ և անդորր վիճակից յետոյ, երևում էին բուռն կռիւների նախանշանները։

Պահել վաստուրականը, առանց կարնոյ, անհնար էր։ Թշնամի բանակը նարեկում արտակարգ եռ ու զեռ մէջ էր։ Մենք ևս սկսեցինք պատրաստուել։

Առաջաւոր դիրքերը ամրացրինք 25-նոց գնդացիրներով։

1918 թ. Մարտի 17-ին, լուսաբացից առաջ, սկսեց առաջին գրոհը թշնամու կողմից. մենք դիմադրեցինք։



ԼԵՒՈՆ ՇԱՂՈՑԵԱՆ

Թշնամին մտադրել էր գրաւել Ս. Եղիշէի մատուռը, թուլացնելով մեր ձախ թևը։ Նա գրոհում, ապա նահանջում էր. իսկ մենք անխնայ հնձում էինք Ախլոդների թաւալագոր բնկնում էին ձորը։ Առաջին դիրքերում էր ճակատի ընդհանուր հրամանատար՝ Լևոն Շադոյեանը։ Նա խրախուսում էր տղերքին, ցուցմունքներ տալիս։

Մարտ 18-ին, Լևոնը

վիրաւորուեց ձախ կողմից և փոխադրուեց Ոստան, այնտեղից էլ քաղաք։

Նոյն օրը ժամի 4-ին ճշնամին նահանջեց. մենք ուռուռաններով հետևեցինք նրան, ճշնամուց բաղմաթիւ զոհեր խլելով։

Մարտի 19-ին, վանի լճի վրայ գտնուող Թնդանօթակիր նաւակը, կոստի Համբարձումեանի ղեկավարութեամբ, սկսեց ռումբեր տեղալ ճշնամու վրայ։ Թշնամին ստիպուած ճոզեց նարեկը և քաշուեց մօտակայ լեռնաշղթան։

Մարտի 20-ին մեր վաշտը, մի քանի օր հանգստանալու և այնուհետև Առնիս մեկնելու նկատառումով քաղաք փոխադրուեց։

Խիստ յոգնած էինք, մի քանի օր հանգստանալուց հետոյ, մեր վաշտը մեկնեց Ոստան։ Առաջին վաշտից, քաղաքում մնաց միայն 30 հոգի, որոնց մէջ էի նաև ես։

Մի տխուր և ամպոտ օր, դարպասի դուռը թակեցին. շէմքին երևաց մի երիտասարդ, ասելով.—հետևեցէք ինձ։ Ես և ընկերս՝ Յարութիւնը, հրացանները վերցնելով դուրս եկանք։ Երիտասարդը՝ «Գերմանացու Շէնքի» պահեստապետն էր։

Հասանք մի շէնքի առաջ, փայտէ աստիճաններով վեր բարձրացանք. դռան մօտ լսեցինք մէկին, որ հեռախօսում էր. «նահանջում ենք», բառերը պարզ լսեցինք և ցնցուցինք։

Հեռախօսողը Ջաւադն էր։ որ մեզ տեսնելով արագացած դրեց հեռախօսի ընկալուչը։ Նահանջի որոշումը դեռ գաղտնի էր պահւում։

Բուլգարացի Գրիգորը՝ մէկը գինուորական ղեկավարներից— անհանգիստ քայլում էր. Լևոն Շադոյեանը պառկած էր տախտակէ մահճակալի վրայ։

Գինուորական բարև տուինք։

— Ո՞ր վաշտից էք.— հարցրեց Բուլգարացին։

— Առաջին վաշտից.— պատասխանեցինք։

— Անմիջապէս փոխադրէ՛ք ձեր յիսնեակը «Գերմանացու Շէնքը», հսկելու համար գինամթերքը։— Հրամայեց Բուլգարացին։

Դուրս եկանք։ Մոայլ գիշեր էր. բարակ անձրև էր մաղում։

— Էհ, Յարութիւն,— ասաց լնկերս — Առնիսի անկումը ժամերի խնդիր է. տեսար երեքն էլ տխուր էին։

Օրհասական պայքար էր տարուում՝ Ասատնում և Առնիսում։

Փողոցով անցնելիս, լսեցինք երկի ձայն։ Մօտեցանք, տեսանք մի ծերուկ, տխուր ու տրտում երգում էր։ Հարցրինք պատճառը. պատասխանեց. «Մեծ տղես դարիբութեան մէջ մեռաւ. փոքր տղես Առնիսումն է. վախնամ մի բան էլնի, ու տան ճրագս մարի»։

Յուզուած թողինք ծերունուն ու հեռացանք։

Կատարուած հրամանը յայտնելով տղերքին, սկսեցինք փոխադրութեան պատրաստութիւն տեսնել, երբ ներս մտաւ Կիրակոս Սահակեանը և յայտնեց, որ նահանջ է յայտարարուած և մինչև գիշեր ժողովուրդը պիտի հասնի Ջանիկ գիւղը։

Ես, Գոմսեցի Մելքեսեթ Մկրտիչեանը և Կիւանենցի Վարոն, շտապեցինք «Գերմանացու Շէնքը» և տեսանք, որ շէնքը դատարկուած է հայ գիւղացիների կողմից։ Ոչ մի պէնք չի մնացել և բակը լեցուած է շաքարի և գինուորական պգեստների հակերով։ Դուրս եկանք և ճանապարհ ելինք Շահբաղի, ուր ժողովուրդը մեզ ընդունեց ջերմօրէն։ Ամենքը նահանջի պատրաստութեան մէջ էին։ Անցանք Աւերակի, Պօղանց, յետոյ Կիւանենց։ Ամուսնացած քոյրս՝ Եաղուբը այնտեղ էր. հանդիպեցի նրան։ Դա եղաւ իմ վերջին հանդիպումը քրոջս՝ Եաղուբի հետ. որովհետև այնուհետև նա մնաց Վանում և գերեց Թշնամու կողմից։

ՎԱՆԻ ՎԵՐՋԻՆ ՆԱՀԱՆՋԸ

1918 թւի Մարտի 28-ին վերջնականօրէն թողինք Վանը՝ մեր աննման Հայրենիքը և այլևս չվերադարձանք այնտեղ։ Սակայն, ծխացող աւերակների վրայ բուի պէս թառած, ագում էր թշնամին. որովհետև այլևս չկար շինարար և ստեղծագործող հայ աշխատաւորութեան հուժկու բազուկը, որի հաշւին որպէս մակաբոյծ ապրում էր նա դարեր շարունակ։

Գիւղացիք նահանջում էին զօրքի հետ միասին։ Մենք պարտականութիւն ունէինք միանալու Գոմա գիւղի բնակչութեան։

Ձախակողմեան յուզիչ էր նահանջի տեսարանը, Գոմա գիւղում։ Մենք դեռ գիւղ չհասած մեզ փառաւոր դիմաւորութեան եկան գիւղացիները, քահանայի առաջնորդութեամբ։ Գիւղում իրարանցում կար։ Բոլորը պատրաստւում էին հրաժեշտ տալու Հայրենի հողին, ջրին, տան։ Զինար Ալոյեանը արտասուալից աչքերով համբուրում էր կաթնատու կենդանիներին և նորածին հորթերին, որոնք մայում էին տխուր կարծես թէ, նրանք ևս զգում էին, որ շուտով պիտի անջատւեն իրենց սիրելի տէրերից և ճնան որբ ու անտէր։

Տեսարաններ, տեսարաններ... մէկը միւսից սիրտ մաշող ու ողբալի։

Եւ յանկարծ Բերկրիից յայտնեցին, թէ թշնամին կարել է նահանջի ճամբան։ Այս լուրը շանթահարեց բոլորին. յայտնի էր, որ Առնիստւմ մեր զօրքերը նահանջում էին, 5-6 օր ուժեղ մարտերից յետոյ։ Առնիստւմ դրութիւնը աւելի ծանրացաւ, երբ ապահսկ այդ ճակատի հրամանատար յանդուգն Միշան։ Կոջա Գաւոն իր հեծեալներով օգնում էր Միշային։ Կ. Համբարձումեանը ևս փորձեց հասնել նրանց, բայց ծովի փոթորկայոյզ ալիքները արգիլեցին։ Առնիսի ուշացած մեր զօրամասը նա-

հանջեց Բերկրի. այդ տեղից հետախօսային կապը մեզ հետ կտրւած էր։ Ջանքկը խառնաշփոթի տեսք ստացաւ, որը վերածւեց Բաբելոնի խառնարանի, ուր ամեն ինչ կար բացի փոխակրութիւնից։

Ժողովուրդը շարժւեց դէպի Դարաբեկ, Արճակ, ապա Սարայ 24 ժամից յետոյ, մեզ միացաւ Ռատանի զօրքը։

Գարնան ձիւնահալից առաջ եկած ցեխը անտանելի էր։ Թիմարի Սև Գետը վարարել էր և մեզնից խլեց մի քանի անմեղ զոհ։ Տաժանելի այդ ճանապարհով քայլում էինք դէպի առաջ, մեր արտերում փայփայելով այն վարդագոյն յոյսը, որ օրերից մի օր, նոյն ճանապարհով պիտի դառնանք երկիր։ Այդ օրւանից անցել է շուրջ 30 տարի. մենք դեռ չենք դարձել երկիր, բայց այդ յոյսը դեռ չի մեռել։ Ես համոզւած եմ, որ դա պիտի կատարւի ի վերջոյ։

Յոգնած ու չարչւած մեր կարաւանը հասաւ Սարա, որը կից է Մոլլա Հասան գիւղին։ Թշնամի հրոսակներ բռնել էին գիւղի դիմացի լեռը։ Գիշերը նրանք յարձակւեցին ժողովրդի վրայ։ 2 տանեակ գինւորներ, Գոմանցի Եղնիկ Գէորգեանի գլխաւորութեամբ, պաշտպանութեան են դիմում։ Հրոսակախումբը փախչում է, սակայն սպանւում է յանդուգն Եղնիկը։ Յաջորդ օրը առաւօտեան նահանջող ժողովուրդը գիւղիս անցնում է կարաւան-կարաւան։ Սարայի արևելեան կողմից նորից հրոսակները յարձակում գործեցին։ Մուրադ Գիլոյեանի հեծեալ դունդը հարձակման անցաւ. թշնամին փախաւ խուճապահար։ Առաջին վաշտը մնաց որպէս յետնապահ։ Մութը իջնելուն պէս, երբ արդէն վերջին մնացորդը նահանջողներից անցաւ, մենք ևս թողինք Սարան։

Սարայից կոթուր անտանելի էր։ Շատերը մնացել էին ճանապարհին, քայլելու կարողութիւնից զրկւելու պատճառով։

«Դուշման Դարա» ձորում սոսկալի ցրտից սառեցին շատերը։ Սա նոյն վայրն էր, ուր 1906 թ.ին նահատակուեց Փոխանեանի 18 հոգիանոց խումբը։

Ձանապարհին ճնացողներից էր նաև իմ կինս՝ Ադաւնի ս. Մեսրոպեանը, որը հազիւ հազ, ահագին նեղութեամբ, իրեն հասցրել էր կոթուր։

Մենք ևս հասանք կոթուր, ուր գարի բովելով կերանք, որովհետև շատ քաղցած էինք։ Ջուլֆայից անցնելու համար, մեզ Խոյից պատասխան պիտի գար, որն ուշանում էր։

Այդ ժամանակ, յայտնի հայասպան՝ Սմկոն, օգտուելով ասլիթից պատճի կերպով գրաւեց կոթուրի անառիկ և բարձր քարանձաւները։ Երկրորդ օրը թողինք կոթուրը։ Մեզ կարգադրուեց նորից յետնապահ մնալ։ Թողնելով կոթուրը, անցանք Տղմուտ գետի ալ ափը և շարունակեցինք մեր ճանապարհը։ Առաւօտեան ժամի 10-ին յայտնեցին, որ առաջին դիրքերում Սմկոն կուի է մտել մերոնց հետ։ Մենք շտապեցինք հասնել կուի վայրը. հասանք լեռան լանջին, բարձր դիրքերում տեղաւորուած էր Սմկոն։ Լեռնը թէև վիրաւոր, նորից զեկավարում էր կուիվը։ Սկսեցինք համաց-համաց առաջանալ. թշնամին նկատելով մեզ, ուժեղ կրակի բռնեց։ Խոցելի գտնելով թշնամու ալ թևը, սկսեցինք կռացած և յաճախ սողալով վեր բարձրանալ։ Յանկարծ համազարկերի տակ ասինք թշնամուն, որը ասլաւած նահանջեց, ժամի 5-ին։ Մենք 3 զոհ տւինք. Գոմահցի Խաչիկ, Սեդրակ Ալոյեան և Ալեքսան Ջանոյեան։ Սուլհի ազդարարութեամբ իջանք դիրքերից, հաւաքեցինք քրդական ամայի մի դիւղում։ Սովը սոսկալի կերպով տանջում էր մեզ։ Անապին փնտռտուքից յետոյ մի քանի եզ գտանք, որոնց իսկոյն մորթեցինք և կերանք։ Հրահանգ եկաւ շարժւելու պէպի Խոյ — Սալմաստ։ Ճանուղու վերևը երևում էր մի ահռելի սև քարաժայռ, որին դեռ

չհասած, հրահանգեց կանգ առնել ու հրացանները պատրաստ պահել։ Լեռան վրայ աւերներ նկատեցինք. քիչ ետք, մեր հայերէն իմաստակութիւնը լսելով վերէն ձայնեցին.—Ա՛խ, ձեր հոգուն մեռնիմ, հասէ՛ք, փրկէ՛ք մեզ.—հայ կանայք էին։

Նրանք պատմեցին, թէ ինչպէս վայրենի հրոսակները սպանել էին իրենց տղամարդկանց, մոտրել էին, առևանգել իրենց, երբ հայ պինւորութիւնը ժողեցել էր, և նրանք փախել էին Սպանուղ տղամարդիկ թիմարի Սլուբ գիւղից էին։

Կանանց և երեխաներին վերցնելով, առաջ շարժեցինք. ճամբին հանդիպեցինք մի մեծ ոչխարի հօտի, որին քշելով վերցրինք մեզ հետ։

Ճաւուրն կպած ևս քարի մօտ չհասած, յանկարծ պայթեց ահռելի համազարկ. թշնամին մեզ յանկարծակի բերելով լսեց մեզնից մի քանի տասնեակ դոհ։ Մենք պաշպանուեցինք։ Զինւորութեան մի մասը, ստիպուած վերադարձաւ. մի ուրիշ մասը անցաւ Սալմաստ, իսկ մնացածս չիմանալով ինչ անել, Սոյի ճամբան բռնեցինք։

Թշնամու ուժեղ համազարկի ժամանակ, բոլորը խուճապի մատնուեցին։ Մենք վերջ էինք որոնում. ես վախցի պէպէ գետափ, մտածելով այնտեղ դիրքանման քարեր կը լինեն։ Վազքի ընթացքում, յանկարծ ուժգին հարուած բատացայ ճակատից. աչքերս մթնեցին. առջևից վազող մարդը փուած էր գետին։ Ենթադրելով որ խփուած եմ գնդակով, մի պահ կանգ առայ ու յենուեցի հրացանիս...

Զգիտեմ որքան ժամանակ անցաւ. աչքերս բացարի. առջևից հոսում էր Տղմուտ գետը։ Ես ողջ էի։

Առջևիս ընկնողին վեր հանեցի և ինչ պարմանք, իմ ամենամտերիմ ընկերս էր՝ Ամանասլու Պարսլեց, որ նա վազելիս ընկել է գետին. ընկնելիս, նրա հրացանը ուժգին

բաղխել էր ճակատիս և մեծ վէրք բացել։ Անապին արիւն էր հոսել ճակատիցս։

Գետի մօտ դիրք բռնեցինք։ Լուսթեան մէջ լսւում էր միայն, մեր վիրաւոր ընկերների տնքոցները և մահամերձների խրխռոցը։

Մոր մթութեան մէջ առաջ շարժւեցինք. յանկարծ մի կրակոց լսեցինք օդի մէջ. մօտեցանք, մի 60-ամեայ հայ ծերուն էր որ վախից կրակում էր օդի մէջ, իբր թէ թշնամիներին վախեցնելու համար։ Երեքով շարժւեցինք առաջ։

Ճանապարհին հանդիպեցինք հարիւրապետ Մեսրոպ Զանոյեանին և Ագաթին։ Մենք անգիտակ ժողովրդի Սալմաստ անցնելուն, գնում էինք Մոյ։ Մեսրոպը և Ագաթը վերադառնում էին Մոյին կից Սէյդավար հայկական գիւղից, որն ամայի էր։

Մեր առաջապահ գինւորներից շատերը գերի ընկան թշնամու ձեռքը և սրախողխող եղան։ Փիրկարիբցի Դուժոյի երեմը և 2 ձիաւորներ, որոնք գնացել էին առաջապահ գինւորներին ետ կանչելու, վերադարձան ձեռնունայն։

Տխուր էինք։ Մորհրդակցում էինք. ինչ անել. փամփուշտ չկար ինքնապաշտպանութեան համար։ Մորհրդակցութեան միջոցին, հեռից երևաց մի ձիաւոր։ Որոշեցինք յուզ մնալ։ Նա մեզ նկատելով, քրդերէն մեր ինքնութիւնը հարցրեց։ Կասկածում էր մեր հայ լինելու հանգամանքի վրայ։ Մենք որպէս նշան, նրան յայտնեցինք մեր ղեկավարների անունները։ Նա վստահացաւ և մօտ գալով յայտնեց, որ մեր բռնած ճամբան սխալ է։ Կոտ Քարի տակից դէպի Սալմաստ պիտի գնանք։ Սերեբենկի մի աստղ երևտասարդ էր այդ ձիաւորը։

Տղմոտի միակ ծանծաղ կէտը Կոտ Քարի մօտն էր։ Որոշեցինք վերադառնալ։ Ձիաւորներն առաջ անցան. մենք հետևեցինք նրանց։ Գետանցքին չհասած ձորի մէջ լսեցինք

լայն և ծգնումեան ձայներ Այնտեղ էին հաւաքւած մօտ 40 հոգի Ալուր և Մաւենց գիւղի կանայք ու աղջիկներ. դրանց մեզ հետ վերցրինք, ու շարժւեցինք Մինչ մեր հասնելը, ձիաւորները անցել էին կետը։ Մենք՝ մօտ 100 հոգի, սոխւած ձեռք-ձեռքի ուած մտանք վարարած Տզմուտը։ Ջրի մէջտեղում մեզնից բաժանւեցին 2 հոգի, կեր դառնալով ջրի անյագ ալիքներին։ Ջրի ուժով հոսանքի դէմ երկար մաքառելուց յետոյ հասանք ցամաք. բայց դժբախտաբար, ափը 2 մետր բարձր էր ջրից, որին բախւում էին ջրի կատաղած ալիքները։

Մեր դրութիւնը լուրջ էր, Ամենափոքրիկ անզգուշութիւնն անգամ սոյթաքման և կորստեան պատճառ կլիներ։ Անագին դժւարութեամբ, մէկ հոգու կարողացանք վեր հանել բարձր թումբի գլխին։ Նա մի ուրիշին վեր քաշեց. ապա այն երկուսը միասին մի երրորդին, և այսպէս, մինչև բոլորը վերևում էին, բացի ինձնից։ Վերջինը՝ իմ մտերիմ ընկեր Աթանասն էր։ Նա վեր բարձրանալուց յետոյ, նկատեց, որ ոչ ոք չկայ վերևում, բոլորը թողել և գնացել են։

Նորից անել դրութիւն. Աթանասը տարւոք (հազիւ՝ 16 տարեկան) և հետևաբար ուժով փոքր լինելու պատճառով անկարող էր ինձ վեր քաշել։

Իմ կեանքս լուրջ վտանգի էր ենթարկւած։ Այդ էին ցոյց տալիս, ջրի սպառնացող ալիքները և իմ ոտքի տակ եղող հետզհետէ փոքրացող ցամաքը։

Բաւականին խորհելուց յետոյ, որոշեցինք փորձել մի-ակ միջոցը։ Փամփուշտակալը, պայուսակը և շնկլս վեր պարզեցի. Աթանասին պատւիրեցի, վերևում մի փոս փորի և ոտքը ամուր դնի մէջը, որպէսզի ինձ քաշելու ժամանակ, իմ ծանրութիւնը նրան վար չբերի։ Ես էլ ուժի ծայրով մի քանի ոտքի տեղեր փորեցի թումբի վրայ. ապա, Աթանասի օգնութեամբ սկսեցի բարձրանալ։ Թէ ես և թէ

Աթանասը գերմարդկային ճիգ ու չանք գործ դնելուց յետոյ, հազիւ հաց կարողացայ վեր բարձրանալ։ Նստեցինք մի քիչ հանգստանալու համար. փառք աւի Բարձրեալին, որ ինձ փրկեց հաստատ կորստից։

Թրջուած շորերով ճամբու ընկանք, մեր ընկերներին հասնելու համար։ Քաղցը և ծարաւը նեղում էին մեզ։ Մօտներիս եղած շաքարը կերանք, որը մեզ աւելի ծարաւեացրեց։ Ճանապարհին հանդիպում էինք բազմաթիւ դիակների, կտրտուած սայլերի, պատառոտուած վերմակների և ներքնակների։ Մի էշ գտանք. ուրախացանք, մտածեցինք կարող ենք մի քիչ հեծեալ ճանապարհ գնալ և հանգստանալ. փորձեցինք նստել վրան. բայց աւա՛ղ, խեղճ կենդանին սառած դրութեան մէջ էր և շարժելու բնաւ մտադիր չէր։ Ճանապարհին հանդիպեցինք բազմաթիւ երեխաների, որոնք լքուած իրենց մայրերից, դատապարտուած էին սանջալից սովամահութեան։ Շարունակելով մեր ճանապարհը հասանք մեր տղերքին, որոնց կպցրինք մի քանի «գինեւրական», «լաւ» հայհոյանքներ, մեզ անուշադրութեան մատնելու և գետի եզերքին մենակ թողնելու համար։

Ամբող ճանապարհեցինք։ Բաւականին քայլելուց յետոյ, հասանք Եզդիքան՝ պարսկական մեծ գիւղը և իջևանեցինք նրա կից այգում։ Սաստիկ քաղցած էինք. մի քանիսը իջան գիւղ հաց բերելու։ Այդ միջոցին, նկատեցինք, որ մեր գինամթերքը՝ բարձած ուղտերի վրայ, մատնդի է եննթարկւած։ Մի քանի գիւղացիներ, դրանց են մօտենում շորթելու նպատակով, իսկ այլազգի ուղտապաններըը, բան երևոյթին մատդրել էին ապանել գինամթերքի՝ սաստիկ յոգնածութիւնից և անփոյթութիւնից քրնած 8 պահակներին և տանել իրենց ուղտերը գինամթերքի հետ միասին։ Մենք հետացրինք գիւղացիներին, իսկ ուղտապաններին սպրեցինք մեզ ուղեկցել։ Նրանց ուղեկ-

ցուրիւնը մեզ շատ օգտակար եղաւ հետագային։

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՑԻՆ ՍԱԼՄԱՍՏՈՒՄ

22 հազար վասպուրականցի ժողովուրդը լեցուեց Սալմաստ։ Տեղացի հայերը մեզ ընդունեցին գրկաբաց, Մենք ինչանք պարսկական հարուստ Մուղանջուղ կոչուած գիւղը. պարսիկ ժողովուրդը ևս, մեզ ընդունեց սիրալիր կերպով։ Պարսիկ աշխատասէր գիւղացիները՝ կարեկից վասպուրականցու կրած անլուր տառապանքներին, մեզ ընդունում էին արտքացօրէն, անկեղծութեամբ և ոչ մի միջոց չէին խնայում մեզ որևէ ձևով աջակցելու համար։ Մենք լրիւ կերպով վայելում էինք պարսկական հոչակաւոր և պատմական հիւրընկալութիւնը։

Գիւղ հասնելուն պէս, Հաֆթեւանից մեզ համար ղրկեցին 5 սայլ ընտիր լաւաշ հաց, որն իսկոյն բաժանուեց զօրքի մէջ։ Հաֆթեւանից մեզ դիմաւորելու եկան, տեղի հասարակական մարմինների ներկայացուցիչները, որոնք գինւորներին տեղաւորեցին ևկեղեցու շրջապատում։

2 օրից ետք, մեզ թոյլատրուեց գնալ և տեսնել մեր հարազատներին։ Մերոնց տեսնելու համար որոշեցի մեկնել Սառնա գիւղը։ Մարտերի ընթացքում գինւորները բաժանուած էին իրենց հարազատներից. այժմ, երբ մի քիչ դադար կար, յարմար առիթ էր այդ տեսակցութեան համար։

Երբ Հաֆթեւանի կենտրոնից անցնում էինք 10 հոգով, մի դարպասից—որի մեծութիւնը ցոյց էր տալիս, որ այդ տունը ապրում է մի մեծ ու հարուստ ընտանիք—դուրս եկաւ բան երեսունին տան մեծ մայրիկը և մեզ տեսնց 15 հատ Սալմաստի հոչակաւոր, մեծ հացերից, որոնք նոր էին թոնրից հանուած։

«Թազա» հացը գրգռեց մեր ախորժակը։ Մենք որոշեցինք պանիր ևս ձեռք բերել. ուստի գինւորի «յանդրգնութեամբ» բաղխեցինք մի դուռ և պանիր խնդրեցինք։

Դուռը բացող կինը ցաւով յայտնեց, որ պանիր չունեն. ապա ասաց, սպասէ՛ք գուցէ գտնւի. մինչ նա գնացել էր պանիր փնտռելու մեր գինւոր-ընկերներից մէկը ձեռքը պաթրեց և կրակի վրայից վերցրեց մսաջրի պտուկը, որի մէջից գոլորշի էր դուրս գալիս; ախորժաբեր բուրմունք տարածելով: Ինչքան ժամանակ կլինէը, որ այդպիսի կեբաբուր չէինք կերել:

Առանց սպասելու պանրին, մսի պտուկը վերցրինք ու դուրս եկանք: Ետևից կինը կանչեց մեզ, պանիր տալու համար. բայց մենք ամօթից ետ չնայեցինք:

Զուլա գետի ափին մեր ճանկած «տրսը»,—որի մսերը դեռ կիսաեփ էին,—անուշ անելուց յետոյ ճանապարհ ելինք Սառնա գիւղը: Այնտեղ մեզ ընդունեց մի եռանդուն երիտասարդ՝ Սարիբեկ անունով:

Մենք իջանք Արշակենց մեծ տունը, որտեղ ապրում էին նաև իմ աներոջ՝ Գոմս գիւղի Ռէս Յովհաննէս Խլոյեանի ընտանիքը: Գաղթականութեան վիճակը ողբալի էր: Սալմաստի զոհաբերող ժողովուրդը և գանազան բարեգործական միութիւնները իրենց կարելի սահմաններում աջակցում էին իրենց պանդուխտ եղբայրներին:

Մեզ հետ կային նաև բաւական թւով ասորիներ, որոնց «Մարշիմոնը» սպանել էր Ճարայում Սմկոյի կողմից վատպուրականցի 3000 գինւորութիւնը ապահովում էր ոչ միայն 22 հազար վատպուրականցիների կեանքը այլ նաև պաշտպանում էր Սալմաստի ժողովրդին՝ հայերին, պարսիկներին և ասորիներին թշնամու անակնկալ յարձակումներից: Գնալով ծանրանում էր ժողովրդի դրութիւնը: Սովի մեզ ծանօթ ուրուականը, կրկին երևում էր մեր աչքերի առջև և ցոյց էր տալիս իր մահագոյն ատամները: Դիմում էինք գանազան հեռու և մօտիկ գիւղերը ցորեն կամ գարի ձեռք բերելու համար:

Մի օր, 25 հոգով Գարապ Թեյբեքի լեռան կողմը գը-

նայինք. ձորի միջով անցնելիս, ես ետ մնացի և ընկերներս բաւական հեռացան։ Յանկարծ նկատեցի, որ 4 քրդուհիներ դէպի ինձ են գալիս։ Ես, հրացանս ուսից վար բերելով, ազդարարեցի չմօտենան և յայտնեն իրենց նպատակը։ Նրանք ուշադրութիւն չդարձրին իմ ազդարարութեան վրայ և շարունակեցին արագօրէն դէպի ինձ գալ։ Ես նրանց կասեցնելու համար, 2 անգամ կրակեցի օդի մէջ. բայց իզուր. նրանք մի ինչ որ չար միտումով յամառօրէն մօտենում են ինձ։ Ատիպւած, նշան բռնեցի և փորձեցի կրակել. բայց աւաղ, հրացանս այդ դառն րոպէին չէր աշխատում։ Իմ սիրելի հրացանը, որ բազմաթիւ անգամներ փրկել էր իմ կեանքը, այժմ դաւաճանում էր ինձ, «բանթող» էր կատարել։

Քրդուհիները նկատելով իմ զէնքի անգործութիւնը, աւելի խրախուսւած վազում էին դէպի ինձ։ Մահուան պաղ քրտինքը պատեց ճակատս։ Սպառնում եմ, ազդարարում եմ մօտ չգան. բայց զուր և զուր... Հազիւ 16 քայլ էր մնացել, որ ինձ հասնէին, ես սթափւելով, մտաբերեցի ատրճանակս. մէկ ակնթարթում հանելով զէնքս կրակեցի. քրդուհիներից մէկը ընկաւ ցած. միւս երեքին բռնելով բերի Սալմաստ, որոնց վրայ գտանք մի քանի դաշոյններ։ Նրանք խոստովանեցին, որ տեսնելով իմ մենակ լինելը յարձակել էին իմ վրայ սպանելու և զէնքը գրաւելու մտադրութեամբ։

Սալմաստը խաղաղ էր։ Դիլիմանի ապահովութիւնը պաշտպանում էին հայ և ասորի գինւած ջոկատները։

Մայիս ամիսն էր։

Գիւղացիք, ըստ սովորութեան գնում էին Դիլիման առևտուրի համար։ Շուկայում, յանկարծ սպանւում են 2 հայ գիւղացիներ, մնացածը սարափահար գալիս և յայտնում են դէպքի մասին։ Պարզւում է Դիլիմանը ապստամբութեան դրօշ է պարզել Սմկոյի գլխաւորութեամբ, որն

իր 500-ի չափ «զոլամներով» պաշարել է քաղաքը և սպա-
նել հայ և ասորի պահակներին։ Կռիւը սկսեց։ Տեղացի-
ները օգնում էին ապստամբներին։

Մեր զօրքին հրամայւած էր քաղաք մտնել հարաւից,
Հաֆթւանի դարպասի կողմից։ Որոշւել էր Ծմկոյին ողջ
բռնել և քաղաքի հրապարակում կախել։

Մեր դիրքերը անյարմար, իսկ թշնամու դիրքերը յար-
մար և ապահով էին։ Զինւորական դեկավար մարմինը
արգիլեց թնդանօթ գործածել, որպէսզի անմեղ ժողովուրդը
չկոտորւի։ Այս հանգամանքը նպաստաւոր էր թշնամու
համար և մեր յաղթութիւնը ուշացնում էր, աւելորդ զո-
հեր խլելով։ Երրորդ օրը ճարահատ, մեր թնդանօթները
ամրակոծելով աւերեցին թշնամու կարևոր դիրքերը, իսկ
չորրորդ օրը հայկական զօրքը ուռռաններով խուժեց քա-
ղաքը։ Ամեն ինչ վերջացած էր. քաղաքը արդէն մեր
ձեռքն էր։

Զինւորական դեկավար մարմինը պարտկերէն ազդով
յայտարարեց ժողովրդին հանգիստ և ապահով շարունա-
կէն իրենց գործը. միայն թէ պիտի յանձնեն ապստամբ-
ներին, որոնք թագնւած են։ Մինչև գիշեր անձնատուր
եղան 65 ապստամբներ, որոնք խոստովանեցին, որ սոյն
խառնակութիւնը կազմակերպել էր Ծմկոն, նպատակ ու-
նենալով կոտորել տեղի հայերին։

Ծմկոն, գիշերը փախել էր քաղաքի ասորերկրեայ կո-
րանցքի միջով։ Անձնատուր եղած ապստամբներին զրկե-
ցինք Փայաջուկ՝ զինւորական դեկավար մարմնի կենտրոնը։

Մեր զինւորական դեկ. մարմնի և թշնամու մէջ եղած
բանակցութիւնների հետևանօք, որոշեց գերին եկի փոխա-
նակութիւն կատարել։

Փոխանակւող գերիների մէջ էր թիմարի կիւանենց
գիւղի Քիշմիշի վարդանի 70-ամեայ մայրը որը պատմեց
հետևեալը։

Ջանիկ գիւղում մնացած 3000 ժողովրդից, 400 հոգին, որի մէջն էի նաև ես, մարտի 28-ին վերադարձանք Գիւանենց, անցանք Թրքական Աղբեր գիւղը։

Այնտեղ գիմեցինք յայտնի Էմուշ Յանուսին և խընդրեցինք նրա պաշտպանութիւնը։ Վատահ էինք, որ Էմուշ Յանուսը չպիտի մերժէր, մեզ վերցնելու իր պաշտպանութեան տակ, որովհետև կամաւորութեան ժամանակ նա մնաք նրան, ուրիշ 18 թիւրք կանանց հետ պաշտպանել էինք և փրկել։

Մի օր, երբ Թշնամի հրոսակները գիւղ մտան, Էմուշ Յանուսը յայտնեց նրանց մեր թագստոցը։ Գազազած հրոսակները խուժելով ներս, սպանեցին բոլորին։ Ես իմ Թոռնիկիս գրկած ընկանք դիակների տակ և ողջ մնացինք։ Կէս գիշերից անց, դժուարութեամբ դուրս եկայ դիակների տակից։ 3 տարեկան Թոռնիկիս գրկած ոտքի կանգնեցի. շուրջս փռւած էին անգլուխ, յօշոտւած, բզկրտւած մարդկային մարմիններ։ Շրջապատիս տեսարանը սարսափելի էր։ Մարդկային մակարդւած արիւնը լճացել էր։

Արևը ծագեց. ստիպւած մտայ ջրապատի մէջ։ Մի քանի օր քաղցած մնացինք այդտեղ։ Մի գիշեր, հայ գրուններու նպատակով գիւղը մտայ. դիմացի փողոցի մէջ, յանկարծ մի տուեր նկատեցի, որ մրմնջում էր. «Օ՜հ, ինչ դառն է եղել, մեր ճակատագիրը...» ապա սկսեց ախուր երգել Իմանալով, որ հայ է, մօտեցայ և ձայն տւի.— ախպէր չան հայ ես։ Մօտեցայ նրան, Խարբերդի Յակոբն էր, որը կամաւորական գնդերի հետ երկիր էր եկել ու ամուսնացել Աղբեր գիւղի Ցերդազ անունով մի Թրքուհու հետ և որից ունէր մի աղջիկ. Յակոբը ինձ մի կտոր հաց տւեց։ Ես նրան պատմեցի Աղբեր գիւղի ցաւալի դէպքի մասին։ Յակոբը յուզւեց ու ասաց.—Մնա այստեղ, մինչև իմ գալը.—և հեռացաւ։

Նա վերադարձաւ ու պատմեց, որ սպանել է իր կնոջ,

երեխային և գիւղում գտնուող թրքուհիներին։ Ապա, անցել է Գոմա գիւղը. այնտեղ թշնամի հրոսակներ, իջել էին Ռէս Յովհաննէսի տունը և հանգիստ քնել էին. Յակոբը կարողացել է սպանել շուրջ 10 հոգու ու փախել ևս մեղադրեցի Յակոբին, իր կնոջ, երեխային և ուրիշ անմեղ թրքուհիներին սպանելու առթիւ. սակայն դրւատեցի զինւած հրոսակներին արժանի պատիժ տալու համար նա ասաց.

—Տո, հէնց այդ թրքուհիներն էին, որ ձեզ կոտորել տւին. հիմի դու նրանց խղճում ե՞ս։

—Այո, բայց նրանց անգթութիւնները մենք չպիտի կրկնենք.—պատասխանեցի ես։ Յամենայն դէպս ոճրագործներից մի մասը պատժւած էին, իսկ Ջանիկ գիւղի մնացած 2600 հոգին, քաշւել էին Լիմ անապատի կողմին։ Ոմանք մեռել էին քաղցից, իսկ մնացեալը յանձնւել էին թշնամուն։ Սպանում են Փոլիս Պօղոսին (Էրերինցի)։ Ժողովրդի մնացեալ մասին փոխադրում են քաղաք և այնտեղից էլ Բիթլիս։ Շատերը մեռնում են ճանապարհին. իսկ ողջ մնացածներին՝ 450 հոգի, բերում են Վան։

Այդ ժամանակ գերիներից Ռէս Յարութիւնը և Եսայի Ղազարեանը նամակ են գրում Կովկաս, որտեղից խնդրում են ազակցութիւն, փրկելու համար նամակը յանձնում են Աւանցի վահան Բարունակեանի կնոջ՝ Ագնիւին և Շահբաղեցի Մարգարիտին, որոնք մի քիւրդ սուրհանդակի 4 օսմանեան հնչիւն ոսկի տալով, խնդրում են հասցնել նպատակին։

Բնակչիում բռնւում է այն նամակը, որը հանում են ձիան պայտի տակից և գնդակահարում սուրհանդակ քիւրդին։ Ձերբակալւում են նաև 2 հայ կանայք։

Ալբյլ Սուրէն Նազարեանը, 120 հոգով Լիմ անապատի կողմից դուրս գալով, Աբաղայի դաշտի վրայով հասնում են Իգդիրի ճօտերքը. այնտեղ հանդիպում են թշնամի

զօրքերի. օրհասական կռիւ մղելուց յետոյ, բոլորն էլ ըսպանուում են. որոնց թւում՝ Աւանցի Յովհաննէս, Մելքոն, Աւագ, Նշան Մուրոյեան. Ամէմեան, Յակոբ Ջամկեմեան և Թանխոսեան Յովհաննէս: Դրանցից ազատւում է միայն Աւանցի Ալոյի տղան Յովհաննէսը, որն ապաւինելով մի «մոլլայի» տուն, անցնում է Երևան: (Միջանկեալ յիշեմ, որ 1924 թւին, 325 հոգի վանի գերիներից՝ Տաճիկ կառավարութեան կողմից, յանձնուեց Հայաստանի կառավարութեան: Ականատեսները պատմում են որ այժմ վանում ապրում են բազմաթիւ հայ կանայք կրօնափոխ եղած:)

Այստեղ վերջանում է պատմւ Մայրիկի տխուր պատմութիւնը:

Իսկ արիասիրտ Յակոբը,—որի մասին յիշուեց մայրիկի պատմութեան մէջ — ամբողջ ամառը ծիւում է լեռներում. միշտ նեզի է դնում թշնամի զինուորներին: Ապա Կովկաս անցնելու նպատակով, անցնում է Աբաղայի դաշտը, ուր կռւի է բռնւում թշնամի հրոսակների հետ: Բազմաթիւ գոհեր խլելուց յետոյ, սպանւում է քաջ զինուորը՝ Յակոբը:

Սալմաստում մենք յաճախ որսի էին գնում: Մի օր էլ, երբ աներոջս տղայի, 14 տարեկան՝ Սիանոսի հետ գնացինք որսի, ես նկատեցի մի մեծ թռչուն: Նշան բռնելով կրակեցի. գնդակներից 2-ը վրիպեց. երրորդ գնդակից թռչունը գլորւեց ձորը. Սիանոսը վազեց բերելու. ուշացաւ, անհանգստացայ, շտապեցի ձորի մէջ: Տեսայ հսկայ թռչունը, որը մի տեսակ բու էր—կատուով բռնել էր Սիանոսի ձեռքը, որը սաստիկ ցաւից լացում էր: Կէս ժամ չարչարւելուց յետոյ, հազիւ ազատեցի պատանու ձեռքը:

Առաջին վաշտի պետ՝ Գարեգին Հացպտրծեանի կարգադրութեամբ մեր վաշտը փոխադրւեց Ղալասար: Այնտեղ ապրում էինք զգրոցի շէնքում: Գետի միջով անցնող

գետակի կողքին կար մի գեղեցիկ պարտէզ։

Մեր ձիաւորական խումբը և զօրքի հրամանատարական կազմը միասին էին մեր մեծ վիպասան Րաֆֆու ծննդավայրը՝ Փայաջուկ գիւղում։ Սալմաստի մեր պաշտպանութեան գիծը Սալմաստի լեռնաշղթայից սկսելով տարածւում էր մինչ Քոհնաշհար, Մուղանջուղ և հասնում մինչ Համազգանդ, Զոպանլու գիւղերը։ Մեր պահակները հսկում էին աչալուրջ Պարսիկներից իմացանք, որ Ծոյում և Աղբակում թշնամին զօրք է լիցրել։ Մեր վաշտը, որ կազմւած էր երիտասարդ և խիզախ մարտիկներից և բոլոր մարտերում առաջին գծի վրայ էր, այստեղ նա առաջ անցաւ և բռնեց Բարգողլուի շրջանի առուները և յորենի արտերը։ Ղանթափայի, Գաբաղթափայի, Փիրզաւղխափայի լեռներում կենտրոնացւած էին թշնամու կարևոր ուժերը, որոնք հասել էին մինչև Քոհնաշհարի դիմացի լեռները։

Արևածագից առաջ, թշնամին յարձակւեց իր բարձրաբերձ դիրքերից։ Ժամի 10-ին նա կամենում էր գրաւել Շեյթանա գիւղը. սակայն անօգուտ։ Թշնամու 5 լեռնային թնդանօթները սկսեցին գործել ուժգնօրէն։ Թնդանօթների, գնդացիրների և հրացանների բիւրաւոր ձայներից դղրդում էր Սալմաստը։ Քոհնաշհարի շրջանից մերոնք ուզում էին նահանջել, սակայն համբարձում Մելքումեանը հասնելով այդտեղ շարունակում է դիմադրութիւնը և կայուն պարձնում դրութիւնը։ կենտրոնում տեղաւորւած մեր վաշտի դրութիւնը լուրջ էր։ Քոհնաշհարի անյաջող փորձից յետոյ, թշնամին դարձաւ դէպի մեր դիրքերը։ Թշնամու կանոնաւոր զօրքերը յորենի արտերի միջով մեզ էին մօտենում։ Ինչ, երիտասարդ մարտիկ՝ Ռուբէն ժամհարեանը 250-նոց Մաքսիմ գնդացիրով անընդհատ կրակ էր տեղում թշնամու վրայ։ Բարգողլու փուզի մօտ մօտիկ բլուրի վրայ տեղաւորւած 25-30 ասորի-

Ջերմները լքեցին իրենց դիրքերը ուշահանջեցին. սակայն Ի ժամհարեանը մի քանի հայ զինուոր միացնելով նրանց, ստիպեց վերադառնալ և վերագրաւել լքած դիրքերը։ Սոյն օրհասական կռւի ընթացքում, Կոստի Համբարձումեանը շրջում էր դիրքից-դիրք, հրահանգներ և ցուցմունքներ տալիս ու խրախուսում։ Թշնամու թնդանօթները սկսում էին մեր դիրքերը և նրանց կից կանաչ մարգագետինները։

— Ո՞ւր են հապա մեր թնդանօթները,— հարցնում էինք մենք։

— Համբերէ՛ք տղերք, շուտով կհասնեն.— պատասխանում էր Համբարձումեանը։

Կէսօրից անց էր. թշնամին արագօրէն առաջանում էր դէպի մեր դիրքերը. մեր պէնքերը գործում էին անդադար։ Կռւի տաք պահին, յանկարծ, մեր թիկունքից լսեցին թնդանօթների որոտալի ձայներ. մեր դաշտային, ծանր թնդանօթները հասել էին և անմիջապէս սկսել էին ռմբակոծել թշնամու դիրքերը։ Մենք, սկսեցինք շունչ քաշել. թնդանօթները, այսպէս ասած, «փոթորիկ էին անում»։ Եւ որքան հաճելի է զինուորի համար, իրենց կողմից արձակած ռումբերի սուլոցները. դա լաւագոյն երաժշտութիւնն է նրա համար. այնպէս, քաղցր են շոյում այդ ձայները, զինուորի արդէն բթացած ականջները։ Մեր ոգևորութեան չափ ու սահման չկար։ Հնձում էինք անխընայ թշնամու շարքերը։

Երեկոյեան ժամի 4-ին թշնամին նահանջեց պաշտօնապէս։ Երրորդ օրը, Յունիսի 5-ին կռիւը շարունակեցաւ։ Թշնամին յուսահատ յարձակումներ էր կատարում։ Այդ ժամանակ, յանկարծ, պարզ երկինքը մթագնեց և սկսեց ահռելի կարկուտ տեղալ սիսեռի մեծութեամբ, որին զուգընթաց էր մի սոսկալի փոթորիկ, որը ուղղւած էր դէպի թշնամին։ Այս հանգամանքը մեզ համար խիստ նպաստաւոր էր, չնայած որ մեր դիրքերը լեցւեցին կէս մետրի

չափ կարկուտախառն անձրևաջուր։ Դիրքերի մէջ ցեխակոլոլ սոսկալի պայմաններու մէջ շարունակում էինք ինքնապաշտպանութեան արբազան պայքարը։ Այո, պայքարների մէջ ամենասրբազանն է, ամենաճիշտը և ամենաարդարն է ինքնապաշտպանութեան պայքարը. այն պայքարը որ մարդ մղում է իր անձը, իր հարազատների կեանքը և պատիւը փրկելու համար. այն պայքարը, որ մարդ մղում է ազատ ու երջանիկ կեանք ստեղծելու համար. այն պայքարը, որ վերջապէս արդիւնաւորում է ժողովրդի և Հայրենիքի ազատագրումով, նրանց փառապանծ յաղթանակով։

Յունիսի 6-ին, առաւօտեան, մեզ հրահանգուեց առաջ շարժուել։ Մենք անցնում էինք արտերի միջով, ուր թափուած էին բազմաթիւ թշնամի զինուորների դիակներ։ Թշնամին չարդուած քաշուել էր Սալմաստի սահմանները։ Մենք առաջանալով գրաւեցինք, թշնամու կարևոր դիրքերը, որոնք ժամանակին Անդրանիկի դիրքերն էին եղել. այնտեղ գեբեցինք երկու տասնեակ թշնամի զինուորներ։

Քիւրդ կանանցից իմացանք, որ թշնամին իր հետ բերել էր հարիւրաւոր տիզապիններ, զինած բահերով ու կացիններով, որոնց իսօք էին ուզել,— Հայկական զօրքը ոչնչացնելուց յետոյ, կթօղլատուի կատորելու և կողոպտելու հայ ժողովրդին։ Սակայն թշնամու հայակեր ծրագիրները յօդս էին ցնդել մեր զօրքի անօրինակ քաջութեան և անձնւիրութեան շնորհիւ։

Թշնամին անգիտանում էր, որ չի կարելի մի կենսունակ ժողովրդի ֆիզիքապէս ոչնչացնել։

Թշնամին, ժողովուրդը սխալում էր ոչխարի հօտի հետ, որին կարելի է մի անգամից սպանդանոց տանել և մորթել։

Ժողովուրդը, դա մարդկային գիտակից հաւաքականութիւն է, որ տնտեսական, քաղաքական և մշակութա-

յին որոշ պայմաններուն առաջ է եկել, և զարգանում է համաձայն այդ պայմանների զարգացման ժողովուրդը երբէք չի ոչնչանում. ժողովրդին երբէք, ոչ մի ձևով չի կարելի ոչնչացնել։

Ժողովուրդը, որպէս հասարակականութիւն, փոփոխուում է, որպէս ձեւ։ Փոխուում են տնտեսական պայմանները, փոխուում են արտադրական ձևերը, դրանց հետ փոխուում են նաև, մարդկանց փոխյարաբերութիւնները, ապրելակերպը, մտածելակերպը, մշակոյթը և այլն։ Սրանք արժէքներ են, փոփոխութեան և հոլովոյթի ենթակայ. պայմանաւորուած որոշ ժամանակի և տեղի հետ. իսկ ժողովուրդը, դա յաւիտենական արժէք է. ենթակայ փոփոխութեան իր ձևով. և ինչու չէ, երբեմն էլ խորքով. բայց բնաւ, ենթակայ ֆիզիքական ոչնչացման։

Ահա այս փիլիսոփայութիւնն է, որ չէին ըմբռնել հայ ժողովրդի դաժան բայց տպէտ դահիճները։ Նրանք որ չեն ըմբռնում այս պատմական, յաւիտենական ճշմարտութիւնը, երկաթեայ ակռաման, ջախջախում են պատմութեան և կեանքի միշտ յառաջդէմ և անդուլ անիւների տակ։

Յամենայն դէպս, հայկական տարագիր, մի բուռն ծօրքի առջև, թշնամու, պետական կանոնաւոր բանակները թիկունք տուած փախչում էին ասրատիահար։

Երկար խորհելուց ետք, վաստրականցի գաղթականութեան ղեկավարները ժողովրդին փրկելու համար, որոշեցին անցնել Կովկաս Ասորիները գլխաւորութեամբ՝ Աղա Պետրոսի ուղում էին անցնել հարաւ՝ անգլիացիների մօտ։ Մեր հարկադրանքով, նրանք ևս որոշեցին անցնել Կովկաս. ուստի Աղա Պետրոսը ուրիշ 10 ասորի ղեկավարների հետ գնացին Փայաջուկ գիւղը, մանակից լինելու այն ժողովին, ուր վերջնականօրէն պիտի որոշէր և ձևակերպէր Կովկաս անցնելու խնդիրը։ Աղա Պետրոսը

այդ ժողովում խոստացաւ, 3000 զօրքով բռնել Թաւրիզ տանող Շարաֆխանէի գիծը։ Այլ և ձախ թևերը ենթակայ էին կենտրոնին՝ հայ զինուորական հրամանատարութեան Մանրամասն ծրագիրը գծուեց։

Յուլիսի 1-ին, ըստ ծրագրի, Ուրմիից եկաւ Ագա Պետրոսը միայն 500 ձիաւորով և իջևնելով զեկավարներից մէկի մօտ, յայտնեց որ մնացեալ զօրքը անցել է Զոպանլու գիւղը։

Յուլիսի 2-ին Սալմաստը ծանական տեսք էր ստացել Բոլորը բարի երթի էին եկել հայկական զօրքին, որը մեկնում էր ռազմաճակատ։ Մենք զինուորական երգերով դուրս եկանք Ղալասարից, հասանք Բարզոզու, որտեղ մեզ միացաւ Ծիրուևի հարիւրակը և ձիաւորական խումբը։ Ապա բարձրանալով հասանք Անդրանիկի նախկին դիրքերը։ Զորերի մէջ մնացինք նստած, չնկատելու համար Տեղաւորեցինք դիրքերում։

Յուլիսի 3-ի առաւօտն էր։ Մուղանջուղից դուրս եկաւ թշնամու մի հարիւրակ ձիաւոր խումբ, որ Զոպանլու էր ուզում անցնել։ Մենք լուռ էինք երբ, յանկարծ սկսեցին մեզ, հրամայեց՝ կրակ. որոտացին մեր գէնքերը. թշնամին բազմաթիւ կորուստներ տալով նա դառաւ ու բռնեց փախուստի ճամբան։ Մենք ուռուցներով դուրս եկանք դիրքերից ու սկսեցինք առաջանալ բայց, մեր դուրթիւնը լուրջ էր. թշնամին ամուր և ապահով դիրքերից կրակ էր թափում մեզ վրայ. մենք գանուում էինք բաց պաշտի վրայ, առանց դիրքերի։ Շուտափ, հեռախօսով օգնութիւն պահանջեցինք։ Քիչ անց, մի ուուս սպայ, մի քանի հայ զինուորների հետ դէպի մեզ էին գալիս մեծ գգուշութեամբ, գրեթէ սողալով. թշնամու գնդակները սկսեցին տեղալ նրանց վրայ։ Սպան վիրաւորուեց ձախ ուսից և նստեց գետին, եկող տղերքը այլևս չկարողացան առաջանալ։

Կէսօր էր։ արեը վերից, իսկ ներքևից տաքացած հողը մեզ այրում, խաշում էին Ծարաւից պապակւում էինք։ շարժւելու կարողութիւնից զրկւել էինք։

— Ա՜խ, Յարութիւն, պուտ մը ջուր լինէ՞ր...— ասաց կողքիս ընկերը՝ Սերոբը։

—Ես էլ քո օրին եմ, դիմացիր քիչ էլ.— պատասխանեցի ես։

Ու յանկարծ թշնամու արձակած ռումբերից մէկը պայթեց մեզ շատ մօտ։— Այս էր պակաս.— գոչեց քաջ զինւոր՝ Յարիկը։

Թշնամին մեր ձախ թևից հարւածում էր մեզ։

—Տղերք, առաջ շարժւենք. ուրիշ ելք չկայ.— ասացի ես, և սկսեցինք սողալով առաջանալ։ Երբ հասանք ձորի ափին, վիրաւորւեց Սերոբը, իսկ թշնամին նկատելով մեր շարժումը ուժեղացրեց համազարկերը։ Ժամի 4-ն էր. աչ թևի մեր զօրքը առաջ էր գնում ուռանների և հրազէնների տարափի տակ։ Այս պահին ոտքից վիրաւորւեց, մեր վաշտապետ՝ Գարեգին Հայցագործեանը և մի քանի ուրիշներ, որոնք փոխադրւեցին թիկունք։ Սպանւեց Յառանկոնիսցի քաջ զինւոր՝ Յարիկը, 38 տարեկան։ Յարիկի մահը տխրեցրեց մեզ։ Ժամի 7-ին մենք գրաւեցինք Բշնամու բոլոր դիրքերը և գերեցինք 24 զինւոր։

Երեկոյեան կողմ շահած այդ փառաւոր յաղթանակը մեզ մոռացնել տւեց, օրւայ կրած խիստ, իսկապէս «Հրեաստան չարչարանքը»։

Մեր գրաւած լեռնաշղթան երկարում էր մինչև Եզդիքանի մօտ և միանում Մոյի Ղեադուկին։ Մենք հանգստանում էինք, իսկ ամրաշէն բանւորները դիրքեր էին կառուցում։ Մեր թնդանօթաձիգները՝ ռուս բարեկամ և երիտասարդ աղջիկներ, յատուկ զինւորական գեղեցիկ համազգեստով, կ. Համբարձումեանի հետ շրջում էին դիր-

քերը և իրենց ներկայութեամբ ու խօսքերով ոգևորում զօրքին։

Յուլիսի 4-ի արշալոյսին, նորից սկսաւ կռիւը թշնամու 8 մնդանօթները գործում էին անդադար։ Մեր ձիաւորներից մի ստանձնակ ալացաւ բայց դաշտի վրայով թըշնամու վրայ. յանդուգն բայց անյաջող մի փորձ էր դա։ Թշնամին մնդանօթների սաստիկ կրակի տակ առաւ պարապոցի կտրիճ ձիաւորներին. բայց նրանք անընդհատ այս ու այն կողմ դարձելով խուսափում էին գնդակներից։

Մեր դիրքերի վերջաւորման կէտում մի գիւղ կար, ուր կենտրոնացած էր թշնամու զօրքը։ Մեր նոր վաշտապետ Շահախեցի Մուրադը — որ փոխարինել էր Գարեգին Հայգազրեանին, վերջինիս վիրաւորելու պատճառով — և Ազատը կամենում էին գրաւել այդ գիւղը, իսկ թշնամին դիմադրում էր կատաղութեամբ։ Մի ուժեղ գրոհով մենք գրաւեցինք գ. բայց շատ չանցած ընկրկելով թշնամու հակայարձակման դէմ ձեռքից տւինք. սակայն նորից գրաւեցինք. հէնց այդպէս, այդ գիւղը մի քանի անգամ ձեռքից ձեռք անցաւ, որը ի վերջոյ մենք վերջնականապէս գրաւեցինք։ Զոհերի թիւը երկու կողմից էլ շատ էր։ Մեր աչքի առաջ մի ձախ թևերի դանդաղաշարժութիւնը վատ էր ազդում մեզ վրայ. Ագա. Պետրոսը և իր եղբայր Մխրգան սին խօսքերով օրօրում էին մեզ, 3000 խոստացածի փոխարէն բերել էին 500 ձիաւորներ և այն էլ այդպէս...

Յուլիսի 5-ին կռիւը սոսկալի էր. թշնամու արձակած ռումբերը փշրում էին մեր դիրքերը։ իսկ մենք թշնամու արձակած երկու թնդանօթի ռումբին, պատասխանում էինք հրացանի մէկ գնդակով միայն։ Ռումբերի պայթիւնից առաջացած հողը և փոշին լեցնում էին մեզ վրայ, կարծես լրացնելու համար թշնամու ռմբակոծութիւնից առաջ եկած աւերները։ Մեր ընաիր դաշտային թնդանօթները քար լռութեան էին դատապարտած գնդակ չլինելու

պատճառով։ Ամենուրեք լսում էր «զինված չունենք» չարաբաղուշակ նախադասությունը։

Մենք ունէինք 2 գնդացիր. մէկը գործածում էր դարբաղցի մի քաջ զինուոր, իսկ միւսը Քոմուրի վարպանը, որը նոյնպէս արի տղաներից էր։ Թշնամու զօրքերը բարձրանում էին դէպի այն լեռը, որտեղ տեղաւորուած էին մեր գնդացիրները. սակայն, ասանաւետ Մահակի արձակած գնդակները ոչնչացնում էին առաջացող թշնամու զինուորներին, որոնք թաւալգլոր թափւում էին ձորի մէջ։ Երեկոյեան կողմը լռեցին թշնամու թնդանօթները։ Նահանջի նշան էր այդ։ Յուլիսի 6-ին, մեր դիմաց նոյն Գեադուկի վրայ տեղաւորուած թշնամու 8 թնդանօթներից երեքն էր միայն մնացել։ Մեր հետախոյզները յայտնեցին, որ թշնամին յուսալքուած է։ Յուլիսի 7-ին կրկին թշնամու թնդանօթների թիւը դարձաւ 8-ի։ Գնդակները կարկուտի պէս ծեծում էին մեր դիրքերը։ Մեր և թշնամու միջև կար մի բլրակ, որ թշնամին կուզէր գրաւել այդ. սակայն մենք կանխեցինք։ Տասնապետ Սահակը, զինուոր Սերոբի հետ բռնեցին բլուրը և սկսեցին կուռել. թշնամին նկատելով այդ, սկսեց ռումբեր տեղալ բլրի վրայ։ Սերոբը, 2-րդ անգամը լինելով վիրաւորուեց. նրան մեծ դժուարութեամբ փոխադրեցինք թիկունք։ Լուռ էր Քոմուրի վարպանի գնդացիրը, որ մեզ մտահոգութիւն էր պատճառում։ Մօտաւորից երկարող լեռնաշղթայի աջ կողմից, որ հասնում է Սալմաստի Համապգանդ գիւղին, լսեցին հրացանի կրակոցներ. տղաներին յայտնելով, ճանապարհեցի Շտաբ, այդ լուրը յայտնելու համար։ Դիրքից դուրս գալով մտայ ձորը. թշնամին այդ նկատելով սկսեց կրակել իմ ուղղութեամբ. մտայ երկրորդ ձորը. այնտեղ նկատեցի մի սպանւած դիակ. մօտեցայ. մեր սրբելի և հերոս ընկեր Քոմուրի վարպանն էր, որ արիւնլայ փուած գետին, նստել էր յաւիտեան։ Մօտակայ լեռան բարձունքի վրայ ընկած էր

նաև Փիրկարիբցի Հայրիկը, որը միակ ճրագն էր 43 շունչ ունեցող մի նահապետական ընտանիքի։ Շտաբի մօտ հանդիպեցի յիսնապետ Տրդատին։ Դրուխինը յայտնելով ուզեցի տեղեկանալ մեր աչ թևի մասին։ Ծամծմեց. չուզեց պատասխանել իմ յամառ հարցերից ստիպուած նա ակամայից ասաց. «Ծարուած ենք ու պաշարուած։ Եթէ մինչև ժամի 6-ը չհանձնվենք, ամբողջովին գերի ենք ճնալու։ Ագա Պետրոսը քաշուեց Ուրմի, մեր աչ թևը տալով թշնամուն։ Սիրելիս, գնա դիրքերը տղաներին ոչինչ չյայտնես. կսպասէք Շտաբի հրամանին, որը կյայտնենք հետևյալով» եւ վերադարձայ դիրքերը, ուր տղաները տանջուում էին ծարաւից։ Ճիշտ ժամի 5-ին ինձ հետևյեալին, հերկուբերկու, զգուշութեամբ և կանոնաւոր թողնել դիրքերը և նահանջել»։ Հրամանը յայտնեցի. տղերքը քաշուեցին. մնացինք՝ ես, տասնապետ Յովսէփը և գինուոր Աթանասը, իսկ առաջին բուրուում, անվեհեր Սահակը կռուում էր միայնակ. նա չգիտէր նոր որոշման մասին։ Ի՞նչ անել. ինչպէս յայտնել նրան. բղաւում ենք, բարձր ձայնով կանչում. բայց նա չի լսում թողնել Սահակին հետևնալ. դա ևս անխոհեմութիւն է. և վերջապէս ինչպէս թողնել մեր անզուգական Սահակը գերի մնայ թշնամուն ձեռքը։ Գնալ պէպի նա և յայտնել, դա ևս խիստ վտանգաւոր և յանդուգն քայլ էր։ Այնուամենայնիւ, Յովսէփը ստացաւ պէպի բլուրը յետ կանչելու Սահակին. թշնամին սաստկացրեց իր կրակը. ես և Աթանասը մի քանի համազարկեր տւինք։ Ինչ անց, Յովսէփը և Սահակը վերադարձան անվնաս։ Միասին իջանք ձորը. թշնամի զօրքերը անմիջապէս գրաւեցին մեր դիրքերը. նրանք լուտանքներ էին թափում և պահանջում որ անձնատուր լինենք։ Թնդանօթի գնդակները թափուում էին մեր շուրջը. սակայն հողը փափուկ լինելով, չէին պայթում։ Ի վերջոյ հասանք մերոնց։ Թշնամին փորձում էր կտրել մեր նահանջի ճամբան.

այդ նպատակի համար, նա յարձակեց դրաւելու մօտակայքում գտնուող մի կարեւոր բլուր. այդ բլուրը գրաւելու դէպքում մենք պաշարուած կլինէինք։ Մեր զէնքերը սկսեցին գործել. մեր ձիաւորները արշաւեցին դէպի բլուրը։ Տաճոց ատրճանակները հրաշք էին գործում։ Ուժեղ բախտաւորութիւնից յետոյ, 11 գոհ տալու գնով, մերոնք գրաւեցին բլուրը։ Թշնամին տուց 13 գոհ։ Երեկոյեան ժամի 7-ին հասանք Անդրանիկի 1915 թւի դիրքերին։ Ղալասարից ատացանք ուսելիք, ջուր և զինամթերք։ Այդտեղ պարզուց, որ Անդրանիկը Մոյուճն է եղել մի քանի օր առաջ, և թշնամին իր 5 թնդանօթները մեր ճակատից փոխադրել էր Անդրանիկի դէմ. այնուհետև վերջինիս նահանջից յետոյ, նրից թնդանօթները բերեցին մեր դիմաց։

Մութ գիշերը վրայ հասաւ։ Քար լուռթիւն տիրեց ամենուրեք։ Մեղմիկ քամին փչում էր անդադար և լիզում մեր գոհած ընկերների դիակները։ Կովկաս անցնելու ցանկութիւնը մեզ անկատար։ 3—4 օրերի բուռն ընդհարումները և զէնքերի ահռելի ձայները դեռևս հնչում էին մեր ականջներում։ Սաստիկ յոգնած էինք և հանգստի խիստ կարիք էինք զգում։ Մերթ ընդ մերթ, Քոհնաշհարի կողմից լսւում էր պայթիւնի ձայներ, և հորիզոնը լուսաւորւում էր կարմիր բոցերով։ Սարմաստը դատապարտած էր սուգի և ծանր, մղձաւանջային լուռթեան։ Ոչ մի մխիթարական երևոյթ չկար։ Մենք քայլում էինք լուռ և տխուր։ Ճանապարհին ոչ ոքի չհանդիպեցինք, որ գոնէ մի լուր ձեռք բերէինք ժողովրդից։ Մեզ համար անյայտ էր, թէ ինչ էր կատարւում հետևում։ Հասանք Զոլա գիւղը, ուր յափեցրինք մեր սաստիկ ծարաւը։ Շարունակելով մեր փշոտ ճանապարհը հասանք Ղալասար։ Հայ նահապետական, հիւրընկալ խրճիթների օրհնեալ ճրագները մարել էին։ Մեզնից երեք ժամ առաջ, ժողովուրդը թողնելով իր հայրենի օջախը, ուղեցւածքը, հեռացել էր։ Ամառւայ այդ

անուշ եղանակին, գիւղը իսպառ դատարկ էր։ Այս տեսարանը յուզեց մեր սրտերը. բայց քաղցը մեզ մոռացնել տւեց ամեն բան։ Գիշերով ընկանք գիւղամէջը ուտելիք փնտռելու. հազիւ գտանք 200 ձու և մի հողէ ամանով իւղ։ Մտանք դպրոցի բակը. մի մեծ խարոյկ պատրաստեցինք և կաթսայի մէջ սկսեցինք պատրաստել եղաձու։

Եղաձուն խժռելուց յետոյ, թողինք Ղալասարը և բռնեցինք Ուրմիոյ անծանօթ ճանապարհը։ Այսպէս ուրեմն, 3 ամիս շնչելով Սալմաստի կենարար օդը, թողինք մեզ հիւրընկալող այդ պատմական դաւառը։ Գիշերով անցնում էինք ծովափին կից աղի ջրից սպիտակացած դաշտերով։ Ճանապարհին, տեղ-տեղ փռւած էր նահանջող ժողովրդի սեփական իրերն ու կահ-կարասիները, ջարդւած սայլեր ու քայլելու այլևս անկարող կանայք ու երեխաներ։

Լոյսը բացւեց։ Երկար ժամանակ էր, որ չէինք քնել. ուստի պահակներ նշանակելով մուշ-մուշ քնեցինք կուշիի Գեադուկին կպած ընկուզենիներիհովանու տակ։ Մի քիչ յետոյ, հսկող պահակը ձայնեց։ Մենք նորէն շարժւեցինք ու անցանք Ջամալարադ՝ հայ և ասորական խառն գիւղը, որն ամբողջովին դատարկւած էր։ Մեր արևմտեան կողմից, բարձր լեռան բարձունքից, մեր դէմ էին գալիս թշնամու հեծեալ զօրքերը։ Մեր հեծելազօրը նրանց առաջ գնդակի տարափի տակ, որից յետոյ նրանք փախան խուճապահար։ Ժողովուրդը կարողացաւ շարունակել ճամբան։ Հասանք Կզլխանագահ գիւղի հարթ դաշտը։

ՈՒՐՄԻՈՅ ՄԷՋ

Յուլիսի 12-ին նահանջող հայ և ասորի ժողովուրդը հասաւ Ուրմիա և տեղաւորւեց շրջակայքի այգիներում, քաղաքում և գիւղերում։ Ինչպէս Սալմաստ, Դիլման քաղաքներում այնպէս էլ Ուրմիայում քաղաքի պաշտպանութիւնը յանձնւեց հայ զինւորներին։ Հրէական թաղամասը գտնւում էր յատուկ հսկողութեան տակ։ Հնչիւն ոսկինները

պրպռել էին շաւերի ախորժակը, որի պատճառով կողոպուտի դէպքեր տեղի ունեցան հրէական թաղամասում։ Այդ անախորժ և անկարգապահ դէպքերին վերջ տալու համար էր, որ հրէական թաղամասը խիստ հսկողութեան տակ առնուեց։ Այդ օրերին երևաց մի անգլիական օրացոյց, որը բաւականին յոյս ներշնչեց տարագիր ժողովրդին, հետագային աւելի ուժեղ յուսալքելու համար. որովհետև ապագայ դէպքերը ցոյց տուեցին, որ անգլիացիները չնայած համաշխարհային 1-ին պատերազմում մեր աւազակակիցներից էին, այդուհանդերձ հայկական կոտորածների և մեր ինքնապաշտպանութեան կռիւների վերաբերմամբ պահում էին իրենց օրօրական առնաբիւնութիւնը և անաչառութիւնը։

Հայկական գօրքի մէջ եղած կարգապահութիւնը խիստ էր. օրինակի համար՝ մէկ հոյ զինուոր, որ մի գոյգ կօշիկ էր վերցրել պարսիկ խանութից և արժէքը չէր վճարել, իսկոյն գնդակահարուեց։ Այստեղ ևս մեզ ընկերակցում էր սուվի ուրբականը. մի քանի սովամահութեան դէպքեր տեղի ունեցան։ Ժողովուրդը ստիպուած, նորահաս ցորենը քաղելով ծեծում, չորացնում և ուտում էր։ Թշնամուլըտեսնելը քաղաքում գործում էին ակտիւօրէն։ Մի գիշեր, երբ շրջում էինք փողոցի մէջ, մի երկյարկանի շէնքից լսեցինք խրախճանքի ձայներ. մօտեցանք շէնքին. մէկը խօսում էր բարձրաձայն. «Ընկերներ խմում եմ ձեր կեանքը. ինչքան կարող էք կոտորեցէ՛ք հայերին»։ Դռնից բակը մտնել հնարաւոր չէր. ուստի մէկը պատից իջաւ բակը. դուռը բաց արեց. մենք ներս մտանք և տեղաւորուեցինք բակի անկիւններում։ Ապա երեքը մեզնից, մօտեցանք սենեակին և ինչ տեսանք. փառաւոր սեղան, լիքը ուտելիքներով և խմիչքներով, շուրջը եօթ տղամարդիկ քէֆ էին անում։ Երկու կանայք ևս պարում էին զարձացնելով նրանց։ Պատից կախած զէնքերը ցոյց էին տա-

լիս, որ դրանք բարի պտուղներ չեն. կամ թշնամի թագնըւած զինւորներ են կամ էլ թշնամի լրտեսներ։ Երկու դէպքումն էլ խիստ վտանգաւոր մարդիկ էին դրանք, որոնք կարող էին մեծ վնասներ պատճառել խառն դրութեան մէջ։ Ուստի որոշեցինք ձերբակալել այդ յանդուգն մարդկանց։ Անձայն քայլերով մօտեցանք դռանը և մի ակնթարթում ներս մտնելով ձերբակալեցինք բոլորին։ Նրանց, կանանց հետ միասին դրկեցինք զինւորական շտաբ։

Թշնամին գաղտագողի և անընդհատ հետևում էր մեզ. նա միշտ անհանգստացնում էր մեր հանգստի կարօտ ժողովրդին։ Չնայած, որ մենք դուրս էինք եկել արդէն, Թիւրքիայի սահմաններից և մտել Իրանի հիւրընկալ և բարեխնամ հողը, այդուհանդերձ թշնամին լրացնելու համար իր սև ծրագիրը անդադար հետևում էր մեզ, վասպուրականի այս մի բուռն հայութեան ևս «հաշիւը մաքրելու»։ Բայց շնորհիւ վասպուրականցու արտակարգ քաջութեան և անձնւիրութեան թշնամին չէր կարողանում իր նպատակին հասնել։

Յուլիսի 14-ի գիշերը թշնամին յարձակւեց ու գրաւեց Չոնկարլուի կամուրջը։ Այս լուրը ահ ու սարսափ տարածեց մեր ժողովրդի մէջ։ Առաջին վաշտը, գիշերւայ ժամի 11-ին ուղևորւեց Գեարդաբադ գիւղը։ Նախքան Գեարդաբադ մեկնումը, մեզ բաժանեցին չամիչ ու հաց։ Մեզ ուղեկցում էին պարսիկ «բալադներ»։ Նոր ջրած ցորենի արտերի միջով քայլում էինք անդադար. կպչուն ցեխը խիստ յոգնեցրել էր մեզ, բայց մենք աննկուն շարունակում էինք առաջանալի ճանապարհը։

Ի վերջոյ հասանք Գեարդաբադ, որտեղ պարզւեց, որ բալադները սխալւել և ոլոր-մոլոր ճանապարհներով էին բերել մեզ, որի պատճառով շատ և շատ յոգնել էինք։ Այգիների պատերի տակ հանգիստ քնած էինք, երբ շարժւելու հրաման տրւեց։ Ժամի 9-ին հասանք Նազլուչայի

Քամուրջը, թշնամուց գրաւեցինք և պահակներ նշանակեցինք։ Գետի ալ ափը իր այգեշատ գիւղերով մեր ձեռքին էր, որեղ սպասեցինք երկու օր. իսկ թշնամի գինուորները թաղնուած էին այգիներուն խոր-խոր առուներուն մէջ։

Քիչ կապդուրուած էինք. մեր դիրքերը ալ թնից հասնում էին մի հայ-ասորական գիւղի. իսկ ձախ թևը հասնում էր լճափին։ Մեր առաջապահները թշնամու կողմից շարժում նկատեցին. նա զարանակալ սպասում էր յարմար առիթի՝ յարձակելու և «խնդիրը փակելու»։

75 հոգւոյ հասնող հայ-ասորի ժողովուրդը և պարսիկները ճղնաժամային դրութիւն էին ապրում. կխաքաղց, մերկ և առանց պատսպարանի։

Այդ օրերին, յանկարծ մեր վերեւում նկատեցինք մի օդանաւ, որը յած իջաւ և յայտնեց, որ անգլիացիները գտնուում են Սալին-կալայում, և ժողովուրդը պիտի աշխատի ժամ առաջ հասնել նրանց։

Ուրմիա ճնալու ծրագիրը չուրն ընկաւ. մենք ուրախ էինք, բայց մեզ դեռ հրահանգ չէր տրուած։ Ամառ էր, շոգ. սառ չրում լոզալը հաճելի ճաշից առաջ տղերքով գնացինք գետի կողմը և մտանք չուրը։ Օրւայ հերթապահ՝ Տրդատը մօտեցաւ և յանդիմանական,— Յարութիւն, ինչ անմտութիւն էք անում, մինչ չէք տեսնում, որ թշնամին մեր քթի տակ է։

Իսկապէս, չրից հազիւ դուրս եկած, երբ արագ-արագ հագնւում էինք, յանկարծ լսեց թշնամու համազարկերը, որին յաջորդեց թնդանօթի զառագները։ Հրացանների վերցնելով, շտապեցինք այգու կիսափուլ պատերի տակ։ Ջինւոր Գարեգին Գասպարեանը, այդ պահին, մերկ, չրի մէջ լոզանում էր. նա այլևս ժամանակ չունեցաւ հագնւելու, ուստի ամբողջովին մերկ, շորերը գրկած վազեց մեր կեանից։ Այդ տեսարանը բաւականին ծիծաղ խլեց մեզնից։ Աւանցի 18 տարեկան երկուսեակ եղբայրները արդէն դի-

մադրում էին թշնամուն. կամուրջի վրայ եղող պահակները արդէն թողել էին կամուրջը և նահանջել, իսկ գինուոր Միսակը, հազուստները անուխի տակ առած մեզ անցնել էր ուղում։

—Ո՞ւր է հրացանդ.—հարցրի ես, նկատելով, որ հրացանը մօտը չի։

—Այնտեղ գետի ափին.—պատասխանեց։

—Դարձիր և վերցրու. թէ չէ... սպառնացի ես։

Նա վերադարձաւ և վերցրեց իր հրացանը։ Յետոյ ես նրան բացատրեցի, որ հրացանը գինուորի անբաժան մասնիկն է. նրա բնկերը, բարեկամը, մշտական ուղեկիցը։ Ոչ մի գնով չի կարելի հրացանը ձեռքից տալ. վերջին դէպքում դա կլինի գինուորի ամենամեծ նանգանքը։

Թշնամու զօրքերը գրաւել էին կամուրջը և հետևում էին մեզ. մենք վտանգի մէջ էինք։ Յետ դառնալով, իւրաքանչիւրս հինգ գնդակ արձակեցինք. թշնամու հետապնդման թափը թուլացաւ. նա չկարողացաւ նպատակադրած այլևս գրաւել։ Այդ ժամանակ մեր քնած գինուորները վեր ցատկելով, սկսեցին զիմադրել։ Մեր եռանի դաշտուկ, հանգրստանում էին մեր ձիաւորական խմբերը։ Հրազէնների ձայնից, նրանք շտապ վեր ցատկեցին և Շահբաղեցի Խաչոյի և Մեսրոպ Զանոյեանի զլխաւորութեամբ արագ հասան կամուրջի միւս ծայրը։ Այնտեղ սկսեց գրեթէ գիրկընդխառն մի կռիւ, որի ընթացքում վիրաւորեց տասնապետ Մանուէլ Յակոբեանը և սպանեցին մի քանի ձիաւոր գինուորներ։ Օրհասական և ճակատագրական այդ մարտը տևեց 20 րոպէ և վերջացաւ մեր փայլուն յաղթանակով։ Մենք գերեցինք 2 թշնամի գինուոր և 3 ձի։ Շուտով, կղլխանագահ գիւղին կից լեռան վրայից սկսեցին գործել թշնամու մնդանօթները։ Թշնամին ձգնում էր գոնէ ոչնչացնելու կամուրջը, սակայն բարձրակատար ծառերը արգիլում էին մնդանօթաձիգներին, ճիշտ նշան

բռնելուց Պարտէզի խարխուլ պատերը թնդանօթի ռումբերից, փլչում և թափում էին մեզ վրայ Գնալով կռիւը սաստկանում էր և մեր դրութիւնը լրջանում։ Կէսօրից ետք, բազմաթիւ խորը փոսեր էին բացուած մեր պարտէզի մէջ։ Չինուոր Յակիմէլ Յարգսեանը ջուր խմելու պահին, դիմացը պայթեց թշնամու ռումբը։ Այդ ռումբից սպանուեց ուսս սպայի՝ ևս ձին և վիրաւորուեց Յակիմէլը։

Մեր պարտականութիւնը լուրջ էր. մենք պիտի պաշտպանէինք կամուրջի վրայ կուռող տղերքի թիկունքը։ Կէսօրից յետոյ, ժամի 4-ին ձախ ձեռքս վիրաւորուեց, իսկոյն կապեցի սակայն որոշեցի չհեռանալ դիրքերից։ Հետիոտով օգնութիւն ուզեցինք. մեզ օգնութեան եկան՝ Փիրկարիբցի Կիրակոս Մայիլեանը, Միհրան Դումոյեանը իրենց տղաներով։ Մեր ծանր թնդանօթները ևս սկսեցին գործել, ամբակոծելով կղխանոցամտ գիւղի և նրան կից լեռան լանջերում տեղաւորուած թշնամու դիրքերը։ Երեկոյեան կողմ, հեռադիտակով նայելիս, պարզ երևում էր, որ թշնամի զօրքը վեր էր քաշւում լեռան ստորոտից. նահանջում էր։ Անսահման էր մեր ուրախութիւնը։ Կռիւը թոյլ թափով շարունակւում էր։ Դիրքից վերկենալու ժամանակ, յանկարծ ձախ աչքիս մօտով, անցաւ մի գնդակ քերելով դէմքիս մորթը։ — Սա երկրորդը. մտածեցի ես — սպասենք երրորդին։

Իջաւ մութը և պատեց արար-աշխարհ։ Մեր ձախ թևում կուռող ջելոնները ցանկանում էին թողնել դիրքերը գնալ հանգստանալու համար. սակայն ուս սպան և Մուրադը հազիւ-հազ կարողացան համոզել նրանց, որ չթողնեն դիրքերը։ Պէտք է խոստովանել, որ ասորի ջելոնները աքանչելի էին կուռում։

Յուլիսի 16-ի առաւօտեան, հրահանգուեց առաջ շարժուել. մենք անցանք կամուրջը և շղթայ կապած գնում էինք այգիների միջով։ Թշնամին չնայած նահանջում էր, բայց

մտադիր էր բռնել նոր դիրքեր լեռան բարձունքներում։

Մեր զօրքը Քարիմաբադի այգիների մէջ նստեց հանգըստանալու։ Քարուն լեռան լանջերում թագնուած թշնամին սկսեց հարուածել մեզ, թնդանօթներով։ Հէնց առաջին ռումբը ընկաւ ճիշտ մեր զօրքի մէջ։ Ասուների մէջ դիրք բռնելով սպասեցինք Մուրադի հրահանգին։

Արեը մայր մտաւ. մեզ հրահանգուեց առաջ անցնել Երեկոյեան ժամի 9-ին հասանք Քարւանսարան և սկսեցինք սարից վեր բարձրանալ։ Այնտեղ ամրացած թշնամին սկսեց կրակ ւեղալ մեր գլխին։ Սև-սև քարերը ճարճատում էին գնդակներից։

Այնքան ուժեղ էին համազարկերը, որ լուսաւորում էին շրջապատը։ Մենք սողալով, գոյշ առաջ էինք գնում, Մուրադի հրահանգով վեց ձեռնառումբ արձակեցինք թշնամուն հարկադրւած թողեց առաջին դիրքերը։ Մենք ուռաններով առաջանում էինք. թշնամին փախչում էր, փախչում անընդհատ... Առաւօտեան մեզ մօտ վերադարձան մեր յառաջապահ ձիաւորները, որոնք գերել էին 10 զինւոր և մէկ սպայ թշնամու բանակից։ Վերջինները դողում էին սարսափահար, աղերսում էին խնայենք իրենց կեանքը։

Յուլիսի 17-ն էր։ Ասից Սալմաստ մեզ մօտ ղրկւած Անդրանիկի զինւորներից մէկը, որը հրաշքով էր ազատւել, մեզ մօտ եկաւ և պատմեց հետեւեալը.

«Անդրանիկը ձեր Սալմաստից գաղթելու մասին լուր չունէր. այդ պատճառով մեզ 3 մշեցիներիս կարգադրեց գալ Սալմաստ և ձեզ յայտնել, իր Ասլ գտնւելու մասին. մենք կորցրինք մեր ճամբան. ընկերներից 2-ը սպանւեցին, իսկ ես մենակ թափառելով սարից-սար, ձորից-ձոր՝ հասայ մի «գեադուկ» և ուժասպառ ու քաղցած քնեցի աղբիւրի մօտ։ Մէկ էլ յանկարծ արթնացրին ինձ. վեր կացայ, 2 թշնամի զինւորներ էին։ Նրանք խոստացան, որ եթէ ճշմարիտ ասեմ ինքնութիւնս և նպատակս, ինձ

ողջ կթողնեն և կաջակցեն, որ գամ և հաստեմ հայերին ձշգրիտ պատմեցի ամեն բան. ապա պարզեց, որ նրանք ազգովին յոյն էին՝ ինձ գրկեցին և համբուրեցին՝ նրանք պատուիրեցին ինձ, որ յորենիսի մէջ թագնեմ և երեկոյեան սպասեմ նրանց։ Գիշերը նրանք եկան, ինձ հացաւին և ցոյց տալով Ուրմիոյ ճանապարհը իրենք հեռացան։

Խեղճ գինուորը չգիտէր, որ Անդրանիկը Սոյից արդէն նահանջել էր։ Մշեցի գինուորին կերակրելուց յետոյ, գինուորական սայլով Ուրմիա գրկեցինք։

Յուլիսի 17-ի գիշերը հրահանգեց, թողնել Խարբանաստան, Նազլուչայի կամուրջը և գառնալ Ուրմիա։

Յուլիսի 20-ին մեզ՝ առաջին վաշտին, կարգադրեց Շահրաղեցի Սաչոյի ձիաւորական խմբի հետ իրեն հետախոյզ—առաջապահ, անցնել Բարանդուզչայի շրջանը։ Գաւառի հիւրընկալ հայ գիւղացիները մեզ ընդունեցին ջերմ սիրով։ Մենք տեղաւորեցինք՝ Բարաուս, Սարդառու և Դարբասու գիւղերի պտղատու այգիներում։ Բարանդուզչայի գետը ունէր լաւ ու համեղ ձուկ, որը վայելում էինք առատօրէն։ Ձուկը որսում էինք այսպէս, որ տղերքից մի մասը մտնում էին ջրի մէջ, իսկ մի քանիսն էլ ջրի մէջ գնդակ էին արձակում. հրացանի ձայնից ձկները ուշաթափ լինելով գալիս էին ջրի երեսը։ Շատ հաճելի էր խաղողի չոր ճիւղերով խարոյկ պատրաստել, խարոյկի վրայ խորովել ձկները և ապա ուտել լաւաշ հացով։

Մեր առջևը ցցւած էին Մարգաւար և Թարգաւար բարձրագագաթ ձիւնածածկ լեռները, որտեղ թառել էր թշնամին։ Վերջապէս, մեր սպասողական դրութիւնը վերջ գտաւ. մեզ հրահանգեց առաջ անցնել հայ բալաքների առաջնորդութեամբ։ Մենք անցնում էինք անմնդախոր ձորերով. մեր ճամբան դժւար և յոգնեցուցիչ էր. Երկար տառապելուց յետոյ, մայրամուտին հասանք Գաղթափէ

ձորը, ուր գիշերեցինք։ Արշալոյսին Թշնամին մեզ ողջունեց իր ահռելի համազարկերով։ Ուշնիի լեռան բարձր պաշտպը պէտք էր գրաւել։ Այդ լեռը ճակատագրական և բախտորոշ դեր պիտի խաղար կողմերի համար։ Մեր ձիաւորական խումբը փորձեց լեռը բարձրանալ. սակայն ձիերով հնարաւոր չէր. ուստի ձիերը թողնելով սկսեցին մագլցելով բարձրանալ Թշնամին կանխեց մեզ. նա արդէն գրաւել էր լեռը և այնտեղից ուժեղ կրակի տակ առաւ մեզ։ Կռիւը տաքացաւ. մենք աշխատում էինք Թշնամուն յետ շպրտել։ Մէկ ու կէս ժամ տևող բուռն մարտերից յետոյ, մենք գրաւեցինք Ուշնիի բոլոր գագաթները։ Մենք մնացինք այնտեղ երեք օր, մինչև Թշնամու վերջնական չախչախումը։ Այս կուռւմ, տաճնապետ Յարութիւն Միրոյեանը ծանրօրէն վիրաւորուեց դէմքից և ձեռքից։

Թշնամին փակել էր ժողովրդի նահանջի ճամբան. ուստի ժողովրդի մեկնումը Սայինկալա, — ուր գտնւում էին անգլիացիները, — յետաձգեց։

Յուլիսի 25-ին մեր ձախ թեւը (ծովի կողմ), որ յանձնած էր Ագա Պետրոսին՝ կտրեց։ Ագա Պետրոսը ցանկանում էր կռւով գնալ և հասնել անգլիացիներին։ Մեր և Թշնամու միջև ընկած դաշտում ջուր չկար. մեզ մօտ եղած աղբիւրի նւազ ջուրն էլ մեզ չէր բաւարարում։ Պապակռւմ էինք ծարաւից։

Գիշերւայ մութը ընդհատեց կռիւը. մեր ջղերը սկսեցին հանգստանալ։ Տղերքը պատրաստւում էին քնելու. գիշերւայ հերթապահը ես էի։ 12 կարևոր կէտերում պահակներ նշանակելով, վերադարձայ դիրքերը մի քիչ հանգրստանալու։ Տղերքը արդէն քնել էին անվրդով, հրացանները կրծքներին սեղմած։ Բայց Աստւած քուն համարէր, մի թեթև շշուկի հետևանքով, բոլորը խելագարի նման վեր կցատկէին։ Քանի րոպէի չափ անշարժ նստե-

ցի. քունս սաստիկ տանում էր. անասելի տանջանք էր պատճառում անքնութիւնը. բայց ինչ արած, պէտք էր տոկալ, պէտք էր համբերել և միշտ պարտականութեան վրայ լինել։ Քունը ծանրօրէն ճնշում էր կոպերս. իմ կամքից անկախ, մի պահ ննջեցի... Յանկարծ մի թեթև ձայնից վեր թռայ. մի թռչուն, իր անախորժ ձայնով խանգարում էր գիշերային լռութիւնը։ Էլ չքնեցի. վերցրի հրացանս և դուրս եկայ շրջապատութեան։ Գիշերւայ անունն էր «Լուսին»։ Մէկ-մէկ սուզեցի պահակներին. արթուն էին. անցայ կենտրոնը. զարմանքով նկատեցի, որ պահակներից մէկը չնստած հրացանին ննջում էր։ Զգուշութեամբ մօտեցայ. իմ շատ սիրելի և մտերիմ ընկեր Ահարոնն էր (17 տարեկան)։ Քունը յաղթել էր։ Մեղմ ձայնով կանչեցի. զարմացած աչքերը բացեց ու սկսեց այս ու այն կողմ շուռ գալ։ Ձեռքից բռնելով հանգստացրի և յորդորեցի այլևս այդպիսի պարտազանցութիւններ չանել, որովհետև դրանք կարող են շատ վատ հետևանքներ ունենալ։ Ոտատայ կէս ժամից փոխել իրեն և թոյլ տալ գնալ, հանգստանալու համար։ Դիրք վերադառնալով, Ահարոնի տեղ պահակ նշանակեցի Եսայի Մնացականին։

Մէկ ժամից եկաւ Մուրադը և յայտնեց, որ պատրաստուենք յարձակելու Զինւորներին բաժանուեց երեքական 10-ական փամփուշտ։

Համազարկեր տալով յարձակուեցինք. թշնամին յանկարծակիի գալով մեծ կորուստներ տուեց։ Մենք գերեցինք 17 զինւոր և գրաւեցինք 12 արկղ փամփուշտ։ Զինւորները քննութեան ենթարկուեցին Մուրադի կողմից և տուեցին օգտակար տեղեկութիւններ։ Գերի զինւորների պրպանում բոլած գարի գտանք։ Մենք մեր պրուքիւնից էինք դժգոհում, մինչդեռ հակառակորդի զինւորները շատ աւելի վատ դրութեան մէջ էին։ Հագուստները և ոտնամանները քրքրուած էին։ Հայ ժողովրդի դահիճները այդ-

պիսի թշնաւ դրութեան մէջ էին պահում իրենց զինուորներին։

Ես, խորհրդնին դիտելով այդ գերի զինուորների տանջանք և տառապանք արտայայտող դէմքերը մտածում էի. ո՞ր յարգելի և տրամաբանական պատճառով է, որ սրանք դուրս են եկել մեր դէմ. չէ՞ որ ասած «Սասունցի Դաւիթը» մենք էլ, սրանք էլ «ոանչրար», «հոգի և չրի մարդիկ» ենք։ Չէ՞ որ, մենք էլ, սրանք էլ, ճնշման և շահագործման ենթակայ ենք. գոհ ժամանակի իշխանութեան տրած դաւերի ի՞նչ հաշիւ ունենք իրար հետ, ինչ բաժանելու ապրանք ունենք և ի վերջոյ երբ պիտի գայ այն ժամանակը, երբ բոլոր ժողովուրդները հաշտ ու խաղաղ պիտի ապրեն իրար հետ, երբ մարդկային հասարակութեան մէջ եղած բոլոր հակասութիւնները պիտի վերանան և պիտի մնայ միայն մի հակասութիւն. մարդու և բնութեան մէջ եղած հակասութիւնը։ Յայնժամ, ամբողջ մարդկային հանճարը և ուժը պիտի կենտրոնանայ բնութիւնից աւելի շատ և աւելի լաւ դուրս քաշելու այն բոլորը, որ անհրաժեշտ է մի մարդավայել և երջանիկ կեանք վարելու համար։

Այս խորհրդածութիւնների մէջ էի, երբ հրահանգ եկաւ ճանապարհելու դէպի Սուլդուզ։

Ճամբու ընկանք։ Սուլդուզի ոլոր-մոլոր ճամբաները անծանօթ լինելով տանջում էին մեզ։ Թշնամու դիրքերը երկուսի բացառութեամբ մեր ձեռքը մնացին։ Մեր գօրքը օգակելով թշնամու մնացորդներին, չարդեց բոլորին, որից յետոյ Սուլդուզի ընդարձակ դաշտը բացւեց մեր առաջ...

Մի խումբ հայ քաջեր քանդում էին պողպատեայ պատնէշները և փրկութեան ճամբայ էին բացում 75 հազար ժողովրդի համար։

Յուլիսի 26-ին, 3 ժամ աղբիւրի մօտ հանգըստանալուց յետոյ, ուղևորւեցինք դէպի Սուլդուզի կենտրոն՝

Նաղադէ։ Այնտեղ գտնւող 20 տուն հայերը արդէն քաշուել էին Ուրմիայ։ Նաղադէից անցնելիս, փողոցի մէջ 3 փոքրիկները տեսանք. նրանք մեզ տեսնելով փախան։ Մենք հետևելով նրանց, մատնք մի բակ, ուր գտանք մի քանի կանայք և ծերուններ. ազգովին պարսիկ էին. նրանք ապերասում էին, որ խնայենք իրենց. մենք նրանց վստահեցրինք, որ պարսիկները մեր եղբայրներն են, և հայ ոչ պարսիկ ժողովրդների մէջ եղած պատմական բարեկամութիւնը ամուր է և անխախտ, ուստի մենք տպահովում ենք նրանց կեանքը, միայն թէ նրանք մեզ պիտի տան, այն բոլոր տեղեկութիւնները, որ գիտեն մեր թշնամի բանակի մասին։ Ծերուններից մէկը, առաջ եկաւ. միասին գնացինք Մուրադի մօտ, որ հարցաքննեց ծերուկին և ձեռք բերեց կարևոր տեղեկութիւններ։ Այդ տեղեկութիւնները օգտագործելով, մենք ձեռք բերինք 11 թշնամու թագնւած գինւորներ և 1 լեռնային փոքրիկ թնդանօթ։ Մուրադը արձակեց ծերուկին։

Մեր գինւորական շտաբը գտնւում էր գիւղի կենտրոնում՝ Թամրազի երկյարկանի շէնքում։ Այդտեղ սկսեցին հարցաքննել 11 գերի գինւորներին։ Նրանց տանտէրը՝ մի մոլի հակահայ մարդ, հարցերին պատասխանելու փոխարէն սկսեց հայհոյել մեզ և հայ ժողովրդին։ Մուրադը զայրանալով հրացանի կոթով ուժեղ հարւած հասցրեց տանտէրին։ Գերիները բանտարկեցին։ Մենք ապրում էինք ծիրանի ծառերով լի մի այգու մէջ, որը կից էր Սուլդուզից Միանդուաբ տանող ճանապարհին ու Նաղադէի գետակին։ Ուրմիայից մենք դժուարութեամբ էինք պարէն ստանում, ուստի մեզ մնում էր շրջակայ գիւղերից գնել։ Թշնամու պարտութիւնը ահաբեկել էր կարապետականներին, որոնք սարսափած թողել էին իրենց գիւղերը և հեռացել... Մենք նրանց առաջարկեցինք անձնատուր լինել մեզ. նրանց ցեղապետ կարելին Ադան ընդու-

նեց այդ առաջարկը, պայմանով, որ իրենց զէնքերը անձեռնմխելի մնան։ Դրա փոխարէն, նրանք մեզ կյանձնեն 300 ձի և առատ ուտելիք։ Առաջարկները երկուսանք ընդունեց. նրանք մեզ տեցին խոստացած ձիերը և անուղղակի՝ հաց, կարագ, մածուն, պանիր և այլն։ Նպաստէում մեզ միացաւ մեր աջ թևի ասորի-ձիաւորական խումբը։ Այդտեղ, մեր դինւ. զեկավար մարմինը յայտնեց պատկան իշխանութեան, թէ մեր յաղթանակի շնորհիւ պատուած է Շշնամու պաշարման օղակը, որով բացուած է ժողովրդի առջև ճանապարհը...։

Յուլիսի 31-ին ժողովուրդը թողեց Ուրմիան. 75 հազար գաղթական ժողովուրդը ուրտականների նման առաջ էին շարժւում, օրօրելով, քաղցած ու ծարաւ, անիծակուռ Շշնամու հարկադրանքի տակ։ Միանդուաբի կամուրջին հասնելով լուր եկաւ, որ Շշնամին Սովուղ Բուլաղից առաջանում է։ Մենք գիշերեցինք՝ բահրամի և Դարաւեզան գիւղերի կամուրջի մօտ. այդտեղ ես հանդիպեցի հարազատներիս, որոնց յայտնել էին, որ իբր թե ես ըսպանել եմ Սուլդուզի կուռմ։ Լուսաբացին բաժանուեցի հարազատներիցս։ Ամենուրեք սուգ ու շիւան էր. զանգան հիւանդութիւններից մեռնում էին տասնեակ մարդիկ, սուգի մատնելով իրենց հարազատներին։ Այդտեղ ժահացան՝ Գոմսեցի Պետրոս Ալոյեանը և Ներսէս Ներսոյեանը, որոնց թաղելու համար, ձի նստելով մօտիկ գիւղը գնացի բահ ու բրիչ բերելու։ Բազմահազար ժողովուրդը բռնել էր կամուրջը, հարկադրուած փորձեցի ջրով անցնել. ձիս խրուեց ցեխի մէջ։ Որքան աշխատեցի դուրս գալ չըձիս խրուեց ցեխի մէջ։ Բարեբախտաբար, ասորի կամաց խրում էի ցեխի մէջ։ գինւորները օգնութեան հասնելով փրկեցին ինձ, վերահաս, ատյգ մահից։ Մէկ ժամ չարչարելուց ետք, հազիւ կարողացայ ինձ մաքրել։ Անցայ գիւղը. բայց տեղացի-

ներից ոչ ոք չհամաձայնեց ինձ քահ կամ բրիչ տալ. ուզում վերադառնալով, գետի ափին, աւազի վրայ հրացանի ւսինով փոս փորեցինք,— որն լեցւած էր ջրով— և երկու ընաիր երիտասարդների դիակները թաղեցինք այնտեղ։

Շտապում էինք հասնելու անգլիացիներին, այն յոյսով, որ նրանք վերջնականօրէն պիտի փրկեն մեզ թշնամու վտանգից, որ դամոկլեան սրի պէս մշտականօրէն կախւած էր մեր ժողովրդի գլխին։ Մեր ճանապարհը լի էր զանազան անակնկալներով։ վերջապէս հասանք Սայինկալա։ Ժողովուրդը գալիս էր ցիրուցան ու անկանոն, հետևաբար մենք գիշերեցինք փոքր Սային-կալայում, որպէսզի ժողովուրդը ապահով մտնի քաղաք։

Երեկոյեան ես և Ահարոնը, երբ ձիերին ջուր տալու համար գետափ էինք գնում, մեր դէմ եկան 3 գինւած տեղացիներ։ Մենք նրանց առաջարկեցինք գէնքերը յանձնել, սակայն նրանք մերժեցին. փափուկ էր դրութիւնը և վտանգաւոր, ուստի գիջեցինք և ձիերը չ'եկով վերադարձանք։ Յայտնեցինք մերոնց. պարզեց, որ ինչ որ թակարդ է լարւում մեզ համար. ուստի թողնենք փոքր Սային-կալան, մեկնեցինք Մեծ Սային-կալան։ Այնտեղ էին նաև անգլիացիները. մեր հնթադրութիւնը իրաւացի էր և կատարւեց։ Յաջորդ առաւօտեան կ. Համբարձումեանը իր 6-տասնեակ ձիաւորներով վերադառնում էր ետ մնացած ժողովրդին օգնելու։ Այստեղ իրեն միացան Մուրադը. մեր ձիաւորական խումբը զանգաղ առաջանում էր և ժողովուրդը նրանց հետ մտնում էր քաղաք։

Հեռւում յանկարծ փողոց ամպ երևաց։ Հեռադիտակներով նայեցին. պարզեց, որ անգլիացի ձիաւոր զինւորներ են, մէկ հարիւրակ։ Մեր հետաքրքրութիւնը շատացաւ։ Հասնելով մեզ, մեր դէմ կանգ առան. զինւորական բարև տալով հարիւրապետը առաջ եկաւ և անգլերէն հարցրեց.

— Ո՞վ է ձեր մէջ կոստի Համբարձումեանը.— կոստին իրեն ներկայացրեց, մօտենալով հարիւրապետին։ Հէնց այդ ժամանակ «անգլիացի» հարիւրապետը մէկ ակնթարթում քաշեց իր սուրը և բարձրացնելով ուժգին ցած բերեց Համբարձումեանի ուսին, բոռալով.

— Վաւրուն, բուլարն մասաբնի... (խփէ՛ք սրանց կըրօնը.)

Մենք մի պահ շշմել էինք, չէինք ըմբռնում թէ ինչ է կատարւում. մեր կարծեցեալ «անգլիացիները» փոխել էին թշնամի զինւորների։ Մեր զեկավարը անշնչացած, ձիուց փուեց գետին։

Հարիւրապետը նոյն արագութեամբ յարձակուեց Մուրադի վրայ՝ սակայն հարուածը վրիպեց։ Մենք սթափուեցինք. ձեռները գնաց դէպի զէնքերը։ Յարութիւն Միրոյեանի շնչատակի գնդակից թաւալգլոր ցած գլորուեց դաւադիր հարիւրապետը։Մենք խառնուեցինք իրար։ Չնայած դաւադիր և ստոր թշնամին մեզ անակնկալի էր բերել, այդուհանդերձ նրանց ծրագիրը չիրագործուեց։ Մենք գրնդակի տարափի տակ առինք «սև» հարիւրակին։ Շուտով հարիւրապետի օգնականը և տասնեակ ուրիշներ փուեցին գետին։ Սոյն խանդիճատանճ դրութեան մէջ մեզնից սպանուեց՝ Թադեցի Պօղոսը, իսկ Բիթլիսցի Քերոբը անհետացաւ։

Վերցրինք մեր զեկավարի դիակը բերինք գիւղ։ Մինչև գիւղ հասնելը կռիւը սկսեց. մենք պաշարուած էինք։ Գիւղի երկու կողմերի դարպասները փակուած էին, որի պատճառով գիւղի մէջ գտնուող ժողովուրդը բնաջնջուեց ամբողջովին։ Սային-կալայի աջ կողմի լեռնաշղթան թշնամին բռնել էր։ Թշնամին ցանկանում էր գիւղին կից բլուրը ևս գրաւել. սակայն մենք կանխելով գրաւեցինք այդ։ Սոյն յաջողութիւնը յոյս ներշնչեց մեր խուճապի մատնուած ժողովրդին։ Դժւար է նկարագրել ժողովրդի կացութիւնը, յոյսի և սոսկումի րոպէները թշնամու ան-

մարդկային վայրագութիւնները և սոյն տմարդի յարձակումները ի տես, անգլիացիների անտարբերութիւնը հետագային պարզուեց, որ անգլիացի դեկավարները տեղեակ են եղել թշնամու սոյն դաւադրական ծրագրին։ Ի վերջոյ, անգլիացիները ջորիներով հինգ գնդացիր բերեցին և սկսեցին կրակել։ Սոյն կռիւը երկու ժամ տևեց, որի ընթացքում զոհ գնացին և կամ գերի ընկան շուրջ 3 հազար հայ և ասորի ժողովուրդ։

Ժողովրդի ծայրը հասաւ Սինա Սադկի, որտեղ զինուորներից մի մասը իջաև կամաւոր մնաց անգլիացիների մօտ։ Օգոստոսի կէսերին, ժողովուրդը հասաւ Համադան, ապա Քերմանշահ։ Այդ ճանապարհներում զոհուում էին շատ շատերը. ոմանք սովից ոմանք հիւանդութիւնից. իսկ մնացածն էլ արդէն կմախք էին դառել։

Համադանի բհար գիւղում, մեզ բոլորիս գինաթափ արին անգլիացիք։ Մենք խառնուեցինք ժողովրդին։

Այսպիսով մենք զրկուում էինք մեր ինքնապաշտպանութեան զէնքերից. այն զէնքերից որոնք փրկել էին մեր և մեր հարազատների կեանքը. այն զէնքերից, որոնց շնորհիւ վասպուրականցին ոչխարի պէս չմորթուեց, այլ ազատասէր մարդու պէս պաշտպանուեց և եթէ ընկաւ, ընկաւ զէն ի ձեռին։ Այդ զէնքերը սիրելի էին մեզ համար. այդ զէնքերը կերտել էին վասպուրականի հերոսամարտը. այդ զէնքերով մենք ապացուցել էինք, որ չի կարելի ընկճել, չի կարելի ոչնչացնել մի ստեղծագործ ժողովրդի։

Զէնքերից բաժանուելը խորապէս յուզեց մեր սրտերը. բայց ինչ արած. անտէր, տանջուած, անտուն, կոտորածից մազապուրծ ապաուած, մերկ, քաղցած և հիւանդ ժողովուրդը, ճարահատ իր ճակատագիրը յանձնել էր անգլիացիներին։

Մի ուրիշ դէպք եկաւ էլ աւելի յուզելու ինձ, անձ-

Նապէս. դա իմ սիրելի փոքրիկին՝ վեց ամսեկան Աստղիկի մահն էր, որ սուգի մատնեց մեզ։ Հրացանիս ալինով,— որ թագցրել էի մօտս.—գետի ափին փոքրիկ մի փոս փորելով, թաղեցինք զաւակիս և արցունքոտ աչքերով ճանապարհեցինք դէպի անստոյգ ապագան։

Ճանապարհին դիմեալ աւազակները մեզ նեղում էին և յարմար առիթով կողոպտում։ Մենք ոչ մի պաշտպանութեան միջոց չունէինք։ Մի գիշեր, աւազակները Յովսէփ Ստեփանեանի ձին ուզում էին տանել. վերջինս դիմադրում էր ձեռնափայտով. իրեն օգնութեան հասանք, բայց գուր. գողերը 3 դնդակ արձակելով տարան Յովսէփի ձին։

—Ա՛խ, ուր են մեր գէնքերը.—հառաչում էին տղերքը։


ՆՈՐ ԿԵԱՆՔ, ՆՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ.

Ժողովրդի կարաւանները հեռու հառնում էին Պագուպա՝ մեր տանջանքների վերջակէտման ենթադրեալ վայրը։ Պագուպա վրանաբնակ քաղաքը գնալով ընդարձակւում էր։ Անգլիական իշխանութիւնը հարկ եղած կարգադրել



Մի տեսարան հայկական բեմից։

էր. վրաններըը բաժանւած էին «Սեքշիններին» Թիւ 2-13 քեմփերը յատկացւած էին հայերին։ Իւրաքանչիւր քեմփին հսկում էին՝ մէկ սպայ և չորս անգլիացի զինւորներ։ 14—34 Թիւ քեմփերում բնակւում էին ասորիները, որոնք հայերից շատ էին։ Տարափոխիկ հիւանդութիւններին են-



Գաղթականներից յատկացւած հիւանդանոցը։

Թակայ ժողովրդին յատկացւած էր 300 խոշոր վրաններով կազմւած մի հիւանդանոց, որը գրեթէ միշտ լիքն էր։ Հիւանդանոց գնացող հիւանդները երբէք տուն չէին վերադառնում, այլ գնում էին գերեզմանոց։ Անգլիացի բժիշկները գլուխ չէին ցաւացնում գաղթական հիւանդներին բժշկելու համար. ներանց կարծիքով մի հայ գաղթականն, այդքան արժէք չունէր, որ բժիշկը երկար խնամէր, դեղ գործածէր և այլն։ Երբ հիւանդի դրութիւնը մի քիչ լրջանում էր, իսկոյն «հաշիւը» այս «անցաւոր աշխարհի» հետ փակում էին և դրկում միւս «յաւիտենական աշխարհ», այնտեղ «հանդերձեալ կեանքը» վայելելու համար։

Գնացքի վագոնները անընդհատ նոր գաղթականներ

էին բերում։ Տեղ հասնելուն պէս, նրանց մազերը խո-
զում, լոշացնում և հագուստները հականեխում կամ փո-
խում էին. ապա նրանց տեղաւորում էին նորաներ վայ-
րերում։ Հակառակ խիստ մաքրութեան և բժշկական օգ-
նութեան, սկզբնական օրերում մինչեւ հաշուով մեռնում
էին օրական 50-60 հոգի։ Մեզ տուած ուտելիքները մա-
նաւանդ կերակուր կոչուած խառնուրդը գոհացուցիչ չէր։
Ժողովուրդը պահանջում էր, փոխանակ պատրաստի կե-



Հայկական եկեղեցում կաճայք բաժանում են տուած պարեները։

րակուրի, նրանց տրւի կերակրի հում նիւթերը, որպէսզի
ով ինչպէս ուզում է կերակուր պատրաստի։ Ժողովրդի
այդ արդար պահանջը բաւական անգլիացի զեկավարների
բուռն ընդիմութեան, որոնք ոչխարի տեղ դնելով տարա-
գիրներին, երբէք այդպիսի ընդդիմութիւն չէին ապատում.
չէին ապատում, բայց ի վերջոյ ստիպուած եղան տեղի տա-
լու։ Կերակրի խնդիրը լուծուեց դրականօրէն, ի շահ ժո-
ղովրդի։ Օգոստոսին արդէն 60—65 հազար հայ-աւորի

ժողովուրդը հասել էր Պագուպա և տեղաւորուել Դիալար գետի ափին։ Կլիմային անծանօթ ժողովրդի մէջ հիւանդութիւնը խիստ տարածւած էր. սակայն հիւանդները հիւանդանոց գնալու վախից զսպում էին իրենց. քաջ գիտենալով, որ հիւանդանոց փոխադրուողներից շատ քչերն են վերադառնում։

Ամենափոքրիկ յանցանքի համար անգլիացիք բանտ էին նետում և ծեծում սաստկօրէն։

Նպաստի բաշխումը դրւած էր կանոնաւոր հողի վրայ։ Մեր ղեկավարների միջամտութեամբ քեմփի պատասխանատու՝ Գեներալ Ուսաին անհրաժեշտ միջոցներ տրամադրեց մեզ, կառուցելու դպրոց և եկեղեցի։ Մի քանի շաբաթւայ ընթացքում, ստեղծագործ և աշխատունակ հայը, թիւ 3 «սեքշինի» մօտ կառուցեց փայտերով և խոխրններով մի եկեղեցի, որի վրայ կանգնած էր թիթեղեայ գմբէթը, իսկ ծայրին Ս. Խաչը։ Բաղդադից դասագրքեր բերելով սկսեցինք կրթական գործը։ Դասաւանդութեան գործը ստանձնեցին վաստակաւորների մտաւորականները։ Մեր կեանքը քիչ-քիչ մտնում էր բնական հունի մէջ։

Գաղթականների դատական գործերի համար ընտրեց դատական ատեան, նախագահութեամբ՝ Սիմոն Զարուխիկեանի։ Ատեանին անդամակցում էին նաև՝ Համբարձում Մելքումեանը, Շահրաղեցի Լևոն Օսիկեանը, Ուրմեցի Օննիկ, Աւետիս Աւետիսեան, Արշակ Տ. Գալուստեան, Եկմալցի Նշան, Խաւենցի Միհրան։

Բաղդադի հոգևոր առաջնորդ՝ Մուշեղ եպիսկոպոս Սերոբեանը, երբեմն այցելում էր գաղթական ժողովրդին և գլխաւորապէս զբաղւում էր որբերի հաւաքման կարևոր գործով։

1918 թւի Հոկտեմբեր 20-ից Մուշեղ եպիսկոպոսը և վհան քահանան ձեռնամուխ եղան կրօնական գործերի կազմաւորման։ 18 քահանաներից ընտրեց «կրօնա-

կան ժողով հետևեալ կազմով՝ վահրամ ծ. վարդ. կանաչեան՝ նախագահ, Յովհաննէս քհնյ. Սիմոնեան՝ քարտուղար, Ստեփան քհնյ. Տ. Սահակեան և Պարտիրոս քհնյ. Եղիազարեան՝ անդամներ։ Հետագայում սոյն մարմնի նախագահութիւնը ստանձնից Պարմեցի Սահակ ծ. վարդապետը, և ապա Յովհաննէս ծ. վարդ. Հիւսեանը։

Այդ օրերին Պագուպա եկաւ Արսէն Կօրկեզեանը՝ Թեհրանի եղբայրական օգնութեան կոմիտէի յանձնարարութեամբ նա բաղդադում ներկայացաւ Մուշեղ Եպիսկոպոսին և նրանք միասնարար փարեցին ժողովրդական գործին։ Տէր Յովհաննէս քհնյ. Սիմոնեանը 300 երկսեռ փոկրիկներ հաւաքելով տեղաւորել էր Թիւ 1 «սեքշինի» վրաններում տակ նրանց տրել էր մաքուր սպիտակեղէն։ Հրեաները մեր քեմփերում առևտուր էին անում։ Գաղթականութեան բազմաթիւ դիմումներից յետոյ, կառավարութիւնը մերոնց ևս թոյլատրեց զբաղելու՝ առևտրով։ Երկաթուղագծին մօտիկ տարածւած դաշտը վերածւեց շու-



Հայ մաճիր առեւտրականներ Պագուպայում։

կայի, որտեղ կողք-կողքի հիմնւեցին խանութներ և արհեստանոցներ։

Մի օր, համագիւղացի՝ Մակար Յովհաննիսեանի հետ կամրջապլուխ դնացինք. հասնելուն պէս պահակ-ոստիկանը, (փոլիս) մեզ բանտ առաջնորդեց արտօնաթուղթ չունենալու պատճառով։ Ընկերս հիւանդ էր և տնքում էր՝ զարմանալի և իւրայատուկ ձևով ծիծաղ պատճառելով ուրիշ բանտարկեալներին։ Երեք ոստիկաններ մեզ մտրակելով ստիպում էին փորել վրանների շուրջը. ընկերս ադերսում էր և ներողութիւն խնդրում, սակայն ապարդիւն։ Մեզ տւին մի քիչ ալիւր, որը սաջի վրայ թխելով պիտի ուտէինք. բայց չկարողացանք ուտել և ձգացինք քաղցած։ Վերջապէս երեկոյեան բանտը եկաւ անգլիացի բժիշկը։ Ամենքը խոնարհաբար բարև տւին։ Մեզ ներկայացրին բժշկին։ Մենք սաորի թարգմանին խնդրեցինք, ասի բժշկին, որ մենք անգիտակցաբար ենք մօտեցել կամրջապլխին և բացի այդ հիւանդ ենք։ Վերջապէս հազիւ հազ ազատւելով տուն վերադարձանք, մէկ շնչով և առանց նա նայելու։ Վրանների մօտ Միքայէլ Մարգարեան անունով մէկը հարցրեց մեզնից.

— Դուք ո՞րտեղ էիք այդ ժամանակ.

— Մենք, մենք ոչինչ, գնացել էինք կամուրջի մօտ մեծ այդին, որտեղ մոնոդին հիւրասիրում են հազար ու մի բարիքներով.— կատակով պատասխանեցի ես։

Միամիտ մարդը, հաւատալով իմ խօսքերին, ճանապարհ ընկաւ դէպի կամուրջը, ուր խեղճին բռնել, ծեծել և բանտարկել էին 3 օր։ Մեզ մօտ վերադարձաւ, անվերջ անիծելով ինձ և Մակարին։


Մեր վրաններին կից էր Դիալար գետը, որը մեծ բարիք ու առաւելութիւն էր գաղթականութեան համար։ Անապատի արևի կիզիչ ճառագայթները անտանելի էին ցուրտ կլիմայի սովորած վաստակաւորութեան. ուստի շա-

տերը նրանցից, գետն էին մտնում մի քիչ զովանալու համար։ Ես, լաւ լողալ գիտէի։ Յաճախ լողալով գետի միւս ափն էի անցնում և այնտեղից քաղցր նուռ էի բերում։

Մի անգամ, գետում լողանում էր համր և խուլ՝ գոմաւեցի Աղոն Յովհաննիսեանը։ Ես էլ սովորականի պէս, մտայ ջուրը միւս ափ անցնելու համար. հազիւ ջուրի կէսը կտրել էի, երբ լսեցի, ափից բղաւում են թէ «Աղոնը խեղդւեց». շտապելով վերադարձայ. մի քանի քայլ մնալով խեղդւողին, սուզւեցի ջրի տակ։ Մօտեցայ Աղոնին և մինչ ես կփորձէի բռնել նրա մազերից, նա ինձ տեսնելով ամբողջ ուժով փաթաթւեց մարմնովս։ Ես աշխատեցի ազատւել. բայց իզուր. նա ինձնից աւելի ուժեղ և աւելի ծանր էր։ Ամբողջ ուժերս լարած, գերմարդկային ճիգ եմ գործ դնում. բայց անօգուտ. ոտքերս և ձեռներս այլևս ինձ չեն ենթարկւում. Մահւան դող անցաւ մարմնովս։ Ինչպէ՞ս, մտածում եմ ես, այսքան վատ օրեր անցկացնելուց յետոյ, այսքան վտանգներից խուսափելուց ետք, գոհ պիտի գնամ ջրի ալիքներին, Հէնց այսպէս գրեթէ ուշաթափ դրութեան մէջ, սպասում էի իմ անագորոյն ճակատագրի վերջին հարւածին, երբ յանկարծ թեթևութիւն զգացի. Աղոնը պոկւել էր ինձնից, ես ուրախացած, բայց նւաղուն, սկսեցի դանդաղօրէն լողալ դէպի գետափ։ Այնտեղ ինձ շրջապատեցին ընկերներս. հարցրի Աղոնի մասին. պարզւեց, որ ջուրը տարել էր նրան։

Այսպիսի բազմաթիւ զոհեր խլեց մեզնից Դիալար գետը։


Պագուպայի հիւանդանոցի հսկողութիւնը յանձնւած էր հնդիկներին։ Հիւանդանոցից փոխադրւող մեռելները թաղւում էին կողք կողքի։ Երկու հայ քահանաներ կատարում էին թաղման կարգը։ Մահը այնքան յաճախակի էր, որմի քանի տասնեակ գերեզմանափորներ անընդհատ աշխատում էին։



Գերեզմանատունը:

Յովհաննէս Ալոյեանին և իմ վաղեմի ընկեր՝ Աթանաս Շահրազեանին ծանր հիւանդութեան պատճառով փոխադրել էինք հիւանդանոց։ Մենք նրանց սպասում էինք գերեզմանատունում։ Սովորական կարգն էր դա. հիւանդի տէրը փոխանակ հիւանդանոց գնալու, կերթար գերեզմանատուն. այնտեղ սպասելու իր սիրելիներին։ Հետում երևացին երկու մարդ, որոնք պատգարակով բերում էին ընկերոջս դիակը։ Քահանան մի քանի րոպէ աղօթք մրմնջաց և դիակը յանձնեցինք սառ հողին։ Արցունք չկարսիրտ չէր ճնացել, քարացել էր։ Զոքեցի գերեզմանի առջև և իմ վերջին հրաժեշտս տուի իմ շատ սիրելի ընկերոջս, որը հայրենադարձի մուրապը որտին հանգաւ յաւիտեան։ Գոմսեցի Տ. Մկրտիչ քահանան ևս կնքեց իր մահկանացուն։

1918 թ. Հոկտեմբերին բոլոր վրանները մաղ գալով ցուցակագրեցին որը երեխաներին, որից յետոյ կազմեց որբանոց՝ Մուշեղ եպիսկոպոսի չանքերով։ Որբանոցի դրպրոցի ծախսերը հոգում էր անգլիական կառավարութիւնը։




Որբերի հաց։

Դպրոցի տեսուչն էր՝ Մատիր Յերանեանը։ Որբ հայ մանուկները հոգնում էին մաքուր և միաձև Որբերի նախանձելի դասընթացը մեծ ուրախութիւն էր պատճառում գործակատարութեան։ Որբանոցի մատակարարուհի էր նշանակուել Տիկ. Ենթերը, որն այդ պաշտօնի վրայ էր և բարեխղճօրէն կատարում էր իր պարտականութիւնը, մինչև որբանոցի Երուսաղէմ փոխադրութիւնը։ Մուշեղ եպիսկոպոսի չանքերով, տպարանին և որբանոցին աջակցելու նպատակով ընտրուում է մի մարմին, «Տարագրելոց մարմին» անունով, որը բաւականին օգտակար եղաւ իր ժամանակին։

«Տարագրելոց մարմնի» դիւանը ընտրեց հետևեալ կազմով Մարտիրոս Գոյումճեան՝ ատենապետ, Տիկ. Ռօզ Գոյումճեան փոխ-ատենապետ, Մինաս Կարապետեան՝ ատենադպիր, Օր. Արուսեակ Ներսիսեան՝ փոխ-ատենադպիր, Յովակիմ Տ. Եղիայեան՝ հաշուապահ-գանձապահ։

Գաղթականական գործերի համար ընտրուել էր նաև «Կոմիտէ», նախագահութեամբ՝ Լևոն Շաղոյեանի։



Բաղդադ-Միջագետի Հայ Տարագրյոց Նպաստամատույց Մարմին.

1. Մարտիրոս Գույումճեան. - 2. Որ. Ա. Ներսեսեան. - 3 Վ. Ահան Խան, Թաջիրեան - 4. Մուշեղ եպիսկ. Սերոբեան. - 5. Տիկին Մ. Գասպարեան. - 6 Սիմոն Ղարիբեան. - 7. Ռուբէն Հերեան. - 8 Սեդրակ Փափազեան. - 9. Գովհաս Մեյմարեան - 10. Տիգրան Էմմէճեան. - 11. Ծովակիմ Տեր-Ներսէսեան. - 12. Մարկոս Աւետեան. - 13. Յակոբ Ղազիկեան.

Անգլիացիների և մեր զեկավարների բանակցութիւնների հետևանքով, որոշուեց տարագիր երիտասարդներից կազմել հայկական բանակ, անգլիացիների զեկավարութեամբ։ Օգոստոսի 28-ին, առաւօտեան 850 վաստակաւոր կանոնիներ կազմ ու պատրաստ շարքի կանգնած առաջ շարժեցինք։ Մենք հոգեպէս անհանգիստ էինք. ո՞ւր պիտի գնայինք յայտնի չէր։ Մենք ճանապարհ ելանք անյայտ ուղղութեամբ։ Հոկտեմբերի 16-ին գօրքը յոգնած ու չարչաւած հասաւ Ղասրէ-Շիրին, որտեղ յայտնեցին Մուսուլի անկումը։ Գօրքը ոգևորուած էր։ Նոյեմբեր 3-ին գօրքը տեղաւորուել էր Դիալա գետի արևելեան ափում։ Յայ-

տարաբեց կամաւորների արձանագրութիւնը։ Մինչև 10 օր շուրջ 500 հոգի արձանագրեցին։ Գետը անցնելով մեացանք մեր բանակին, որն արդէն կանոնաւոր բանակի տեսք ունէր և մարզւում էր անգլիացիների ձեռքի տակ։ Ուժեղ էր դիսցիպլինը բանակում։ Անգլիացի սպաները շատ խիստ էին այդ տեսակէտից։ Առաւօտը շատ շուտ, դեռ արևը չծագած, զինւորութիւնը ոտքի վրայ էր կենսաշարժութեան համար։

Մուշեղ եպիսկոպոսը այցելեց զօրքին։ Նրա այցելութիւնը ոգևորեց զինւորներին, մանաւանդ, երբ նա հարցրեց.—Կուզէ՞ք հայրենիք վերադառնալ։—ամենքը ոգևորւեցին ու գոչեցին.—այո, հայր սուրբ, այո։

Նոյեմբերի 20-ին լուր տարածւեց, թէ մեր բանակին պիտի առաջարկէին, մի թուղթ ստորագրել, որը պայմանագրական բնոյթ պիտի ունենար։ Դրանով մեզ առաջարկում էին գնալ Մուսուլ և 5 տարի ծառայել բանակի մէջ։ Ամբողջ զօրքը միակամ և միաբերան յայտարարեց, որ այդ թուղթը չպիտի ստորագրի։ Հայ զինւորութիւնը քաջ դիտէր, որ այդ թուղթը ստորագրել նշանակում էր, զրկւել ամբողջովին ազատութիւնից և դառնալ ստրուկը անգլիացիների. դա նշանակում էր, որ մենք պիտի դառնայինք կոյր գործիքներ անգլիական քաղաքականութեան ձեռքին։ Դրանով մենք ստիպւած կլինէինք մի անգամ ևս կոտորակւելու, արիւն թափելու, բայց այս անգամ ոչ թէ մեր ինքնապաշտպանութեան, այլ անգլիական կայսրութեան շահերը իրաքի անհրապոյր անապատներում պաշտպանելու համար։

Կ. Պօլսոյ երբեմնի Զաւէն պատրիարքը կառավարութեան միջոցով բերւեց Պադուպա։ Այնտեղ, նա էր հայրական խրատներով ցանկանում էր համոզել մեզ, որ ստորագրենք պայմանագիրը — որովհետև մեր երջանկութիւնը դրա մէջն է.—բացատրում էր նա. սակայն անօգուտ։ Զօրքը և ժողովուրդը մնացին անդրդւելի։


Տխուր առաւօտ էր. ամեներ լուռ էին ու անխօս։ Զօրքը անգլիացի սպայի առաջնորդութեամբ դուրս եկաւ կամուրջի գլուխը։ Մեր ընդհանուր հրամանատար՝ Մեյջըրը վար իջնելով ձիուց յուզուած նայեց մեզ և ազդարարեց.

—Դուք չըամաձայնեցիք ստորագրել պայմանագիրը. ուստի, այժմ գնում էք զինաթափելու վերջին անգամ հարցնում եմ, պայմանագիրը չպիտի ստորագրէ՞ք.

—Ոչ, ոչ,—լսեցին ամեն կողմից։ Մեյջըրը ձին նըստելով շարժեց, որին հետևելով կանգնեցինք 9 – 10 – 11 թիւ քեմփերի պողոտայում։ Տեղի կառավարիչ՝ գեներալ Օատին ևս իրատելով կամենում էր մեզ համոզել, որ ստորագրենք թուղթը. մենք կրկին յամառեցինք։

—Ուրեմն, գէնքերը վար.— գոռաց Մեյջըրը։ Մենք հրացանները վար դրինք։ Անգլիացիները ժամենալով մեզ, ճանրամասն խուզարկեցին. մենք վերադարձանք մեր բնակավայրերը անգէն՝ նման վիտրաթափ աքաղաղների։ Դրանից յետոյ, սկսեց մեր տառապանքների նոր շրջանը, որ շաբաթներ տևեց։ Այսպէս կազմալուծեց մեր բանակը, որը յայտնի չեղաւ, թէ ինչ նպատակով կազմակերպեց և ինչու կազմալուծեց։ Այնուհետ անգլիացիների վերաբերմունքը շատ աւելի խստացաւ։ Նրանք բռնութեամբ, փողոցային հայհոյանքներով և մտրակի հարուածների տակ գործի էին քաշում մեզ, սուչի, սուչի բառերով։ 1918 թ.ի դեկտ. 31-ի մշուշապատ երեկոն էր, Ահաւոր Տարւայ վերջալոյսը։ Ձիշտ էինք նոր տարւայ դիմաւորութեան իրախճանքի հանդէսները երկրում. իսկ այսօր, գաղթականն, անտէր ու անտուն, օտար հորիզոնների տակ հեծում էինք դառնօրէն։

Յունվարի 6-ն է. թիւ 3 «սեքշինի» մօտ եկեղեցու կոչնականները հնչում և հաւատացեալներին եկեղեցի են կանչում։ Ս. Պատարագից ետք, Ս. Միւռոնի օրհնութիւն է կատարւում, որին զուգընթաց, լսւում է գաղթական



Գաղթական կանայք:

ժողովրդի դառն հեկեկոցները։ Ամենքը վերյիշում էին հայրենի երկիրը, իրենց անդորձ հարազատներին։ Նրանք Աղօթում էին Ամենակարողին, բայց անի երկրի դռները և վնրչ տայ իրենց յաւերին։ Սակայ աւաղ, Ամենակարողը չլսեց մեր աղօթքները։ Զորս երկար տարիներ ճնացինք Միջագետքի կլիզիչ անապատներում։ Այնտեղ թաղեցինք մեր հարազատներից շատ-շատերին, որոնք մեռան հայրենի կարօտը սրտներում։

Առաջին համաշխարհային պատերազմը հայ ժողովրդին ստիպեց վերցնել թափառականի ցուպը և բռնել օտարութեան ճամբաները։ Բռնի արտագաղթը ամայեցրեց հայկական. Միջագետքի անապատները լեցուեցին տեղահանուած էրզրումի, Զեյթունի և այլ վայրերի գաղթականներով։ Նրանց միջից ազատուած հազ ու կենդ մարդիկ, որոնք գալիս էին գլխաւորապէս Մուսուլից, մեզ պատմում էին սոսկալի պատմութիւններ, նկարագրում էին պատմութեան մէջ չտեսնուած վայրագութիւններ, եզակի

դէպքեր և անասելի հալածանքներ։ Նրանց պատմածները հատատում էին իրենց ճակատների վրայ դրոշմած չար ճակատագրի հետքերը։ Նրանք մերկ կմախքների էին նմանում, որոնք իրենց մերկութիւնը ծածկելու համար խուսափում էին մարդկանցից։ Ինձ թւում էր, ոչ ոք չէր կարող ըմբռնել Մեծ Եղեռնի ահաւորութիւնը, մինչև որ չտեսնէր իր սեփական աչքերով այդ ոճիրներից հրաշքով ազատուած մարդկանց ակօսած դէմքերը, չլսէր նրանց պատմած, իրենց կաշու վրայ զգացած տառապանքները։ Յայնժամ ինձ հետ միասին Սիամանթոյի բերնով պիտի գոչէր պայրապին.

—Ու թող թքնեմ քու ճակատին, ով մարդկային արդարութիւն.

Յունիսի 18-ին հեռագրով յայտնեցին, որ համաշխարհային պատերազմը վերջացուելուն շահ դաշնակիցների և գերմանո-աւստրո-թիւրք կառավարութիւնների պարտութեամբ։ Յունիսի31-ին գինադադարի ստորագրման առթիւ, Պագուպայի շուկայի դիմացի դաշտում ծօնախմբութիւն կար։ Անգլիացի պաշտօնեաները իրենց յատուկ տեղն էին գրաւել։ Ըրթերի շարքերը շարժւում էին հպարտ ու առնական քայլերով։ Երգեցիկ խումբը հետևում էր որբերի շարքերին. սպիտակ պաստառի վրայ գրած էր՝ «կեցցէ՛, համաշխարհային խաղաղութիւնը»։ Հայութիւնը խանդավառ դրութեան մէջ էր. հրճւանքով լի բացականչութիւնները լեցրել էին դաշտը։ Բոլորս չգիտեմ ինչու վստահ էինք, որ պիտի անպայման մի օր վերադառնանք հայրենիք։ Վստահ էինք, որ վաղ թէ ուշ պիտի գայ այդ վարդագոյն և երջանիկ օրը։ Հիանալի է այս տեսակէտից, հայ ժողովուրդը։ Ամենավատ օրերին, ամենադժբախտ օրերին, չի կորցնում իր անխախտ հաւատքը լուսաւոր ապագայի վերաբերմամբ։ Յուսահատուել, հայ ժողովուրդը չգիտէ։ Հայը անհատական կեանքում դժգոհ և մի քիչ յոռետես է,

իսկ հաւաքական կեանքում խիստ լաւատես։ Այսպէս է հայ ժողովրդի հոգեբանութիւնը, այսպէս է նրա ազգային խառնուածքը։

Աւազոտ անապատների կրծքին թառած հայ գաղթականութեան հանգիստը խռովելու եկաւ՝ վանի տխրահռչակ Ջևդեթը, որը յայտարարել էր.—Ձեզնից ձեռք չպիտի վերցնեմ, հայեր։—1920 թւի Օգոստոսի 14-ին Պագուպայի արաբները Ջևդեթի գրգռութիւններին զոհ գնալով և նրա ղեկավարութեամբ յարձակեցին մեր ժողովրդի վրայ։ Գնդակները ծակծկելով վրաններն ապառում էին շատերին։ Մենք ձեռնածալ նստած էինք։ ոչնչ չկար։ Մեր պիմուճներին անգլիացիները պատասխանում էին.—Սպասում ենք Բաղդադի հրահանգին։

Օգոստոսի 12-ին Բորեղ կոչուած գիւղից արաբական ձիաւոր զինուորները յարձակեցին թիւ 5 և թիւ 6 քեմփերի վրայ։ Ժողովուրդը խուճապի մատնուեց։

Ալ-Ջալոնների Բաղդոնը, վանեցի 5 եղբայրներ էին, որոնք իրրև հմուտ կուռոններ այդ տիտղոսին էին արժանացել։ Երկու եղբայրները տասնոց-ատրճանակները հանելով սկսեցին պիմպրել. շուրջ 50 արաբ ձիաւորներ շփոթելով գնդակների տարափի տակ, փախուստի ճամբան բռնեցին։ Նոյն օրը, Պագուպացի տասնեակ արաբներ գետն անցնելով խուժեցին թիւ 9 քեմփը։ Քեմփի կանայք պաշտպանեցին փայտերով դուրս քշելով զինուած արաբներին։

Անգլիացիները տեսնելով տարագիրների սոյն արիութիւնները մեծ գովեստով էին խօսում հայերի մասին։ 200 հայ ոստիկաններ, որոնք կառավարութեան ենթակայ էին, սոյն դէպքերին բերում էին իրենց մասնակցութիւնը օգնելով գաղթականութեան, հակառակ այն հանգամանքին, որ իրենց մօտ եղած զէնքերը բացարձակ անպէտքութիւն էին և աւելի խրախուսում էին նախա-

յարձակներին։ Շուրջ 200 հայ ու սարսի սպանուածներ ու վիրաւորներ կային։ Հազարերորդ անգամը լինելով նահատակուող ժողովուրդը դիմում էր անգլիացիներին և ղէնք պահանջում։ Արաբները նոյնիսկ փոլձում էին կլորել Դիալա գետի ջուրը ծարաւի մահանալու համար խեղճ ժողովրդին։

Երեկոյեան, որբանոցի տնօրէն՝ Սարդիս Շիրուանեանը վերադառնալով անգլիացիների մօտից, յայտնեց, որ այս գիշեր ժամի 12-ին ուժեղ յարձակում պիտի կատարի ժողովրդի վրայ։ Ուսուցչական կազմը մտահոգուած էր 1200 մանուկների խնդրով։ Ժողովուրդը յուզուած համախմբուեց Գոմանդան Քոլոնելի վրանի մօտ, ղէնք պահանջելով։ Սակայն վերջինս վրանից դուրս չհկաւ։ Գիշերը որբանոցի ուսուցիչները հանգիստ չտուին, մինչ մեր հիւրերի անմեղ մանուկները մուշ-մուշ քնել էին։ Կէս գիշերին, կամուրջին կից այգիներից համազարկերը սկսեցին։ Տափարակ դաշտը զրկուած էր պաշտպանութեան որևէ միջոցից. գնդակները թափւում էին որբանոցի և Գոմանդանի վրանի վրայ։ Համազարկերը տևեցին շուրջ 2 ժամ. արաբները առաջանում էին։ Օրհասական այս ժամին, մի քանի հայ ոստիկաններ 6 կտոր հրացանով հասնում են որբանոցի շէնքը և սկսում հակայարձակման անցնել։ Սրանց օգնութեան հասան մէկ ասանեակ աւորիչներ. թշնամին նահանջեց, տալով 5 զոհ։ Որոշ քանակութեամբ զէնք անցաւ մերոնց ձեռքը։

Անգլիացիները միշտ պահում էին հայ ժողովրդի ռազմանակութիւնը։

Օգոստոսի 17-ին խաղաղութիւն էր տիրում։ Գոմանդանը յայտնեց թէ զէնք պիտի հասնի և բաժանի ժողովրդի մէջ։ Սոյն յայտարարութիւնը ուրախացրեց բոլորին։ Երեկոյեան ժամի 6-ին Բաղդադից եկած գնացքը կամաց-կամաց մօտենում էր մեզ. յանկարծ շոգեկառքը

գծից դուրս եկաւ և խորտակուեց։ Արաբները գիծը փչացրել էին կամենալով կոգոպտել այն, բայց հնդիկ գինուորները արգելք եղան։ Վագոններում դանուում էր 100 հրացան և գինամթերք։

Մենք ունեցանք արդէն մէկ հարիւրակ երիտասարդ գինուորներ։ Օգոստոսի 17-ին, գիշերը Բաղդադից ուղարկուեց 500 հեծեալ զօրք և մի քանի թնդանօթ, որոնք տեղաւորուեցին հայկ. դիրքերում։

Օգոստոսի 18-ին Գոմանատան Ֆոլոնելի վրանի առջեւը փուած էր սպիտակ սաւան, կարմիր Աստի նշանով։ Առաւօտեան ժամի 8-ին Բաղդադի կողմից եկաւ մի օգնական, որն իջաւ ու միջից դուրս եկան մի շարք մարդիկ. անգլիացիների հետ կարճ խօսակցութիւնից յետոյ, օգնականը կրկին եաւ դարձաւ։ Օգոստոսի 19 ին Բաղդադից հասան 7 ամբաձիգ օգնականներ, որոնք արաբական դիրքերը գտնելուց յետոյ սկսեցին ռմբակոծել. նրանց միացաւ թնդանօթների և հրացէնների շեշտակի հարուածները։ Այդ օրը եղաւ Պագուպա վրանաքաղաքի կործանման առաջին օրը։ 4-րդ և 27-րդ «սեքշիններին» ժողովրդին վագոնները լեցնելով սկսեցին փոխադրել այլ վայրեր՝ Բաղդադ, Բասրա, նահր էլ Օմար։ Օգոստոսի 28-ին Պագուպա վրանաքաղաքը ոչ ևս էր. Բազմաթիւ սիրելիների շիրիմները թողնելով այդ անապատում հեռացանք մեր ուրուսմ։ Ամենավերջին կարաւանը բաղկացած էր որբանոցի փոքրիկներից, որոնք մնկնեցին օգոստոսի 31-ին։ Բաղդադ չհասած մի կայարանի մէջ, 7 տարեկան մի որբ երեխայ ժողովրդի հայերէն խօսակցութիւնը լսելով, արաբների միջից առաջ եկաւ ասելով.— Ես հայ եմ, ինձ էլ ձեզ հետ տարէք.— ու փաթաթուեց հայ փոքրիկներին։ Լևոն Շաղոյեանը, Յովհաննէս ծ. վարդ. Հիւսեանը, ուսուցիչները և որբուկները դուրս թափուեցին գնացքից, սակայն փոքրիկին փախցրին ճարպիկ արաբուհիները։ Մեր

բողոքներն ապարդիւն անցան և փոքրիկ հայ որբուկը ձեռք արաբների մէջ։ Սոյն դէպքը յուզեց բոլորիս։ Հայաստէր մի արաբ պատմեց, որ մեզ մօտ բազմաթիւ այդպիսի փոքրիկներ կան, որոնք միշտ լալով յիշում են իրենց հարազատներին։

Բաւականին երկար ճամբորդութիւնից յետոյ հասանք Նահր էլ Օմար, և բնակութիւն հաստատեցինք այդտեղ։ Նահր էլ Օմարում ժողովրդի մէջ աւելի արմատացաւ հայրենադարձի միտքը։ Սեպտ. 11-ին ժողովուրդը հաւաքւած Ֆրանսիս Օւենի վրանի մօտ խնդրում էին արտօնել ներկայացը դէպի երկիր։ Այդ իմաստով, կոմիտէի համաձայնութեամբ վահրամ վարդ. Կանաչեանը և ուրմիայի Ջանի անունով մի երիտասարդ մեկնեցին Երևան։ Ամենքը ոգեւորւած սպասում էին պատասխանի։

Նահր էլ Օմարում կամաց կամաց կառուցւեցին բնակարաններ, խանութներ և այլն։ Ժողովրդի կեանքը քիչքիչ մտնում էր բնական հունի մէջ։ Այստեղ ևս հիմնւեց դպրոց բաղկացած 10 վրաններից՝ 2200 աշակերտով։ 1920 թւի հոկտ. 4-ին դպրոցը արդէն կանոնաւորւել էր։ Ուսուցիչները նւիրւածօրէն, կանգնած իրենց կոչման բարձրութեան վրայ, տանում էին իրենց ծանր գործը, հայերի դաստիարակութիւն տալով մեր սիրելի մանուկներին. մանուկներ, որոնք հայ ժողովրդի յոյսն ու ճրագն էին և նրա ապագայ փառքը։ Հոկտեմբերի 14-ին, Մուսուլից եկող մի նաւ մեզ մօտ բերեց 3000 հայեր։

Բաւական թւով ընտանիքներ թողնելով Նահր էլ օմարը, մեկնեցին՝ Բաղդադ, Բասրա, Աշուր և այլն։

1922 թիւը Նահր էլ օմարի 14 հազար գաղթականութեան տանջանքի տարին եղաւ։ Անգլիացիները տեսնելով մեր ժողովրդի շինարար ոգին կամենում էին շահագործել գաղթականներին։ Հայերը ընդդիմանալով ծառա էին լինում անգլիացիների ցանկութեան դէմ։



Գաղթականները բաժանում են պարեն տրած միսը. Նահր էլ օմար:

Արեւելեան ժողովրդներից անգլիացիները ընդդիմութիւն չսպասելով սաստիկ գայրանում էլն և փոխարէն սաստկացնում իրենց ճնշումները: Այդ նպատակով նահր էլ օմարի հայկ. քեմփի հրամանատար՝ Մեյջըր Ռինդինի հրահանգով քանդեցին մեր բնակելի վրանները, և ժողովուրդը մնաց անապատի բարկ արևի տակ...

Յովհ. ծ. վարդապետը և Լևոն Շաղոյեանը կանչեցին պատասխանատուութեան և խիստ նկատողութեան արժանացան: Անգլիացիները նրանց հարկադրեցին հեռանալ քեմփից: Լևոն Շաղոյեանը հեռացաւ, իսկ Յովհ. ծ. վարդապետը տեղի տալով ժողովրդի կամքի առջև մնաց քեմփում և չհեռացաւ: Յովհ. ծ. վարդապետը, 1923 թւին թեհրանի վրայով մեկնեց Երևան, նրա ջանքերի շնորհիւ էր, որ 1923-24 թւերին Թոյլատրուեց նահր էլ Օմարի ժողովրդի ներգաղթը դէպի Հայաստան:

Մարտի 19-ին կոմիտէն և առաջնորդը պատասխանատուութենից խուսափելու համար, խորհրդակցական

նիստ-գումարեցին։ Դրութեան լրջութիւնը քննելով, ժողովը մերժեց անգլիացիների առաջարկը՝ այսինքն՝ Միջադեպով ցրել պաղթականներին»։

Յունիսի 13-ին Բաղդադից Նահր-էլ-Օմար եկան՝ Մարտիրոս Գոյումճեանը, Սիմոն Ղարիբեանը և Տէր Վահանը։ Որքանոցի ցրման դործը աւելի քան ծանրացել էր ազգային մարմինների վրայ։ Որքանոցի ծախսերը մեծ մասամբ հոգացւում էր հնդկահայերի նպաստութեամբ։ Ասաք կար, որ հնդկահայերը ցանկանում են դադարեցնել իրենց նպաստը. այդ դէպքում կացութիւնը աւելի կծանրանար։

Յունիսի 13-ին Լեոն Շաղոյեանը մեկնեց Բաղդադ խորհրդակցելու «Տարագրելոց Մարմնի» հետ։ Այդ օրերին անգլիացիները խումբ-խումբ պաղթականներ փոխադրեցին Մարգիլ որպէս բանւոր աշխատեցնելու համար։ Սոյն պատճառաւ խիստ դայրացրեց ժողովրդին։ Յուլիսի 7-ին Իրաքի Թագաւոր՝ Ամիր Ֆեյսալը մասնաւոր նաւով Բասրա իջաւ։ Յուլիսի 15-ին լուր հասաւ, որ բոլոր այն պաղթականները, որոնք անգլիացիների ձեռքի տակ որպէս բանւոր աշխատում էին Մարգիլում հիւանդ լեցւել են Բասրայի եկեղեցու բակը։ Նոյն օրը Բաղդադից վերադարձաւ Լ. Շաղոյեանը յայտնելով, որ դիմել եմ Պօղոս Նուպար փաշային, և նա հարկ եղածը կկարդադրի անգլիացիների հետ։


Յուլիսի 19-ին թիւ 1, 7, 9 «սեջլիների» պարէնը դադարեցաւ, որը շփոթ առաջացրեց ժողովրդի մէջ։ Յուլիսի 20-ին քեմփի Կոմանդանը վերադառնալով Բասրայից իր հետ բերել էր 7500 հնդկական ռուփի, որը բաժանեց ժողովրդի մէջ։ Բաժանեցին նաև 11 օրւայ կեանսամթերք-պաշար, որից յետոյ անգլիացիները ուզում էին մեզ ցրել։ Ըստ երևոյթին, մինչ այդ մեր արած դիմումները և հեռագիրները ապարդիւն էին անցել։ Յուլիսի 27-

ին, երեք արաբներ քեմփը գալով 100-ի չափ բանտարկան ձեռք էին ուզում ժողովրդից։ Մեյժեցինք կարգադնօրէն այդ անարդար պահանջը։ Անգլիացիները ևս աշխատում էին համոզել, բայց անօգուտ. նրանց բոլոր խաղերը, ժողովրդին ցրելու համար արդիւնք չունին։ Անգլիացիները ժողովրդի վրայ ճնշում բանեցնելու համար Եփրատ գետի եզերքին դրած ջրհան մեքենան քանդեցին և տարան, զրկելով ժողովրդին մաքուր ջրից։ Այսպիսով վարպետական քաջարի ժողովուրդը, որ իր հերոսական մարտերի շնորհիւ, ֆիզիքական բնաջնջումից ազատել էր, այժմ ստիպւած էր նորէն մաքառելու բռնութեան դէմ, որը թէև չէր սպառնում իր ֆիզիքական գոյութեան, բայց ձգտում էր հաւաքականօրէն կազմալուծելու, ոչնչացնելու այդ մի բուռն հայութեան։

Օգոստոսի 2-ին քեմփը արդէն ամբողջովին աւերւած էր։ Այդ օրերին, 2500 պարսկահայեր մեկնեցին իրենց նախկին բնակավայրերը։ Մնացողները գետափին հաւաքւած երանի էին տալիս մեկնողներին։

Մենք վաստրականցիներս էլ, Նահր-էլ-Օմարում ձնալով ապաստում էինք այն երջանկաբեր օրւան, որ պիտի կարողանայինք երկիր վերադառնալ։

Յովհաննէս ծ. վարդապետի ջանքերով Հայաստանի կառավարութիւնը թոյլատրեց միջագետքի գաղթականների ներգաղթը։ Առաջին կարաւանը շարժւեց 1924 թ. Յուլիսի սկզբներին։ Մնացած տարագիրները անհամբեր սպասում էին իրենց հերթին։ Մեկնողները ճանապարհ ընկնելուց առաջ այցելում էին իրենց սիրելիների հողաթումբերին, տալու համար վերջին հրաժեշտը իրենց մեռելներին։ Գերեզմաններից բարձրանում էր խունկի ծուխը, իր հետ երկինք տանելով տարագիրների՝ դժգոհութեան, բողոքի ձայնը աւ Աստւած, որ ի տես այսքան անարդարութեան պահպանում էր քար լռութիւն։ Բոլորը



Վասպուրականցի բուսցների գործառուն-իաճուր Նահր էլ օմարի մէջ:

գիտէին որ այսուհետ, էլ չի գտնուելու որևէ անձնատուրութիւն խուսնկ ծխելու այդ դժբախտ շիրիմների վրայ:


1923-ի ամառը մի ուրիշ դժբախտութիւն ևս աւելացաւ Թշուառ գաղթականների բազմաթիւ դժբախտութիւնների վրայ: Դա քոլերա հիւանդութեան սարսափն էր: Տիգրիս ևփրատ գետերի եզերքում վրանաբնակ արաբների մէջ սարածւեց քոլերա հիւանդութիւնը: Նահր-էլ-Օմարի գաղթականութիւնը ահաբեկւած էր: Մենք մեր պարէնը ձեռք էինք բերում շրջակայքի արաբներից. հիւանդութեան սարածումից յետոյ գաղարեցրինք պարէնի սացումը: Բասրայից ուսելիք փոխադրելը բարդ խնդիր էր. գաղթականութիւնը անելի էր մասնւած: Առաջնորդ Հայր Օուրբի առաջարկութեամբ դրամ հանգանակւեց գոհ մասուցելու համար: Ամենքը աղօթում էին Ջերմեռանդօրէն, քոլերայից զերծ ճնալու համար: Իսկապէս մեծ բարեխտութիւն գաղթականութեան, այդ բնաւեր հիւանդութիւնը չսարածւեց սարագիրների մէջ: Մեզնից մի-

այն 2 հոգի վարակեցին. մէկը մահացաւ, իսկ երկրորդը՝ Շուշանցի վիրաբոյժ Նշանը փրկեցաւ։

Ֆեմփի արևմտեան մասում կառուցած էր մեր դրպրոցը, ուր աոլորում էին 1700 աշակերտ-ուհիներ Ուսուցչական կազմը բաղկացած էր 14 հոգուց, որոնց մէջ էին և ես, որպէս հայոց լեզւի, կրօնա-քաթոյագիտութեան, երգեցողութեան և մարզանքի ուսուցիչ. միաժամանակ եկեղեցու երգեցիկ խմբի գեկավարն Դպրոցի տնօրէնն էր Մատիր Յերանեանը, իսկ նրա օգնականն էր՝ Շուշանցի Գեղամը։ Ամեն օր փոքրիկ նաւակը երթևեկում էր Բահր-էլ-Օմարն Ինարբեքիրցի Յակոբը Եփրատի ջրի ափին կից գնել էր մի հողամաս, որի վրայ կառուցել էր երկյարկանի շէնք։ Նա Եփրատի մէջ գետնել էր ջրհան մեքենայ։ Այդ օրերին ինձ հրաւիրեցին Բասրա, որպէս խմբավար՝ եկեղեցու երգչախմբի Առաջնորդի կարգադրութեամբ մեկնեցի Բասրա. Ծիծանցի Տ. Ղուկասը յորդորեց ինձ ճամբ. սակայն ես չմնացի եկեղեցու և դպրոցի գոր-



Հայ որբեր մահրում են իրենց կերակուրի ամանները։




Գաղթականներ Շաթ-օլ-արաբի եզերքում:

ները ընթանում էին, կանոնաւոր կերպով ունէինք նաև թատերական խմբակ, որին մասնակցում էինք՝ մենք ուսուցիչներս: Այստեղ բեմադրում էինք պանպան թատերգութիւններ: Վարդանանց տօնի առթիւ բեմադրեցինք «Վարդանանք» թատերգութիւնը, որտեղ ես առանձնել էի Ղևոնդ երէցի դերը: Ուսուցիչներ՝ Միգրանցի Աւետիսը, Արտաւազդի Յովհաննէսը, Վանեցի Սւետիսը և Շահրազեցի Աւետիս Բուլուղեանը մասնակցում էին ներկայացումներին:

Աւետիս Բուլուղեանը, (Այժմ ողջ) մի վաւերաւոր երիտասարդ և անձնւէր ուսուցիչ էր: Նա իր ակտիւ մասնակցութիւնն էր բերում բոլոր հանրային գործերին:

Անգլիական իշխանութիւնը չկարողանալով գաղթականներին ցրել Միջագետքում դիմեց ծայրահեղ միջոցի: Նա քանդեց վրանները և ժողովուրդը մնաց անապատի կիզիչ արեւի տակ: Սակայն աշխատասէր հայ ժողովուրդը կարճ ժամանակամիջոցում կառուցեց բնակարաններ իր յարմարութիւններով: Անգլիացիները հիանում էին այս

ժողովրդի ստեղծագործ ոգու վրայ։ Ինքնագործ ժողովուրդը կազմեց տեղական իշխանութիւն, ոստիկանութիւն, կոմիտէ և առաջնորդարան։ Հայկական կեանքը Նահր-էլ-Օմարում մտել էր իր բնական հունի մէջ։ Բաղդադի և Բասրայի մեր հայրենակիցները և այլազգիները խումբ առ խումբ մեզ գալիս էին այցելութեան, հիանում, գովում և նէէրները էին տալիս եկեղեցուն և դպրոցին։ Աշխատող տղամարդիկ գնում էին Բաղդադ, Բասրա և ըզբաղւում աշխատանքով։ Տօնակատարութիւնները Նահր-էլ-Օմարում տեղի էին ունենում ըստ վաղեմի պաբականի ազգային - ժողովրդական սովորութիւնների։



Գաղթական մի բնտանիք Նահր-էլ-օմարում իր կառուցած բնակարանի առջեւ։



Որբուհիներ Նահր-էլ-օմարի մեջ:

ՎԵՐԱԴԱՐՁ ԴԷՊԻ ՀԱՅՐԵՆԻՔ

Երկու օր ու գիշեր Տիգրիսի վրայ նաւարկելով մեր շոգենաւը Ցուլիսեան մի լուսնկայ գիշեր հասաւ «հազար ու մի գիշերներու» հեքիաթային քաղաքը՝ Բաղդադ, արաբ խալիֆէների պատմական մայրաքաղաքը: Մենք իջանք գետափին կից հիւրանոցը: Առաւօտեան մեզ յայտնեցին, որ շտապ ներկայանանք առաջնորդարան: Մեր անցագրերը քննեցին մանրամասնօրէն: Բաղդադում մնացինք մէկ այն 4 օր: Հինգերորդ օրը հրաժեշտ տալով մեր մնացող հայրենակիցներին, մեկնեցինք դէպի կայարան: Կէս ժամ անց, գնացքը շարժեց դէպի Իրանի սահմանը: 6 ժամից հետ, արդէն Խանաղին գիւղաքաղաքումն էինք: Սահմանագլխում 6 օր մնալուց հետ շարունակեցինք մեր ճանապարհը դէպի Մայր Հայրենիք:

Հասանք Դարե-Շիրին։ Իրանում ամբողջ ճանապարհի ընթացքում մեզ ուղեկցում էին երկու պարսիկ զինուորներ, որոնք պռատ առ պռատ փոխւում էին և որոնք պարտականութիւն ունէին մեզ պաշտպանելու զանազան պատահարներից։ Ծուրգոններով մեր տաժանելի ճամբորդութիւնը շարունակելով հասանք Քերմանշահ։ Այնտեղ մի պահ հանգստանալուց յետոյ, կրկին ճանապարհւեցինք և հասանք Համադան։ Ծուրգոնների հետ կնքած պայմանի ժամկէտը լրացաւ. փոխադրական որևէ միջոց չլինելու պատճառով (այդ ժամանակ Իրանում նոր և շատ քիչ թւով ինքնաշարժեր կային.) մենք գրեթէ ոտքով Համադանից մինչև Զանջան քայլեցինք. պիշերները ճանապարհ էինք գնում, իսկ ցերեկները քնում։ Լեռնային և տանջալից ճանապարհը հազար ու մի նեղութեամբ կարելուց յետք, 2 ամիս յետոյ, օգոստոսի կէսին հասանք Զանջան և մօտ մէկ շաբաթ մնացինք այնտեղ։

Մահմեդական սուգի օրեր էին. մի պիշեր, անցյի ժողովուրդը, լապտերներով աղօթքի էր գնում. այդ տեսարանը մի քիչ վախեցրեց մեզանից, սակայն ամբողջը երգելով անցաւ։

Մեր Զանջան հասնելու երրորդ օրը, մէկ տասնեակ աղամարդիկ ներկայացան ոստիկանութեան։

Վերջապէս, 8-րդ օրը թողինք Զանջանը։ Իմ երկրորդ պաւակը՝ Արշալոյսը կլիմայի փոփոխութեան, ճանապարհի նեղութիւնների և սաստիկ տօթի պատճառով ծանր հիւանդացել էր։ Զանջանից 10 կիլոմետր հեռու՝ թէյատնում 10 ամսեկան երեխաս կնքեց իր մահկանացուն։ Թէյատան տիրոջից վերցրի բահ ու բրիչ և հէնց այնտեղ մի փոքրիկ բլրակի վրայ թաղեցինք շատ սիրելի՝ Արշալոյսին։ Խունկ չկար, արցունքներով մխայն ցօղեցինք նրա փոքրիկ գերեզմանը և մորմոքուն սրտով հեռացանք։

1924 թւի սեպտեմբերին հասանք Թաւրիզ, իջանք

հայոց առաջնորդարանը Ատրպատականի թեմակալ, սիրուած և հանրանուէր առաջնորդ, երջանկայիշատակ՝ Տ. Ներսէս արքեպիսկոպոս Մելիք Թանգեանը մեզ ցոյց տուեց ամեն տեսակ աջակցութիւն։

Թաւրիզից գնացքով ճանապարհուեցինք Ջուլֆա։ Գնացքը ընթանում էր շատ դանդաղ, որովհետև վառելանիւթը՝ փայտ էր։ Պարսկական Ջուլֆայում հարկ եղած քննութիւնները կատարելուց յետոյ, մեզ կամուրջի մէջտեղում իրանի սահմանապահները համրանքով յանձնեցին Ռուսրդային սահմանապահներին։ Ռուսրդային Ջուլֆայում մեզ ընդունեց Հայաստանի կառավարութեան ներկայացուցիչը՝ մի համակրելի երիտասարդ։ Յաջորդ օրը կառաշարով հասանք՝ Նախիջևան, Դաւարու և ապա Երևան։ Մեզ ազատ թողեցին, ասը որ ցանկանում ենք ընտրենք, որպէս բնակութեան վայր։ Իմ ուղեկիցները բնակութիւն հաստատեցին Երևանի շրջակայքի դիւղերում։ Ես իմ կնոջ հետ, բնակուեցինք Երևանում և այնտեղ սկսեցինք զբաղուել կաթնատնտեսութեամբ, անդամակցելով Երևանի կաթնատնտեսական կարևոր արտելներից մէկին։

Վերջապէս, մի տասնեակից աւելի սև տարիներ թափառելով արեան ծովի և պանդխտութեան մէջ, նորից մեզ գտանք Նայիրեան երկրի ծոցում։ Երջանիկ էինք. չկար այլևս ֆիզիքական բնաջնջման վտանգը, անհրապոյր անապատների փոշիները ու կիզիչ աւազները։ Մայր Հայրենիքը հարազատ մօր պէս իր գիրկն առաւ մեզ՝ իր տանջուած, չարչարուած և տառապած զաւակներին։ Մենք նրա մայրական, հարազատ ու ջերմ գրկում ափսոսեցինք մեր վշտերը, ապաքինեցինք մեր վէրքերը և պատրաստուեցինք նոր կեանքի համար։

Արիւնոտ և արցունքոտ լի անցեալը մնայել էր ետևում, որպէս մի յուշ, իսկ ներկան երջանիկ էր և ապագան՝ լուսաւոր։

ՎԵՐՋ



ԵՐԵՒԱՆԻ ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐԸ

Այս բաժինը՝ նվիրում եմ յարգելի ընթերցողներին։
Հեղինակ

ՅԱՒԵԼՒԱԾ

ՆՄՈՒՇՆԵՐ՝ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ՆԱՀԱՆԳԻ
ԵՒ ԹԻՄԱՐ ԳԱՒԱՌԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹ-
ՆԵՐԻՑ ԵՒ ԵՐԳԵՐԻՑ.

ՅԱՐԵՐԳ

ԵՐԿՈՒ ԱՐՀԵՍՏԱՒՈՐՆԵՐԸ

Մեզնից շատ ու շատ տարիներ առաջ, մի քաղաքում ապրում էր մի շատ բարեպաշտ հայ ոսկերիչ, որն իր խանութին կից ունէր նաև մէկ ուրիշ ոսկերիչ հարևան։

Այս երկու արհեստաւոր հարևանները երկար ժամանակ ապրում էին խաղաղ ու հաշտ. սակայն, մի դէպք եկաւ բոլորովին տակն ու վրայ անելու երկու հարևանների բարեկամութիւնը։

Օրերից մէկում՝ երկրի դատաւորն իր շքեղ ապարանքից դուրս է գալիս և սկսում է այցելել նաև քաղաքի շուկան. նա առանձնապէս հովանաւորում էր արհեստաւոր դասին և ջերմ ու սիրալիր վերաբերմունք էր ցոյց տալիս մանուանդ ոսկերիչներին։ Երբ դատաւորը հասաւ շուկայի այն մասը, ուր տեղաւորուած էին ոսկերիչների արհեստանոցները, կանգ առաւ և ուշադրութեամբ սկսեց դիտել ցուցափեղկերում դասաւորուած արծաթեղէն և ոսկեղէն գործերը. նրան ամենից շատ դիւր են գալիս վերոյիշեալ հայ ոսկերչի գործերը. դատաւորը նեբա է մտնում արհեստաւորի խանութը. հայ արհեստաւորը ոտքի է կանգնում, երկիւղածօրէն ու յարգանքով պուխ է տալիս դատաւորին և շփոթուած սպասում է, թէ ինչ է հրամայելու դատաւորը։ Վերջինս զովում է արհեստաւորի շնորհքը և պատւիրում է իր մատին յարմար մի գեղեցիկ ոսկէ մատանի պատրաստել, որի համար ծոցից հանում է մի մեծ ադամանդ և առաջարկում, որ այդ ադամանդը իբրև ակն՝ դնի շինուելիք ոսկէ մատանու վրայ. դատաւորը մեկ-

ներսից առաջ ապառնում է հայ ոսկերչին՝ «Եթէ ուածս ոչ ամանդը փոխեի, կամ կոտրեի, այն ժամանակ գլխովդ պատասխանատու ես, վարպետ»։ Վարպետը նորից խոր գլուխ ուեց և դէմքի մի շարժումով ուզեց դատաւորին հասկացնել թէ ինչպէ՞ս կարող է ոչ ամանդը փոխել կամ կոտրտել։

Դատաւորը մեկնեց, առանց որևէ խօսք բաց անելու շինելիք մատանու արժէքի մասին, իսկ ոսկերիչ վարպետն ակնարկ իսկ չարեց արժէքի մասին՝ նախ որովհետև անյարմար գտաւ, յետոյ, մեծ յոյս ունէր և հաւատացած էր, թէ դատաւորը մատանու եսակին, արժէքն է ճանաչելու, միայն թէ մատանին այնքան գեղեցիկ պատրաստէր, որ դատաւորի սրտովը լինէր։

Դատաւորի ու հայ ոսկերչի բոլոր խօսակցութիւնները լսեց հարևան արհեստաւորը. նա չափազանց նախանձեց ու բարկացաւ՝ թէ ինչու՞ դատաւորը նրան անուշադրութեան է մատնել և իր համար մատանի շինելու առաջարկն արել հայ ոսկերչին. ինչու՞ ուշադրութեան չառաւ նրա գործերը։ Հարևան արհեստաւորի այս նախանձն ու բարկութիւնը պատճառ դարձան, որ նա մտածէր ու ճանապարհներ գտնէր իր հարևանին վնասելու։

Նա հետևել և տեսել էր, որ հայ ոսկերիչը դատաւորից ապամանդը առանալուց յետոյ դրել էր դարակներից մէկի մէջ. ու երբ երեկոյեան դէմ հայ ոսկերիչը փակեց իր արհեստանոցի դուռը և գնաց տուն, հարևան ոսկերիչը շարունակեց մնալ շուկայում. երկար մտածելուց յետոյ հնար գտաւ, բացեց հայ ոսկերչի արհեստանոցն ու այն դարակը, ուր պահուած էր դատաւորի ուած ապամանդը։ Նետոյ իր նախանձն ու բարկութիւնը մեղմելու համար և ապամանդը բոլորովին կորցնելու նպատակով՝ գնաց ծովափ և դատաւորի ապամանդը ձգեց ծովը։

Հետևեալ օրը, լոյսը դեռ չբացուած հայ ոսկերիչն ու-

բախ-ուրախ շտապեց իր արհեստանոցը, ու դատաւորի պատւիրած մատանին պատրաստի. ու երբ բաց արեց այն դարակը, որի մէջ պահել էր թանկագին գոհարը՝ տեսաւ, որ դարակում ադամանդ չկայ. նա մի րոպէ շշմեց ու սառած մնաց, գլուխը սարսափից սկսեց պտոյտ գալ. նա ուզեց իրեն հաշիւ տալ, թէ ինչ է եղել ադամանդը, բայց չկարողացաւ որևէ պատասխան գտնել այդ հարցումին։ Նա սկսեց փնտռել արհեստանոցի բոլոր դարակները, բոլոր ծակ ու ծուկերը, ուշադրութեամբ նայեց իր գըրպանները, սակայն ոչինչ չգտաւ. ադամանդը չկար ու չը կար. ինչ անել, ինչպէ՞ս պարզել այս հանգամանքը դատաւորին. չէ՞ որ դատաւորը և առհասարակ ոչ ոք չէր հաւատայ՝ թէ հայ ոսկերիչը կորցրել է ադամանդը. վերջապէս կար նաև հայ ոսկերչի պատւի խնդիրը. նա եօթանասունամեայ մի ծերունի էր, յիսուն և հինգ տարի է, որ ոսկերչութեամբ էր պարապում ու երբէք աւելի չէր ուել իր յաճախորդներին, որ կասկածեն իր մաքրութեան, իր ազնւութեան ու ճշմարտախօսութեան մասին. իսկ հիմա... հիմա այլևս կորուած է ինքն ընդմիշտ, առնաւտակ է տրուած նաև իր պատիւը։

Այս մտքերով ծանրաբեռնուած, սիրտը կոտոր հայ ոսկերիչը ժամանակից առաջ փակեց իր արհեստանոցը և քայլամոլոր վերադարձաւ դէպի տուն. նա դեռ զօռ էր տալիս յիշողութեանը, ուզում էր իրեն մխիթարել, թէ արդեօք ադամանդը հնար տուն չի՞ տարել, իրապէս ադամանդը դրեց արհեստանոցի դարմիկը։ Այսպէս մտամոլոր ու շւարուն տուն հասաւ. նրա կինը՝ Մարիամ բաջին տեսնելով ամուսնու մտահոգ վիճակը, անմիջապէս հարցրեց.

— Ի՞նչ կայ, սիրելիս, ինչո՞ւ այսպէս յուզուած ես, ինչո՞ւ ես անժամանակ փակել արհեստանոցդ։

Հայ ոսկերիչը նախորդ օրն արդէն պատմել էր կնոջը դատաւորի այցելութեան, ինչէս նաև ուած պատւէրի

ու ադամանդի մասին. այսօր լեզուն չէր զօրում ասելու, թէ ինչո՞ւ է ժամանակից առաջ փակել արհեստանոցը։

—Ինչո՞ւ ես լռում, քեզ եմ հարցնում, ինչո՞ւ ես այդպէս շշմել ու ժամանակից առաջ ինչո՞ւ ես արհեստանոցը փակել։

—Ի՞նչ ասեմ, լեզուս ուժ չունի պատմելու քեզ մեր գլխին եկած դժբախտութիւնը. դատաւորի տւած ադամանդը կորել է. փնտռեցի արհեստանոցիս բոլոր դարակները և չգտայ. այժմ ոչ կնաւատայ ինձ, թէ ադամանդը կորել է. և այս դժբախտութեան պատճառով ոչ միայն յուսահատ տարու պատիւս ու անարատ անունս ոսկի տակ պիտի տրեի, այլ նաև գլուխս վրաս չի մնալու. համաձայն պ. դատաւորի յայտարարութեան, եթէ ադամանդը փոխարէն կորսէի, գլխովս պատասխանատու եմ։ Ու հիմա շընաշած մտածում եմ թէ ո՞ւր եմ դրել այդ ադամանդը, կամ ինչպէս կորաւ։ Գուցէ մոռացմամբ տո՞ւն եմ բերել։

Կինը այդ անակնկալ ու չափազանց անախորժ լուրը լսեց աւելի խորը յուզումով. նրա շրթները դողդողացին և կարծես հրաժարեցին ենթարկուել նրա մտքի թելադրանքներին. մարմնի բոլոր մասերի մէջ զգաց մի անսովոր ատնութիւն ու դող, յետոյ նրան պատեց սառը էրտինք. նա արտակարգ ճիգ էր անում խօսելու և արտայայտելու այն՝ ինչ զգում էր, սակայն լեզուն ու շրթունքները չէին ենթարկուում նրան։

Այսպէս քարացած, մի ուժամանակ մնաց տեղում կանգնած, յետոյ ուշքի եկաւ և պատասխանեց ամուսնու հարցումներին։

—Որքան յիշում եմ, սիրելիս դու ադամանդը տուն չես բերել. դու ասացիր, թէ թողել ես արհեստանոցի դարակում։

Դատաւորը ծառային ուղարկել էր հայ արհեստաւորի խանութը և ծառան վերջինս՝ ժամանակից առաջ փակ էր

գաել։ Հարևաննեըը ծառայի հայցումին անորոշ պատասխաններ էին տալ, իսկ ադամանդ գողացող ալհեսառւորը ծառայի ականջին կամացուկ փսփսացել էր՝

— Հայ ոսկերիչը երկու օր է, ինչ գործի չի գալիս, կարծեմ սուգ է մաել ապացուցելու պրն. պատաւորին, որ նրա տւած ադամանդը գողացել են. պ. պատաւորին ասա, որ այդ սուտ յայտարարութեանը չհաւատայ ու մանաւանդ հայ ոսկերչի լաց ու կոծից չխաբւի. ես տասնեակ տարիներ հարևանութիւն եմ արել նրա հետ և ոչ ոք նրան իմ չափ չի ճանաչում. սուտ է խօսում, չխաբւէ՛ք։

Ծառան վերադարձաւ պատաւորի մօտ և հայտրդից լուածն ու տեսածը. պատաւորը չափազանց բարկացաւ և յայտարեց.

— Գողանալ, մոդանալ չեմ հասկանում, հայ ոսկերիչը կամ ադամանդը պիտի գտնի ու պատւիրածս մատանին շինի և կամ գլուխը կկտրեմ։

Այս լուրը կարճ ժամանակում հասարակութեան մէջ տարածւեց. ովքեր ճանաչում էին ոսկերչին, խորապէս ափսոսում էին ու ցաւակցում նրան։

— Խեղճ մարդ, ինչպէ՞ս գոհ պիտի գառնայ մի պատահականութեան։

— Անկարելի է, որ նրան նման արդար ու աղնիւ մարդը սուտ խօսի և ադամանդն իւրացնելու նպատակով յայտարարի գողացւած։

— Ատւած նրան օգնութեան կհասնի և մի ճանապարհ ցոյց կտայ՝ այդ դրութիւնից դուրս գալու։

Իսկ նրանք, որոնք չէին ճանաչում հայ ազնիւ ոսկերչին, հեգնում էին։

— Ո՞վ եկաւ ու այդպէս շուտ տարաւ ադամանդը. միթէ մի փորձւած արհեստաւոր այդպիսի թանկագին գոհարը կվտոնէր իր արհեստանոցում։

Դատաւորը լուրը լսելուց յետոյ աւելի ուշ

դարկեց հայ ոսկերչին, թէ երեք օրուան ժամանակ է տալիս. այդ երեք օրուայ ընթացքում կամ ադամանդը պիտի գտնի և վերադարձնի՝ կամ գլուխը վրան կտայ։

Հայ ոսկերչի տունը վեր էր ածել կատարեալ սգատան. նրա հինգ զաւակներն ու կինը շարունակ ողբում էին, գալիք սարսափելի գժբախտութիւնը պատկերացնելով։ Իսկ ինքը թիկն տւած գորգէ բարձերին՝ ծխում էր շարունակ, ծխում և քրքրում էր ու ցանկանում իմանալ Աստուծոյ բաները։

—Դիւանիդ մեռնեմ, Աստուած, սրա համար չիստուն հինգ երկար ու ձիգ տաբիներ փէշդ բռնած՝ ուրիշ արհեստաւորների նման ոչ խաբեցի և ոչ էլ որևէ կեղծիք թոյլ տւի. ապրեցի պատուով ու ճակատիս հալալ քրտինքով, որ կեանքիս վերջին օրերին այսպէս անպատուաբեր մահով՝ իբրև գող մեռնեմ։

Իբրև փրկութեան միակ միջոց՝ հայ ոսկերչիկինը վճռեց իր երեխաների ձեռքը բռնած գնալ, ներկայանալ պլն. դատաւորին, ընկնել նրա ոտքերը և ներում խնդրել իր ամուսնու համար. վճռեց և կատարեց։ Սակայն, դատաւորը ոչ մի կերպ չուզեց լսել Մարիամ բաջուն. նա արտակոտոր վերադարձաւ տուն, վերջին յոյսն էլ ջուրն ընկաւ. նստեց, նորից երկար լաց ու կոծ արեց, զաւակների հետ քանի, քանի անգամներ փաթաթուեց ամուսնու վզովն ու լաց եղաւ. վերջը յոգնեց ու միտքը կարծես կանգ առաւ մտածելուց։ Հետևեալ օրը լրանում էր դատաւորի տւած ժամանակամիջոցը. հայ արհեստաւորին պիտի տանէին գլխատելու։ Մարիամ բաջին իր սիրելի ամուսնու վերջին երեկոյի համար վճռեց լաւագոյն ընթրիքը պատրաստել. այդ պատճառով էլ հակառակ իր տնտեսող բնաւորութեան՝ երեխաներից երկուսին առատ դրամ տուեց և պատուիրեց, որ գնան շուկայ և երկու լիդր ձուկ գնեն. երեխաները սիրով կատարեցին իրենց մօր պատ-

էր ու քէն ախուր ու կատաւած սրտով, սակայն շտապելոյն ձկնեղէնի շուկան։

Շուկան գատարկ էր. ոչ էր այդ ժամանակ ձուկ գնում. տեղի ժողովուրդն իր գնումները կատարում էր սովորաբար առաւօտները ժամը 6-ից սկսած։

Երկու երէխաները այս պատճառով ընտրութիւն անելու և լաւագոյն ու թարմ ձկներ գնելու բոլոր հնարաւորութիւններն ունէին. նրանք իրենց մօր պատւէրի համաձայն երկու լիքը ընտիր ձուկ գնեցին և արագութեամբ վերադարձան տուն։

Մայրն անմիջապէս վերցրեց երէխաների գնած ձկները, տարաւ խոհանոց և սկսեց մաքրել. երէխաները նայում էին գնացիննրա յետևից և սկսեցին օգնել նրան։ Սկզբում մաքրեցին ձկների թեփերը, ապա բացեցին նրանց փորը. ձկներից մէկի փորոտիններից դուրս եկաւ մի փոքր՝ սակայն շատ փայլուն քար. Մարիամ բոլին զարմացաւ այդ քարի փայլի վրայ, սակայն սիրտը այնքան կատաւած էր ու տրամադրութիւնը՝ վատ, որ շատ չզբաղեց այդ փայլուն քարով. սակայն երէխաները, որ աւելի տրամադիր էին այդպիսի մանր մունր առարկաներով զբաղւելու, իսկոյն վերցրին քարը և սկսեցին հետաքրքրւել թէ ինչո՞ւ է այդ քարն այդպէս փայլում և ինչ բան է արդեօք այն, ու արդեօք Մարիամ բոլին սիրտ չունէր այդ բանով զբաղւելու, ուստի երէխաները փայլուն քարը վերցրին ու գնացին իրենց հօր մօտ. հայրը նոյն անշարժ դրութեան մէջ նստած անտարբեր ծխում էր. երէխաները պատկառանքով ու վախով կամաց մօտեցան իրենց հօրը և նրա առաջ դրեցին փայլուն քարը. հայ ոսկերիչը սկզբում չը նայեց էլ, յետոյ սակայն, երբ աչքը գցեց քարին, նկատեց որ երէխաների բերածը հասարակ քար չէր. կամացուկ վերցրեց, զննեց և համոզւեց որ բերածը ադամանդ էր։ աւելի ու աւելի զննեց և տեսաւ, որ ադամանդի վրայ

կային այն կապոյտ բծերը, որ ունէր դատաւորի աղամանդը. յետոյ զարմացած հարցրեց.

—Բալիկներս, այս որտեղի՞ց գտաք

—Հայրիկ ջան - պատասխանեցին փոքրիկները ուրախացած—ձկան փորոտինների միջից, ձկան փորոտինների միջից

Հայ ոսկերիչը չհաւատաց. սակայն մէկէն մէկ ուշքի եկաւ, ուժերը հաւաքեց և որքան հնարաւոր էր՝ արագութեամբ գնաց իր կնոջ՝ Մարիամ բաջու մօտ

—Մարիամ, Մարիամ, սիրելիս, էլ մի ախրիր, փրկւել ենք, պ. դատաւորի ադամանդը գտնւել է։

Մարիամը սկզբում անակնկալի եկաւ, չհասկացաւ թէ ինչ է ասում ամուսինը. յետոյ սակայն, երբ հայ ոսկերիչը ցոյց տւեց նրան ադամանդը ու շարունակեց ինքնաբերաբար կրկնել՝

—Գտել են, ադամանդը գտել են երեխաները։

Մարիամ բաջին հարց տւեց.

—Որտեղի՞ց են գտել և ե՞րբ.

—Ձկների փորոտինների միջից, այսօր են գտել։

Երեխաները այլևս սիրտ առան և ուրախացան, տեսնելով իրենց ծնողների արտակարգ ուրախութիւնը. նրանք պատմեցին իրենց սիրելի հայրիկին, թէ ինչպէս իրենց մայրիկը տեսել է ադամանդը և ուշադրութիւն չի դարձրել։

Հայ ոսկերիչը. նրա կին՝ Մարիամ բաջին, նրանց երեխաները անսահման ուրախութիւնից ու երջանկութիւնից իրար փաթաթւած համբուրում էին ու փառք տալիս Աստուծուն։

Հայ ոսկերիչը երբ հանգստացաւ, մեծ երեխային խնդրեց ուղարկեց դատաւորի ծառային յայտնելու իրողութիւնը, իսկ ինքը սկսեց մտմտալ իր մտքի մէջ.

Տէ՛ր, Տէ՛ր, իսկապէս որ դու արդարներին չես կորցնում, իսկապէ՛ս, որ արդարը չի կարող կորչել։

Ագամանդը գտնելու լուրը հասաւ թէ դատաւորին, թէ հասարակութեան. դատաւորը չհաւատաց լուրին և ասաց.

— Հը, հայ ոսկերիչ, եթէ դու խորամանկ ես, ես քեզնից շատ աւելի խելօք եմ։

Իսկ ոսկերիչ հայի հարևանը տանջւեց, տանջւեց ու չկարողացաւ լսամանալ թէ ագամանդը ինչպէս է հասել հայ ոսկերչին։



ԻՐԱԿԱՆ ԴԷՊՔ

Բադդոն գիւղի միակ հիւանդն էր, որն ապրում էր հաշտ ու խաղաղ իր կնոջ Մարոյի և երկու մանկահասակ երեխաների հետ։ Սիրուն էր Մարոն, ինչպէս անտառի եղջերու. նրա ծով աչքերը ամենքի ուշքն էին տարել. նրա գեղեցկութեան մասին, անգամ առասպելներ էին պատմում։ Եւ նման գեղանի մի կին, ամուսինն էր մի հասարակ հիւանդի, սակայն Բադդոն ևս շատ հաւեսաւ և բարի մէկն էր. ամենքը սիրում էին նրան. ամբողջ շրջանում չէր գտնւի մէկը որ դժգոհ լինէր նրանից. բարեսիրտ հիւանդը օր ու գիշեր աշխատում էր, աղքատներից վարձ քիչ էր առնում, չքաւորներին՝ օգնում...

Գիւղի Ռէսը՝ Մահմադ բէկը որոշում է ամեն գնով գեղեցիկ Մարոյին ձեռք ձգել իր հարեմի համար. և իր չար նպատակին հասնելու համար բազմաթիւ ատոր միջոցների է դիմում։ Նա պատուբ «ֆալչիներին» կաշառում է «թելիսմի» զօրութեան միջոցով մի բան անելու համար. շատերին դրամ է խոստանում, սակայն անօգուտ. նախանամութիւնը կարծես դէմ էր գնում չար բէկի որոշումներին և ամեն ինչ ջուրը նետում...

Վերջապէս Մահմադ բէկը համբերութիւնը հատելով որոշում է կտրուկ միջոցի դիմել. ապանելով Բադդոյին նա ցանկանում էր տիրանալ Մարոյին։

Այդ նպատակով, մի օր կանչում է Բադդոյին իր մօտ և հրամայական տոնով ազդարարում է.

—Լսիր, Բադդո, դու գիտես, որ ես խիստ, չղային

և կորուկ մարդ եմ, ես մինչ այժմ ոչ ոքի վատութիւն չեմ արել. այժմ ինձ համար անհրաժեշտ է մի բան, եթէ կարողացար կատարել, շատ լաւ. հակառակ պարագային ես պատասխանատու եմ նահանգապետի մօտ, և դու պիտի քաւես իմ յանցանքը քո կեանքովդ, իսկ բացի այդ, ես արդէն խայտառակւած կը լինեմ ամբողջ շրջանում.

— Ո՛վ բէկ,— ասաց Բաղդոն սարսափահար,— ես պատրաստ եմ նոյնութեամբ կատարելու ձեր հրամանները և անել այն, ինչ որ կօգնի ձեր պատւի կայունացման գործին ես իմ անկարելին կանեմ ձեզ օգտակար լինելու համար, որովհետև դա իւրացանչիւրիս պարտականութիւնն է, ձեզ նման բարեխնամ բէկի նկատմամբ։

— Շատ լաւ, ուրեմն մինչև վաղը առաւօտեան ինձ համար պիտի բերես 40 չորու բեռ տախտակի թեփ։

Խեղճ Բաղդոն ապշել էր Բէկի այս տարօրինակ առաջարկի վրայ, ուստի առարկեց ժամանակի կարճութեան և տախտակի չգոյութեան համար։

— Ո՛վ Բէկ, դա անկարելի է, ես ինչպէ՞ս կարող եմ կատարել ձեր հրահանգը. 40 բեռ թեփի համար առնւազն 40 օր ժամանակ է պէտք։

— Ոչ մի առարկութիւն - գոռաց Բէկը— ինչ որ հրամայեցի պիտի կատարես և վաղը առաւօտեան բերես իմ ուզածը, այլապէս գիւղի հրապարակում կայրեմ քեզ խարոյկի մէջ, գնա, և սկսիր աշխատել։

Դժբախտ Բաղդոն, գլուխն առած ափերի մէջ, տխուր ու տրտում մտաւ իւր գորշ խրճիթը, մտաւ սենեակը, վանից չիբուխը և սկսեց անդադար ծխել։

Մարոն պրպտած էր տան գործերով, նկատեց ամուսնու մռայլութիւնը, հետաքրքիր ձևով մօտենալով նրան, հարցրեց պատճառը։

— Է՜հ, սիրելիս, վաղը ես պիտի այրեմ տեակալի խարոյկի մէջ...

—Ի՞նչ ես ասում, քեռա մարդ, չլինի թէ գժւել ես, ինչ խարոյկ, չեմ հասկանում։

—Այո, սիրելիս, Մահմադ բէկը այսօր ինձ կանչեց իր մօտ ու հրամայեց մինչև վաղը առաւօտեան իրեն համար պատրաստեմ 40 ջորու բեռ տախտակի թեփ։ Ես ինչպէ՞ս կարող եմ կատարել այդ հրահանգը, երբ ժամանակը շատ կարճ է, հազիւ մէկ օր։

Մարդն հասկացաւ թէ բանն ինչումն է, և անդրադարձաւ որ խեղճ բադրն իր գեղեցկութեան պոռն է, ուստի սկսեց մխիթարել իր դժբախտ ամուսնուն։

—Մի վախեցիր, Ասուած մեծ է, այժմ քնիր հանգըստացիր, մինչև առաւօտ տեսնենք ինչ կլինի։

—Եկէք, սիրելի բալիկներ, մի վերջին անգամ համբուրեմ ձեզ, Մարօ ջան, երեխաներին լաւնայիր, ուսման տուր, թող մարդ դառնան, ինձ պէս խեղճ ու անճարակ չլինեն։ Կինը միշտ մխիթարում էր ամուսնուն. իսկ բադրն ամբողջ գիշերը անքուն ծխում էր ու ծխում...

* * *

Առաւօտ էր...Արևը ժպտում էր Աշխարհին...
Թըխկ... թըխկ... դուռը բաղխեցին ուժգնօրէն.
—Եկան, եկան, ինձ պիտի տանեն, օ՜հ, Տէր Ասուած, դու օգնիր...

Այդ պահին երկու զինուած պահակներ մտան ներս ու պատգամեցին.

—Հիւսէյն խանը կարգադրեց մինչև 3 ժամ պատրաստել ընկոյզի ընտիր փայտից մի շատ գեղեցիկ և ճաշակաւոր դագաղ գիւղի ռէս՝ Մահմադ բէկի համար, որը կթաղուի այսօր կէսօրին։

* * *

Գիշերը Մահմադ բէկը յանկարծամահ էր եղել...

ՉԱՐ ԹԱԳԱՒՈՐԸ ԵՒ ՆՐԱ ՎԵՐՋԸ

Շատ տարիներ առաջ, երբ մարդկութիւնը խարխափում էր տգիտութեան և խաւարի մէջ, փոքրիկ Ասլանը ապրում էր հաշտ ու անխռով։ Սակայն այնպէս պատահեց, որ նրա հայրն ու մայրը վախճանուեցին, Ասլանին թողնելով որբ ու անտէր...գնաց Ասլանը, թափառեց, կտրեց ահագին տարածութիւն,և ի վերջոյ հասաւ մի փոքրիկ աւանի Օրերով նստած ծառերի տակ փոքրիկ երեխան հայեացքն ուղղած հեռուն նայում էր ժամերով ու անթարթ...

Երեկոյ է...զբնգզբնգացնում են ուղտերի երկար կարաւանները՝ բեռնաւորուած զանազան ապրանքներով։ Այդ ամբողջ բեռները պատկանում էին յայտնի վաճառական՝ հաջի Աբդուլային, որը հպարտօրէն նստած ուղտի վրայ, առաջ էր գնում։ Հաջին յանկարծ նկատեց երեխային, կարգադրեց ծառաներին իր մօտ բերեն նրան։

— Ո՞վ ես տղայ,— հարցրեց Հաջին իր գոռ ձայնով։

— Ես որբ տղայ եմ, պատասխանեց Ասլանը։

— Այդ լաւ է, ես հէնց նման մէկին էի փնտռում։

Ծառաները վերցրին երեխային և կարաւանը շարժուեց դէպի քաղաք։ Առաւօտուայ մօտ, փոշեթաթախ կարաւանը լուռ ու դանդաղ մտաւ քաղաքի դարպասներից...

* * *

Անցել էր տարիներ։ Երիտասարդ Ասլանը արդէն քաղաքի մէջ յայտնի էր։ Այն օրւանից երբ հաջի աբդուլան նրան հոգեորդի էր վերցրել, շատ բան էր փոխուել։ Նոյն քաղաքի վեզիրը ունէր մի գեղանի աղջիկ՝ Զահիրէ անու-

նոքա Երկու երիտասարդ սրտերը մի գեղեցիկ օր տեսան իրար և սիրեցին մեմեանց։ Նրանց միջև հետզհետէ սէրը զարգացաւ և հասաւ խելագարութեան աստիճանի. բայց ինչ, վեզիրը իր դստերը թագաւորի կնութեան պիտի տար, մի բան, որի մասին գիտէին երկու սիրող սրտերը։ Եւ մի օր հեծած երկու առոյգ նժոյգներ Ասլանն ու Զահրէն, դուրս եկան գաղտնի, քաղաքի դարպասներից, և բռնեցին անապատի ճանապարհը։ Նրանք գնացին մի ուրիշ երկիր, սուս ու փուս ամուսնացան։

Օրերից մի օր, երկրի թագաւորին լուր բերին, որ իր երկրում բնակութիւն է հաստատել մի անհման գեղեցկուհի, որն արժանի է արքայի պալատին։ Թագաւորը հրամայեց, որ իր մօտ բերեն այդ չքնաղ կնոջը։ Թագաւորը հարց ու փորձից յետոյ հասկացաւ, որ նա ամուսնացած է Ասլան անունով մէկի հետ։ Համոզուած այդ կնոջ գեղեցկութեամբ, թագաւորը որոշեց տիրանալ նրան. ուստի հրամայեց, որ իր մօտ բերեն այդ կնոջ ամուսնուն։

— Անունդ ինչպէ՞ս է։

— Տէր իմ, Ասլան։

— Հը՛մ... լաւ, դու գիտես որ իմ թագաւորութեան շրջանում մուտք գործողը մինչև մէկ ամիս պիտի ներկայանայ ինձ, այլապէս կը պատժւի, և քանի որ դու թերացել ես քո պարտականութեան մէջ, պիտի պատժւես չարաչար։ Իսկ ես, այնքան էլ չար չեմ, որ քեզ պատիժ տամ, ուստի պայման եմ դնում քեզ, որ մինչև եօթ օր ինձ համար Առիւծի կաշուց պատրաստուած պարկով, Առիւծի կաթ բերես, այլապէս գլուխդ կտրել կտամ...

Ասլանը տխուր, տրտում դուրս եկաւ պալատից, եկաւ տուն և յայտնեց կնոջը թագաւորի պայմանը։

— Գնա, սիրելիս, — ասաց գեղեցիկ Զահիրէն — գնա Տէրը քեզ հետ, միայն մի մոռացիր բոլորի հանդէպ միշտ բարութիւն անել, որովհետև բարի գործ անելով է, որ Տէրը քեզ

կօգնի

* * *

Հեծած իր նժոյգը Ասլանը մեկնեց անյայտ ուղղութեամբ... անցաւ ոարեր ու ձորեր, միշտ իր մտքում պահելով այն խօսքը, որը կոչւում է բարութիւն...

Շատ գնաց, քիչ գնաց, հասաւ մի լայնածաւալ խիտ անտառի. սիրտը թունդ եկաւ, երբ առիւծի խուլ մռնչիւնն հասաւ իր ականջին. մօտեցաւ ձայնին, յանկարծ նկատեց մի մեծ առիւծ, պառկած մռնչում է.

— Ով մարդ, — ասաց առիւծը, տեսնում ես կրծքիս վրայ բացուած մեծ վէրքը որը թարախակալել է. նիզակովդ պատռիր այդ վէրքը և հանգստացրու ինձ այս ցաւերից, այնու ինչ ուզես կատամ քեզ...

Ասլանը դանդաղօրէն մօտեցաւ նրան, նիզակի հարուածով պատռեց վէրքը, թարախը դուրս թափեց և առիւծը հանգստացաւ։

— Այժմ ասա, թէ ինչ ես ուզում։

— Առիւծի կաթ, առիւծի կաշուց պատրաստուած պարկով, — պատասխանեց Ասլանը շտապ։

— Մարդ, դժուար բան ասացիր, բայց ինչ արած, խօսք ես ուել ցանկութիւնդ կատարելու։ Վերցրու իմ ձագերից մէկը և դնա հեռու, հեռու, եօթը սարի եռը, այնտեղ մորթիր ձագիս, կաշուց պատրաստիր պարկ, ապա էկ և իմ ատինքներից վերցրու քո ուզած կաթը։ Բայց գոյշ, վայ քեզի, եթէ ականջիս հասաւ ձագուկիս ճիչը։

Ասլանը այսպէս էլ արաւ։

* * *

Մի ւս օրը, առիւծի կաթով լեցուն պարկով Ասլանը, հպարտ մտաւ քաղաք և 7-րդ օրը լինելով շտապ ներկայացաւ թագաւորին։

— Տէր արքայ, ես բերի այն, ինչ որ կամենում էիք։

Թագաւորը մնաց ապշած, նա մոռացել էր, որ Ասլանը

կեր դարձաւ վայրի գազաններին. ուստի վերցնելով պարկը, ջղայնացած շպրտեց մի կողմ և դուրս.

— Բնը ինձ համար անմահական ջուր և խնձոր, երեք օր քեզ ժամանակ, թէ չէ Զահիրէի երեսը չես տեսնի... Ասլանը հասկացաւ թէ բանն լինչումն է. շտապեց կնոջ մօտ։

— Մի վհատիր սիրելիս, Աստուած մեծ է, կրկին հեծիր քո նժոյգը և գնա, վստահելիր, որ Տէրը կօգնի քեզ, միշտ աղօթիր Տիրոջ և նրա ողորմածութիւնը հայցիր։

* * *

Երկար թափառելուց յետոյ, Ասլանը կանգ առաւ մի գեղեցիկ աղբիւրի մօտ, որի կողքին կար մի խնձորենի, շատ բարձր, որի ծայրը մինչև ամպերն էր հասել...

Յանկարծ երեք սպիտակ աղաւնիներ եկան, թառան ջրի կողքին. հանելով իրենց փետուրները, մի ակնթարթում նրանք ձևափոխեցին դարձան երեք գեղատեսիլ աղջիկներ և մտան ջուրը լողանալու։ Ասլանը շլարել էր. թագնւած ծառի տակ նայում էր նրանց հիացած։ Կէս ժամ յետոյ, երբ աղջիկները ջրից դուրս եկան, Ասլանը դատկեց և նրանցից մէկի փետուրները յափշտակեց, մինչ միւս երկուսը հագնելով իրենց փետուրները թռան ծառի վրայ։ Աղջիկը մնաց ջրում և սկսեց աղերսել, Ասլանն ասաց.

— Ինձ համար բերէ՛ք մէկ հատ անմահական խնձոր և մէկ շիշ անմահական ջուր։

Աղաւնիները իսկոյն կատարեցին տղայի առաջարկը, քանի որ անմահական ջուրը այդ աղբիւրն էր, և կողքի ծառն էլ անմահական խնձորի ծառը։

Ասլանը վառք տալով Տիրոջը, յանձնեց վնասուրները ու բռնեց իր երկրի ճանապարհը։

* * *

Թագաւորը կատաղել էր, անսպասելի հրահանգները կատարւում էին լրիւ և արագ։ Մի ամբողջ գիշեր չարաչար ծրագիրներ էր որոճում տղային ոչնչացնելու համար՝

այդ առթիւ խորհրդակցում էր վեզիրի հետ ի վերջոյ մըտածեց անկարելի մի բան։ Միւս օրը կանչեց Ասլանին։ Սիրուն Զահիրէի գեղեցիկ աչքերը համայել էին, նա անպայման որոշել էր այդ գեղանի կնոջը տիրանալու։

— Լսիր, ինձ համար պիտի գտնես և բերես իմ մեծ պապի՝ Ամիր Արսլան թագաւորի կնիքը, մինչև 3 օր։

Տխուր ու տրտում Ասլանը եկաւ տուն։

— Կորած եմ սիրելի Զահիրէ, այս անգամ չար թագաւորը այնպիսի բան է ուզել, որ շատ դժւար, թէ կարողանամ գտնել։

— Մի մտածիր սիրելի Ասլան, Աստուած ողորմած է, այժմ քնենք, մինչև առաւօտ մի բան կը մտածենք։

* * *

Միւս օրը Զահիրէն յիշեց, որ իւր հօր թանգարանում գտնւում է բոլոր թագաւորներից մնացած իրեղէնները ու հնութիւնները, ուստի մի նամակ գրեց իր հօրը և յանձնելով Ասլանին ասաց.

— Ներկայացիր հօրս, չնայած նա բարկացել է ինձ վրայ, որովհետև ես իր կամքին հակառակ ամուսնացայ քեզ հետ, բայց վստահ եմ, որ նա կը ների մեզ, մտիր թանգարանը և փնտրիր Ամիր Արսլան թագաւորի կնիքը։

Ասլանը նորից հեծած նժոյգը, ճանապարհ ընկաւ հասաւ իւր աներոջ քաղաքը ու ներկայացաւ նրան։ Վեզիրը չը նայած, որ բարկացել էր, բայց ներողամիտ գտնելով կատարեց Ասլանի խնդիրքը, և գտնելով կնիքը յանձնեց նրան։ Արևածագին Ասլանը յաղթական ժպիտը երեսին մտաւ քաղաք, ու շտապ ներկայացաւ թագաւորին, յանձնելով նրան իր պապի կնիքը։ Թագաւորի կատաղութիւնը հասել էր գագաթնակէտին, օրինական ճանապարհներով հնարաւոր չեղաւ ձեռք ձգել գեղեցիկ Զահիրէին, ուստի մտածեց բռնի ուժով մէջտեղից վերցնել

Ասլանին, այդ մասին երկար բարակ խորհելուց ետք, մի օր կանչեց Ասլանին պալատ։

— Ասլան, տեսնում եմ ճարպիկ տղայ ես, ունես գեղեցիկ կին, այժմ դու ամենաբախտաւոր մարդն ես աշխարհում։ Ինչ որ, մինչ այժմ քեզնից ուզել եմ կատարել ես նոյնութեամբ, մի բան պիտի հարցնեմ քեզնից, եթէ ճշգրիտ կերպով պատասխանես հո ոչինչ, այլապէս առն ու տեղը գլուխդ կրաժանեմ մարմնիցդ։

— Տէր արքայ, հրամայէք, պատրաստ եմ պատասխանելու, — ասաց Ասլանը խոնարհաբար, ու ծնկները դողացին։

— Ասա ինձ, ես ո՞րը կը մեռնեմ...

Ասլանը մի պահ ապշած չգիտէր ինչ պատասխաներ, ուստի թագաւորից 1 ժամ ժամանակ խնդրեց պատասխանելու համար։ Թագաւորը հրամայից պահին, որ պատրաստ լինի, Ասլանը ինչ էլ որ պատասխանի, իսկոյն գլխատի։

* * *

Պալատից դուրս գալով Ասլանը շտապեց տուն ու արտասւալից աչքերով յայտնեց Զահրիէին, թագաւորի հարցումը։ Իմաստուն Զահիրէի աչքերը վայրեցին, ու մի պահ ընկղմուեց մտքերի աշխարհում։

— Շատ լաւ, սիրելի Ասլան, ներկայացիր թագաւորին քաջալերի և ասա — Տէր Արքայ, դուք իմ մահից երեք օր յետոյ կաւանդէք ձեր հոգին։

Ասլանը ուրախանալով գեղեցիկ ու յարմար պատասխանի վրայ, համբուրեց իւր խելօք և իմաստուն կնոջը և շտապեց պալատ։

— Տէր Արքայ, — ասաց Ասլանը խոնարհուելով — դուք իմ մահից երեք օր յետոյ կաւանդէք ձեր հոգին։

Թագաւորը սարսափից գոյնը փոխեց, ծնկները թուլացան, ու սարսափահար եւ-եւ գնաց պատշգամբը և ոտքը

ահելով, հաւատարակշռութիւնը կորցրեց ու պալատի տա-
բոլոր բարձրութիւնից ճօճւելով ցած գլորւեց և չարդ ու
փշուր եղաւ։

* * *

Այնուհետև խելօք Զահիրէն և Ասլանը ապրեցին երկար տարիներ, խաղաղ ու երջանիկ, նրանք բոլորին սովորեց-նում էին բարութիւն անել...

Իսկ չար թագաւորը ստացել էր իր արժանի պատիժը։



ՀԱԻԱՏՔԻ ՈՒԺԸ

Քիւրդ բէկը ծօթը տարի հիւանդ-անդամալոյծ պառկած էր անկողնում. ոչ մի բժշկութիւն չօգնեց նրան։ Նա ճարահատ որոշեց հայոց սրբավայրերին դիմել բժշկւելու նպատակով...

Երկար քարքարոտ խճուղով անցնում էր բէկի կարաւանը, որն արդէն բաւականին յոգնել էր։ Հայկ. սրբավայր գտնելու նպատակով, քրդերը ձերբակալեցին մի հայ ճամբորդի և նրանից պահանջեցին ցոյց տալ մի բուժիչ սրբավայր. հայ ճամբորդը իր օձիքը շտապ ազատելու համար ցոյց տւեց դիմացի քարաժայռը և ասաց.

— Այս սրբավայրը հարիւրաւոր հիւանդներ է բժշկել. Բէկին ևս անպայման կբժշկի։

Կարաւանը ջերմեռանդ հաւատքով մօտեցաւ կարծեցեալ սրբավայրին և իջևանեց այնտեղ։

Ջոհեր մատուցեցին և երկար աղօթեցին....

Երեք օրից ետք, բէկը լաւ էր զգում իրեն. անդամալոյծ և անշարժ ոտքերն սկսել էին շարժւել։ Բոլորը ուրախացել և զովում էին սրբավայրի բուժիչ կարողութիւնը։

Այնուհետև քիւրդ բէկը և իր բարեկամներն ու ծանօթները ծանր հիւանդութեան դէպքում, դիմում էին այդ աւերակեան քարաժայռին, որը մի ճամբորդի յուշմունքով և պատահաբար բուժիչ սրբավայրի հռչակ էր ստացել։

Ահա թէ ինչու ասել են.

— Հաւատքով քարին դիմես, քարը մուրազդ կատարի։

ՊԱՐԵՐԳ

Համ[1]) գիւլ[2]), համ վարդ, համ նարգիզ,
Գէօլի[3]) կռունկ էրկէն վիզ,
Կակէ[4]) մամէ[5]) կարգա[6]) դիս,
Համ գիւլ, համ վարդ, համ նարգիզ։
Նախրորդ մարդու մի տար գիս,
Կէրթա նախիր մոռնա գիս։
Համ գիւլ, համ վարդ, համ նարգիզ,
Գէօլի կռունկ էրկէն վիզ,
Կակէ մամէ կարգա գիս,
Մաճկալ մարդու մի տար գիս,
Մաճ կը բռնա մոռնա գիս։
Համ գիւլ, համ վարդ, համ նարգիզ,
Գէօլի կռունկ էրկէն վիզ,
Կակէ մամէ կարգա գիս,
Կարդացուրի մի տար գիս,
Գիրք կ'առնի ձեռ մոռնա գիս։
Համ գիւլ, համ վարդ, համ նարգիզ,
Գէօլի կռունկ էրկէն վիզ,
Կակէ մամէ կարգա գիս,
Սօլկար[7]) մարդու մի տար գիս,
Սօլ կը կարի մոռնա գիս։
Համ գիւլ, համ վարդ, համ նարգիզ,
Գէօլի կռունկ էրկէն վիզ,
Կակէ մամէ կարգա գիս,
Թիւջար[8]) մարդու մի տար գիս,
Ոսկի խամբա մոռնա գիս։
Համ գիւլ, համ վարդ, համ նարգիզ,
Գէօլի կռունկ էրկէն վիզ,

---

1) Թէ՛, թէ՛ վարդ եմ, թէ նարգիզ: 2) վ.արդ. պարս. բառ է: 3) Լին. prf. բառ է: 4) Հայր: 5) Մայր: 6) Պահակէ, կարգէ: 7) Կօշկակար: 8) Վաճառականց, prf. բառ է:

Կակէ մամէ կարգա զիս,
Զօբան[1]) մարդու մի տար զիս,
Կ'էրթա տար դաշտ մոռնա զիս։
Համ գիւլ, համ վարդ, համ նարգիզ,
Գէօլի կռունկ էրկէն վիզ,
Կակէ մամէ կարգա զիս,
Խիեաք[2]) մարդու դիւ տուր զիս
Մըքիւք[3]) թալա[4]) պագա[5]) զիս...
Համ գիւլ, համ վարդ, համ նարգիզ,
Գէօլի կռունկ էրկէն վիզ,
Կակէ մամէ կարգա զիս,
Համ գիւլ, համ վարդ, համ նարգիզ։

---

1) Հովիւ. պարսկ. բառ է: 2) Խիեաբ. կտաւ գործող. խիեաբութիւնը վաճի տարածուած եւ բանուկ արհեստներից մեկն էր: 3) Մաֆռուկ. ապրանք կամ շորեղէն գործելու գործիք: 4) Զգէ, կտաւ գործ: 5) Համբուրէ:

ԹՈՒԹՈՒՆԻ ԵՐԳԸ

ԾԱՆՕԹ.— Վաճի Արճեհ գաւառի Օրօրաց գիւղացի ծուճաճ անուճով մի Հայ հրիտասարդ գնում է ճարասճիհ: Երբ ուզումէ ծխել, տեսնում է, որ տուփի մէջ ծխախոտ չրկայ: Շատ է տխրում, իսկ իւր խճճտասիրութիւնն էլ քոյլ չի տալիս, ուրիշներից ծխախոտ խնդրել: Ճանապհի քողնում դուրս է գալիս գիւղամէջ եւ տխուր ձայնով երգում է.

Լալա պայի հարանիքի տուն,
Չրկար թութուն մէջ իմ կութուն,
Սիրտըս կոտրաւ դարձայ ի տուն,
Էրեայ վառեայ ես անթութուն:

Ճանկարծ տեսնում է, որ մի խումբ ջահել տղերք Ֆռանճերը ծռած, հպարտ եւ ուրախ կանգնել ծխում են. խօսքը նրանց է ուղղում.

Ջահել տղերք դրած են ֆաս,
կանգնած կէնեն թութունի բաս,
Ասուած սիրող տայ մէկ նաֆաս,
Էրեայ վառեայ ես անթութուն:

Ճամբան շարունակելով հանդիպում է գիւղի ռեսին (տանուտէրին) որ ձեռները ծոցում դրած, գլուխ կախ կանգնել էր: Մեր ծուճաճ իւր խօսքը ռեսին է ուղղում.

Թութուն քաշող գեղի ռէսն էր,
Թութուն չեղաւ էշու պէս էր,
Մէջ մէջլիսին մարդու՝ կէս էր,
Էրեայ վառեայ ես անթութուն:

Շարունակելով իւր բախտաւորներ խնճխրենն երգում է.

Թութուն քաշողի սիրտը խզա,
Թութուն չէլաւ՝ քանճ եզ մզա,

Թութուն քաշող չի մըմզա,
Էրաս վառաս ես անթութուն։

Կիգայ գարուն կառնեմ արաղ,
Կէրթամ նստեմ գօլի ղըրաղ,
Ձանեմ թութուն խմեմ արաղ,
Աշնան քաղեմ դեղին թութուն,

Բօլ-բօլ լցեմ մէջ իմ կութուն,
Էլնեմ էրթամ հարանիքի տուն,
Ֆէֆով քաշեմ ես իմ թութուն,
Սիրտըս ուրախ գառնամ ի տուն,

Նորից հանդիպում է ջանիկներին ողոց ուղղում է իւր վերջին խօսքը.

Ջահել տղերք Աստուած սիրէք,
Թութունի դատր խօրօտ գիտցէք,
Օրօրանցի Յունան յիշէք,
Որ թութունի կարօտ չը քաշէք։



ԳՈՒԹԱՆԻ ԵՐԳԸ

Բարի լիւսու աստղն էրէւաց,
Աղօթարան դռներն ի բաց,
Բարով բացւէր լիւս աղօթարան,
Լծենք սարւածք էրթանք գիւթանու

Գիւթնի թախըմ նըմուշ նըմուշ,
Զըկէր վաստակ քանձ էն անուշ,
Գիւթան չէրնէր, աշխարհն ինչ էր,
Աշխըրհի շէն վէր գիւթնին էր։

Ջեռն եմ դրե վէր էն մաճին,
Ուխտու արե էն Սուրբ Խաչին,
Խաչին մեռնեմ Տիրոջն էլ խեթ,
Վաստակ կուտայ օրերու խեթ։

Խոփ-քաշ կէրթայ խոդի տակէն,
Ակօս բանայ յէրկէն յէրկէն,
Ես ք՛ե մեռնեմ ոսկի կատար,
Վարի չիման շուռ տուր պալ-պալ։

Ամոլ, սարթիլ, վոժտուն, խուրթկ
Կանեմ խեթ գիկ խալալ շէրիկ,
Մէկտեղ դառնք մէկտեղ բանենք,
Ցածր-վեր ուխտու՝ Աստուածն անենք։

Փաթ մէլ վարենք խանենք միջնակ։
Իրիկմըտան գարկին կոչնակ,
Արձկենք գիւթան, լծենք սարւածք,
Էրթանք դեխ տուն կանչենք Աստուած։

ՎԵՐՋԱԲԱՆ

Գրքիս «Յաւելուած բաժին»ը վախելով, սիրում եմ յուսալ, որ այդ մասը ևս լաւագոյնս պիտի ծառայի իր նպատակին։

Այդ բաժինը աւելացնելով «Կեանքի Յուշերին», նպատակ եմ ունեցել ընթերցողին ծանօթացնել՝ վասպուրականի և յատկապէս Թիմար գաւառի ժողովրդական բանահիւսութեան։ Արդէն պարզ է, մի որևէ ժողովրդի ճանաչելու համար, պէտք է ուսումնասիրել նրա տղայինժողովրդական բանահիւսութիւնը։ Այս տեսակէտից երևելով, գրքի «Յաւելուածը» լրացուցիչ մասն է «Կեանքի Յուշերիս», որը կազմւած է մեծ խնամքով և ուշադիր ընտրութեամբ։

Այս գրքում բերւած ժողովրդական հեքիաթները հաւաքւած և գրի են առնւած իմ կողմից, որով յոյս ունեմ իմ համեստ ծառայութիւնը բերած լինեմ հայ ժողովրդական հեքիաթները հաւաքելու և նրանց կորստից փրկելու կարևոր գործին։ Այս հեքիաթները՝ ընտրել եմ իմ կազմած «Հեքիաթների ժողովածուից». վերջինս արդիւնք է իմ տասնեակ տարիների տքնաջան աշխատանքին, որը դժբախտաբար դեռևս մնում է անտիպ։

Հեքիաթների ընտրութեան ժամանակ, բացի հետաքրքիր և արժէքաւոր լինելու հանգամանքը, ի նկատի եմ առել նաև նրանց մանկական բնոյթ ունենալու պարագան։ Ընթերցողները հեշտութեամբ կնկատեն, որ գրքում բերւած հեքիաթները, ընթերցանութեան օգտակար նիւթեր են նաև մանուկների համար։

Ինչ վերաբերում է գրքում բերւած ժողովրդական երգերին, նրանք արտատպւած են բանասէր՝ պ. Հայկ Ա-ճէմեանի «Մասիս» օրագոյցից (1926 թ.) և նոյն հեղինա-

կի՝ «Ծաղկաքաղ Վասպուրականի հայ ժողովրդական բանահիւսութեան գրքից» (1917 թ. Էջմիածին)։

Վերջում ես չեմ կարող իմ ամենախորունկ շնորհակալութիւնները չյայտնել այն բոլոր բարեմիտ և պոհաբերող ազգայիններին, որոնք աւելն կերպ՝ թէ նիւթապէս և թէ բարոյապէս սատար հանդիսացան ինձ, այս դժուարին գործում։ Իրապէս, «կեանքի Յուշերի» հրատարակութիւնը, ինձ մէկ անգամ ևս ցոյց տւեց, թէ որքան մեծ դժւարութիւնների առաջ է կանգնած հայ գրքի տպագրութիւնը՝ արտասահմանում։ Առանց այդ բարեսէր և գրասէր անհատների աջակցութեան, այս գրքի հրատարակութիւնը հնարաւոր չէր։

«Կեանքի Յուշերս» շատ յարմար և համապատասխան եմ գտնում վերջացնելու իմ հայրենակից՝ տաղանդաւոր բանաստեղծ Սարմէնի հետևեալ մեծարժէք բանաստեղծութեամբ։

Իր հարազատ բանաստեղծի լեզւով խօսում է ամբողջ հայ ժողովուրդը, խօսում է Վան-Վասպուրականի տարագիր հայութիւնը, խօսում եմ ևս.

ՍԱՐՄԷՆ

ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ

Ես քեզ երբէք չեմ մոռացել,
Հոգեհաւոր հայրենի տուն,
Մերթ եկել եմ դուրըդ բացել,
Կրակ վառել ձմռան ցրտում,
Մերթ այցի ես եկել դու ինձ,
Նստել կողքիս ու զրուցել,
Իմ թանկագին, իմ սրտակից,
Ես քեզ երբէք չեմ մոռացել

Մեր անջատման տխուր օրից
Տարիները են եկել անցել,

Արդեօք դու էլ յիշո՞ւմ ես ինձ,
Թէ՞ դու վաղո՞ւց ես մոռացել.
Ինձ յիշո՞ւմ են մեր սարերուն,
Արդեօք դեռ կա՛յ մեր հին այգին,
Երգո՞ւմ է մեր դուլալ առուն՝
Իմ մանկութեան ընկեր այգին։

Վանայ ծովին բարե՛ւ արա,
Նրան ես շա՛տ եմ կարօտել,
Բարդու գլխի այն բունր կա՛յ,
Ծեր արագին ապրո՞ւմ է դեռ,
Հաւատարիմ մեր շունը կա՛յ,
Ծաղո՞ւմ է դեռ մեր չար կատուն,
Ա՜խ, նրանց էլ բարե՛ւ արա,
Իմ պաշտելի հայրենի տուն։

Ո՞վ է ապրում քո յարկի տակ.
Իրեն յաւէտ տէ՞ր է կարծում։
Իմ գոհուած հօր շիրիմը թանկ,
Ո՞վ է այդպէս անարգ պղծում,
Մեր արտերը, ո՞վ է ցանում,
Ո՞վ է քաղում վարդերը մեր.
Ինչպէս պինին խոր հնձանում՝
Յոյսերս պահել եմ մինչ անմեռ...
Կգայ օրն այն, երբ յաղթական
Ներս կը մտնենք հայրենի տուն.
Ծնծղանները կղրնդան,
Տօն կը լինի ու խնդութիւն,
Լոյսերն անշէջ կբոցկլտան,
Կանցնեն շարքերը փառապանծ,
Կհնչի երգը ցնծութեան՝
Այդեբացից մինչ այդեբաց։

Ղազրին 1949 Օգոստոս

Յարութիւն քահանայ Տ. Մեսրոպեան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Էջ

Յառաջաբան 5
Թիմաթ պաւառը 7
Մօրս Յուշերը 20
1995-96 թուականի կոտրածնեըը
վան-Վասպուրականում 20
Ընդունելութեան դէմ 24
Իմ Յուշերը 34
Նահանջ 58
Լիմ Անապատի կռիւը 61
Արճակի և Յառանկոնիսի կռիւնեըը 65
Ալուբ գիւղի կռիւը 67
Ժողովուրդը՝ Լիմ Անապատի կղզում 72
Վերադարձ Լիմ Անապատի կղզուց 77
Կրկին նահանջ 78
Գանձակում 82
Վերադարձ 85
Երկրորդ վերադարձ 88
Երեք ամիս Ռուսնում 93
Վանի վերջին նահանջը 97
Վասպուրականցին Սալմաստում 104
Ուրմիոյ մէջ 121
Նոր կեանք, նոր պայմաններ 137
Վերադարձ դէպի Հայրենիք 162

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Երկու արհեստաւորնեըը 169
Իրական դէպք 178
Ջար Թագաւորը և նրա վերջը 181
Հաւատքի ուժը 188
Պարերգ 189
Թուխթաւնի երգը 191

Էջ

Գութանի երգը 193
Վերջաբան 194
Բովանդակութիւն 197
Ցանկ նկարների 198

ՑԱՆԿ ՆԿԱՐՆԵՐԻ

Յառաջիւն ք. Տ. Մեսրոպեան 3
Քարտէզ վաստպուրական նահանգի և թիմար գաւառի 19
Լիմ Անապատի կղզին և Ս. Կէորգի վանքը 64
Յովհաննէս ծ. վրդ. Հիւսեան 75
Արարատեան դաշտը և գոյգ Մասիսներ 80
Փարամազ 86
Կոստի Համբարձումեան 90
Գարեգին Հայգազեծեան 92
Լևոն Շաղոյեան 94
Մի տեսարան հայկական քեմփից 137
Գաղթականներին յատկացած հիւանդանոցը 138
Հայկ. քեմփում կանայք բաժանում են տրւած պարէնը 139
Հայ մանր առևտրականներ Պագուպայում 141
Գերեզմանատունը 144
Որբերի ճաշը 145
Բաղդադ-Միջագետքի հայ տարագ. նպաստ. մարմին. 146
Գաղթական կանայք 149
Գաղթականները բաժանում են պարէն տրւած մէկը Նահր-էլ-օմարում 155
Վաստպուրականցի բրուտների գործատուն-խանութ Նահր-էլ-օմարում 158
Հայ որբերը մաքրում են իրենց կերակրի ամանները 159
Գաղթականները Շաթ-օլ-արաբի եզերքին 160
Գաղթական մի ընտանիք Նահր-էլ-օմարում 161
Որբահիներ Նահր-էլ-օմարի մէջ 162
Երևանի համայնապատկերը 165

((خاطرات زندگی))

بقلم کشیش هاروتیون درمسروبیان

دارای اجازه نامه شماره ۱۴۲۳/۲۷ر۵ر۲۷ اداره کل نگارش وزارت فرهنگ

ԿԱՐեւՈՐ ՎՐՒՊԱԿՆԵՐ

էջ	վերից տող	տպագրված է	պիտի լինի
9	31	Աղթամար կղզուն է	Աղթամարի ղրսի անուն է
93	4	Փարսանի	Դաուսանի
109	24	Շահբազեցի	Շահբաղեցի

9(47.9
Ս-6

Ստանալու համար դիմել՝

Ղազբին — Իրան

Հայոց Եկեղեցի,

Ծարուխխան քահանայ Տ. Մեսրոպեան

A II
80278